# ԷՋՄԻԱԾԻՆ



Զ-Է
2007

ԿԳ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Յունիս–Յուլիս**

**2007**

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՅՐԵՆԻՔ ԲԵՐՎԵՑԻՆ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԸ

Հուլիսի 13-ին Դետրոյտից Հայրենիք բերվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգային բարերար լուսահոգի Ալեք Մանուկյանի և նրա կողակից Մարի Մանուկյանի աճյունները:

«Զվարթնոց» օդանավակայանում ՀՀ Պաշտպանության նախարարության պատվո պահակախմբի ուղեկցությամբ Մանուկյանների աճյունները դուրս բերվեցին օդանավից, ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք վերառաքեց բարեհիշատակ բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների հոգիների հանգստության և խաղաղության համար:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, Ալեք և Մարի Մանուկյանի դուստր Լուիզ Մանուկյան-Սիմոնը, Մանուկյան ընտանիքի անդամներ, ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանը և ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամներ:

Աղոթքից հետո սգո թափորն ուղղվեց Ս. Գայանե վանք, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Հավարտ արարողության Նորին Սրբությունն իր խոսքն ուղղեց ներկաներին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

(13 հուլիսի 2007 թ., Ս. Գայանե եկեղեցի)

Մեծարգո Նախագահ Ազգային Ժողովի, սիրելի Մանուկյան ընտանիք, հոգևոր հայրեր, սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Խորախորհուրդ է Հայրենիքի սիրով ապրած զավակների վերադարձը Հայրենիք՝ հանգրվանը ազգի անմահ հոգու: Բարձրյալի շնորհով այսօր հայրենի ազատ մեր հողը ընդունում է իր նվիրյալ զավակներին՝ Ազգային հերոս, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս Նախագահ Ալեք Մանուկյանին և իր մեծազնիվ տիկին Մարի Մանուկյանին, ովքեր ապրեցին և անմնացորդ ջանքեր ներդրեցին ի սեր աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգևոր-ազգային կյանքի զարթոնքի ու պայծառության: Մեծ նվիրատվություններով նրանք պայծառացրին մեր ե-

կեղեցիները, կրթական ու ազգային հաստատությունները: Հայրենիքի բարօր ու բարգավաճ, նոր կյանքի տեսիլքով և հավատով նրանք կերտեցին իրենց և բազում հայորդյաց կյանքի լուսավոր ուղին: Մեծ բարերարների ձգտումն էր Հայրենիքի պատկերի, հայրենյաց ժառանգության պահպանումը հայորդյաց հոգիներում: Հայրենիքի ու հայ ժողովրդի լուսավոր գալիքի, Սուրբ Էջմիածնին հավատարմության հավատն է նրանց ավանդը սերունդներին, ազգի հարատևության հավատը՝ հայրենյաց արժեքներով ու սրբություններով:

Մեր Եկեղեցու, Սուրբ Էջմիածնի սերը մանկուց էր սերմանված Ալեք Մանուկյանի հոգում: Նա միշտ ջերմ սիրով կապված եղավ եկեղեցական կյանքին՝ նպաստելով մեր Եկեղեցու առաքելությանը, այլև՝ բարեգործական ծրագրերով և որպես սարկավագ՝ Տիրոջ Սուրբ Սեղանին սպասավորությամբ: Մենք խորին հուզմունքով ենք անդրադառնում, որ հավատավոր ազնիվ սրտով Ալեք և Մարի Մանուկյանները աստվածապարգև իրենց ողջ կյանքի ընթացքում հոգացին մերձավորի համար՝ բազմաթիվ բարեգործություններով կյանքի կոչելով ավետարանական պատվիրանը: Նրանք՝ իբրև արժանավոր քաղաքացիներ Միացյալ Նահանգների, երախտագետ հոգով հանդեպ Ամերիկան, իրենց բարերարություններից մասնահանում կատարեցին նաև Միացյալ Նահանգների կրթական ու մշակութային կյանքին:

Անմոռաց է լուսահոգի Տեր և Տիկին Մանուկյանների պայծառ հիշատակը: Եկեղեցաշեն ու ազգօգուտ իրենց գործերով նրանք արժանացել են աշխարհասփյուռ մեր ժողովրդի ջերմ սիրույն և անկեղծ հարգանքին: Նրանց առաքինի կյանքի դրվատումն են և ծառայությանց ու վաստակի գնահատանքը՝ բարձր մրցանակներն ու շքանշանները, որ շնորհվել են Ալեք Մանուկյանին: Նա արժանիորեն կրում էր նաև մեր Եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը և Հայաստանի Ազգային հերոսի կոչումը:

Աղոթք և օրհնություն խնկարկենք նրանց շիրիմներին: Գոհաբանական աղոթք բարձրացնենք առ Աստված, որ ազգասիրության ու եկեղեցասիրության նրանց ոգին և բարի գործոց օրինակը շարունակում է ապրել հայորդյաց հոգիներում, ինչպես նրանց զավակների՝ Լուիզ Մանուկյան-Սիմոնի և Ռիչարդ Մանուկյանի և թոռների, ովքեր այսօր իրենց կարևոր ներդրումն են բերում մեր Եկեղեցու պայծառությանը, մեր Հայրենիքի բարօրությանն ու առաջընթացին:

Սիրելիներ, այսօր ուրախ են մեր հոգիները, որ մեր Եկեղեցու արժանավոր զավակների, ազգային մեծ բարերարների մարմինները որդու և դստեր համաձայնությամբ փոխադրվել են Միացյալ Նահանգներից՝ ամփոփվելու մեր հոգևոր նվիրական կենտրոնում, Սուրբ Էջմիածնի աստվածային օրհնության ներքո:

Աղոթքով առ Երկնավորը մայր հողին պիտի հանձնենք լուսահոգի Ալեք և Մարի Մանուկյանների մարմինները՝ հավատով, որ մեր ժողովրդի կյանքում միշտ հառնած պիտի մնան նրանց բարեպաշտ ու ազգանվեր կերպարները, պիտի ապրեն նրանց ազնիվ գործերը՝ իբրև նրանց հավատավոր հոգու վկայություններ, շարունակելով մեր Եկեղեցու, Հայրենիքի և ազգային սրբությունների հանդեպ անսպառ

նվիրումի ու աննվազ նախանձախնդրության նոր հունդեր աճեցնել սերունդների հոգում:

Աղոթենք, որ Ողորմած և Մարդասերն Աստված երկնային բարձունքներում լույսերի մեջ երանությամբ պարուրյալ պահի հավիտենական կենաց խաղաղ ափին հանգրվանած Իր հավատարիմ զավակների հոգիները և օրհնի մեզ՝ մարմնավորելու մեր Հայրենիքի ու ժողովրդի միացյալ երջանիկ կյանքի նրանց և ամենքիս տեսիլքը:

«Շնորհ եւ սէր եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան:

Յիշեա, Տէր, զհոգիս երանաշնորհ բարերարացն մերոց՝ Ալեք եւ Մարի Մանուկեանների, եւ յանգո զնոսա ի լոյս երեսաց աստուածութեան Քոյ. Ամէն»:

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պետական արարողակարգով և եկեղեցական ծիսակարգով հողին հանձնվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգային բարերար լուսահոգի Ալեք Մանուկյանի և նրա կողակից Մարի Մանուկյանի աճյունները:

Հանգուցյալ մեծանուն հայորդիների աճյունները ժամը 10.00-ին Սուրբ Գայանե վանքից տեղափոխվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր Սուրբ Տրդատ թագավորի բաց խորանի առջև դրվեցին հատուկ պատվանդանների վրա:

Ապա կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի, ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի, Ալեք և Մարի Մանուկյանների զավակներ Լուիզ Մանուկյան-Սիմոնի, Ռիչարդ Մանուկյանի և Մանուկյան ընտանիքի այլ անդամների:

Արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, ՀՀ Կառավարության անդամներ, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամներ, գիտության և մշակույթի գործիչներ:

Հավարտ արարողության Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկաներին. «Ուրախ են մեր հոգիներն այսօր՝ ամփոփված տեսնելով Ալեք և Մարի Մանուկյանների մարմիններն իրենց համար միշտ նվիրական հայրենի հողում, իրենց սրտերին շատ սիրելի Սուրբ Էջմիածնում, որոնցից երբեք բաժանված չեղան: Սերնդեսերունդ մեր զավակները պիտի այցելեն այստեղ նրանց նվիրատվությամբ կառուցված Գանձատուն և զան խոնարհվելու նրանց շիրիմներին: Պիտի աղոթեն նրանց միջոցներով նորոգված և կառուցված եկեղեցիներում, ուսանեն նրանց հովանավորությամբ գործող կրթական հաստատություններում, պիտի ներշնչվեն նրանց բարի գործերով, ազգասեր, հայրենասեր ու եկեղեցասեր ոգով ու օրինակով նրանց, ովքեր «Մահկանացու ծնվելով՝ անմահ հիշատակ թողեցին»: Այսպես է կան-

գուն ժողովուրդը՝ նվիրումով, ծառայությամբ, ազնիվ ու պանծալի գործերով և դրանց գնահատությամբ ու արժեվորումով՝ սերնդեսերունդ:

...Գոհության աղոթք բարձրացնենք երկինք, որ Տերը օրհնել է մեր ժողովրդին նվիրյալ զավակներով և նրանց հույսերով, նրանց հավատով ու ջանքերով առաջնորդել ազգս դեպի նոր արշալույս, որ շողում է մեր պետականության վերականգնումով, Արցախի ազատագրությամբ և Սփյուռքի հառնող ու ծաղկող կյանքով»,- ասաց Նորին Սրբությունը:

Այնուհետև «Աշխարհի ամենայն» շարականի երգեցողության ներքո ՀՀ Պաշտպանության նախարարության պատվո պահակախմբի և հոգևորականների ու աշխարհականների թափորի ուղեկցությամբ Մանուկյանների աճյունները տեղափոխվեցին իրենց բարերարությամբ կառուցված Գանձատան առջև՝ հողին հանձնելու համար: Այստեղ կատարվեց թաղման արարողության կարգը: ՀՀ պետական դրոշը պատվո պահակախմբի կողմից հանձնվեց Ալեք և Մարի Մանուկյանների զավակներ Լուիզ Մանուկյան-Սիմոնին և Ռիչարդ Մանուկյանին: Ապա ՀՀ պետական օրհներգի ներքո լուսահոգի բարերարների աճյուններն իջեցվեցին գերեզման:

Այնուհետև Վեհարանի հարկի ներքո տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքին խոսքով հանդես եկան ՀՀ ԱԺ նախագահ տիար Տիգրան Թորոսյանը, տիար Ռիչարդ Մանուկյանը և տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնը:

«...Ալեք Մանուկյանի կյանքն ու գործունեությունը սիրո և նվիրումի եզակի մարմնացում եղան՝ առ իր ընտանիքը, իր ժողովուրդն ու Հայրենիքը: Ահա թե ինչու իր երկրային կյանքի ավարտից հետո էլ իր գործը շարունակվում է իր զավակների՝ Լուիզ Սիմոն և Ռիչարդ Մանուկյանների շնորհիվ: Վերադառնալով Հայրենիք, մեծ բարերարն այսօր ստանձնեց իր վերջին առաքելությունը՝ իր ներկայությամբ ու օրինակով ազգանվեր գործունեության մղելով բազմաթիվ հայորդիների, քանզի անհերքելիորեն ապացուցել է, որ անձնական հարստությունը իմաստ ու արժեք է ստանում բարեգործությամբ ու նվիրումով»,- նշեց ՀՀ ԱԺ նախագահն իր խոսքում:

«Նրանց կյանքը մեզ համար շողացող մի արահետ է խորհրդանշել՝ մշտապես ուղղված դեպի Հայաստան հինավուրց երկիրը: Հայրս իր կյանքում թեև չմիացավ հոգևորականների սրբազան շարքերին, սակայն սրտի խորքում մշտապես մեծ սեր ուներ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ: Նրա խորին հավատը և իր նախնիների հավատի նկատմամբ իր նվիրումը առաջնորդել են նրան ողջ կյանքի ընթացքում...: Սա հատուկ պատիվ է նրանց՝ ընծայված Հայ Եկեղեցու կողմից՝ ի գնահատություն նրանց նվիրումի և ծառայության Հայաստան մեր Հայրենիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Հայրս միշտ երանությամբ էր հիշում Հայաստանում անցկացրած օրերը՝ հատկապես այն օրը, երբ այստեղ կատարվեց Ալեք և Մարի Մանուկյանների Գանձատան բացումը: Նա իր սրտի զգացումներն արտահայտեց՝ ասելով. «Յուրաքանչյուր մարդ կյանքում ունի երազանք: Իմ երազանքը մշտապես եղել է այն, որ մեր նախնյաց հայրենիքի շինությանը կարողանամ ավելացնել իմ սեփական աղյուսը... Ես

ինձ շնորհընկալ եմ զգում, որ հնարավորություն եմ ունեցել մի քար դնել Հայրենիքիս սրբազան հողի վրա՝ Սուրբ Էջմիածին սրբազնագույն սրբավայրում»:

...Ծնողներս Հայաստան այցելել են նախքան անկախության հռչակումը, և նրանց ընդունեցին որպես բարերարների: Հայաստանի անկախացումը նրանք ևս ողջունեցին մեծ ուրախությամբ, քանզի անկախությունը հնարավորություն տվեց հայ ժողովրդին Սփյուռքում և Հայրենիքում միավորվել հանուն Հայաստանի ապագայի»,- ասաց Ռիչարդ Մանուկյանը՝ շնորհակալություն հայտնելով Հայաստանի իշխանություններին և Հայոց Եկեղեցուն՝ ի պատիվ իր ծնողների ցուցաբերած վերաբերմունքի համար:

Ալեք և Մարի Մանուկյանների կյանքի ուղին ներկայացրեց տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնը. «Այսօր ես զգում եմ՝ ծնողներս ժպտում են երկնքում՝ հիացած, որ նոր շրջան է սկսվել իրենց կյանքում, և երախտագիտություն հայտնում Նորին Սրբությանը, որ նրանք այժմ և հավետ հանգչելու են Սուրբ Էջմիածնի օրհնյալ հողում, որը սիրտն ու հոգին է յուրաքանչյուր հայի՝ անցյալի, ներկայի և ապագայի:

...Մենք երբեք չենք մոռանա այն տպավորիչ ընդունելությունը, երբ ժամանեցին մեր ծնողները, և այսօրվա հուզիչ հուղարկավորությունը: Անգամ հայրս, իր բոլոր երազանքներով հանդերձ, չէր կարող պատկերացնել անցնող այս օրերը»,- նշեց տիկին Մանուկյան-Սիմոնը՝ իր հերթին ևս շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին և ՀՀ նախագահին նման բացառիկ պատվի և հարգանքի համար, որին արժանացվեցին Ալեք և Մարի Մանուկյանները:

Հավարտ ընդունելության կատարվեց գերեզմանի կնքման կարգը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

(17 հուլիսի 2007 թ., Ս. Էջմիածին)

Մեծարգո Նախագահ,

Սիրելի Մանուկյան ընտանիք և բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Օրն այս հիշարժան է, իր խորհրդով նշանակալի ու նվիրական: Աստծո ողորմությամբ կատարվեց ցանկալին. մեր ժողովրդի նվիրյալ զավակներ, ազգի և մեր Եկեղեցու մեծ բարերարներ Ալեք և Մարի Մանուկյաններն իրենց վերջին հանգրվանն են գտնում Հայրենիքի ազատ հողում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո, Արարատի հայացքի առջև:

Այսօր, երբ կանգնած ենք նրանց լուսավոր հիշատակի առջև, համակվում ենք ազգին մատուցած ծառայություններով լեցուն նրանց կյանքի և արժանավոր բազում գործերի անհուն գնահատանքով:

Մեծ ծառայություն էր վերապահված Ալեք Մանուկյանին մեր ժողովրդի կյանքում, որը նա հանձն առավ օրինակելի նվիրումով ու պատրաստակամությամբ: Վսեմ տեսիլքով նա բացառիկ ներդրում ու վաստակ բերեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության առաքելությանը՝ արժանանալով Միության ցկյանս Նախագահի բարձր պատվին: Ալեք Մանուկյանի նախանձախնդիր ղեկավարությամբ ընդարձակվեց ու ծաղկում ապրեց Բարեգործականի համազգային գործունեությունը՝ Մեծ Եղեռնին հաջորդած տասնամյակներում աշխարհասփյուռ հայությանը օտար ափերում առավելագույնս սատարելու և միասնական պահպանելու: Սփյուռքի կյանքում ազգային շատ կառույցների կողքին նա առանձնակի կարևորեց հայ դպրոցն ու Հայոց Եկեղեցին, որպեսզի հայրենյաց ժառանգությունը անաղարտ պահպանվի ու փոխանցվի սերունդներին, հայկականությամբ սնուցի և հավատով զորացնի հայորդյաց հոգիները:

Որդիական ջերմ սիրով Ալեք և Մարի Մանուկյանները հոգացին ու ջանացին Սուրբ Էջմիածնի պայծառության համար: Նրանց անունները անբաժան են Մայր Աթոռի պատմությունից, ինչպես նրանց կյանքը անբաժան եղավ Մայր Աթոռի առաքելությունից: Այն օրերին, երբ երկաթյա վարագույրով անջրպետված էր Հայաստանի և աշխարհասփյուռ հայության կյանքը, Ալեք Մանուկյանը, իբրև հարազատ զավակը իր ժողովրդի, միշտ կապված եղավ Հայրենիքի հոգսերին ու ապրեց նրա հույսերով: Ապրեց ու գործեց մեր ժողովրդի միասնության, Հայրենիքի ազատության և հայ կյանքի զարթոնքի հավատով: Արդարև, դժվար է գտնել նշանակալի դեպք կամ իրադարձություն ազգային-եկեղեցական մեր կյանքում նախորդ դարի երկրորդ կեսին, որին կարևորությամբ աղերսված չլինի Ալեք Մանուկյանի անունը: Նորանկախ մեր Հայրենիքը արժանիորեն գնահատեց Ալեք Մանուկյանի ծառայությունները և ավանդը ազգային կյանքում՝ շնորհելով նրան Ազգային հերոսի բարձր կոչումը: Հայրենանվեր ու եկեղեցասեր ծնողների նույն հոգեկերտվածքով ու ազնիվ նախանձախնդրությամբ այսօր նրանց զավակները՝ Ռիչարդ Մանուկյանը և Լուիզ Մանուկյան-Սիմոնը, իրենց բարեգործություններով շարունակում են ծառայել մեր ժողովրդին՝ նոր ավանդ բերելով մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը և մեր Հայրենիքի բարօրությանն ու առաջընթացին:

Ուրախ են մեր հոգիները այսօր՝ ամփոփված տեսնելով Ալեք և Մարի Մանուկյանների մարմինները իրենց համար միշտ նվիրական հայրենի հողում, իրենց սրտերին շատ սիրելի Սուրբ Էջմիածնում, որոնցից երբեք բաժանված չեղան: Սերնդեսերունդ մեր զավակները պիտի այցելեն այստեղ նրանց նվիրատվությամբ կառուցված Գանձատուն և զան խոնարհվելու նրանց շիրիմներին: Պիտի աղոթեն նրանց միջոցներով նորոգված և կառուցված եկեղեցիներում, ուսանեն նրանց հովանավորությամբ գործող կրթական հաստատություններում, պիտի ներշնչվեն նրանց բարի գործերով, ազգասեր, հայրենասեր ու եկեղեցասեր ոգով ու օրինակով նրանց, ովքեր «Մահկանացու ծնվելով՝ անմահ հիշատակ թողեցին»: Այսպես է կանգուն ժողովուրդը՝ նվիրումով, ծառայությամբ, ազնիվ ու պանծալի գործերով և դրանց գնահատությամբ ու արժեվորումով՝ սերնդեսերունդ: Այսպես է օրհնյալ ժո-

ղովրդի կյանքն ու ճանապարհը, քանզի «Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վա՛րձս առցէ» (Ա Կորնթ. Գ 14):

Աղոթենք և հայցենք լույս և օրհնություն մշտնջենական՝ ազգային բարերարների արդար հոգիներին:

Գոհության աղոթք բարձրացնենք երկինք, որ Տերը օրհնել է մեր ժողովրդին նվիրյալ զավակներով և նրանց հույսերով, նրանց հավատով ու ջանքերով առաջնորդել ազգս դեպի նոր արշալույս, որ շողում է մեր պետականության վերականգնումով, Արցախի ազատագրությամբ և Սփյուռքի հառնող ու ծաղկող կյանքով:

**Շնորհ, սէր եւ օրհնութիւն Տեառն մերոյ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան: Ամէն:**

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակում հունիսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հունաստանի Հանրապետության նախագահ Կարոլոս Պապուլիասը տիկնոջ՝ Մեյ Պապուլիասի հետ՝ ուղեկցությամբ ՀՀ Տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանի:

Վեհարանում բարձրաստիճան հյուրին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հունաստանի նախագահի այցի առիթով՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Հայոց Եկեղեցու հոգևոր կենտրոնի կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ այսօր հայրենի պետությունը զորացնում է բարեկամական կապերը Հունաստանի Հանրապետության հետ՝ նշելով, որ հայ ժողովուրդը դարեր ի վեր հարուստ առնչակցություն և բարեկամական սերտ հարաբերություններ ունի հույն ժողովրդի հետ: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին՝ վերհիշելով իր հանդիպումները Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի և Աթենքի ու Հունաստանի Արքեպիսկոպոս Քրիստոդուլոսի հետ, ինչպես նաև Տիեզերական Պատրիարքի այցը Հայաստան 2001 թվականին:

Ամենայն Հայոց Հայրապետը հանուն հայ ժողովրդի շնորհակալություն հայտնեց նախագահ Կարոլոս Պապուլիասին Հունաստանի՝ կյանքի տարբեր ոլորտներում Հայաստանին մշտապես ցուցաբերվող աջակցության, ինչպես նաև Հունաստանում բնակվող հայ համայնքի հանդեպ հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց նաև, որ Հունաստանի իշխանությունների շնորհիվ ամեն տարի Մայր Աթոռի միաբաններին տրամադրվում է երկու կրթաթոշակ՝ շարունակելու հոգևոր ուսումնառությունը Հունաստանի կրթական բարձրագույն հաստատություններում:

Հունաստանի նախագահն իր հերթին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: «Թե՛ Հայ և թե՛ Հույն Եկեղեցիները պատմության ընթացքին պայքարեցին բարձր իդեալների համար՝ ի խնդիր հավատի: Ի՞նչ պիտի լիներ մեր ժողովուրդների ապագան առանց մեր Եկեղեցիների...»,- նշեց նախագահը՝ անդրադառնալով Եկեղեցիների կարևոր դերակատարությանը երկու ժողովուրդների կյանքում: Պարոն Պապուլիասը, խոսելով Հայաստան կատարած իր այցի մասին, ընդգծեց, որ ընդհանուր է երկու ժողովուրդների ապագան և ճակատագիրը՝ ձեռք ձեռքի, թիկունք թիկունքի պիտի ընթանան դեպի ապագան:

Հանդիպմանը անդրադարձ եղավ պատմության ընթացքին հայ և հույն ժողովուրդներին բաժին ընկած փորձություններին: «*Մենք կրել ենք մեծ կորուստներ անց-*

*նող դարում: Մեր արդար իրավունքների պաշտպանությունը պարտավորեցնում է մեր ժողովուրդներին և պետություններին, որպեսզի ըստ ամենայնի զորակից և աջակից լինեն միմյանց: ...Մենք հավատի ժողովուրդ ենք, իսկ հավատը միշտ հաղթանակներ է արձանագրում*»,- ասաց Նորին Սրբությունը:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ հավատի վրա խարսխված ջերմ, եղբայրական, բարեկամական հարաբերություններն անանց լինեն և առաջնորդեն երկու ժողովուրդներին իրենց բարի և արդար երազների իրագործմանը:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը և Մայր Աթոռի միաբաններ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԽԽՎ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ պրն Ռենե վան դեր Լինդենին: Սա Վան դեր Լինդենի երկրորդ այցն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Առաջին անգամ նա Մայր Աթոռում եղել էր 2005 թ. օգոստոսին:

Նորին Սրբությունը ողջունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահի այցը ամենայն հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ անդրադառնալով Հայաստանում, ինչպես նաև նախորդ տարի Աստանայում հոգևոր առաջնորդների երկրորդ գագաթաժողովի ընթացքում իրենց ունեցած հանդիպումներին: Վան դեր Լինդենն իր գոհունակությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շրջակա միջավայրի պահպանման, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման ուղղությամբ աշխատանքների համար:

Ամենայն Հայոց Հայրապետը և նախագահ Ռենե վան դեր Լինդենը քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցը, ինչով պայմանավորված է արցախաբնակ հայերի ազատ և ապահով կյանքը: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև տարածաշրջանում հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման սպառնալիքի և հարևան երկրներում Հայ Եկեղեցու կարգավիճակին վերաբերող խնդիրների մասին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 4-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ

(7 հունիսի 2007 թ.)

Մեծարգո Նախագահ,

Հարգարժան պատգամավորներ և ներկաներ,

Ողջունում և շնորհավորում ենք ձեզ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 4-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ և ի խորոց սրտի հայցով աղոթք վերառաքում առ Աստված. «Յաւել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և ամենայն գործս առաքինութեան» (Ժամագիրք): «Ավելացրու մեզանում, Տեր Ամենակալ, հավատը, հույսը, սերը և ամենայն առաքինի գործերը»:

Մեր հայրերի շուրթերին դարերով անձանձիր հնչած աղոթքն է այս, որը զորություն է պարգևել մեր ժողովրդին արարելու ու հարատևելու, և որով ծնունդ են առել մեր հաղթանակներն ու նվաճումները պատմության մեջ: Հավատով, հույսով, սիրով և առաքինի գործերով է վերականգնվել ու կայացել մեր անկախ պետականությունը, և կյանքի են կոչվել բոլոր այն ձեռքբերումները, որոնք մնայուն են լինելու:

Ինքնիշխան պետականության վերահաստատումից ի վեր Ազգային Ժողովը կարևոր նպաստ է բերել պետականաշինության գործին, օրենքներ է մշակել հանուն մեր երկրում որոշիչ վերափոխումների իրականացման, հոգևոր, տնտեսական և ընկերային կյանքի բարեփոխման, կրթության, գիտության ու մշակույթի առաջընթացի: Դուք, մեծարգո պատգամավորներ, կոչված եք օրենսդիր բարձր իշխանությամբ ծառայելու մեր Հայրենիքին ու ժողովրդին այնպիսի ժամանակում, երբ մեր ժողովուրդը ավելի մոտ է տեսնում հզոր ու բարօր Հայրենիքի, ապահով ու երջանիկ կյանքի իր տեսիլքը: Ավելի պակաս ջանքեր ու ավելի պակաս նվիրում չպիտի պահանջվեն այդ ճանապարհին: Հարկ ի վերա ձեր կա՝ արդյունավորությամբ շարունակելու Ազգային Ժողովի առաքելությունը:

Արդ, խնդրենք, որ Տերը մեր Քրիստոս հավելի մեզանում հավատը ճշմարտադավան, հույսը՝ կենարար, և սերը՝ հրաշագործող, բարիք ստեղծելու ու բարին գործելու, մեր պատմության հուսաբեր նոր օրը կերտելու:

Մաղթում ենք ձեզ, սիրելի պատգամավորներ, կորովաշատ ծառայություն և բազմարդյուն գործունեություն, որպեսզի դուք և մեր ողջ ժողովուրդը ուրախանան ձեր ջանքերի առատ պտուղներով:

Թող հանապազորյա Մեր աղոթքով և մեր սուրբ նախնյաց բարեխոսությամբ Տիրոջ ճշմարտության հոգին միշտ առաջնորդ լինի ձեզ: Հաջողություն ձեզ և բարի ընթացք Ազգային Ժողովի աշխատանքներին:

*Պահպանիչ և յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա, պահպանեա և օրհնեա զՀանրապետութիւն Հայաստան աշխարհի, զաշխարհասփիւռ ժողովուրդս հայոց, այլև զԽորհրդարանն Հայաստանի Հանրապետութեան և զամենայն պատգամաւորս սորա ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ Քով ի խաղաղութեան, փրկեա յերևելի և աներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԼՂՀ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է ուղղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորընտիր նախագահի տիար Բակո Սահակյանին, որում ասվում է. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում Ձեզ և շնորհավորում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ ընտրվելու առիթով:*

*Գոհություն ենք մատուցում Աստծուն, որ խաղաղության մեջ Արցախի մեր ժողովուրդը կառուցում է իր ազատ կյանքը՝ հայրենի երկիրը շենացնելու, ապահով, բարօր ու երջանիկ ապրելու հավատով:*

*Արցախահայության և ողջ մեր ժողովրդի այս հույսերն ու ձգտումը իրականություն դարձնելու արդար գործին Դուք բերել եք Ձեր ջանքերն ու նվիրումը՝ նախանձախնդրորեն մասնակցելով Արցախի ազատագրությանն ու պետականության կայացմանը:*

*Աղոթում ենք առ Տերը Բարերար, որ Իր շնորհի ներքո հարատև խաղաղության մեջ պահպանի Արցախը և արգասավորի Ձեր և հավատավոր մեր ժողովրդի ջանքերն ու ներդրումը, որպեսզի ապաքինվեն հայրենի հողի բոլոր վերքերը, բարձրանան մեր բոլոր սրբատեղիները, Արցախը լցվի շենությամբ ու խնդությամբ: Մաղթում ենք Ձեզ, մեծարգո Նախագահ, քաջառողջ կյանքի երկար օրեր, կորով ու եռանդ Ձեր բարձր պաշտոնում և հաջողություններ՝ Ձեր ծրագրերին ու ձեռնարկումներին»:*

Ս. Էջմիածին,
20 հուլիսի 2007 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋԵՅՄՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՋԵՅՄՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՍՏՈՆ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր եւ հաւատաւոր զաւակիդ:

Սիրելի պրն Գալուստեան,

Ուրախութիւն է Հայրապետիս համար գնահատանքի խօսք ուղղել Ձեզ: Մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն ծառայելու տեսիլքով զօրացած, Դուք կեանքի էք կոչել բազում աստուածահաճոյ նախաձեռնութիւններ, որոնք Ձեր անունը ծանօթ ու սիրելի են դարձրել հաւատաւոր մեր ժողովրդին: Ազգային եւ եկեղեցական կեանքում Ձեր արդիւնաշատ գործունէութիւնը առ ժողովուրդն հայոց, առ Հայրենին ու Մայր Եկեղեցին Ձեր սիրոյ լաւագոյն վկայութիւնն է:

Արդարեւ, գովելի է հայորդուդ վաստակը ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի կեանքում, որի վերաբերեալ բազմաթիւ բարի վկայութիւններ ենք լսել Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից՝ բարեջան առաջնորդից ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի: Տարիներ շարունակ Դուք յանձն էք առել ինչպէս վարչական պաշտօններ թեմական եւ ծխական կեանքում, այնպէս եւ Ձեր նիւթական աջակցութիւնը բերել ի նպաստ եկեղեցաշէն ու ազգօգուտ տարբեր ծրագրերի: Ճանաչելով Ձեզ եւ տեղեակ լինելով Ձեր եկեղեցանուէր ընթացքին, Մենք առանձնակի գոհունակու-

թեամբ Ձեզ ընդգրկեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կազմում, որի աշխատանքներին աւաւասիկ տարիներ շարունակ բերում էք Ձեր օգտակար ու նախանձախնդիր մասնակցութիւնը:

Ի յաւելումն Ձեր բազում եկեղեցաշէն գործերի, Դուք ինքնաբուխ սիրով Ձեր ազնիւ լուման բերեցիք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը՝ դրսեւորելով Ձեր առանձնակի սէրն ու նուիրումը մեր Հայրենիքի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ: Աւաւասիկ այսօր առ Աստուած փառաբանութեամբ կատարում ենք Մայր Աթոռի Վանատան շէնքի վերաբացման ուրախ արարողութիւնը, որի նորոգութեան ու կահաւորման հովանաւորութիւնը ստանձնեցիք Դուք՝ ի սէր Ձեր սիրելի ծնողաց: Ձեր ընտանիքի անունը այսուհետ կապուած է մեր Եկեղեցու պատմութեանը՝ իբրեւ Սուրբ Էջմիածնի բարերար, եւ միշտ աղօթքով ու բարեմաղթանքներով պիտի յիշուի հաւատաւոր հայորդեաց կողմից:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 414

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԿԱՌԼՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՌԼՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Պետրոսեան,

Անձնապէս ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ ծանօթ ենք Ձեր բարի գործերին: Յատկապէս մեր Երկրի անկախութիւնից յետոյ Դուք կարեւոր աւանդ էք բերում Հայաստանի արդիւնաբերութեան վերականգնմանն ու զարգացմանը եւ նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ արժանանալով մեր ժողովրդի սիրուն ու յարգանքին:

Այսօր առիթ ունենք անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւններին, որ արտայայտութիւնն են առ Աստուած Ձեր անկեղծ հաւատի: Դուք սիրով յանձն առաք Սուրբ Գայանէ վանքի բարեզարդման եւ ջեռուցման համակարգի տեղադրման հովանաւորութիւնը՝ յաւերժացնելով Ձեր անունը որպէս վաղ միջնադարեան այդ շքեղակառոյց վանքի բարերար: Գոհունակութիւն է Մեզ համար, որ զորաւոր է մեր ժողովրդի զաւակների նախանձախնդրութիւնը հնագոյն մեր սրբավայրերի պահպանութեան նկատմամբ, որոնք դարեր շարունակ աստուածային օրհնութիւն են սփռում նուիրական մեր հողին: Ձեր գործերը բարի օրինակ են մեր ժողովրդի զաւակաց համար՝ իրենց արդար վաստակը ծառայեցնելու ի նպաստ եկեղեցաշէն ու հայրենաշէն՝ «գրոյ յիշատակի արժանի» գործերի:

Ի գնահատութիւն մեր Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնների եւ սիրով ընդառաջ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ եւ Վանորէից տեսուչ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք, որ Սուրբ Գայանէ Կոյսի բարեխօսութեամբ Բարին Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով եկեղեցաշէն ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Յուլիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 417

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Տիրոջ կամքով այսօր ուրախ առիթն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի նուիրական այս յարկի ներքոյ ընդունել Ձեզ, յարգարժան պրն Մարտիրոսեան, եւ բերել Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Դուք անխոնջ նուիրումով, գիտական ու մանկավարժական արդիւնաշատ գործունէութեամբ Ձեր կեանքի ողջ ընթացքին ազնիւ ծառայութիւն էք մատուցում Հայրենի մեր Երկրին ու հաւատաւոր ժողովրդին: Երեւանի Պետական Համալսարանում Ձեր ուսումնառութիւնը աւարտելուց յետոյ Դուք մնացիք մայր կրթօջախում եւ տասնեակ տարիներ Ձեր կարողութիւնները ի սպաս բերեցիք Համալսարանին՝ նախ որպէս դասախօս, ապա որպէս ռեկտոր: Մենք տեղեակ ենք, թէ Համալսարանում Ձեր երկարամեայ պաշտօնավարութեան ընթացքին ինչպիսի նախանձախնդրութեամբ ներդրեցիք Ձեր ջանքերը, որպէսզի Համալսարանը, իր կոչմանը հաւատարիմ, շարունակի գիտութեան լոյսը մատռուակել երիտասարդ հայորդեաց եւ նրանց հոգիները սնել Սահակ-Մեսրոպեան դպրոցից սկիզբ առնող ազգային մեր սրբազան արժէքներով:

Գնահատարժան է նաեւ Ձեր գիտական վաստակը ֆիզիկայի բնագաւառում եւ Ձեր ծառայութիւնը՝ Ռադիոֆիզիկայի եւ Էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրէնի պատասխանատու պաշտօնում: Ձեր ղեկավարութեամբ ինստիտուտի ձեռք բերած նուաճումները լայն կիրառութիւն են գտել մեր երկրում՝ ընդգրկելով գիտութեան եւ արտադրութեան տարբեր ոլորտները:

Այսօր Դուք աննուազ նոյն եռանդով կարեւոր աւանդ էք բերում գիտութեան զարգացմանը՝ որպէս ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի նախագահ: Ուրախ ենք, որ Ձեր քաջահմուտ ղեկավարութեամբ Ազգային Ակադեմիան շարունակում է արգասաւորութեամբ ծառայել մեր երկրին ու ժողովրդին՝ բարձր պահելով հայ գիտութեան վարկն ու համարումը ամբողջ աշխարհում:

Յարգարժան պրն Մարտիրոսեան, առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւններին:

Իբրեւ անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի, Դուք Ձեր հարուստ փորձառութեամբ ու կարողութիւններով Ձեր գնահատարժան օգտակարութիւնն էք բերում, որպէսզի Մայր Հայրենիքում եւ Սփիւռքում առաւել կազմակերպուած լինի եկեղեցական մեր կեանքը եւ միշտ զօրաւոր՝ հայորդեաց նուիրումն ու նախանձախնդրութիւնը հանդէպ ազգային եւ հոգեւոր մեր արժէքները:

Սիրեցեալ մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Ամենախնամ Աստուծոյ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրն Իր հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր գիտական ու վարչական գործունէութեանը, ազգօգուտ ծրագրերին ու նախաձեռնութիւններին:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ առատ ողորմութեան:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 406

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Աստուածկառոյց մեր հոգեւոր կենտրոնից գոհունակ սրտով Հայրապետական օրհնութիւն ենք բերում եւ գնահատանքի Մեր խօսքը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակին:

Աւելի քան յիսուն տարիներ Դուք Ձեր ջանքերն ու նուիրումն էք բերում Հայոց պատմութեան տարբեր հարցերի լուսաբանմանը եւ նպաստում, որ մեր ժողովրդի հոգում արթուն լինեն անցեալի յիշատակներն ու արժէքները: Ձեր բազմաթիւ ուսումնասիրութիւններն ու յօդուածները, կազմած դասագրքերը, միջազգային գիտաժողովներում Ձեր զեկուցումները կարեւոր աւանդ են հայրենի պատմագիտութեանը եւ ճանաչում են բերել Ձեզ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս:

Մեծ է եւ գովարժան Ձեր վաստակը երիտասարդ սերնդի կրթութեան գործում: Երկար տարիներ դասաւանդելով Երեւանի Պետական Համալսարանում եւ բարձրագոյն այլ կրթօջախներում՝ Դուք փոխանցում էք Ձեր ուսանողներին ոչ միայն գիտելիք, այլեւ՝ Ձեր հոգու սէրը մեր Հայրենիքի ու ժողովրդի հանդէպ, Ձեր նուիրումը պատմական գիտութեանը: Գնահատելի են Ձեր ծառայութիւնները նաեւ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում՝ պաշտօնավարելով որպէս փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար, հայոց պատմութեան եւ հասարակական գիտութիւնների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Դուք հաւատաւոր հոգով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական սիրով Ձեր մեծ ու ազնիւ ներդրումն էք բերում մեր եկեղեցական կեանքում՝ որպէս Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ մատուցելով Ձեր ծառայութիւնները ի յաւէտ պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւններն ու վաստակը հայագիտութեան ու կրթութեան բնագաւառներում, Ձեր անմնացորդ սէրն ու նուիրումը մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

# ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Աստուած Իր շնորհի եւ օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչանքով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը գիտութեանը, մեր Հայրենիքին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սուրբ Էջմիածնի
ընդ համարաւ 407

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՐՃ ՁԵՅԹՈՒՆՑՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՐՃ ՁԵՅԹՈՒՆՑԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Յարգարժան պրն Ձեյթունցեան, տաղանդաւոր հայորդուդ անունն ու գրական գործունէութիւնը հանրաճանաչ են ընթերցասէր լայն շրջանակներում: Դուք արժէքաւոր ստեղծագործութիւններով բարեզարդում էք հայ գրականութեան հարուստ անդաստանը՝ ազգասէր ու հաւատաւոր մտաւորականի Ձեր արժանաւոր մասնակցութիւնը բերելով մեր մշակոյթի նորոգ զարթօնքին ու հասարակական կեանքի առաջընթացին: Ձեր գրական գործերը, որ յատկանշւում են խոհափիլիսոփայական մտածողութեամբ, ընթերցողին վեր են բարձրացնում առօրեայ իրականութիւնից, հաղորդակցում ճշմարիտ ու մնայուն արժէքներին, մարդկային վեհագոյն խոհերին ու ձգտումներին: Այսօր Ձեր պիեսները յաջողութեամբ բեմադրւում են մայրաքաղաքի թատրոններում՝ մեծ ընդունելութեան արժանանալով թատերասէր հասարակութեան կողմից:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր արդիւնաշատ գործունէութեան ողջ ընթացքին մշտապէս դրսեւորել էք որդիական անկեղծ սէր ու հաւատարմութիւն հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Մեծարգոյ Տիար Ձեյթունցեան, մեր մշակոյթի, հայ գրականութեան անդաստանում Ձեր մեծ վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ**

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթք ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած՝ հայցելով, որ միշտ շնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու ստեղծագործական նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ։ Թող Բարձրեալ Տէրն Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ՝ երկնաhեղ հանապազ բիւր օրհնութեամբ։

*Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն։*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Հունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 409

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌՈՒԲԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Ուրախ ենք մեծապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու շնորհալի ու անուանի հայորդուդ եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Սիրելի պրն Մաթեւոսեան,

Ձեր նուիրումի ոգին Դուք ամբողջապէս արտայայտել էք երգարուեստի ասպարէզում՝ Ձեր աստուածպարգեւ տաղանդը ի սպաս բերելով արուեստի ճանապարհով Հայրենիքին ու հարազատ ժողովրդին ծառայելու առաքելութեանը: Ահաւասիկ, տասնամեակներ շարունակ Հայաստանի եւ աշխարհի տարբեր բեմահարթակներից Ձեզ յատուկ ներշնչանքով Դուք մատուցում էք մեր ազգային երաժշտութեան գոհարները՝ ունկնդիրներին գրավելով Ձեր ձայնի գեղեցկութեամբ ու կատարողական բարձր վարպետութեամբ: Երգչի Ձեր յաջողութիւնների ու ձեռքբերումների խօսուն վկայութիւններն են պետական բազում մրցանակները, կոչումներն ու պարգեւները, բայց առաւել՝ ճանաչումն ու անկեղծ սէրը երաժշտասէր հայորդեաց:

Մեծ ու գնահատելի է նաեւ Ձեր աւանդը երաժիշտների նոր սերունդ պատրաստելու շնորհակալ գործում: Շուրջ երկու տասնամեակ դասաւանդելով Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայում, Դուք Ձեր սաներին փոխանցում էք Ձեր գիտելիքներն ու վարպետութիւնը եւ արուեստագետի Ձեր ճաշակը՝ նրանց հաղորդ դարձնելով ազգային երաժշտութեան մաքուր ակունքներին:

Մեծարգոյ պրն Մաթեւոսեան, մեր ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեան եւ երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ   Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ   Մ Ե Ս Ր Ո Պ**

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր, որպէսզի շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը հայ երգարուեստին, մեր Հայրենիքին ու սիրեցեալ ժողովրդին:

Թող Տիրոջ օրհնութեամբ Ձեզ միշտ ուղեկից լինեն հաւատաւոր հայորդեաց աղօթքներն ու սէրը:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 410

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՎԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՍՈՒԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ գոհունակութեամբ անդրադառնում հայ թատերական արուեստի ասպարէզում անուանի հայուհուդ բերած ներդրումին:

Սիրելի Տիկին Գրիգորեան, թատերասէր հասարակութեանը քաջածանօթ եւ սիրելի են Ձեր անունն ու բարձրարուեստ դերակատարումները: Տասնամեակներ շարունակ Դուք Ձեր տաղանդն ու վարպետութիւնը հոգու ողջ նուիրումով ծառայեցրել էք հայ թատրոնին: Մեծ է Ձեր վաստակը Երեւանի Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական կոմեդիայի թատրոնում, որի ներկայացումներն առանձնակի գունեղութիւն եւ հնչեղութիւն են ստանում Ձեր ուրոյն դերասանական խաղով: Ի գնահատութիւն բեմարուեստի ասպարէզում անուանի հայուհուդ նշանակալի յաջողութիւնների՝ Դուք իրաւամբ արժանացել էք պետական բարձր պարգեւների ու կոչումների:

Մեզ համար առանձնակի գոհունակութիւն է հաստատել, որ մշակոյթի ու արուեստի հանդէպ նախանձախնդրութեամբ ու անկեղծ նուիրումով շարունակում էք թատերական Ձեր գործունէութեամբ ուրախութիւն եւ հիացում պարգեւել հայ հանդիսատեսին:

Մեծազնիւ Տիկին Գրիգորեան, հայ թատրոնի հարուստ անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ  Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ  Մ Ե Ս Ր Ո Պ**

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամ Աստուած Իր օրհնութեան մէջ պահպանի Ձեզ եւ պարգեւի քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ: Թող Բարձրեալ Տէրը հանապազ օրհնութեամբ ամենայն բարիք

պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պահպանելով Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Հունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 408

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԽՈՐԵՆ ՄԵՅԽԱՆԵՋՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԽՈՐԷՆ ՄԷՅԽԱՆԷՋԵԱՆ» ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ շնորհաւորում ծննդեան եօթանասուներորդ տարեդարձի առիթով:

Սիրելի պրն Մեյխանէջեան,

Ուրախ ենք գնահատանքի Մեր խօսքը յղել Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսեւորած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի եւ մատուցած ծառայութիւնների համար: Սովորելով Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում, ապայ կրթութիւնն ամբողջացնելով Կոմիտասի անուան Երեւանի պետական Կոնսերվատորիայում, Դուք Ձեր կեանքի ողջ ընթացքին կապուած մնացիք մեր Սուրբ Եկեղեցուն՝ Ձեր կարողութիւնները ամենայն սիրով ծառայեցնելով նրա շինութեանն ու պայծառութեանը:

Տասնամեակներ շարունակ Դուք ամենայն նախանձախնդրութեամբ ղեկավարեցիք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը՝ Ձեր շնորհներն ու հարուստ փորձառութիւնը ի սպաս բերելով սրբազան արարողութիւնների պատշաճ ու վայելուչ կատարմանը: Բարեյիշատակ Վազգէն Ա Հայրապետի օրհնութեամբ Դուք նաեւ հեղինակեցիք Սուրբ Պատարագի երգեցողութեան նոր մեղեդի, որը բազմաթիւ անգամներ հնչեց Մայր Տաճարում՝ սիրով ընդունուելով մեր ժողովրդի բարեպաշտ զաւակաց կողմից:

Մայր Տաճարում Ձեր ծառայութեանը զուգընթաց Դուք երկար տարիներ դասաւանդեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում՝ ծառայելով կարող ու գիտակ հոգեւորականներ պատրաստելու եկեղեցաշէն գործին: Մենք սիրով յիշում ենք Հոգեւոր Ճեմարանում Մեր ուսումնառութեան տարիները, երբ ականատեսն էինք մանկավարժական Ձեր անձնդիր ջանքերին ու նախանձախնդրութեանը:

Ուրախ ենք, որ ներկայիս եկեղեցանուէր Ձեր գործունէութիւնը արդիւնաւորութեամբ շարունակում էք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում, որպէս Առաջնորդանիստ

Սուրբ Վարդան եկեղեցու երգչախմբի գեղարուեստական ղեկավար՝ վայելելով սէրն ու յարգանքը հաւատաւոր հայորդիների:

Ի գնահատութիւն մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց եւ սիրով ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը հայցելով Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին:

Թող Բարին Աստուած Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 387

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հունիս-հուլիս ամիսներին.

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Գրիգոր Փիտեճյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Անժել Գարայան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Ջորջ սարկավագ Մանտոսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Անդրանիկ Շաքարյան (Բուլղարիայի հայոց թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.
Ռուբեն Շարբաթյան (Արմավիրի թեմ)
Վալտեր Մարության (Գեղարքունյաց թեմ)
Գարուն Միրզոյան (Կոտայքի թեմ)
Վրթանես քահանա Գալայճյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Ստեփան Մելքոնյան (Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն)
Հայ Մարմնամարզական Միություն (Հալեպ, Սիրիա)

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ավետիս աբեղա Սահակյանը՝ հոգևոր ծառայությունն ինքնակամորեն լքելու կանոնազանց ընթացքի համար:

Կարգալույծ հռչակված աբեղան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Արտակ Սահակյան ավազանի անունով:

## ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Գուգարաց թեմի հոգևոր սպասավոր Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանը:

Հայրապետական վճռի կայացման համար հիմք են ծառայել Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի միջնորդագիրը Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանին քահանայական կարգից ազատ կացուցանելու վերաբերյալ, ինչպես նաև՝ Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանի դիմումը:

Կարգալույծ հռչակված քահանան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Տիգրան Եղիազարյան ավազանի անունով:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում համայն մեր ժողովրդին, Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին Սահմանադրության Օրվա առիթով:

Տոնի խորհրդով կարևորենք սահմանադրական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնցով վերահաստատվեց մեր անկախ պետականությունը և որոնցով առաջնորդվելով՝ մեր ժողովուրդը իրականություն պիտի դարձնի հզոր ու բարօր Հայրենիքի իր արդար տեսիլքը:

Թող Բարձրյալն Աստված օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ ի սեր մեր երկրի առաջընթացի և իր նոր կյանքի կառուցման և բոլոր հույսերի ու իղձերի մարմնավորման:

Աղոթում ենք, որ Տերը Իր շնորհի ներքո խաղաղության մեջ պահպանի մեր երկիրը և աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հուլիսի 2007 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից անվանի գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի մահվան առիթով ցավակցական գիր է ուղղել հանգուցյալի ընտանիքի անդամներին ու մերձավորներին, որում ասվում է. *«Ցավով տեղեկացանք մեր ժողովրդի տաղանդավոր զավակ Տիար Սարգիս Մուրադյանի մահվան մասին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հոգելույս հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին, արվեստագետ ընկերներին ու մերձավորներին:*

*Սարգիս Մուրադյանը իր բարձր արվեստով արժանի տեղ ունի հայ գեղանկարչության երախտավորների շարքում: Գեղարվեստի շնորհաշատ ու նվիրյալ մշակը իր բեղմնավոր կյանքի ընթացքում ստեղծեց ուրույն և մեծարժեք կտավներ, որոնք հարստացնում են հայ մշակույթի անդաստանը:*

*Ջերմ սիրով նա ծառայեց մեր Հայրենիքին ու ժողովրդին՝ իր նվիրումն ու անմնացորդ ջանքերը բերելով նաև Հայաստանի անկախության վերահաստատմանն ու մեր երկրի առջև ծառացած դժվարությունների հաղթահարմանը: Հայրենասեր հայորդին բարի հիշատակ է թողնում մեր ժողովրդի հոգում՝ ի Տեր ննջելով արժանավոր գործերով և ստեղծագործական արգասավոր վաստակով:*

*Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ Սարգիս Մուրադյանի լույս հոգին՝ դասելով «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ»: Թող Տերը Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Մուրադյան ընտանիքի սգակիր անդամներին»:*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

# ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆԱՏՈՒՆԸ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՐԱՐ ՋԵՅՄՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ

Հունիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Աթոռի վերանորոգված Վանատան բացման արարողությունը: Անվանի բարերար Գալուստ Կյուլպենկյանի արդյամբ 1970-ական թթ. կառուցված Վանատան վերանորոգումը հոգացել է ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, բուստոնաբնակ բարերար Ջեյմս Գալուստյանը՝ ի սեր և ի հարգանս իր ծնողների՝ Մարտիրոս և Մարիամ Գալուստյանների:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարեցին նորաբաց տան օրհնության արարողությունը: Այնուհետև սրտի խոսք ասաց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը՝ գոհունակությամբ արձանագրելով այն փաստը, որ եկեղեցիներից զատ բացվում են նաև այլ շինությունների դռներ՝ կարևոր նպաստ բերելով Եկեղեցու գործունեությանը: «»

Վերջում օրհնության խոսք ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր գնահատանքը հայտնելով կոչումով սարկավագ երիտասարդ բարերար Ջեյմս Գալուստյանին: Վեհափառը կարևոր համարեց ամեն մի հայի կապվածությունը և նվիրումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: «*Մայր Աթոռը յուրաքանչյուր հայորդու սրտի մեջ է: Եվ բնական է, որ յուրաքանչյուր հայորդի ցանկալով պիտի ցանկա, որ Մայր Աթոռը լինի պայծառաշուք, լինի այնպիսի տեսքի ու վիճակի, որ յուրաքանչյուր հայի սիրտ ցնծա ուրախությամբ և լցվի հպարտության զգացումով: Ամեն ոք, որ մտնի այստեղ, փառք տա Աստծուն, որ Մայր Աթոռն իր պատմությամբ ու անցյալով, իր ներկայով և իր վաղվա օրով հզոր է, գեղեցիկ և օրավուր պայծառանում է*»,- իր խոսքում ասաց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Նորին Սրբությունը Հայաստանյայց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով զարդարեց Ջեյմս Գալուստյանի կուրծքը:

Բացման արարողությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի անդամներ և Մայր Աթոռի նվիրյալ բարերար զավակներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ հանձնեց ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Ռադիկ Մարտիրոսյանին և ԳԱԱ Հայոց պատմության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Վլադիմիր Բարխուդարյանին:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի ողջույնի խոսքով:

ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը և ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը ներկայացրեցին մեծարյալների գիտա-հասարակական գործունեությունը:

Մեծարյալներին գնահատանքի խոսք ասացին նաև ակադեմիկոսներ Նիկոլայ Հովհաննիսյանն ու Սերգեյ Համբարձումյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ մշակույթի ու գիտության գործիչների նկատմամբ մշտապես ցուցաբերվող ուշադրության և Հայրապետական գնահատության համար:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները և ընթերցվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի և Տ Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի կողմից:

Տիար Ռադիկ Մարտիրոսյանին տրված կոնդակում ի մասնավորի ասվում է. «*...Դուք անխոնջ նվիրումով, գիտական ու մանկավարժական արդյունաշատ գործունեությամբ Ձեր կյանքի ողջ ընթացքին ազնիվ ծառայություն էք մատուցում Հայրենի մեր Երկրին ու հավատավոր ժողովրդին: Երևանի Պետական համալսարանում Ձեր ուսումնառությունն ավարտելուց հետո Դուք մնացիք մայր կրթօջախում և տասնյակ տարիներ Ձեր կարողություններն ի սպաս բերեցիք համալսարանին՝ նախ որպէս դասախոս, ապա որպես ռեկտոր: Մենք տեղյակ ենք, թե համալսարանում Ձեր երկարամյա պաշտոնավարության ընթացքին ինչպիսի նախանձախնդրությամբ ներդրեցիք Ձեր ջանքերը, որպեսզի համալսարանը, իր կոչմանը հավատարիմ, շարունակի գիտության լույսը մատովակել երիտասարդ հայորդյաց և նրանց հոգիները սնել Սահակ-մեսրոպյան դպրոցից սկիզբ առնող ազգային մեր սրբազան արժեքներով*» (տե՛ս էջ 20):

Տիար Վլադիմիր Բարխուդարյանին տրված կոնդակում ասվում է. «*...Ավելի քան հիսուն տարիներ Դուք Ձեր ջանքերն ու նվիրումն էք բերում Հայոց պատմության տարբեր հարցերի լուսաբանմանը և նպաստում, որ մեր ժողովրդի հոգում արթուն լինեն անցյալի հիշատակներն ու արժեքները: Ձեր բազմաթիվ ուսումնասիրություններն ու հոդվածները, կազմած դասագրքերը, միջազգային գիտաժողովներում Ձեր զեկուցումները կարևոր ավանդ են հայրենի պատմագիտությանը և ճանաչում են բերել Ձեզ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս*» (տե՛ս էջ 22):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալների կուրծքը զարդարեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո երախտագիտության խոսք ասացին մեծարյալները:

Տիար Ռադիկ Մարտիրոսյանն իր խոսքում ասաց. «Մեծ պատիվ է այսօր ինձ համար Հայոց Հայրապետի ձեռքից ստանալ մեր Եկեղեցու բարձրագույն պարգևը: Ես կարծում եմ, որ այն Վեհափառի կողմից արժանավորումն է կրթության և գիտության ոլորտում իմ համեստ ավանդի: Ինչ վերաբերում է իմ վաստակին մեր Եկեղեցու գործունեության ասպարեզում՝ այն շատ չնչին, համեստ է, և այս պարգևը ես տեսնում եմ որպես պարտավորություն. պարտավորություն հետագա այն անելիքների, որ մեր մտավորականությունը պետք է կատարի մեր Եկեղեցու հետ ձեռք ձեռքի տված»: Պրն Մարտիրոսյանը նշեց, որ մտավորականներն անելիքներ շատ ունեն. հատկապես կարիք է զգացվում մեր ժողովրդի կյանքում և նրա լեզվի, մշակույթի, ինքնության պահպանության գործում Եկեղեցու ունեցած մեծագույն դերի արժեվորման համար ակադեմիական խորը ուսումնասիրությունների: Պրն Մարտիրոսյանը կարևորեց այն հանգամանքը, որ հատկապես վերջին շրջանում՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհիվ, հնարավոր է լինում հասնել շատ խնդիրների լուծման՝ ի մասնավորի ընդգծելով նաև Եկեղեցու և Պետության հարաբերությունները կարգավորող օրենքի ընդունման նշանակալիությունը: «....Ես ուզում եմ կոչ անել մեր բոլոր մտավորականներին, որ այն համագործակցությունը, որ ստեղծել է մեզ համար Գարեգին Երկրորդ Հայրապետը, շատ բարձր գնահատենք և մեծ նվիրումով աշխատենք այն խնդիրների ուղղությամբ, որոնք այսօր հուզում են մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին և մեր երկրին»,- եզրափակեց իր խոսքը Ռադիկ Մարտիրոսյանը:

Տիար Վլադիմիր Բարխուդարյանն իր խոսքում ասաց, որ 12 տարի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ լինելու շնորհիվ ինքը առավել է կապվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, և այդ կապը լավագույնս նպաստել է ըմբռնելու այն մեծագույն դերը, որ ունեցել և ունի մեր ժողովրդի կյանքում Հայ Առաքելական Եկեղեցին: «Հայ Եկեղեցու պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայոց պատմություն: Հայ Եկեղեցին ստեղծել է թե՛ հոգևոր, թե՛ նյութական մշակույթի մնայուն արժեքներ և այդ արժեքները պահպանելը և փոխանցելը սերունդներին ոչ միայն մեր հոգևորականության, այլև մտավորականության կարևոր գործն է»,- ասաց տիար Բարխուդարյանը և, անդրադառնալով հայագիտության մեջ առկա խնդիրներին, վստահություն հայտնեց, որ Վեհափառ Հայրապետը կշարունակի իր աջակցությունը բերել մեր մշակույթի և գիտության, այդ թվում և հայագիտության զարգացմանը:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձր պարգևը տրվում է կրթության, գիտության և մշակույթի ոլորտի եկեղեցանվեր երախտավորներին, ովքեր շարունակողներն են դառնում Ս. Սահակի և Ս. Մեսրոպի առաքելության: Նորին Սրբությունն իր խոսքում ասաց. «*...Մենք մեզ զորեղ ենք զգում՝ տեսնելով մեր մտավորականությանը կանգնած մեր կողքին, մեր եկեղեցական սպասավորների հետ ծառայության մեջ՝ և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ ոլորտներում: ...Եկեղեցին միշտ էլ հովանավորող է եղել մեր մշակույթին, գիտությանն ու կրթությանը: Դժբախտաբար այնպիսի ժամանակներ բաժին ընկան մեր Եկեղեցուն, որ նա չկարողացավ այդ ոլորտում առավել աջակցություն ունենալ և այդ առաքելությունն ամբողջականորեն իրականացնել: Եկեղեցու առջև ծառացավ հոգևոր կյանքը վերակազմակերպելու և վերակառուցելու խնդիրը: Փառք Աստծո, այսօր աստիճանաբար լուծվում են առկա խնդիրները, և մենք աստիճանաբար Աստծո*

*օրհնությամբ և օգնականությամբ պիտի կարողանանք վերադարձնել Եկեղեցուն այդ պատվավոր տիտղոսը` հովանավոր հայ գիտության, կրթության և մշակույթի*»:

Նորին Սրբությունը ուրախություն հայտնեց, որ նման բարձր շքանշանով զարդարում է մեր ժողովրդի ու Եկեղեցու երկու արժանավոր զավակների կուրծքը, վերստին բարձր գնահատեց նրանց` հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ արդյունաշատ գործունեության միջոցով ցուցաբերվող նվիրումը, սերն ու հավատարմությունը և նրանց մեծ վաստակը մեր մշակույթի ու գիտության անդաստանում:

Հանդիսության ընթացքում արևմտաեվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններով ելույթ ունեցավ մեներգչուհի Ծովինար Ամիրյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՎԱՆԻ ԵՐԵՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշաններ հանձնեց հայ մշակույթի անդաստանում մեծ վաստակ ունեցող երեք անվանի գործիչների՝ տիկին Սվետլանա Գրիգորյանին, տիար Պերճ Զեյթունցյանին և տիար Ռուբեն Մաթևոսյանին:

Հանդիսավոր արարողության ընթացքին մեծարյալների կյանքի ուղուն և ստեղծագործական վաստակին անդրադարձան Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Երվանդ Ղազանչյանը, Հայաստանի Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը և կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները և ընթերցվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի կողմից:

Տիկին Սվետլանա Գրիգորյանին տրված կոնդակում ասվում է. «*...Թատերասեր հասարակությանը քաջածանոթ և սիրելի են Ձեր անունն ու բարձրարվեստ դերակատարումները: Տասնամյակներ շարունակ Դուք Ձեր տաղանդն ու վարպետությունը հոգու ողջ նվիրումով ծառայեցրել եք հայ թատրոնին: Մեծ է Ձեր վաստակը Երևանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, որի ներկայացումներն առանձնակի գունեղություն և հնչեղություն են ստանում Ձեր ուրույն դերասանական խաղով: Ի գնահատություն բեմարվեստի ասպարեզում անվանի հայուհուդ նշանակալի հաջողությունների՝ Դուք իրավամբ արժանացել եք պետական բարձր պարգևների ու կոչումների*» (տե՛ս էջ 28):

Տիար Պերճ Զեյթունցյանին տրված կոնդակում ասվում է. «*... Ձեր գրական գործերը, որ հատկանշվում են խոհափիլիսոփայական մտածողությամբ, ընթերցողին վեր են բարձրացնում առօրյա իրականությունից, հաղորդակցում ճշմարիտ ու մնայուն արժեքներին, մարդկային վեհագույն խոհերին ու ձգտումներին: Այսօր Ձեր պիեսները հաջողությամբ բեմադրվում են մայրաքաղաքի թատրոններում՝ մեծ ընդունելության արժանանալով թատերասեր հասարակության կողմից: Գոհունակություն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր արդյունաշատ գործունեության ողջ ընթացքին մշտապես դրսևորել եք որդիական անկեղծ սեր ու հավատարմություն հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և լուսավորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը*» (տե՛ս էջ 24):

«*Ձեր նվիրումի ոգին Դուք ամբողջապես արտահայտել եք երգարվեստի ասպարեզում՝ Ձեր աստվածպարգև տաղանդը ի սպաս բերելով արվեստի ճանապարհով Հայրենիքին ու հարազատ ժողովրդին ծառայելու առաքելությանը: Ահավասիկ, տասնամյակներ շարունակ Հայաստանի և աշխարհի տարբեր բեմահարթակներից Ձեզ հատուկ ներշնչանքով Դուք մատուցում եք մեր ազգային երաժշտության գոհարները՝ ունկնդիրներին գրավելով Ձեր ձայնի գեղեցկությամբ ու կատարողական բարձր վարպետությամբ: Երգչի Ձեր հաջողությունների ու ձեռքբերումների խոսուն վկայություններն են պետական բազում մրցանակները, կոչումներն ու պարգևները, բայց առավել՝ ճանաչումն ու անկեղծ սերը երաժշտասեր հայորդյաց: Մեծ ու գնահատելի է նաև Ձեր ավանդը երաժիշտների նոր սերունդ պատրաստելու շնորհա-*

*կալ գործում: Շուրջ երկու տասնամյակ դասավանդելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, Դուք Ձեր սաներին փոխանցում եք Ձեր գիտելիքներն ու վարպետությունը և արվեստագետի Ձեր ճաշակը՝ նրանց հաղորդ դարձնելով ազգային երաժշտության մաքուր ակունքներին*»,- ասվում է Ռուբեն Մաթևոսյանին շնորհված Հայրապետական կոնդակում (տե՛ս էջ 26):

Այնուհետև ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծարյալներին պարգևատրեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններով, որից հետո շքանշանակիրներն իրենց սրտի երախտագիտական խոսքն ուղղեցին Նորին Սրբությանն ու ներկաներին: «Շատ պարգևներ եմ ստացել, սակայն այսքան չեմ հուզվել»,- նշեց տիկին Գրիգորյանը՝ շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին մեր մշակույթի հանդեպ ունեցած հոգածու վերաբերմունքի համար: «Այս շքանշանը հոգևոր իմաստ և խորհուրդ ունի: Հայոց Եկեղեցին Աստծո տուն է, որը մեր ամբողջ պատմության ընթացքին շաղախված է եղել նաև ազգային բովանդակությամբ. լինելով և ազգային տուն մեզ համար»,- նշեց տիար Ջեյթունցյանը՝ հաստատելով, որ հայ մտավորականությունը միշտ կանգնած է Եկեղեցու կողքին: Հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու առաքելության կարևորությանն անդրադարձավ տիար Մաթևոսյանը՝ ընդգծելով, որ Եկեղեցու շքանշանն ամենից բարձրն է իր կյանքում:

Հանդիսությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: «*Հայրապետական պարգևաբաշխության արժանացած այս մտավորականները նրանցից էին, ովքեր դժվարին ժամանակներում շարունակեցին իրենց արվեստով ոգի պարգևել մեր ժողովրդի զավակներին: Նրանք եղան այն անձինք, ովքեր դժվարին պայմաններում շարունակեցին իրենց արվեստով հիացնել, մխիթարել և ոգեշնչել մեր ժողովրդին: ...Այն վկայությունը, այն խոսքերը, որ արտասանվեցին այսօր, մեր ժողովրդի անսասան ոգու, անսասան հավատի ու կամքի մասին, իրապես, ոչ միայն մեզ ոգևորություն պարգևեցին, ոչ միայն մեզ հպարտություն ներշնչեցին ու խանդավառեցին, այլ նաև այս վկայությունները լավատեսության ոգով համակեցին դեպ մեր վաղվա օրը*»,- ասաց Հայոց Հայրապետը՝ բարձր գնահատելով մեծարյալների հայրենասիրությունը, հայրենի հողի ու մեր ժողովրդի հանդեպ ունեցած իրենց մեծ և անհուն սերը, որը մղել է նրանց աշխատելու և ստեղծագործելու, կերտել է նրանց բարի անունը, դարձրել նրանց մեր ժողովրդի արժանավոր զավակներ:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական տարբեր կատարումներով հանդես եկան «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտները՝ գեղարվեստական ղեկավարությամբ տիկին Սիլվա Մեքինյանի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանին և Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանին:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը մարզպետին հանձնեց, ի գնահատություն Հայոց Եկեղեցուն մատուցած իր ծառայությունների և թեմակալ առաջնորդի խնդրանքին ընդառաջ, մայիսի 9-ին նրան շնորհված «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի Հայրապետական կոնդակը: Տիար Շահգալդյանի հովանավորությամբ վերանորոգվել և բարեզարդվել է Ալափարս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին:

«*Գոհունակություն է Մեզ համար գնահատանքի Մեր խոսքը բերել Ձեզ, որ բարի գործերով հաստատում եք Ձեր հավատն առ Աստված և սերը՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Դուք ազնիվ հոգով ստանձնեցիք Կոտայքի մարզի Ալափարս գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգության ու բարեզարդման հովանավորությունը՝ կարևոր ավանդ բերելով ինչպես Ալափարս, այնպես և հարակից գյուղերում հոգևոր կյանքի վերազարթոնքին: Գոհունակություն է Մեզ համար, որ հավատավոր Մեր զավակները այսուհետ նորոգված սրբավայրի կամարների ներքո պիտի փառաբանական իրենց աղոթքը բարձրացնեն առ Աստված և շնորհընկալը դառնան երկնային պարգևների*»,- ասվում է Հայրապետական Սրբատառ Կոնդակում:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերը Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի բարեխոսությամբ տիար Շահգալդյանին պարգևի քաջառողջ արևշատություն և եկեղեցաշեն ու ազգօգուտ գործոց նորանոր հաջողություններ: Մեծարգո մարզպետը, իր հերթին շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար, պատրաստակամություն հայտնեց ըստ ամենայնի իր օգտակարությունը բերելու և աջակցելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐ ՌՈՒԲԵՆ ՇԱՐԲԱԹՅԱՆԻՆ

Հուլիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Տաճարի երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Ռուբեն Շարբաթյանին շնորհեց Հայրապետական Օրհնության գիր` Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդման ընթացքում և Մայր Տաճարի երգչախմբի ղեկավարի պաշտոնում Հայոց Եկեղեցուն և Մայր Աթոռին բերած բազմամյա ծառայության համար:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը Վեհարանում ընդունեց մաեստրո Շարբաթյանին և Մայր Տաճարի երգչախմբին: Բացման խոսք ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը: Այնուհետև իր խորին երախտագիտությունը հայտնեց մաեստրո Շարբաթյանը` Վեհափառ Հայրապետի գնահատանքն իր համար մեծ պատիվ համարելով և պարտավորվածություն հայտնելով այսուհետ առավել մեծ նվիրվածությամբ իր ծառայությունը բերել Հայ Եկեղեցուն: «Ջութակահարի գործիքը ջութակն է, դաշնակահարի գործիքը դաշնամուրն է, իսկ իմ գործիքը երգչախումբն է: Առանց երգչախմբի ես ոչինչ անել չեմ կարող: Հետևաբար այս գնահատնքը հասցեագրված է նաև երգչախմբի յուրաքանչյուր անդամի»,- ասաց իր խոսքում մաեստրոն:

Մայր Տաճարի երգչախմբի կողմից «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի կատարումից հետո ընթերցվեց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը: Կոնդակում ի մասնավորի ասվում է. «*Հարգարժան պրն Շարբաթյան, ուրախ ենք Հայրապետական Մեր գնահատանքի խոսքը հղել Ձեզ` Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ մշտապես դրսևորած Ձեր անկեղծ սիրո ու նվիրումի և մատուցած ծառայությունների համար: Էջմիածին քաղաքի մշակութային կյանքում բերած արդյունաշատ մասնակցությանը զուգընթաց Դուք երկար տարիներ երաժշտություն եք դասավանդում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում` Ձեր կարողությունները սիրով ներդնելով ի նպաստ ճեմարանականների կրթության: Մենք տեղյակ ենք, որ ճեմարանի սաները առանձնակի ակնածանք ու սեր են տածում Ձեր անձի հանդեպ` գնահատելով Ձեր եռանդուն աշխատանքը: Շուրջ մեկ տասնամյակ Դուք ղեկավարում եք նաև Մայր Տաճարի երգչախումբը, որն ապահովում է սրբազան արարողությունների պատշաճ ու վայելուչ կատարումը` գոհունակություն պարգևելով հավատացյալ Մեր զավակներին*»:

Վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիար Շարբաթյանին նրա արդյունաշատ աշխատանքի ու ծառայության համար` հատկապես կարևորելով այն մեծ դերը, որ երգչախումբն իր կատարումներով ունի եկեղեցում` ընդգծով, որ ի տարբերություն բեմահարթակներում հնչող երգեցողության` եկեղեցում երգեցողությունն աղոթք է. «*Մայր Տաճարն Աստծո բնակավայր է, Աստծո տուն է, և այնտեղ ձեր երգեցողությամբ դուք պաշտամունք եք մատուցում Աստծուն, և ձեր այդ ծառայությունը պետք է լինի ձեր կարողությունների և ձեր հոգու լավագույնը*»:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ԸՆՏՐՎԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Հունիսի 22-ին Ֆրանսիայում, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սրահում, տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսիայի նորակազմ թեմի թեմակալ առաջնորդի ընտրությունը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված եռանուն ցանկից (Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան, Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան, Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյան) թեմի Պատգամավորական Ժողովը գաղտնի քվեարկությամբ առաջնորդ ընտրեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանին: Սրբազան Հայրը մինչ այդ պաշտոնավարում էր Լիոնի շրջանում:

Դեռևս անցյալ տարվա դեկտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Սրբատառ Կոնդակով հռչակվեց Ֆրանսիայի հայոց թեմը: Ֆրանսիայի առաջնորդանիստը շարունակելու է մնալ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Թեմի ենթակայության ներքո, համաձայն կանոնադրության, գործելու են երկու՝ Հարավային Ֆրանսիայի և Ռոն-Ալփյանի փոխանորդությունները և 24 եկեղեցական համայնքներ:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական գիր է ուղղել Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանին, Թեմական պատգամավորական ժողովի ատենապետ Կարպիս Ջրբաշյանին և Թեմական խորհրդի ատենապետ Գրիգոր Փափազյանին, որով հաստատել է Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի՝ հունիսի 22-ին տեղի ունեցած ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ:

«*...Հայրապետական օրհնությամբ հաստատում ենք Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, և այսու տնօրինում, որ հրնթացս Սուրբ Պատարագի արարողությանց Ֆրանսիայի հայոց թեմի եկեղեցիներում հիշատակվի նորընտիր առաջնորդի անունը*»,- ասվում է Հայրապետական գրի մեջ: Նորին Սրբությունը նաև իր բարձր գնահատանքն է հայտնել Թեմական խորհրդի անդամներին և Թեմական պատգամավորական ժողովին՝ առաջնորդական տեղապահ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանի գլխավորությամբ թեմակալ առաջնորդի ընտրությունների կազմակերպական աշխատանքների իրականացման համար:

Ամենայն Հայոց Հայրապետը վստահություն է հայտնել, որ նորընտիր առաջնորդն արդյունավորությամբ իր ջանքերն ու տարիների փորձառությունը պիտի ծառայեցնի ի խնդիր Ֆրանսիայի հայոց թեմի զորացման և ֆրանսահայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճման: Նորին Սրբությունը մաղթել է, որ Տերը եկեղեցաշեն և ազգանպաստ գործոց հարանոր հաջողություններ շնորհի Ֆրանսիայի հայոց թեմի բարեպաշտ զավակներին:

## ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունիսի 26-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ֆրանսիայի թեմի նորընտիր առաջնորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը պաշտոնական այցելություն տվեց Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանին: Սրբազան Հոր շքախմբի մաս էին կազմում Թեմական պատգամավորական ժողովի ատենապետ տիար Կարպիս Ջրբաշյանը, Թեմական խորհրդի ատենապետ տիար Գրիգոր Փափազյանը, քարտուղարներ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը, տիար Ժակ Փանոսյանը և գանձապահ Գեղամ Թորոսյանը:

Այցելության նպատակն էր հարգարժան դեսպանին ներկայացնել նորընտիր առաջնորդ Հորը և նորակազմ թեմի առաջիկա ծրագրերն ու աշխատանքները:

Թեմական խորհրդի ատենապետ տիար Գրիգոր Փափազյանը հակիրճ ներկայացրեց թեմի կազմավորման պատմությունը՝ հավաստելով, որ վերջինս ամեն ջանք պիտի գործադրի, որպեսզի ֆրանսիաբնակ մեր համայնքը համախմբվելով եկեղեցու շուրջ՝ լավագույնս դրսևորի իր կարելիություններն ազգային-եկեղեցիական կյանքից ներս:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանը բարի գալուստ մաղթեց բոլորին: Շնորհավորելով նորընտիր առաջնորդին՝ նա իր ուրախությունը հայտնեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի ընտրության համար՝ շեշտելով, որ Սրբազանի կատարած գործերն արդեն խոսում են իր մասին: Պարոն դեսպանը նաև նշեց, որ անձամբ Հայաստանի Հանրապետության դեսպանի հանգամանքով պատրաստ է զորակից և աջակից լինելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի մասնավորի Ֆրանսիայի նորակազմ թեմին:

Հանդիպման ընթացքում արծարծվեցին նաև Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումներն, ինչպես նաև ֆրանսահայ համայնքի կյանքին վերաբերող մի շարք հարցեր:

*ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ*



## Տ. ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Ծնվել է 1940 թ. հունվարի 31-ին Բեյրութում: Սկզբնական կրթությունն ստացել է Պուրճ Համուդի Արզարյան ազգային վարժարանում:

1954 թ. ընդունվել է Անթիլիասի դպրեվանք: Այնուհետև ուսումը շարունակել է Բեյրութի ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան Երկրորդական վարժարանում:

1958 թ. ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան:

1959 թ., հոր մահից հետո, ընդհատել է ուսումը և վերադարձել Բեյրութ՝ հոգալու համար ընտանիքի հոգսերը:

1967 թ. բնակության է մեկնել Ֆրանսիա:

1967 թ. դեկտեմբերի 24-ին ձեռնադրվել է սարկավագ:

1968 թ. հոկտեմբերի 27-ին ձեռնադրվել է աբեղա՝ ձեռամբ Սերովբե արքեպս. Մանուկյանի:

1967-1968 թթ. Ռենսիի Դպրոցասեր վարժարանում հայոց լեզու և կրոն է դասավանդել:

1970 թ. փետրվարի 8-ին վարդապետական աստիճան է ստացել՝ ձեռամբ Սերովբե արքեպս. Մանուկյանի:

1970-1974 թթ. աստվածաբանություն է ուսանել Փարիզի կաթոլիկ ինստիտուտում:

1968-1975 թթ. պաշտոնավարել է Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում:

1975-1980 թթ. եղել է Իսի Լե Մուլինոյի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվը:

1980 թ. մարտին նշանակվել է Հայրապետական պատվիրակի փոխանորդ Լիոնի շրջանում:

1982 թ. փետրվարի 14-ին ձեռնադրվել և եպիսկոպոս է օծվել ձեռամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1987 թ. Լիոնի կաթոլիկ ինստիտուտում հիմնել է հայ աստվածաբանության ամբիոն, իսկ 1988-ին դարձյալ Լիոնում՝ Մարգարյան-Փափազյան ամենօրյա վարժարանը:

Սրբազան Հայրը հրատարակել է «Յաղագս Գրիգոր Պլտեանի Քերթողութեան «Հատուածներ Սենեակի մասին» և «Մոտեցումներ» հատորները, ինչպես նաև մի շարք կրոնական և գիտական-գրական ուսումնասիրություններ, հոդվածներ:

Սրբազան Հոր պաշտոնավարման շրջանում կառուցվել են Շարվիեռ-Փոն դը Շերվի՝ Ս. Նշան և Սենթ Էթիենի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Նորվան Սրբազանի գործունեությունը բարձր է գնահատվել ֆրանսիական իշխանությունների կողմից: Սրբազան Հայրը պարգևատրվել է «Պատվո Լեգեոն» շքանշանով և կառավարական մի շարք այլ պարգևներով:

2004-2007 թթ. գործուն մասնակցություն է ունեցել Ֆրանսիայի հայոց թեմի Կանոնադրության կազմման աշխատանքներին:

2007 թ. հունիսի 22-ին Ֆրանսիայի նորակազմ հայոց թեմի Թեմական ժողովում ընտրվել է թեմակալ առաջնորդ:

## *ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ*

# Տ. ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(3 հունիսի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի»:*
(Մատթ. ԺԱ 30)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր Մայր Տաճարի Ավագ Խորանին կատարվեց մի իրադարձություն հընթացս Սուրբ Պատարագի, որը նման չէ ամեն օրվա և կամ ամեն շաբաթ չի կրկնվում: Սիրելիներ, մեր Եկեղեցին պտղաբերեց Սուրբ Սեղանի ևս ութ սարկավագ սպասավորներ, և ակամայից հիշեցի Տիրոջ այն խոսքերը, թե «Իմ լուծը քաղցր է և բեռը շատ թեթև»: Սակայն որքան էլ քաղցր է և թեթև, լուծը մնում է լուծ, և պետք է արժանապատվությամբ և ամենայն պատասխանատվությամբ կրել այն: Սիրելիներ, նախ մեկ անգամ ևս մեր մտքերի մեջ արթնացնենք և թարմացնենք այն գաղափարը, թե ինչ է նշանակում ծառայել, և ինչ է նշանակում կատարել սարկավագական պաշտոն:

Քրիստոսի Համբարձումից հետո աշակերտները, քրիստոնյաները, հավատավոր ժողովուրդը հավաքվում էին և ամեն անգամ աղոթքից հետո սիրո սեղան էին նստում, որոնց սպասավորության համար ընտրվեցին սարկավագներ: Եվ հետագայում է, որ ձևավորվեց աղոթքի կանոնավոր ընթացքը, Ս. Պատարագի ընթացքը, և այդ սպասավորները ազապեի՝ սիրո ճաշերի սեղաններից դարձան Սուրբ Սեղանի սպասավորներ: Մեծ պատասխանատվություն և մեծ շնորհ՝ տրված Տիրոջ կողմից:

Սիրելիներ, այս պահին բոլորիս համար էլ ուրախության առիթ է, բոլորիս համար էլ մխիթարության ևս մեկ առիթ, և դիմելով ձեզ՝ կխնդրեի բոլորիդ աղոթքները մեր նորընծա սարկավագների՝ խորանի սպասավորների համար, որովհետև ձեզ պետք է այս Սուրբ Խորանից մատուցեն Սուրբգրային ընթերցումները, Հաղորդության պատրաստմանն օգտակար լինեն և ձեզ Տիրոջ կենդանի ու կենդանարար Արյունն ու Մարմինը մոտեցնեն:

Սիրելիներ, այս առիթով ես ցանկանում եմ այսօր իմ որդիական խոնարհումը և շնորհավորանքները ուղղել Հայոց Հայրապետին, ով մեզանից երևի առավել ուրախ է այս և նման առիթներով, որովհետև Վեհափառի տեսիլքն է, ընթացքն է, որ մեր Եկեղեցին լրացնի այն մեծ բացը, որ առաջ է եկել նախորդ մի քանի տասնամյակների

ընթացքում՝ դաշտ, որին կոչված են սպասավորելու, հերկելու և պտուղները հավաքելու մեր սարկավագ եղբայրները: Անդաստանն այդ շատ մեծ է և դեռևս հերկված չէ, և մենք մաղթում ենք իրենց կորով ու եռանդ, քանի որ այդ դաշտի մեջ իրենց արյան սերմերը քրիստոնեության ծլարձակման արմատավորման և պտղաբերության համար հեղեցին բազում սարկավագներ՝ սպասավորության օրինակ ունենալով առաջին սարկավագ Սուրբ Ստեփաննոսին: Նա չնշանավորվեց իր գեղեցիկ երգեցողությամբ, պատմության մեջ չմնաց, Քրիստոսի Եկեղեցու պատմության մեջ չմնաց իր ձայնով ու իր պերճախոսությամբ, այլ իր հավատարմությամբ, անմնացորդ սպասավորությամբ, և անկոտրուն հավատքի միջոցով նա հայտնի դարձավ մեզ և բոլոր ժամանակներին: Եվ այդ սպասավորության ոգին ու կորովը մենք բոլորս մաղթենք մեր սարկավագ եղբայրներին: Այսօր քաջ գիտակցում ենք նոր սերնդի, նոր սպասավորների անհրաժեշտությունը, և մենք այսօր իրենց շնորհավորում ենք, որովհետև գտան այդ քաջությունը՝ դիմադրելու և հաղթահարելու բոլոր դժվարությունները և պատնեշները՝ իրենց ուսին վերցնելով Քրիստոսի լուծը, լուծ, որ քաղցր է և «փոքրոգի»: Մաղթենք, որ մի օր էլ իրենց ուսից այդ լուծը տեղափոխեն պարանոցին և այսպիսով համալրեն մեր Եկեղեցու օծյալ հոգևորականաց շարքերը:

«Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն»:

# Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(17 հունիսի 2007 թ.)

*«Եթե իմանայիք, թե ի՛նչ է՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ, ապա դուք անպարտներին չէիք դատապարտի»:*

(Մատթ. ԺԲ 7)

Այս խոսքերը մեր Տեր Հիսուս Քրիստոս ուղղեց իրեն ամբաստանել ցանկացող փարիսեցիներին: Հիսուս շաբաթ օրով, երբ անցնում էր արտերի միջով, աշակերտներն սկսում են հասկ պոկել և ուտել: Քանի որ հրեական օրենքով արգելվում է շաբաթ օրը որևէ աշխատանք կատարել, փարիսեցիները անմիջապես արձագանքում են և, որ գլխավորն է, ուղղակիորեն մեղադրում Քրիստոսին օրինազանցության և դրա տարածման մեջ, որովհետև շաբաթ օրն աշխատելը օրինավոր չէր: Եվ քանի որ վերջիններս օրենքի տառն են վկայակոչում, Քրիստոս Իրեն հատուկ խոնարհությամբ պատասխանում է. «Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց նա և նրանք, որ նրա հետ էին... Կամ թե Օրենքում չե՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը և անմեղ են…» (Մատթ. ԺԲ 3-5): Ոչ պատահականորեն, նախ Քրիստոս վկայակոչում է Դավթին՝ այն միակին, ով իր ժամանակի մեջ ընթանում էր Աստծո իշխանությամբ, ով փրկարար թագավորի հազվագյուտ օրինակ էր՝ Աստծուց խոստացված և ապա՝ հաղթական, բայց հանդարտ վեհությամբ հռչակում է. «Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա... և ուրեմն մարդու Որդին տերն է շաբաթ օրվա» (Մատթ. ԺԲ 6, 8):

Մատթեոս Ավետարանիչը հստակ ու հանգամանալից փոխանցում է օրվա և ժամանակի պատկերը: Հրեական օրենքը երբևէ չէր արգելում, որ աղքատները դաշտի կամ այգու միջով անցնելիս բերքից ուտեին, բայց ոչ երբեք շաբաթ օրով: Եվ սա ա՛յն պատճառով, որ շաբաթը պահելը հրեաների մեջ ընդունված 39 «անուրանալի» պահանջներից մեկն էր: Եվ քանի որ Տաճարը հրեական միջավայրում հավատի մեծագույն խորհրդանիշ է համարվում, Քրիստոս հայտարարում և հռչակում է. «Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա»: Եվ եթե օրենքը լուծվում է զոհի ու պատարագի համար, ինչո՞ւ չպիտի լուծվի սիրո, գթության և բարի գործերի համար:

Քրիստոս ամեն առիթ օգտագործում է՝ փոխանցելու քրիստոնեական օրենքի ոգին, առաքելությունն ու առավելությունները՝ տարբերակելով առաջնայինն ու երկրորդականը. ներում է առաքյալներին, որովհետև գութն ու սերն առավե՛լ նախընտրելի են Աստծո առաջ, քան «օրինական զգուշավորությունը», մանավանդ՝ անձնա-

կան հանձնառությամբ, որովհետև ծառայությունը ոչ թե գրվածքի հնությամբ է, այլ, ինչպես առաքյալն է նկատում, հոգենորոգությամբ, ըստ կարողության չափի, առանց հապաղելու, արժանավորապես և ծածուկ, որովհետև օրենքի և մարգարեների կատարումը (լրումը) սերն է, որ է Քրիստոս, և ոչ երբեք մարգարեներին ձևականորեն հետևումը: Չէ՞ որ Աստված սիրում է զվարթառատ տուրքը, և զթությունը գործողի կարողությամբ է չափվում՝ զվարթագին, վայելչաբար, անտրտունջ և արդա՛ր վաստակից:

Ի՞նչ օգուտ է մարդուն ճշմարտությամբ իմանալ աստվածային վարդապետությունն ու չարաչար գործել՝ հուսահատի համակերպությամբ, սպառիչ ու մշտնջենավոր տևականությամբ:

Բայց մարդն իր կոչմանն ու առաքելությանը չէր ծառայում, որովհետև գերի էր մեղքին, ձգտում էր, բայց չէր հաջողվում, իսկ բազմապարգևն Աստված ոչ միայն արդար, այլ նաև ողորմած է և ում սիրում, խրատում է:

Քրիստոսով Հին Ուխտը իր լրումին է հասնում, ամբողջանում և շարունակվում. ծառայության օրենքը համալրվում է ազատության, որդեգրության օրենքով, մարդն ազատագրվում է մեղքից, և օրենքն ամբողջանում է շնորհով և ողորմությամբ, որովհետև ատելությամբ ու վրեժխնդրությամբ հնարավոր չէ՛ քայլել դեպի բարի գործերի արդար և արժանի հատուցում:

Դեռևս Ք.Ա. 740 թ. Աստծո «անհաշտ առաջամարտիկ» Եսային գրում է. «Իմ ինչի՞ն են պետք Ձեր բազմապատիկ զոհերը... լվացվեք, մաքրվեք... չէ՞ որ ես կարող եմ ձյունաճերմակ դարձնել ձեր արյան պես կարմիր մեղքերը» (Եսայի Ա 11-18): Քրիստոս՝ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը, «օրինյալ զթությամբ» նո՛ր հորդոր, նո՛ր պատգամ է տալիս. «Այսուհետև մեղքը թող չթագավորի ձեր մահկանացու մարմիններին» (Հռոմ Զ 12), որովհետև «Ով որ ձեզ է լսում, ինձ է լսում...» (Ղուկ Ժ 16):

Երկնի և Երկրի Տերը՝ ինքն Աստված, մարդկության պատմության սկզբից ի վեր առաջին անգամը լինելով հայտարարում և հռչակում է, որ այլևս դուք անպարտելի եք, սիրելի՛ հավատացյալներ, քանզի մարդու ներքին ձայնը, ներքին մարդն ինքն իր մեջ չի սկզբնավորել մեղքի գաղափարը, այլ հակառակ է մեղքին, հետևապես աշխարհն ու աշխարհայինը չեն կարող գերազահ լինել: Ա՛յս է պատճառը, որ Քրիստոս իր «անսովոր» գեղեցկությամբ փարատելով ու ցրելով այլևս սին ու լռին հայցքները՝ պատգամում է. «Եթե իմանայիք... ապա դուք անպարտներին չէիք դատապարտի», քանզի մարդու կատարելությունն Աստծուն սիրելու մեջ է, Աստծուն, որով և իր նմանին, ոչ թե բազմապատիկ զոհերով, այլ բարեկարգ կենցաղավարությամբ:

«Տեր, քո ողորմությամբ աշխարհ իջար և մեր մեռած բնությունը կյանքի փոխարկեցիր»,- գրում է շարականագիրը:

Սիրելինե՛ր, արդ, Քրիստոս, նախքան Իր երկրորդ անգամ գալը, այսօրվա՝ Հոգեգալստյան 3-րդ կիրակիի Պատարագից մե՛կ պատգամ, մե՛կ հորդոր ունի մեզ՝ ողորմություն եմ կամենում՝ ոչ թե հարկադրաբար, այլ ընտրությամբ, հեզությամբ,

քաղցրությամբ և հավատքով: Քրիստոսի երկրային տնօրինականքի ամեն մի դրվագ, մինչև խաչափայտի վրա արյան վերջին կաթիլը, ողորմություն է և ողորմության կատարյալ օրինակ` հանդեպ համայն մարդկությանը, այլև նոր ուխտ, հաբաբերության նո՛ր եղանակ, որն ուղեկցում է մեզ ամենքիս դեպի ճշմարիտ ինքնա և աստվածաճանաչություն: Հետևապես, ողորմությունը նախևառաջ Աստծո հետ հաշտ ու համերաշխ լինելու մեջ է` Աստծո հանդեպ մարդու ունեցած պարտքի հատուցման, իր նմանին բնականորեն գթալու մեջ, քանզի ամենամեծ ներշնչանքի աղբյուրը մաքրամաքուր, պարզ ու լուսավոր երկինքն է, որքան հեռու՛, այնքան մոտիկ ու խորհրդավոր: Իսկ այդ երկնքից այսօր և ամեն օր մեզ է գալիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքը. «Ողորմություն եմ կամենում և ոչ` զոհ»:

«Արարածների մեծությունից և գեղեցկությունից նույն համեմատությամբ էլ երևում է դրանք արարչագործողը»: Մի՞թե որողորմություն չէ և ողորմության կատարյալ օրինակ` Աստծո հայտնությունը մարդկության մեջ, Աստծո սերը մարդու հանդեպ, մարդու հաղորդակցությունը աստվածայինին Ս. Հաղորդությամբ և ճշմարիտ հավատքի խաղաղ լուսաբանումը Եկեղեցու միջոցով: Չէ՞ որ վերջնանպատակը գործի պատճառների մեջ առաջինն է:

Սիրելի՛ հավատացյալներ, թող երկայնամիտ, միակ և անմահ թագավոր Հիսուս Քրիստոս, Ով Իր սրբազնասուրբ արյամբ հավիտյանս որդեգրել է մեզ ամենքիս, անխափան և անխախտ պահի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին` հայոց ամրակառույց և անբեկանելի տապանը, որը դարեր շարունակ «իբրև ընդ հայելի օրինակաւ» և այսօր էլ, իբրև միակ և հաստատուն վեմը իր հավատացյալների համար, «ամենախնամ գլխի» ներքո «հրաշադեպ և հայրենաշունչ» աղոթքով և «ինքնաճանաչության համոզումով» իր հավատացյալներին է բաշխում «և՛ հավատքի հոժարությունը, և՛ սուրբ սիրո հավասարությունը` բոլոր հոժարներին մեկտեղելով Քրիստոսի մեջ», Որին փառք ըստ ամենայնի և հավիտյանս. Ամեն:

# Տ. ՏԱՃԱՏ ԱԲԵՂԱ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

( 8 հուլիսի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց. եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշակերտքն ժողովրդոցն»:*

(Մատթ. ԺԴ 19)

Առաջին հայացքից թվում է, թե Մատթեոսի Ավետարանից մեջբերված սույն տողերը մի տեսակ անհավանական են հնչում, քան՝ իրական: Անհավանական, որովհետև ինչպե՞ս կարող էր մեկը օրհնել և հինգ նկանակով հինգ հազար մարդ կերակրել: Եվ Ավետարանիչը դեռ շարունակում է՝ ասելով. «Բոլորը կերան ու հագեցան և տասներկու զամբյուղներ լիքը կտորտանքներ ավելացան»:

Հացի բազմացումը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմից արված հրաշքներից մեկն էր, բայց ո՛չ առաջինն էր և ո՛չ էլ վերջինը: Դրանից առաջ Հիսուս արդեն բժշկել էր անդամալույծին, բժշկել էր նաև երկու կույրի և բացել էր համրի լեզուն, ինչպես նաև հարություն էր տվել Հայրոսի աղջկան:

Այլ հրաշքներ ևս գործվեցին մեր Տիրոջ կողմից, սակայն այդ ամենով հանդերձ մինչև Հոգեգալուստ առաքյալների և հատկապես ժողովրդի համար տակավին պարզ չէր, տակավին հայտնի չէր, թե ով էր մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Այդ իսկ պատճառով էլ Հիսուս ամեն մի հրաշք գործելուց առաջ նախապատրաստական աշխատանք էր տանում և ապա կատարում իր հրաշագործությունը:

Հիսուս ժողովրդի առջև հացի հինգ նկանակ օրհնեց և հինգ հազարի կերակրեց: Հիսուս միայն Փիլիպոսին է հարցնում, թե որտեղից է հնարավոր հաց գնել ժողովրդի համար: Փիլիպոսին հարցնելը կապված է նրա՝ Բեթսաիդայից լինելու հետ, որովհետև պետք է, որ իր բնակավայրի մասին ճիշտ տեղեկություն իմանար: Սակայն Քրիստոսի խոսքերը, առաքյալներին ուղղված, ավելի շուտ նրանց փորձելու համար էին, տեսնելու, թե որքանով են վստահում Իրեն, այդքան հրաշքներ տեսնելուց հետո հավատո՞ւմ են արդյոք Իր աստվածային զորությանը, հավատո՞ւմ են արդյոք, որ ինքը Հիսուս Քրիստոսն է՝ երկնքից իջած Աստծո Միածին Որդին: Եվ, վերջապես, Հիսուս հրամայում է առաքյալներին, որպեսզի հացը և ձկները Իրեն բերեն: Քրիստոս, այդ ամենն Իր ձեռքն առնելով, հայացքը հառում է դեպի երկինք, նայում դեպի Երկնավոր Հորը, աղոթում, օրհնում նկանակները, կտրատում և տա-

լիս է Իր աշակերտներին, իսկ աշակերտներն էլ՝ ժողովրդին: Այստեղ տեղի ունեցած հրաշքին անդրադառնալիս մեզ հարկավոր է մի քանի կետեր քննարկել, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու հենց նման հրաշքով Հիսուս ցանկացավ ժողովրդին կերակրել:

Նախ՝ հրաշքի մասին խոսելիս պետք է անդրադառնանք այն հարցին, որ հրաշքը պետք է լինի զգալի դեպք, որպեսզի հնարավոր լինի զգայական փորձառությամբ հաստատել նրա գոյությունը: Յուրաքանչյուր մարդ պետք է կարողանա ըմբռնել այդ զգալի եղելության բնական ուժերից վեր լինելը. օրինակ՝ ի ծնե կույրի հանկարծակի տեսողություն ունենալը, մեռած մարդու հարությունը, կաղի վայրկենական քայլելը, համրի խոսելը և խուլի լսելը: Հրաշքը նշանակալից դեպք լինելուց բացի պետք է լինի գերբնական, քանի որ այն վեր է բնության օրենքներից, ինչպես օրինակ՝ տեռատես կնոջ բժշկումը:

Բնության մեջ լինում են բազմաթիվ հրաշալի դեպքեր, որոնք մեր կողմից որպես հրաշքներ են բնութագրվում: Օրինակ՝ տիեզերքի մեջ տիրող մի շարք ներդաշնակ կարգուկանոններ, աստղերի, արևի, լուսնի ընթացքը, մարդու ծնունդը և այլն մեկ-մեկ հրաշքներ են մեր կյանքում: Բայց այդ բոլոր հրաշքները բնության սովորական երևույթների համաձայն են տեղի ունենում, որի համար էլ չենք կարող դրանք բառի բուն իմաստով հրաշքներ կոչել: Վերքի վայրկենական բուժումը, սակայն, տեռատես կնոջ պարագային իրական հրաշք էր, որովհետև բնական դեպքերից վեր լինելով՝ հնարավոր չէր բնության օրենքներով բացատրել:

Հրաշքը, ինչպես ասացինք, գերբնական եղելություն է, հետևաբար միայն գերբնական ուժը՝ Աստված, կարող է այն իրագործել: Հրաշագործելու համար պետք է բնության ընթացքը փոխել, բնության ուժերից վեր արդյունք առաջ բերել: Եվ իրոք, մարդկանցից ո՞վ կարող էր հրամայել հողմին, որ դադարի, հինգ հացով հինգ հազար մարդու կերակրել և կամ չորացած ձեռքին կենդանություն պարգևել: Իհարկե՝ միայն Աստված, միայն մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, որ եկավ և ամեն մի հրաշքի միջոցով մեզ նոր խորհուրդ բացեց, մեր աչքերի առջև մի նոր իրողություն բացեց: Հրաշքի համար Աստծո հատուկ և արտակարգ միջամտությունն է պետք, որ սովորականից դուրս դեպք պատահի, և միայն այդպիսի դեպքի համար է, որ այդ գործողությանը «հրաշք» անունն ենք տալիս: Եվ, վերջապես, որպեսզի կատարյալ լինի «հրաշք» բառի իմաստն ու սահմանումը, պետք է ավելացնենք նաև, որ հրաշքը պետք է իրագործվի գերբնական մի նպատակի համար՝ սուրբ, կարևոր և անհրաժեշտ մի նպատակի համար:

Այդ սուրբ նպատակն էր մեր Տիրոջ կողմից հացի բազմացումը: Դա այն հրաշքն էր, որին հաջորդեց բուն նպատակը, որով Հիսուս ցույց տվեց, թե Իր օրհնությամբ, աստվածային օրհնությամբ ինչպես է առատանում հացը: Նույն այդ աստվածային օրհնությամբ ամեն կիրակի, Պատարագին մեկ նշխարով՝ Քրիստոսի մեկ մարմնով հաղորդվում են ձեզանից շատերը, և այդ հացի բազմացման այս օրինակը կարծես թե նախօրինակն էր Քրիստոսի հաղորդության այդ մեկ խորհրդի: Սուրբ Գրքի մեջ հանդիպում ենք մի շարք հրաշքների, որոնք Աստված կատարել է սրբազան նպա-

տակի համար: Աստված տարբեր հրաշքներ է գործել, օրինակի համար՝ Նաբուգոդոնոսոր թագավորի պարագային, որպեսզի հեթանոս այս թագավորին ցույց տա, որ երեք երիտասարդների՝ Միսաքի, Սեդրակի և Աբեթնագովի պաշտած Աստվածը միակ ճշմարիտ Աստվածն է: Նույնը կարող ենք գտնել նաև մի շարք գրքերի մեջ:

Սիրելի հավատացյալներ, Ավետարաններում կարդում ենք և տեսնում ու հասկանում, որ Քրիստոս բժշկում է կույրերին, կաղերին, հիվանդներին, հարություն տալիս մեռյալներին, սաստում է հողմին, բազմացնում հացն ու ձուկը և բոլոր այս հրաշքները կատարում ժողովրդին ցույց տալու համար, որ Ինքն Աստծո կողմից ուղարկված է մարդկությանը փրկելու համար: Սակայն, ինչպես այն ժամանակ, մեր օրերում ևս շատերը չեն հասկանում հրաշքի այս իրողությունը, չեն հասկանում Քրիստոսի՝ Աստծո Որդու աշխարհ գալու խորհուրդը: Եթե առաքյալները և նրանք, ովքեր Քրիստոսի հետևորդներն էին, հավատում էին Քրիստոսին և Նրա կողմից քարոզվող երկնքի արքայությանը, նրանք հավատում էին, որպեսզի տեսնեն, հավատում էին, որպեսզի հասկանան, տեսնեն հրաշքը և հասկանան, որ Հիսուս Քրիստոս նույն ինքն է՝ Աստծո Որդին:

Հետևաբար, թող որ Քրիստոս այդ իմաստությունը մեզ այսօր պարգևի, որպեսզի մենք հավատանք Քրիստոսի կողմից քարոզված Ավետարանին, որ այսօր ձեզ մատուցվում է Սուրբ Եկեղեցու միջոցով, այս Սուրբ Եկեղեցու սպասավորների միջոցով, և թող Սուրբ Ավետարանի ամեն մեկ բառ ձեր սրտերում հավատք ամրապնդի, որպեսզի կարողանանք ամենքս տեսնել և հասկանալ Քրիստոսի մարդեղության խորհուրդը:

«Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. Ամէն»:

## *ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ*

*ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ*

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՌՆ ՏԱՐՈՆԵՑՈՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սրբակյաց, գիտնական կրոնավորի համբավ ունեցող այս այրը կարևոր դեր է կատարել Ժ-ԺԱ դդ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերություններում: Համաձայն Մատթեոս Ուռհայեցու` 1007 թ., Ծռազատկի հետ կապված վեճերն ու տարաձայնությունները հարթելու նպատակով, հունաց Վասիլ կայսրը նամակ է հղում հայոց Հովհաննես-Սմբատ արքային (որն իրականում, սակայն, գահակալել է 1020 թվականից) ու Սարգիս Ա Սևանցի Կաթողիկոսին (կթղ.` 992-1019 թթ.) և խնդրում, որպեսզի նրանք, ի շարս այլոց, Կ. Պոլիս ուղարկեն նաև տոմարական փայլուն գիտելիքներով օժտված Հովհաննես Կոզեռն վարդապետին[1]:

Պրոֆ. Ռ. Վարդանյանն իրավացիորեն ենթադրում է, որ Հովհաննես Կոզեռնը Կ. Պոլսում ներկայացրել է Ծռազատկի հանգամանալից բացատրությունը բովանդակող իր «Մեկնութիւն տումարի» երկասիրությունը[2], որ հիմնված է եղել Անանիա Շիրակացու` Զատկի մասին ճառի վերաբերյալ Իրիոն վարդապետի քննադատության վրա` հավանաբար որոշ խմբագրությամբ[3]: Այս երկում պահպանվել են հնագույն «Պատճեն տոմարի» կանոնները, այսինքն` «աստղագիտական երևույթների, արևային տարվա եղանակների և տոների հայոց անշարժ տոմարի ամիսները, հաստատունները և նահանջի միջոցով դրանց գտնելու եղանակը»[4]: Գիտնական վարդապետի վայելած մեծ վարկը իրավունք էր տալիս Կոզեռնին՝ ուղեկցելու Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին (կթղ.` 1019-1058 թթ.) պաշտոնական հանդիսությունների ժամանակ[5]: 1030 և 1037 թթ. տեղի ունեցած Արեգակի խավարման առիթով հայոց իշխանները Հովհաննես թագավորի և Պետրոս Կաթողիկոսի կարգադրությամբ հավաքվում են բազմահմուտ մեկնիչ Հովհաննես վարդապետի մոտ՝ իմանալու այդ երևույթի պատճառը: Ըստ Կոզեռնին երևացած տեսիլքի (1037 թ.)` 60 տարի

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Բ տպ., Վաղարշապատ, 1898, էջ 44:

[2] Տե՛ս «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Յովհաննիսի վարդապետի, որ մականուանէին Կոզեռն□, ՄՄ ձեռ. 1999, թ. 67բ-77ա (թերի է): Ա. Աբրահամյանը հրատարակել է երկիս մաս կազմող «Վասն հոռոմի» խորագրով ենթաբաժինը (թ. 72ա-76բ)` որպես մաս Սամվել Անեցու մեկնության («Էջմիածին», 1952, Ա, էջ 36-38, նաև` **Յ. Քիւրտեան**, Յովհաննէս վարդապետ Կոզեռն, «Հանդէս ամսօրեայ», 1967, էջ 1-16): Երկիս տվյալ մասի ճշգրտված բնագիրը հրատ. «Պատճէն տումարի (Է-ԺԵ դդ.)», քննութիւն եւ բնագրեր, աշխատ. **Զ. Էյնաթեանի**, աշխատակցութեամբ եւ խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Եր., 2002, էջ 169-171:

[3] Տե՛ս **Ռ. Հ. Վարդանյան,** «Պատճէն տումարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը, 6-18-րդ դարեր, Եր., 2007, էջ 92:

[4] **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 24:

[5] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 50:

անց Արևմուտքից պետք է գան ֆռանկները և ազատագրեն Երուսաղեմը[6]:

Բացի տոմարական գիտելիքներից, որոնք վերաբերում են գործնական աստվածաբանությանը, Կոզեռնը օժտված էր տեսաբանելու և մեկնելու կարողությամբ: Նրա մասին ասվում է, թե՝ «Էր այր աստուածազգեաց եւ հրեշտակակրաւն եւ լի իսկ առաքելական եւ մարգարէական գրոց գիտութեամբ», «սուրբ եւ սքանչելի ճգնութեամբ զարդարեալ եւ մեկնիչ Հին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ, լցեալ վարդապետական շնորհաւք»: Այս որակումներն իրապես արդարացված են Հովհաննես Կոզեռն Տարոնեցու անունով ձեռագրերում պահպանված երեք աշխատությամբ. մեկը Ծննդոց գրքի մեկնություն է, երկրորդը՝ Պայծառակերպման տոնի խորհրդաբանական բացատրությունը, երրորդը խրատ է՝ համեմված ճգնական կյանքը կազմակերպող օգտաշահ մտածումներով: Ի տարբերություն երկրորդի և երրորդի, առաջին միավորը խմբագիր աշխատություն է, որի մեծ մասը, ինչպես երևում է, Հովհաննես Կոզեռնի այլուստ անհայտ համաբնույթ աշխատությունն է: Իբրև տոնապատճառային միավոր՝ այն զետեղված է ՄՄ թիվ 1007 ձեռագրում (թ. 74ա-95բ): Ինչպես միջնադարի շատ երկերում, այստեղ ևս անտեսված չէ հայրախոսական ժառանգությունը: Երկում օգտագործված են դասականի համարում ունեցող Ս. Բարսեղ Կեսարացու և Ս. Գրիգոր Աստվածաբանի աշխատությունները (տե՛ս բնագրի տողատակը): Այստեղ մեկնաբանված է Ծննդ. Ա 3 - Բ 3: Մեկնաբանություններն ուղեկցվում են աստվածաբանական ուշագրավ բացատրություններով, որոնց մեջ նշմարելի է հեղինակի խորհրդաբանելու, աստվածային հայտնության խորքը թափանցելու, Հին Կտակարանի մեջ Նորի ակնարկը և Նորի մեջ Հնի լրումը տեսնելու կարողությունը: Զուգորդական, տիպաբանական մեկնաբանության հրաշալի օրինակ է «Եղիցի լոյս» խոսքի բացատրությունը. եթե հինկտակարանային լույսը՝ Աստծո հայտնության լույսը, փարատեց աշխարհաարարմանը նախորդող նյութական խավարը, ապա նույն այդ լույսը նորկտակարանյան իրականության մեջ՝ նոր ժամանակներում, ծագում է Հորից կույս Մարիամի մեջ և փարատում կռապաշտության հոգևոր խավարը: Եվ եթե արարչության ժամանակ միայն Ս. Հոգին էր շրջում ջրերի վրա, ապա այսօր եռանձնյա Աստվածությունն է հանգչում Հորդանանի ջրերի վրա և վերստին ծննդյան շնորհ պարգևում ադամորդուն՝ նրան խառնելով հրեշտակաց դասերին:

Մատենագրական մյուս միավորն (ՄՄ ձեռ. 6012, թ. 78ա-86բ) ունի ճառախոսական-մեկնաբանական բնույթ: Այն Վարդավառի կամ Պայծառակերպման տոնի

---

[6] Տե՛ս անդ, էջ 52-54, 68-74: Սակայն հ. Ղ. Ալիշանը (Հայապատում, էջ 89-90), Ն. Մառը (Ñêàçàí èå î êàòî ëèêî ñå Ï åòðå è ó÷åí î ì Èî àí í å Êî ցåðí å, "Âî ñòî ÷í û å çàï èñêè", ÑÏ Á, 1905), Աշ. Հովհաննիսյանը (Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, էջ 55-57) հղումն ըստ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհ. թրգմ. ծնթ.՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1973, էջ 307) գտնում են, որ այս տեսիլքը չի պատկանում Կոզեռնի գրչին, այլ շարադրված է քաղաքական իրավիճակի թելադրանքով, ուր շեշտը դրված է լատիններից ակնկալվող օգնության գաղափարի վրա: Մինչդեռ մեզ չհասած տեսիլքի ենթադրվող նախնական տարբերակը պետք է որ շարադրված լիներ հայ բյուզանդասեր կուսակցության քաղաքական ակնկալությունների հաշվառումով:

պատճառ-մեկնաբանությունն է: Այստեղ հեղինակը, հենվելով հին մեկնիչների բացատրությունների վրա, պատճառաբանում է, թե ինչու Հակոբ Տյառնեղբայրը, Կյուրեղ Երուսաղեմացին և նրանցից հետո եկած վարդապետները Պայծառակերպման տոնի համար ընթերցվածներ չեն սահմանել: Կոզեռն վարդապետն աստվածաբանորեն հիմնավորում է այդ հետևյալ մեկնաբանությամբ. մյուս տոների (օր.՝ Աստվածհայտնության և Մկրտության) համար ընթերցվածների առկայությունն արդարացված է նրանով, որ դրանք, մեկ անգամ սկսված և ավարտված լինելով, այժմ ամեն տարի խորհրդաբանորեն կրկնվում են՝ ադամորդուն մասնակից դարձնելով տոնի ակնարկած վերին խորհրդին (օր.՝ Աստվածհայտնության և Մկրտության պարագային «մկրտութեամբ աւազանին միաւորեցաք»): Մինչդեռ պայծառակերպման տոնի համար ընթերցվածների բացակայությունը հետևանք է այն բանի, որ ավետարանական այդ դրվագը, ուր դրսևորվում է Աստվածության փառքը, դեռ իր լրումին չի հասել. այն պետք է ավարտվի ապագայում, երբ այդ հայտնությամբ սկզբնավորված մարդու՝ Աստվածությանը փառակից լինելը հասնի իր լրումին: Այնժամ իր ավարտին կհասնի և սկսված տոնը, «եւ լինիցի միաւորութիւն մեր եւ հրեշտակաց»:

Կոզեռն վարդապետը պատասխանում է նաև այն հարցին, թե ինչու է այս տոնը կատարվում «յետ երից յիսնակի ոչ գրով ընթերցուածոց, այլ՝ աւանդութեամբ»: Առաջին հիսնյակը մատնացույց է անում հայրերի արդարությունը, որ ընդգրկում է Ադամից մինչև Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետները, երկրորդը՝ Մովսեսից, մարգարեներից մինչև Հովհաննես Մկրտիչ, իսկ երրորդը՝ Փրկչի ավետարանական քարոզությունը: Խորհրդաբանական մյուս շերտը մարդկային բնության երեք շարժումներն են, որոնք համապատասխանում են նախորդ եռյակին՝ կռապաշտությունից առաջնորդվելով դեպ աստվածճանաչողություն, Հորից դեպ Միածին Որդի և Որդով՝ դեպ Սուրբ Հոգի:

Խոսելով Հին և Նոր Կտակարաններում Աստծու հայտնության կերպերի (թեոֆանիա) մասին՝ Կոզեռնը Մովսեսի՝ Աստվածության հետ հարաբերության լրումն ու պսակն է համարում Պայծառակերպման դրվագը. այն իրականացումն է Մովսեսի՝ Աստծուն տեսնելու «ըղձատենչ» փափագի: Նախամարգարեն Աստծու հետ հարաբերվեց՝ տեսնելով լոկ նրա թիկունքը, ինչը որակվում է իբրև «մարդկային խոնարհության կերպ»: Մինչդեռ Տիրոջ «երեսը», որ նույնական է նրա էությանը, սկզբունքորեն անմատչելի մնաց հինկտակարանյան ադամորդուն: Մովսեսին ու Եղիային վիճակվեց Աստծու էությունը տեսնել բացառապես Տիրոջ պայծառակերպման պահին, երբ Աստված դրսևորվեց «երեւեալ փառաւք»: Պայծառակերպման պահին Աստծու էության դրսևորման վերաբերյալ այս գաղափարը համերաշխ է Եղիշեի այն մտածումին, թե՝ «Յայլակերպսն ոչ այլ ինչ է իմանալ, այլ աստուածակերպ երեւեցաւ առաջի նոցա», որով «կարացին զարժանի էութիւն նորա իմանալ»[7]:

Աստվածաբանական երրորդ միավորը՝ «Խրատ յոգէշահ եւ պատասխանի Յովհաննէս Կոզեռն վարդապետին», բովանդակում է ճգնական հորդորներ, բարոյաբա-

[7] Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ա, Անթիլիաս, 2003, էջ 973 (116):

նական կոչեր, որոնց ակունքը Աստվածաշունչը, անապատական հայրերի և Արևելաքրիստոնեական Եկեղեցու հարուստ, դարավոր փորձառությունն է (Եվագր Պոնտացի, Նեղոս Սինայեցի): Խոսքերի մի մասն ունի հոգևոր ասույթի նկարագիր (Մի՛ խնդրեր փորձութիւնս, իսկ եթէ եկեսցէ, ցոյց ի նա զաւրութիւնս քո), մյուսը՝ խորհրդածության (Ակն կալ հանապազ մահու, բայց մի՛ երկնչիր, քանզի ճշմարիտ նկարագիր են հանճարս երկոքին սոքա), մեկ այլը՝ սպառնալիքի (Վա՛հ ազահին, զի մեծութիւն նորա թողու զնա, եւ հուրն անշէջ ընդունի զնա) կամ խրախուսանքի (Երանի որ բարձր է վարուք եւ խոնարհ է մտաւք, քանզի նմանող է Քրիստոսի եւ նստակից է նորա):

Բնագրերը հրատարակվում են ըստ մեզ հայտնի հետևյալ ձեռագրերի.

**Պատճառ Ծննդոց**

ՄՄ ձեռ. N 1007

Ճառընտիր: **Ժամանակ**՝ ԺԱ-ԺԲ դդ.: **Վայր**՝ Հոռոմա՞յր: **Գրիչ**՝ Առաքել: **Ստացող**՝ Հովհաննես քհ.: **Թերթ**՝ 466: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 34,5x24: **Գրություն**՝ երկսյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 25: **Բնագիր**՝ թ. 74ա-95բ:

**Յաղագս Վարդավառի տաւնին**

A= Երուսաղեմ, ձեռ. N 1272

Տոնապատճառ-ժողովածու: **Ժամանակ**՝ 1290 թ.: **Գրիչ**՝ Բարսեղ քհ., Յովհաննէս քհ.: **Թերթ**՝ 419: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 17x12x10: **Գրություն**՝ միասիւն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 19-20: **Բնագիր**՝ 130բ-149բ:

B= ՄՄ ձեռ. N 6012

Ժողովածու: **Ժամանակ**՝ ԺԳ դար: **Թերթ**՝ 142: **Մեծություն**՝ 17x12: **Գրություն**՝ միասյուն, երկսյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 29: **Բնագիր**՝ թ. 78ա-86բ: B-ի հիման վրա այս երկից մի փոքր հատված իբրև նմուշ հրատ. «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության», Ս. Էջմիածին, 2003, էջ 362-366:

**Խրատ յոգեշահ եւ պատասխանի Յովհաննէս Կոզեռ վարդապետի**

ՄՄ ձեռ. N 3522

Ժողովածու: **Ժամանակ**՝ 1634 թ.: **Վայր**՝ Լվով: **Գրիչ**՝ Ավետիք: **Թերթ**՝ 353: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 19x15: **Գրություն**՝ միասյուն, երկսյուն: **Գիր**՝ նոտրգիր: **Տող**՝ 24-29: **Բնագիր**՝ թ. 68բ-73ա[8]:

---

[8] Ձեռագրերի նկարագրությունն ըստ Յուցակ ձեռագրաց, Մաշտոցի անվ. Մատենադարանի, Ա, էջ 457, Բ, էջ 232, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 450-455:

# ՅՈՀԱՆՆԻՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՐ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆ ԿՈՋԵՌՆ՝ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԻՆ, ԵԹԷ ՎԱՍՆ ԷՐ ՑԸՆԹԵՐՑՈՒԱԾՆ ՈՉ ՇԱՐԱԳՐԵՑԱՒ ՈՉ Ի ՅԱԿՈՎԲԱՅ ՄԵԾԷ, ՈՐ Է ԵՂԲԱՅՐ ՏԵԱՌՆ, ԵՒ ՈՉ Ի ԿԻՒՐՂԷ ԵՒ ՈՉ ՋԿՆԻ ՆՈՑԱՅ ՅԱՅԼՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

Այսպէս ծանուցին մեզ բանաբունքն[1*] զպատճառս խորհրդոյն, եթէ յնթերցուածն զտնաւրէնութեան ներգործելոց տաւնից ունի զցուցումն, որք երկաքանչիւրոց պիտառութեամբք կատարեցան, որք ոչ միայն առյապայսն առհաւատչեա ունին զփրկութեանցն խորհուրդ կամ այլոց ներգործութեանց աւրինակք էին, որպէս աւրէնքն Մովսիսի՝ հանդերձ ամենայն նախատաւնակ դրութեամբքն, այլ ի մերձակայ ամս եւ յաւուրս զիւրաքանչիւրոցն առբերելով զփրկութեան պտուղն եւ ոչ յապառնիսն[1] թողին ժամանակս քանզի տաւն[2] սրբոյ[3] Յայտնութեան եւ Մկրտութեան, որ կատարի յունուվարի[4] վեցն: Այլ մարմնանալ[5] եւ մկրտիլ Քրիստոսի ոչ ցուցանէ, - քանզի միանգամ[6] կատարեաց, եւ մեք ամի ամի զնոյն կատարեմք իւրովք խորհրդովքն, եւ ոչ իբրեւ զանկատար վերապատուեմք յիշատակաւ զաւրն: Նմանապէս եւ տաւն չարչարանացն եւ Յարութեան զԻւրոյ խորհրդոյն ունէր ներգործութիւն եւ ոչ միայն առ հաւատչաիւք[7], քանզի եւ մեք յիւրաքանչիւր տաւնիցս այսոցիկ վայելման խորհրդոցն փրկութեան հաղորդեցաք, քանզի Յայտնութեան եւ Մկրտութեան Քրիստոսի մեք մկրտութեամբ աւազանին միաւորեցաք, զորոց արդ իսկ յայտնապէս բերեմք զվաելումն[8]: Իսկ Յարութիւն թէպէտ եւ յապառնի ցուցանի մեզ, սակայն՝ ոչ ամենեւին, քանզի առաք ինչ եւ այժմ մասնաւորաբար: Քանզի ի խաչելութեան Տեառն յարեան բազում մարմինք ննջեցելոցն սրբոց մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց:

Այսպէս տաւնիցս այս ընթերցուածոց[9] զկատարումն ունել ցուցաւ, բայց տաւն սրբոյ Վարդավարիս միայն զառհաւատչեայն ցուցեալ տակաւին եւս անկատար, զաւարտումն ոչ առեալ, քանզի յաստուածային փառս եւ կերպարանս զմերս փոխիլ եցոյց: Եւ այս առյապա. վասն այսորիկ եւ յընթերցուածին ոչ եղաւ: Դարձեալ է իմն եւ այլ խորհուրդ, քանզի զզալիս երեւմամբ ընդ տեսանելիս մեր չափեալ զՅայտնութենէն եւ զՄկրտութենէն Խաչին եւ զՅարութեան կատարեաց զմեծ խորհուրդս: Վասն այսորիկ ազդմամբ Հոգոյն Սրբոյ վասն հաստատութեան մխիթարութեան մտաց մերոց ընդ զզալի գրով եդին: Իսկ երեւումն փրկչին մերոյ ի Թափաւրական լերինն անտեսանելի էր մարդկայնոց դիմաց եւ մտաց: Վասն այնորիկ ընդ վերծանողականս չարկին ընդ գրով:

Արդ, զերեւումն կերպարանի Փրկչին մերոյ ի Թափովրական լերինն աստուածային փառացն յայտնութեան է ի հանդերձեալ յաւիտենին ի մեզ առբերելով: Յայնժամ առնու զկատարումն տաւնիս այս, յորժամ եւ լինիցի միաւորութիւն մեր եւ հրեշտակաց:

Իսկ ընդէ՞ր յետ երից յիսնակի տաւնէ եկեղեցի ոչ զրով ընթերցուածոց[10], այլ՝ աւանդութեամբ, զի[11] ոչ եթէ ընդ[12] այնր փոքր ինչ համարելով, այլ իբրեւ յոյժ մեծ եւ փառաւոր ի հաւատս սրտի: Եւ յաւանդութիւն եդին զունելն որպէս[13] է փրկութիւն Աստուծոյ եւ խոստումն արքայութեան, «զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ»[2*], հաւատովք պատրաստեցաւ[14] մեզ, յԱստուծոյ[15] նոյնպէս եւ տաւնս այս, քանզի մի եւ նոյն խորհուրդ է երեւման մեզ Աստուծոյ եւ ժառանգութենէ արքայութեան: Իսկ յետ երրորդ յիսնակի տաւնելն այս է. առաջի յիսնակովն ցուցանի մեզ հարցն արդարութիւն՝ յԱդամայ եւ յԱբէլէ, ի Սեթա եւ Յենովքա, ի Նոյէ մինչեւ ցԱբրահամ, Իսահակ եւ Յակոբ: Եւ երկրորդ յիսնակին՝ աւրինացն Մովսիսի եւ մարգարէիցն մինչեւ ցՅովհաննէս Մկրտիչ: Եւ երրորդ յիսնակին աւետարանական քարոզութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ունի դարձեալ եւ այլ խորհուրդ՝ զերիս շարժմունս մարդկային բնութեանս. ի մոլորութենէ կռապաշտութեան յաստուածգիտութիւն հաւատովք[16] հարցն եւ աւրինաւքն եկեալ, որպէս եւ Մովսեսի երեւեալ ասէր. «Ես եմ Աստուած Աբրահամու, Սահակայ եւ Յակովբայ»[3*]: Եւ զնոսա առ ժողովուրդն առաքելով ասէ. «Աստուած հարցն ձերոց առաքեաց, զիս առ ձեզ»[4*]: Եւ այսպէս յեգիպտական խաւարէն առաջնորդեալ[17] ի լոյս աստուածգիտութեան: Եւ երկրորդ շարժմամբ ի Հաւրէ առաջնորդեալք առ Միածին Որդին, որպէս եւ Ինքն իսկ Յիսուս Քրիստոս ասէ՝ ի Հաւրէ Միածինն. «Ոչ ոք կարէ գալ առ Իս, եթէ ոչ Հայրն Իմ երկնաւոր ձգեսցէ զնա առ Իս»[5*]: Եւ դարձեալ, եթէ՝ «Տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն ի Հաւրէ Իմմէ յերկինս եւ յերկրի»[6*]: Եւ երրորդ շարժմամբ Տէրամբ մերով Յիսուսի Քրիստոսի առաջնորդեալք առ Հոգին Սուրբ որպէս եւ Ինքն[18] ասէ բանն ճշմարտութեան, եթէ՝ «Ամենայն որ հաւատայ Յիս գետք յորովայնէ նորա բխեսցեն ջրոյ կենդանութեան»[7*]: Եւ զայս ասէր զՀոգոյն Սրբոյ, զոր ընդունելոց էին: Եւ Պետրոս ասէ վասն տանն Կոռնելի[19], եթէ ի հաւատալն ի Յիսուս Քրիստոս[20] ընկալան զՀոգին Սուրբ, որպէս եւ մեք[8*]: Արդ, հայրական աստուածգիտութեամբն յԵգիպտոսի ձեռն Մովսեսի հրաման առեալ եբրաեցոցն արեամբ զենեցելոյ[21] զառինն զդրունսն կնքել, զի անցցէ Տէր հարկանել զանդրանիկսն եգիպտացւոց, եւ փրկեալք ապրին անդրանիկքն հեբրաեցւոց եւ ծովահերձ ճանապարհաւ փութացեալ ի լեառն Սինա: Եւ հետամուտ[22] եղեալ ընկղմի Փարաւոն, բայց փախստականքն ճաշակեն զմանանայն: Ճանապարհորդքիմք[23] եւ մեք առաջին յիսնեկաւն, այսինքն՝ քառասնեակ պահովքն, աւրինական եւ մարգարէական ընթերցուածովք, արեամբ չափ նախատակեալք ընդդէմ մեղաց զսատակիչն հոգոց մերոց ի բաց հալածելով եւ բղմամբ[24] արտասուաց իբրեւ զյորդահոս ծովով ընկղմել զիմանալին[25] փարաւոն, եւ քաղցրաբարբառ[26] սաղմոսերգութեամբ, հոգե-

ւոր մանանայիւ ընդ մարգարէին Դաւթի, թէ՝ «Քաղցր են ի քիմս իմ բանք Քո քան զմեղր»[9*]: Ճեպով հասանեմք ի սուրբ Պասքայ[27] Աստուծոյ մերոյ յարիւն անարատ Գառինն, որով աւծեալ կնքին հոգիք մեր եւ միտք եւ խորհուրդք անմտանելիք եղեալ չար խորհրդոց, փակեալք ընդդէմ դառն եւ դաւաճանող վիշապին: Այլ եւ արտաքին դրունք[28] շրթանց մերոց ներկեալք արեամբ Միածնին[29], որ է կայծակն փրկութեան, եւ մաքրութիւն մեզ հաւատովք մերձեցելոցս, եւ հուր ծախիչ եւ կիզանող բանսարկուին ի[30] շրթանց մերոց: Եւ այսպէս յերկրորդ յիսնեակ Պենտակոստէից[31] ճանապարհ արարեալ իբրեւ յերկիրն աւետեաց աւետեաւք յարութեան ի յիսնեակ աւրն զալըստեան Հոգւոյն Սրբոյ:

Արդ, ի փառս համբարձեալ Տէր մեր[32] Յիսուս Քրիստոս՝ Բանն Աստուած, առաքէ առ մեզ զէակից եւ զփառակից Հաւր եւ Որդոյ զՍուրբ Հոգին: Եւ նա զի Աստուած մարդասէր է եւ վաղվաղափոյթ[33] երեւեալ ի նմանութիւն աղաւնոյ, զի միամտութեամբ բնակեսցէ ի մեզ, այլ իբրեւ զհողմ սաստիկ, որ քակէ զհիմունս լեռնացեալ չարին յերկրէ, եւ իբրեւ զհուր աստուածային բորբոքեալ կիզանէ զհուրն աւտար՝ զսատանայ զստորանկեալ փայլակն, եւ զտեալ զմեզ արեամբն Քրիստոսի մաքրեալս եւ զարդարեալս, բնակէ ի սիրտս մեր անմարմնապէս, եւ առաջնորդէ մեզ յերկիր[34] ուղիղ ի լեառն Թափովր, որ թարգմանի էջք հոգոյ եւ նախադուռն եւ նմանութիւն մաւրն մերոյ վերինն Երուսաղէմի: Քանզի ի յայսմ աւուր մեծի Վարդավարի[35] փայլեաց զփառսն[36] հայրենի եւ զկերպն, որով զկնի յարութեան ի զերեզմանէն երեւեցաւ մետասանիցն ի Գալիլեա ի լեառն: Եւ իբրեւ տեսին, ասէ, զնա, երկիր պագին նմա, եւ ոմանք յերկուացան. քանզի հմտագոյն գլխաւորքն Պետրոս եւ Յակովբոս եւ Յոհաննէս, որք զայլակերպիլն Նորա տեսին ի լերինն զնոյն երեւումն յորժամ տեսին ի լեառն Գալիլեա անյերկուաբար ծանեան: Իսկ այլ աշակերտքն, որ զայլակերպիլն Նորա ոչ տեսին, վասն այնորիկ յորժամ յարութեան հանդիպեցան, յերկուացան յանծանաւթս եղեալք: Եւ ի վերանալն փառաւորապէս առ Հայր զնոյն եցոյց կերպարանս, եւ զնոյն ամպն, որ[37] կալաւ զՆա յաչաց նոցա: Եւ գլխաւորագոյն աշակերտքն որպէս յայլակերպիլն ի Թափովր մերձ էին, եւ հաստատագոյն[38] խորհրդովն նոյնքն ընդ նմա մաւտակացք էին՝ ի լերինն Ձիթենեաց յորժամ[39] աղաւթէր առ Հայր, եւ ի գերեզման նոցա յառաջագոյն Պետրոս եւ Յակոբոս եւ Յոհաննէս, եւ վերանալն ամպովք, յորժամ համբարձեալ զձեռն աւրհնեաց զնոսա, զխորագոյնսն ծանոյց նոցա խորհուրդս, եւ նոքա՝ այլոցն:

Արդ, յայլակերպսն լինել ի Թափովր լերինն զայն եցոյց կերպարան եւ զփառս, զոր զկնի համաւրէն յարութեան աշակերտաց Իւրոց, եւ[40] ամենայն արդարոց պարգեւէ: Եւ որպէս Ինքն ասաց, թէ՝ «Յայնժամ փայլեսցեն արդարքն որպէս զարեգակն յարքայութեան Աստուծոյ»[10*], «Փայլեցին երեսք Նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք Նորա պայծառ իբրեւ զասր»[11*]: Աւետարանէ մեզ Յոհաննէս ի կաթողիկէին իւրում, եթէ՝ «Ի յարութեանն նման Նմա լինելոց եմք»[12*], զի տեսանելոց եմք զՆա յերկինս եւ էն զնոյն, զոր Ինք ետես ասաց մեզ: Զայս տեսիլ ետես եւ Պաւղոս եւ շրտեաւ յաչացն սաստկութեամբ լուսոյն, որ երեւեցաւ նմա, զնոյն մեզ վերահնչեաց քարոզ,

ասէ. «զՓառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ, ի նոյն կերպարանս նորոգիմք փառաց ի փառս որպէս ի[41] Տեառն Հոգւոյն»[13*]:

Արդ, տեսաւղքն փառաց խնդութեամբ մեզ աւետարանեցին, եւ մեք փութանակի զգաստացեալք[42] աղաչեսցուք զամենազաւր Սուրբ Հոգին, զի սրբեսցէ զմիտս եւ զխորհուրդս մեր այնմ[43] տեսութեան արժանաւորիլ եւ հասանել փառաց[44]:

Այլ եկեսցուք ի բան[45] սրբոյ աւետարանչացն, որ ասեն «Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեն զմահ մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ Իւրով»[14*]: «Եւ յետ վեց աւուր առնու զԻւր աշակերտսն»[15*]: Այս ըստ Մատթէոսի: Իսկ Ղուկաս ասէ. «Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ առեալ զաշակերտսն եւ ել ի լեառն»[16*]: Արդ, ոչ եթէ երկբայութիւն ինչ է աւետարանչացն, քանզի զմի ասեն, վասն զի մի եւ նոյն Հոգի շնչեաց ի նոսա, այլ Մատթէոս զմիջին միայն ասէ զաւուրսն եւ զառաջինն եւ զվերջինն՝ ոչ, իսկ Ղուկաս՝ զառաջինն աւր հանդերձ այլովքն թուելով յաղագս մեծ եւ սքանչելի խորհրդոյ: Արդ, վեցն ասել այս է խորհուրդ. վասն զի Բանն Հաւր Յիսուս Քրիստոս որ յառաջ է քան զամենայն յաւիտեանս, իսկ ի վեցերորդում աւուրն ըստ պատկերի Աստուծոյ ստեղծեալ զմարդն եւ ինքն զոլով Որդի Աստուծոյ Որդի մարդոյ եղանի դարձեալ եւ կոչի. «Տեսանիցէք, ասէ, զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ եւ փառաւք»[17*]: Եւ զի անդ ի վեցերորդ[46], աւուրն ամենայն զործոց իւրոց կատարումն ստեղծ զմարդն ի փառս աստուածապատիւ, եւ ի նոյն վեցերորդի կատարեաց Աստուած զամենայն զործս իւր, ասէ աստուածային զրութիւն. «Իսկ յետ վեցերորդին եւթներորդումն ապա ասէ. Հանգեաւ Աստուած ի զործոց, եւ աւրհնեաց եւ սրբեաց զաւրն եւթներորդ»[18*]: Իսկ վասն զի զտուեալ փառսն մերկացաւ մարդն, որ է կատարումն զործոյն Աստուծոյ, այսինքն է՝ կամացն, քանզի կամելն նորա է զործ կատարեալ եւ կատարումն՝ մարդն: Վասն այնորիկ ի վեցերորդում դարուս ի նոյն աւուր խորհուրդ, որպէս ասացին բնաբանքն եկեղեցւոյ. Մարմնացաւ ի Կուսէն եւ միացոյց զբնութիւնս մարմնոյն աստուածային բնութիւն եւ ի փառս, եւ ի զվեցերորդում դարուս կատարեաց զամենայն զործս աստուածային տնաւրէնութեան եւ կատարեաց այսպէս մարմնանալովն եւ մկրտութեամբն վերաստեղծեաց եւ ետ զՀոգին Սուրբ, զոր յառաջնումն, յորժամ ստեղծ փչեաց ի նա, յորժամ ի Յորդանան աղաւնակերպ էջ ի վերայ Յիսուսի, եւ առ[47] ի Նմանէ յիւրաքանչիւր ոք ի մեզ աւազանի ծննդեամբն: Եւ ապայ Խաչիւ եւ թաղմամբ եւ յարութեամբ զաստուածային տալ մեզ զկեանս եւ զփառս, զոր ի յառնելն Նորա ի գերեզմանէն տեսին զփառս, որք սպասէին յարութեան: Եւ այս ամենայն ի Քրիստոս կատարմամբ յայտնապէս, իսկ մեզ՝ առհաւատչէիւ[48] եւ ծածկապէս, եւ ի կատարման վեցերորդիս յեւթներորդում մտի յաւիտենին, եւ ի մեզ կատարելաքար եւ յայտնապէս պարզեւի: Վասն որոյ ասէ Պաւղոս. «Յայնժամ եւ դուք ընդ Նմայ յայտնեսջիք փառաւք»[19*] եւ եթէ՝ «Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի աւրինակաւ, բայց յայնժամ՝ դէմյանդիման»[20*] յետ վեցերորդ դարուս: Վասն այնորիկ Մատթէոս եւ Մարկոս յետ վեց աւուր ասեն, յեւթներորդում փայլեալ զփառս առ ի հաստատութիւն մտաց եւ խորհրդոց մերոց: Տէր, եթէ այս է, որ ի ձեզ ծածկապէս զանձեալ են

լուսաւորութիւն ի փառաց[49]: Իսկ Ղուկաս յետ ութ աւուր ասէ եկեալ զարքայութիւն[50] Աստուծոյ, զոր Ինքն իսկ Յիսուս տեսանել երից աշակերտացն իւրոց ասէ եւ արքայութիւն զերեւումն: Բայց յետ ութ աւուրն երեւելն ունի զխորհուրդ զութերորդի յաւիտենին մուտ, որ յեւթնաւուրեա շրջագա[յ]ական աւուրց կենցաղոյս այսմիկ յանշրջելի եւ յանհոլով դրութիւն հաստատի, զոր Սողոմոն առակաւոր բանիւն զեկուցանէ. «Տուր բաժին եւթանց կենցաղոյս այսմ»[21*], այլ եւ ութից հանդերձելոյ յաւիտենին, զի աւրն այն վերջին ոչ փոխի զիշեր. «Եւ եղիցի յաւուրն յայնմիկ Տէր մի եւ անուն Նորա մի», որպէս ասէ մարգարէն Զաքարիայ, զի ոչ ոք փոխելով տիրացուցանէ վայրապար զկռոս կամ զոմանս կամ զայլ ինչ ախտ ցանկութեան[22*], զի «Եղիցի Աստուած ամենայն յամենայնի»[23*] ասէ առաքեալ: Արդ, այս է ութերորդ աւուրն խորհուրդ, որ ի Թափովր լերինն Բանն Աստուած յայտնեաց զերեւումն: Իսկ հայրական ձայնին հնչումն, Որդի զնա դաւանեալ[24*], որպէս ի մկրտութեան, զի մի՛ զՅովաննէս քան զնա վերագոյն[51] կարծիցեն, նոյնպէս եւ աստ մի՛[52] զոք յարդարոց կամ մի՛[53] ի մարգարէից կարծիցեն, այլ՝ ճշմարտապէս Որդի Աստուծոյ:

Այլ եւ[54] ամպ հովանի լինել, զի յամբառնալն առ Հայր լուսափայլ ամպով վերանայր, եւ ի միւս անգամ[55] զալըստեանն այնպէս զա, եւ առաքելոցն եւ մարգարէիցն ընդ ամպովն լինել նշանակէ, զի ամենայն սուրբ եւ արդարք ամպով վերանան ընդ առաջ նորա: Եւ[56] այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին առաքեալ[ք] ձայնիւ Հաւր՝ յորդեգրութիւն ժամանեալք:

Իսկ զարհուրելն աշակերտացն եւ ի թմբրութիւն ծանրանալ ցուցանէ մեզ, թէ յայժմու յաւիտենիս ոչ եմք բաւական բերել զփառս Աստուածութեան եւ արքայութեան Նորա մինչեւ լաւագոյն զփոփոխումն[57] առնումք, որպէս եւ ոչ սինէական լերինն Մովսէս հանդուրժեաց զՆա դէմ յանդիման տեսանել, եւ ոչ ժողովուրդն բարբառոյ Նորա լսել, քանզի Մովսէս ասէր, թէ՝ «Զարհուրեալ եմ եւ դողամ»: Իսկ ժողովուրդն եթէ՝ «Խաւսեսցի ընդ մեզ Մովսէս, եւ մի՛ խաւսեսցի ընդ մեզ Աստուած»[25*]: Եւ Մանուէ յերեւման հրեշտակին «կորեաք» ասէ[26*]: Եւ Դանիէլ զարհուրեալ յերկիր անկանէր: Իսկ Պաւղոս յաչացն շրտնոյր յերեւման Քրիստոսի[58] եւ ի բարբառել բանիցն: Եւ արդ, վասն այնորիկ յերեւել փոփոխմանն, որ նշանակէր յարութենէն տալ մեզ զփառս զարհուրէին:

Իսկ երեւումն Մովսէսի եւ Եղիաի, զի ոմանք զԵղիա կարծէին զՆա եւ ոմանք՝ զԵրեմիա կամ զմի ոք՝ ի մարգարէիցն եւ զմինն՝ ի մեռելոց եւ զմինն՝ ի կենդանեաց, զի ծանիցեն զՆա Տէր զոլով կենդանեաց եւ մեռելոց, եւ զի ի վերջնումն աւուր զալստեանն մեռեալքն ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն եւ ամպովք ընդ առաջ ելեալ կայցեն առաջի Տեառն իբրեւ զՄովսէս, եւ կենդանիքն առանց մեռելութեան թեթեւացեալք եւ փոփոխեալք յանապականութիւն[59] իբրեւ զԵղիաս, ընդ նոսայ հանգամայն կան առաջի Տեառն: Եւ զի անիմաստ հրեայքն հակառակ Աստուծոյ համարէին զՆա եւ աւրինաց լուծիչ, ած ի մէջ զՄովսէս, որ զնախագոյն հակառակսն էբարձ ի միջոյ նախ զԱնեսն եւ զԱմրես եւ ապա՝ զԿորխ եւ զԴադան եւ զԱբիրոն[60] [27*]: Արդ, եկեալ Մովսէս վկաեաց, եթէ՝ Սա է Աստուած եւ Որդի Աստուծոյ եւ կատարիչ կամաց Հա-

ւր եւ լրումն աւրինաց: Սոյնպէս եւ Եղիաս երեւեր՝ նախանձայոյզն Աստուծոյ եւ[61] ասէր, թէ մոլորեցուցիչ ոք էր սա, վաղվաղակի ծախէի հրով բովանդակ զքիսունս եւ զյիսնապետսն եւ կամ սպանանէի սրով բովանդակ զմարգարէսն Բահաղու, այլ ոչ որպէս[62] բովանդակ հրեայքն կարծեն, այլ սա է առաջնորդ կենաց եւ առաքիչ մարգարէիցն: Է եւ այլ խորհուրդ բանիս ածել ի տեսութիւն իւր զՄովսէս եւ զԵղիա. եւ ասասցուք, թէ եւ հրեշտակաց փափագումն[63] տեսլեանն Աստուծոյ ի մարմնանալն լցաւ, ասէ Պաւղոս, եթէ՝ «Երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ վերացաւ փառաւք»[28*], եւ եթէ՝ «Յայտնեսցի արդ իշխանութեանց եւ պետութեանց, որ յերկրիս են ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութեան Աստուծոյ»[29*]: Իսկ Մովսիսի ըղձատենչ փափագմանն լրումն ի Թափովրական լերին եղեւ, քանզի նախ քան զմարմնաւորութիւն Բանին ոչ կարէր զերեսս Աստուծոյ տեսանել, այսինքն՝ զէութիւն նորա, այլ՝ միայն զյետոյս Նորա, որ է այն ինքն մարդկային խոնարհութեան կերպ, զոր առնլոց էր, վասն զի հայցեալ երբեմն Մովսէսի տեսանել զերեսս Տեառն Աստուծոյ, եւ պատասխանի տուեալ Տէրն ասէր. «Ոչ ոք տեսանէ զերեսս Իմ եւ կեա, բայց եդից զքեզ ապա ի փապար վիմիդ, եւ անցանելով Իմ առաջի քո, զի տեսցես զյետոյս Իմ»[30*], այսինքն՝ զմարմնաւորութիւն Իմ այս է[64]՝ զարարածս Իմ: Իսկ «տեսցես», որ թէ ուսուցանիցիս ասէ եւ առնես[65] շնորհս պատմել Արարիչ զոլ զԱստուած եւ ի նմանէ եղեալ զարարածս: Քանզի «ոչ ոք տեսանէ զերեսս Իմ». յայսմ բանի «երեսս» զէութիւն ասէ, քանզի ոչ ոք էութեան Նորա կարէ հասու լինել, բայց եթէ ոչ ոք չափաւորապէս ի գործոցն Նորա ծանիցէ, որպէս ասէ առաքեալ, եթէ՝ «Աներեւոյթք Նորա ի սկզբանն արարածովքս իմացեալ տեսանին»[31*], այսինքն՝ մշտնջենաւորութիւն, զաւրութիւն եւ աստուածութիւն Նորա: Արդ, զփառս էութեան Նորա ոչ հնար եղեւ ումեք տեսանել ոչ հրեշտակաց եւ ոչ մարդկան, բայց եթէ յորժամ Աստուած մարդ լինել հաճեցաւ, եւ զառեալ բնութիւն միացոյց անբաժանաբար եւ անծախապէս ի մեր բնութիւն անփոխապէս[32*] եւ անշփոթելի, որ է մի Որդի, մի Տէր, մի բնութիւն, մի դէմ, ըստ որում ի Մկրտութեան Յորդանանու ի Յովհաննէ Սուրբ Հոգւոյն աղաւնակերպ ի վերայ զոլով, եւ ձայն հայրական վկաելով, եթէ՝ «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»[33*]: Իսկ Մովսէս ի լերինն զաստուածային էութիւն ի մարմնի ճառագայթեալ ետես, իբրեւ զարեգակն դէմ յանդիման ոչ ոք կարացեալ է տեսանել, եւ ապա ամպոյն անաւսրագոյն ի տուրնջեան ի մէջաւրէի ժամու ջերմագոյն եւ պայծառագոյն հեղեալ զճառագայթսն իբր թէ նոյն ինքն փայլիցէ եւ բոլորակն նորա ընդ ցնցուղ երեւեցի յաւդն: Եւ կամ ի վճիտ ոք նաեցի յաղբերս զբոլոր նորա եւ զփայլ լուսոյն տեսանիցէ: Այսպէս եւ հրեշտակք եւ սուրբք ամենայն, առաքեալք եւ մարգարէք զԱստուած ի մարմնի իմացեալ տեսին: Եւ Եղիաի յայրի անդ խոստացեալ զերեւումն, զայն աստ կատարեաց, զի անդ ասէ. Անցանէ առաջի հուր եւ հողմ սաստիկ եւ շարժումն մի զմիոյ զկնի, եւ ոչ յայնոսիկ Տէր: Եւ ապա սիք քաղցրագոյն եւ անդ Տէր, որ եւ խաւսի ընդ Եղիաս, թէ Դու զի՞ աստ. որ եւ նշանակէին առաջին սաստկագոյնքն զաւրինացն ահարկութիւնս, յորժամ չեւ[66] եւս էր մարմնացեալ Բանն Աստուծոյ: Իսկ սիք մեղմագոյն տնաւրէնութեան նորա հեզութիւն ցուցանիւր, յորում խաւսե-

ցաւ ոչ միայն ընդ Եղիաի, այլ եւ՝ բովանդակ ընդ ամենայն ժողովուրդն Իսրայէլի եւ ընդ հեթանոսս. եւ զայս հեզութեամբ եւ մարդասիրութեամբ, այլ ոչ աղաղակ եւ վեճ մինչեւ արտաքոյ ոք ի հեթանոսաց լսել անախորժելի եւ սաստկութիւն ի նմանէ «զեղեգն ջախջախեալ ոչ բեկանել»[34*], որ են հրեայք կասեալք ի ճշմարտութենէ, եւ ոչ ինքեանք յինքեանս[67] խորտակեսցին: Եւ զպատրոյկ աղաւտացեալ ոչ շիջուցէ, որ է առ նոսա ճրագ աւրինացն, եւ ոչ ինքեանք շիջանիցին:

Արդ, զայս հեզաշարժս ոչ յայրի անդ ճշմարտապէս, այն ի Թափովր յամպայարկ լերինն ետես Եղիա եւ փափագ նորա լցաւ: Եղեւ հանդերձ Մովսէսիւ ի Թափովր: Իսկ եթէ բովանդակ ծանեան աշակերտքն զմարգարէսն մարգարէական հոգով իմացան, զոր ի յարութեան ամենայն սուրբք եւ արդարք առնուն շնորհս, որով ճանաչեն ի զ[ալս]տեան[68] վերջինքն զառաջինսն եւ նախագոյնքն՝ [յե]տինսն: Է եւ այլ պատճառ ծանաւթութեանց[69] նոցա. քանզի զՄովսէս տախտակաւքն տեսին, եւ լուսաւորեն երեսաւք, իսկ զԵղիաս՝ մաշկեկաւն եւ հրեղէն կառաւքն, որպէս եւ աւետարանիչն «երեւեալ փառաւք»[35*], ասէ:

Իսկ թմբրութիւն աշակերտացն ոչ եթէ տաղտուկ ինչ եւ անախորժելի, յորմէ զերծանիլ եւ փախչել ոք սիրէ, այլ առաւել ախորժելի եւ քաղցր, որպէս սերոբէիցն եւ քերոբէից եւ ամենայն զաւրաց երկնաւորաց, եւ որպէս Պետրոս եւ Պողոս ումն ի զարմացման եղեալ զանաւթ կտաւի տեսանելով խաւսի ընդ Աստուծոյ[36*], եւ ումն յերկրորդ երկինս ժամանեալ լսէր բանս անճառս՝ զԵրրորդութեան խորհուրդն[37*]: Եւ այժմ բազումք ի սրբոցն, որք ըստ իւրաքանչիւր կարի աշխատութեամբ մաքրեալ զխորհուրդս իւրեանց եւ յաղաւթելն քաղցրանան մինչեւ ի թնդմանս սրտիցն յարտասուս յորդորին, եւ զայս ի ստէպ ստէպ յիշելոյն զԱստուած եւ մտացն աչաւք ի Նա միշտ[70] հայելովն ստանան: Եւ որպէս Նախավկայն սուրբն Ստեփանոս բացեալ զերկինս տեսանէր աղաւթիւքն եւ զՈրդի ընդ աջմէ Հաւր, եւ անապական ուրախութեամբ լնոյր:

Իսկ ասելն Պետրոսի եթէ՝ «Բարիոք է մեզ աստ լինել», զի ոչ կամէին յաստուածավայելուչ տեսլեանցն մեկնել[71], քանզի կարի ըմբռնեալք ցանկութեամբ[72] տեսութեան եւ ի լսելիս հնչմանն եւ հոտ անուշութեան բուրմամբ Հոգւոյն եւ ի հովանաւոր ծածկութից լուսափայլ ամպոյն:

«Բարիոք է մեզ աստ լինել».

Քանզի Հայրն երկնաւոր աստ յայտնեաց զխորս անբաւ խորհրդոցն բարերարութեան իւրոյ, զի որպէս զՔեզ բնութեամբ Որդիդ ի լսելիս մեր ձայնիւ վերահնչեաց, եթէ՝ «Դա է, դմա լուարուք այսպէս եւ ի ձեռն քո, զի բնութիւնս մեր ընդունելի եղեւ քեզ եւ Հայր զմեզ որդիս ըստ շնորհի վերագրեաց[73]:

«Բարւոք է աստ լինել».

Զի Տէրդ եւ վարդապետդ ի վարժարանիս ի միջի մերում, զոր աւրս իսկ անուանի է[74]:

«[Բարիոք] է աստ լինել».

Զի Հոգին Սուրբ ի հոտ անուշութեան բուրմանն, յոր վայելեցաքս[75], իսկ ընդ մեզ է:

Եւ արդ, զի՞նչ ոչ վայելեցաք ի բարեաց ամպ հովանի մեզ, որով եւ լեառնս ծածկի, եւ ամրանամք, գիտեմ, զի ոչ իշխեն մերձենալ այսր ժողով չարանախանձ հրէիցն, քանզի որդիք են հարցն այնոցիկ, որ ի հրամանատու ձայնէն եւ ի շամանդաղս ամպոյն զանգիտեցին, զի թէ անդ ի մթագոյն ամպոյն երկեան մերձենալ ի Սինա[76], առաւել ապա ի սաստիկ լուսափայլ ամպոյս պակուցեալք եւ ոչ հպին ի լեառնս Թափովր: Զի թէ նայ այնու ամրացեալ Սինա կոչի, որ թարգմանի Անմատոյց, եւս[77] առաւել սա Հոգւով պարսպեալ կոչի Թափովր, որ թարգմանի Էջք Հոգւոյն: Եւ զի նոքա հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ կան, վասն այնորիկ բացամերժին աստի:

«Բարիոք է աստ լինել».

Զի եթէ յորժամ հակառակ Մովսիսի քարամբք զինեցաւ ժողովուրդն, եւ նա փախստեա ի խորանն ապաւինեալ, եւ վաղվաղակի ամպ ծածկեաց, եւ ոչ իշխեաց ոք անդ մտանել: Ապա եւ յՈրդոյդ Աստուծոյ ամպայարկս ամենեւին ոչ մերձեցցին:

«Բարիոք[79] աստ լինել».

Զի Մովսէս աստ է, հաւատարիմ ծառայն քո: Եւ զփորձ գիտեն նոքա զհարուածոյ[80] զաւազանի նորա, զի եթէ յորժամ զաւրէնսն անարգեցին, այնչափ սաստիկ գանեաց զնոսա, ապա որչափ եւս[81] առաւել եթէ ի Տէրդ աւրինացն ձեռնամուխ լինիցին: Լուսաւորեցեր մեզ զծածուկ աւրինացն ոչ քողածածկեալս, այլ բացաւ[82] երեսաւք զփայլեալ զփառս Տեառնդ իբրեւ ընդ հայելի տեսեալ զՔո լուսաւորեալ երեսդ իբրեւ զարեգակն, վասն այնորիկ ոչ զանգիտեմք հայել ի քողայծածկոյթ բացեալ երեսսն Մովսէսի, զի եթէ յորժամ ի ձեռագործ խորանն մտանէր կալ առաջի Քո, բացադրէր զքաւղն յերեսացն, ապա որչափ եւս[83] առաւել յանձեռագործ ամպայարկս մտանելով[84] է մերկանալ զծածկոյթ երեսացն:

Արդ, զի ոչ ծածկութիւն գրոյն աստ, այլ ի յայտնութիւնն Հոգւոյն միաւորեալ եմք ի մի հոգի մեք[85] եւ Մովսէս ի խաղաղութիւն է: Իսկ հրեայքն դեռեւս առագաստեալ սրտիւ ընթեռնուն[86] զՄովսէս, եւ ոչ ունին զՀոգին, որ կեցուցանէ[38*]: Վասն այնորիկ ոչ կարեն հայել յերեսս հոգեւորին Մովսէսի[87], զի մեռանին. ոչ է հոգի խաղաղութեան ընդ նոսա, ոչ իշխեն գալ այսր:

Դարձեալ «բարիոք է մեզ աստ լինել», զի նախանձախնդիրն Աստուծոյ աստ է: Եւ ոչ անգիտանան հրեայքն զզաւրութիւն լեզուի նորա առ հասարակ ընդ տիեզերս, զի սաստկապէս գանեաց զհակառակսն Աստուծոյ: Եւ զի հրեայքն դեռ եւս զնոյն բերեն զհակառակութիւն յինքեանս, զնոյն կրեն զհարուածս, մանաւանդ թէ եւս առաւել, զի յայնժամ զծառայսն Աստուծոյ կոտորէին զմարգարեսն: Իսկ այժմ զՈրդիդ խնդրեն՝ զՏէրդ մարգարէից, եւ գիտեմ, զի ոչ արգելոյիր երկայնամտութեամբդ Քո զարդարապէս բարկացողսդ ի վերայ նոցա, զի թէպէտ եւ նոքա ոչ գային այսր, սոքա վաղվաղակի անդր ընթանային, զի ոչ էն նուաստագոյն սոքա[88], քան զհարսն իւրեանց, որք զայրացմամբ զսիկիմացիսն կոտորեցին: Եւ անդ Յակոբ տրտնջեաց վասն կոտորածին, բայց աստ առաւել գործէ ըստ որում է աստուածասէր քան որդեսէր:

Իսկ մեզ լինել միաւորական եւ ոչ որոշաբար. Պետրոս զինքեանս եւ զՏէրն իբրեւ զՈրդոյ առ հարս աղաղակէ: Եւ արդ, իջցէ Հոգին Տեառն առաջնորդել մեզ ի միւս եւս

բան:

«Տէր կամի՞ս, զի արասցուք երիս տաղաւարս. մի քեզ եւ մի Մովսէսի եւ մի Եղիայի»:

Երրեակ թուովն զԵրրորդութեան ծանուցանէ զխորհուրդ, վասն զի զԲանն Աստուած ի մարմնի գոլով համարէին ընդունել ընդ բաւանդակութեամբ[89] մտանել տաղաւարի, թէպէտ եւ ըստ Աստուածութեան ոչ բաւէն նմա տարերք: Իսկ զՀայր եւ զՀոգին Սուրբ, թէպէտ եւ ոչ բովանդակութեամբ մարմնոյ գոյր ընդունել, այլ զի Երրորդութիւն բարերար եւ սուրբ, եւ սրբոց Իւրոց սիրտս իբրեւ ի տաճար բնակութեան[90] լինել հաճի, զոր Մովսեսիւ եւ Եղիաիւ համարեցան ընդունել, որպէս ասաց Աստուած, թէ՝ «Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա»[39*], եւ թէ՝ «Պատուիրեմ Հոգով իմով ծառայից իմոց մարգարէից»[40*], եւ եթէ՝ «Հոգին իմ, որ ի քեզ եւ բանն իմ, որ ի բերան քո»[41*]: Այս երրեակ տաղաւարաւ զանբաժանելի զԵրրորդութիւն անդ մերձ գոլով հաւատաին: Դարձեալ խնդրելի է, թէ զիարդ զծառայսն ընդ Տեառն տաղաւարակից լինել Պետրոսի թիւ արկանէր: Զայս եւ Տէրն ասէր, թէ՝ «Ուր Եսն եմ անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի»[42*]: Եւ զԱբրահամ եւ զՍահակ եւ զՅակոբ յարքայութեան վկաեաց լինել: Եւ վասն է՞ր զինքեանս ոչ ասաց գոլ տաղաւարակից. վասն զի սովորութիւն է սրբոց ոչ զանձինս, այլ զընկերս[91] յառաջեցուցանել ի պատիւս: Եւ դարձեալ, վասն զի զանճառելի տեսանելով զաստուածային փառսն անարժանս զինքեանս համարէին, որպէս երբեմն Եսաիաս ի փառաց Աթոռ զՏէրն տեսանելով սրովբէիւք շրջապատեալ զերեք սրբասացութիւն վերաձայնելով[*], զայն տեսանելով եւ լսելով ի հիացման եղեալ, զինքն մարդ եւ մեղաւոր խոստովանէր, որպէս Պետրոս երբեմն ի վերա ծովուն տեսեալ զՏէրն, զի գնայր եւ զի հրամանաւ ի ծովուն սքանչելագործէր, ասէ. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես»[43*]:

Իսկ զի՞նչ եթէ՝ «Դա է Որդի Իմ սիրելի, դմա լուարուք». վասն զի մի Որդի եւ մի բնութիւն դաւանեաց եւ ոչ խնդրեցաւ աստ բնութեանցն թիւ[92] կամ զանազանութիւն: Դարձեալ մի բնութիւն ոչ որպէս միայն Աստուծոյ եւ Հոգոյն կամ հրեշտակի անշաբախառն եւ պարզ եւ յատուկ, եւ ոչ որպէս Եւտիքէս, կամ եւս յառաջագոյն Մարկիոն եւ Մանի, որք ոչ ինչ ասացին առնուլ ի մարդկանէ, կամ Ապողինար, զի թերապէս մարմին ասաց ունել՝ անոգի եւ անմիտք, կամ Պանդորոս, որ յեղափոխեալ ի մարմին ասէ զԱստուածութիւն: Այլ կատարեալ աստուածային բնութիւն եւ լիապէս մարդկային բնութիւն, զգոյութիւն ամբիծ, ամբողջ անլուծանելի պահեալ՝ աստուածազործ միաւորութեամբ միացեալ եւ մի լեալ, որպէս հոգի մարդոյ, այլ բնութիւն եւ մարմին այլ, բայց արարչութեամբ Աստուծոյ միաւորեալ եւ ոչ ի միմեանս փոփոխեալ կամ լուծեալ, այլ ամբողջ պահեալ եւ միացեալ. մի մարդ, մի բնութիւն: Այսպէս առաւել վեհագոյն. Աստուծոյ եւ մարմնոյ, հոգւով եւ մտաւք միաւորեալ մի բնութիւն: Զայս դաւանեաց Հայր, այսպէս վկաեաց Հոգին Սուրբ: Եւ ոչ թիւ ի ներքս եմուտ երկեակ բնութեանց, զի Երրորդութիւն է առանձնական եւ բնութիւն միական ամբողջ պահեցի: Զայս հաստատեցին առաքեալքն, զկնի նոցա վարդապետք եկեղեցոյ, ամենեքեան աւթեւանք եւ տեղի բնակութեան Երրորդութեան գոլով: Եւ ի նմանէ զՆորայսն ուսեալ եւ վկաեալ եւ ոչ որպէս երկուս ի ներքս բերեն որդիս կամ

բնութիւնս, որք յանդիման հակառակ են Երրորդութեան Սրբոյ եւ ընդդիմակայք վկայութեան Հաւր եւ Հոգւոյն, եւ այս են ամենայն երկաբնակք։

Այլ մեք թողցուք զնոսա ի սոսկալի ատեանն Քրիստոսի, զի նմա մեղան եւ մեք դարձցուք յաւուրս խորհուրդս։ Եւ մինչ դեռ իջանէին ի լեառնէն[93] պատուիրեաց Յիսուս աշակերտացն եւ ասէ. «Մի՛ ումեք ասէք[94] զտեսիլդ մինչեւ Որդի մարդոյ[95] ի մեռելոց յարիցէ»։ Վասն զի զխոնարհագոյնս, դեռ եւս[96] կատարելոց էր զտնտեսութիւն. զանարգանս, զապտակս, զխաչ եւ զմահ եւ զթաղումն։ Ոչ ետ հրաման՝ նախ զփառսն քարոզել, եւ ապա զանարգանսն յանձն առնուլ. նախ զփայլեալ դիմացն որպէս զարեգակն քարոզել եւ ապա թուք յերեսս ընդունել եւ զՄովսէս եւ զԵղիա այնչափ ամաւք յառաջ զմարգարէսն քարոզել, եթէ կոչեաց զոմն ի մեռելոց եւ զոմն՝ ի կենդանեաց[97] եւ ապա Ինքն մեռանել։ Այլ յորժամ զամենեցուն զյայտնի եւ զհամաւրէնն ցուցցէ աստուածագործութիւն ի Խաչին. զարեգակն խաւարեալ, զերկիր թնդեալ շարժիմամբ, վէմք պատառեալք. այս համաւրէն տիեզերաց հիացումն, իսկ վարագուրին՝ հերձումն եւ լերինն Զիթենեաց ընդ չորս բաժանումն հերձանելով եւ գերեզմանաց բանալ, եւ երեսնամեա մեռելոցն յառնել. այս ի Հրեաստան եւ յԵրուսաղէմ, եւ որպէս Աստուած տեսանել աշակերտացն զյարուցեալն. այս ի Գալիլեա հեթանոսաց։ Վասն այնորիկ զայլակերպութիւն նորա ի Թափովր եւ զայլ հրաշս նորին զաշակերտացն միայն զտեսեալս ոչ ետ հրաման ասել. զի ոչ հաւատաին մինչ չեւ[98] զհամաւրէնն տեսեալ, բայց է իմն եւ այլ տեսութիւն, զի աշակերտացն եւ մեզ ամենեցուն ուսուցէ մի՛ ինչ ի ցոյցս[99] առնել եւ փառս որսալ։ Եւ զայս ի բազում տեղիս առնէր, եւ զամենայն ինչ զիւր առ ի խրատ մեզ դնէ առաջի։

## ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**Խորագիր**՝ B Յոհաննիսի հայոց վարդապետի որ եւ մականուն Կոզեռն՝ ասացեալ յաղագս Վարդաւարի տաւնին, եթէ վասն էր յնթերձուածն ոչ շարագրեցաւ ոչ ի Յակովբէ մեծէ, որ է եղբայր Տեառն, եւ ոչ ի Կիւրղէ եւ ոչ զկնի նոցայ յայլոց վարդապետաց։

**Բնագիր**՝ **1** B յապառնիսն։ **2** B քան զտաւնոյ։ **3** B **չիք** սրբոյ։ **4** B յունուիարի։ **5** B մարմնալ։ **6** B միանկամ։ **7** B առհաւատչէիւք։ **8** B զվաելումն։ **9** B ընթերցուածոց։ **10** A ընթերցուածոյ։ **11** B զի եւ։ **12** B **չիք** ընդ։ **13** B երկնէ **փխ**. որպէս է։ **14** B պարաստեցաւ։ **15** B **չիք** յԱստուծոյ։ **16** B հաւատ։ **17** B առաջնորդեաց։ **18** B ի ներքն **փխ**. ինքն։ **19** B Կուռնելի։ **20** A **չիք** եթէ ի հաւատալն... Քրիստոս։ **21** B զենելոյ։ **22** B հետամուտ։ **23** B ճանապարհորդեմք։ **24** B բխմամբ։ **25** B **բառս կրկնվում է**։ **26** B քաղցրերգութեամբ **փխ**. քաղցրաբարբառ։ **27** B Պասքեայ։ **28** B **չիք** դրունք։ **29** B Միածին։ **30** **չիք** ի։ **31** B պենդակոստէից։ **32** A **չիք** Տէր մեր։ **33** A վաղվաղակի փոյթ **փխ.** վաղվաղափոյթ։ **34** A ի յերկիր։ **35** B Վարդաւորի։ **36** B **չիք** զփառսն։ **37** B **չիք** որ։ **38** B հաստազոյն։ **39** B **չիք** յորժամ։ **40** B **չիք** եւ։ **41** A **չիք** ի։ **42** A զգաստացեալ։ **47** B **չիք** առ։ **48** A առհաւատչաեիւ։ **49** B ի փառաց։ **50** B արքայութիւն։ **51** զՅովաննէս գերագոյն քաջ զնա **փխ**. զՅովաննէս... վերագոյն։ **52** A որ **փխ**. մի։ **53** A **չիք** մի։ **54** B եւ **փխ**. Այլ եւ։ **55** B միիւսանգամ։ **56** B **չիք** Եւ։ **57** B փոխումն։ **58-60** A **չիք** յերեւման Քրիստոսի... եւ զԱբիւրոն։ **59** B յանապատականութիւն։ **61** B **չիք** եւ։ **62** B **չիք** որպէս։ **63** B փափաքումն (**այսպէս եւ այլուր**)։ **64** A այսինքն **փխ**. այս է։ **65** B առցես։ **66** B **չեւս: 67** B յինքեան։ **68** A **չիք** ի գալստեան։ **69** A ծանաւթութեան։ **70** B **չիք** միշտ։ **71** B տեղեացն յայտնեալ **փխ**. տեսլեանցն մեկնել։ **72** B ցանգութեամբ։ **73** B վերագրեցեր։ **74** B անուանէի **փխ**. անուանի է։ **75** A վայելեցաք։ **76** A Սինեա (**այսպես և այլուր**)։ **77** B եւ։ **78** B էջ։ **79** B Բարուք։ **80** B զհարուած։ **81** B **չիք** եւս։ **82** A բազում **փխ**. բացաւ։ **83** B եւ։ **84** B մտանել։ **85** B եմք **փխ**. մեք։ **86** B ընդեռնուն։ **87** B Մովսէսի։ **88** B նոքա։ **89** B բաւականութեամբ։ **90** B բնութեան։ **91** A զնկերս։ **92** B նիւթ։ **93** A լեռնէն։ **94** A ասիցէք։ **95** B մարդոյ։ **96** B եւ։ **97** A զոմն ի կենդանեաց եւ զոմն ի մեռելոց. **ուղղված բ, ա հերթագայություն ցույց տվող նշումով**։ **98** B մինչեւ **փխ**. մինչ չեւ։ **99** B ցոյց։

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԲԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոգևորականների ներկայությունը բանակում հիշվում է արդեն Ս. Գրքում, ուր ասվում է, որ Հռոմեական բանակում էլ հեթանոս քրմերը ճակատամարտի նախօրյակին ծիսական զոհաբերություններ էին կատարում և հմայություններ ու կանխագուշակություններ անում փորոտիքներին նայելով:

Chaplain բառը գալիս է վաղ քրիստոնեական շրջանից: Ըստ ավանդության՝ 4-րդ դարում մի հռոմեացի զինվոր՝ Տուրեցի Մարտինը, երկու մասի է բաժանում իր զինվորական թիկնոցը և մի մասը տալիս է մի աղքատ մարդու, որը դողում էր ցրտից: Գիշերը մի տեսիլ է տեսնում, որտեղ ասվում է, որ այդ աղքատ մարդը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն էր: Այս դեպքից հետո նա դառնում է նվիրյալ եկեղեցական և երբ նա մահանում է, դասվում է սրբերի շարքը և դառնում Ֆրանսիայի հովանավոր և պաշտպան սուրբը: Ֆրանկների թագավորը պատերազմի ժամանակ կրում էր Ս. Մարտինի թիկնոցը՝ որպես սուրբ մասունք, որը լատիներեն կոչվում էր cappa: Հոգևորականը, որը պահպանում էր թիկնոցը, կոչվում էր cappellanus, և բոլոր այն հոգևորականները, ովքեր ծառայում էին զինված ուժերում, այսպես անվանվեցին cappellani: Ֆրանսերեն թարգմանությունը chapelains է, որից էլ սկիզբ է առնում անգլերեն նույնանման բառը:

Ինչպես վկայում են պատմական փաստերը՝ հոգևորականությունը միշտ էլ աջակից է եղել հայոց պետականությանը և բանակին՝ ոգի, կամք և վստահություն ներշնչելով հայոց զորականներին ու զինվորներին: Պատմական բախտորոշ և վճռական պահերին մենք պատմության ալեծուփ ալիքներում միշտ հանդիպում ենք հայոց հոգևորականի վսեմ և խրոխտ կերպարին՝ հաղթական խաչը ձեռքին հայոց բանակին առաջնորդելիս դեպի հաղթական ճակատամարտի՝ վկայակոչելով «Մահ իմացեալ անմահութիւն» պատգամը:

Այս գրավոր աշխատանքում ամփոփված է ՀՀ ԶՈՒ-ի զորամասերից մեկում իմ ձեռք բերած երկամյա հոգևոր փորձառությունը: Այն կարող է օգտակար լինել այն հոգևորականների համար, ովքեր պետք է ծառայության անցնեն ՀՀ ԶՈՒ-ում որպես հոգևոր սպասավորներ:

**Ի՞ՆՉ/պիսի/ ՏԻՊԻ /ԽԱՌՆՎԱԾՔԻ/ ԶԻՆՎՈՐՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ**

Նախքան զինվորների հետ շփվելը, կարևոր է իմանալ, թե ինչպիսի մարդկանց հետ պետք է գործ ունենալ, քանի որ երբ տեղեկացված ես լինում տվյալ միջավայրում ապրող մարդկանց մասին, քարոզչությունը դառնում է ավելի արդյունավետ: Այս պարագայում հոգևորականը արագորեն կողմնորոշվում է, թե տարբեր խառնվածքի զինծառայողներին ինչպես փոխանցել Աստծո խոսքը, որովհետև զինվորների հետ շփվելիս՝ հարկ է լինում ցուցաբերել տարբեր մոտեցումներ:

Այստեղ «խառնվածք» ասելով նկատի չունեմ հոգեբանական այն բնորոշումները, որոնք ընդունված են հոգեբանության մեջ մարդկանց խառնվածքի տիպերը նկարագրելիս, այլ պարզապես ցանկանում եմ ներկայացնել բանակային սպասավորության ընթացքում հանդիպած զինվորների այն խմբերը, որոնք արտահայտել են իրենց բնորոշ խառնվածքը հոգևոր շփման շրջանակներում: Այսպիսով, այս բնութագրերը տարբեր են հոգեբանության մեջ ընդունված խառնվածքի տիպերից, քանի որ դրանք ընդգրկում են ոչ միայն հոգեբանական, այլև սոցիոլոգիական բնութագրեր, սակայն, անշուշտ, այստեղ նկարագրվող բնավորության հատկանիշներն իրենց մեջ ներառում են հոգեբանության մեջ ընդունված խառնվածքի տեսակները: Դրանք պայմանականորեն ներկայացնում ենք բաժանված տասնհինգ խմբերի: Հնարավոր է, որ այս կամ այն զինվորին բնորոշ լինի այստեղ ներկայացվող հատկանիշներից մեկը կամ մի քանիսը, բայց բաժանումներն արված են՝ շեշտելու զինվորների առավելապես այն խմբերը, որոնք միանշանակորեն աչքի են ընկնում այս կամ այն խառնվածքով, և որոնց մոտ գերակայում է տվյալ բնութագիրը:

## ԲԱՆԱԿՈՒՄ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ /ԽԱՌՆՎԱԾՔԻ/ ՏԵՍԱԿՆԵՐ

### 1. /ՍԻՄՈՒԼՅԱՆՏՆԵՐ/ ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Բանակում հոգևոր գործունեության ընթացքում հաճախակի են հանդիպում այնպիսի զինվորներ, ովքեր սիմուլյացիայի միջոցով փորձում են արտոնություններ ձեռք բերել և իրենց ցանկություններն իրականացնել: Հատկանշական է, որ այս գործելակերպը բավականին մեծ տարածում է գտնում, երբ մարդը գտնվում է այնպիսի իրավիճակներում և իրադրություններում, երբ սահմանափակվում է այն ազատությունը, որն ուներ իր առօրյա կյանքում: Հատկապես թուլակամ մարդիկ դիմում են սիմուլյացիայի, որպեսզի կարողանան վերագտնել իրենց նախկին ազատ վիճակը, և չեն ցանկանում թեկուզ որոշակի ժամանակով հաշտվել իրենց ոչ լիակատար ազատության հետ: Հարկ է նշել, որ այս տիպի զինվորները, որպեսզի իրականացնեն իրենց ցանկությունները, օգտագործում են նաև հոգևորի գործոնը, որպեսզի իրենց վերադասները չկարողանան հստակորեն հասկանալ իրենց սիմուլյացիայի հիմնական նպատակը: Նորակոչիկ զինվորն իրեն ներկայացրել էր որպես հոգեկան ներաշխարհը խախտված մի անձնավորություն՝ բացատրելով, որ իր հոգեկանը այդպիսին է դարձել, քանի որ իրեն բերել են բանակ, և իր ազատությունը սահմանափակվել է, իսկ ինքը իր սիրելի աղջկա հետ խնդիրներ ունի: Այժմ բանակ գալու պատճառով կորցրել է այդ աղջկան, և իրեն հետաքրքրում է միայն Սուրբ Գիրքը և հավատքը: Եվ ձևացնում էր, թե վեց օր է, ինչ բանակում հաց չի կերել և հրաժարվում էր իրեն առաջարկվող բոլոր տեսակի սննդից, մերժում էր ճաշարան գնալ: Չանվելով՝ իրեն սովամահի պես էր պահում՝ ձևացնելով, թե նույնիսկ չի կարողանում թուլությունից քայլել: Երբ հրամանատարները նրան հարցնում էին, թե ինչու է այդպես անում, պատասխանում էր, որ ինքը հավատացյալ անձնավորություն է և իրեն հետաքրքրում է միայն հոգևոր սնունդը, որ ինքը ուզում է միայնակ մնալ և չենթարկվել զինվորական որևէ կարգ ու

կանոնի:

Առաջին հայացքից շատ դժվար է հասկանալ, թե նման զինվորները իրո՞ք այդպես են մտածում, թե պարզապես ձևացնում են: Բայց հաճախակի շփման ընթացքում կարելի է ճիշտ կողմնորոշվել: Պետք է հատկապես ուշադրություն դարձնել զինվորների բոլոր խոսքերին ու բառերին, քանի որ մի քանի անգամ զրուցելով նրանց հետ, հստակ է դառնում վերջիններիս միանման մտքերի հակասական լինելը: Բայց նախ և առաջ պետք է վստահություն ստեղծել նրանց մոտ, որովհետեւ եթե նրանք չվստահեն հոգևորականին, ապա ընդհանրապես անկեղծ չեն լինի: Վստահության մթնոլորտի ձևավորման դեպքում նրանք հոգևորականին ուղղակի կամ անուղղակի կերպով ասում են իրենց սիմուլյացիայի իսկական նպատակը:

Վերոհիշյալ զինվորի դեպքում պարզվեց, որ նա ոչ մի խնդիր էլ չունի, այլ պարզապես չի կարողանում համակերպվել բանակային կյանքի պայմաններին և նման վարքագծով փորձում է ազատվել ծառայությունից: Հանդիպելով այսպիսի զինվորների՝ հոգևորականը պետք է զգուշավորություն ցուցաբերի և չընկնի այսպիսի զինվորների ցանկությունների ծուղակը: Մեկ այլ զինվոր էլ, որպեսզի հայտնվեր հիվանդանոցում, զորամասի մատուռում կտրել էր իր ձեռքի երակները և իր արարքին հոգևոր երանգ տվել, բայց երբ մտերմիկ զրույց ունեցա այդ զինվորի հետ, անկեղծորեն ասաց, որ այլևս չի կարողանում տանել իր ազատությունները սահմանափակող բանակային կյանքը և իր արարքին հոգևոր երանգ է հաղորդել՝ ձեռքի երակները կտրելով զորամասի մատուռում, որպեսզի իր հիմնական նպատակը քողարկված մնա և իր կատարած արարքի պատիժը մեղմ լինի՝ որակվելով որպես հոգևոր շեղում, իսկ ինքը հայտնվի հիվանդանոցում...:

Այսպիսով, այս խառնվածքի տեր զինվորներին կարելի է բաժանել երկու մասի՝

ա. Զինվորներ, որոնք չեն ուզում ոչինչ լսել և անել: Իրենց ձևացնում են որպես դժբախտ, տառապյալ և հիվանդ մարդիկ: Ոչ մի կերպ չեն ուզում հաշտվել իրենց բանակային կարգավիճակի հետ: Որպես ինքնապաշտպանական միջոց օգտագործում են հոգևորի գործոնը՝ իրենց ներկայացնելով որպես խորապես հավատացյալ մարդիկ, որոնց ներաշխարհին խորթ են բանակային կյանքի օրենքները:

բ. Զինվորներ, ովքեր ցանկանում են իրականացնել իրենց ցանկությունները՝ իրենց ձևացնելով որպես հոգեպես և մարմնապես տառապող մարդիկ: Նրանց առանձնակիորեն չի հետաքրքրում հոգևոր իրականությունը: Սակայն երբ հոգևորականին տեսնում են, պահը չեն կորցնում և մոտենում են, որպեսզի փորձեն հոգևորականի միջոցով իրականացնել իրենց մտադրությունները:

Բոլոր պարազաներում էլ սիմուլյանտները մեղադրում են հրամանատարությանը, նրանց արարքները համարում անարդարացի, իրենց ցանկությունները ներկայացնում որպես հրատապ անհրաժեշտություն, որոնց չիրականացման դեպքում իբրև թե կկորցնեն իրենց հավասարակշռությունը և նույնիսկ կարող են ինքնասպանության դիմել:

## 2. ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այս խառնվածքի զինվորները առաջին հերթին հոգևորականին հարցնում են, թե

հոգևորականը ի՞նչ հնարավորություններ ունի զորամասում: Երբեմն այսպիսի զինվորները փորձում են մտերմություն ստեղծել հոգևորականի հետ, որպեսզի, օգտվելով այդ մտերմությունից, փորձեն նրա միջոցով իրագործել իրենց ցանկությունները: Նրանց համար ավելի կարևոր է, թե որքանով հոգևորականը կարող է օգնել իրենց, քան հոգևոր պատգամները, թեև հանդիպում են այնպիսիները, որոնք իրոք հավատացյալ անձինք են, և երբ նկատում են, որ հոգևորականի միջոցով չեն կարող իրականացնել իրենց նպատակները, շարունակում են շփվել հոգևորականի հետ՝ խոսելու համար հոգևոր հարցերի շուրջ: Սակայն եթե նկատեն, որ հոգևորականը պատրաստ է գեթ փոքր-ինչ օգնել՝ իրականացնելու իրենց ցանկությունները, պատեհ առիթը երբեք չեն կորցնի:

### 3. ՈՂՋԱԽՈՀ, ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այս խառնվածքի զինվորները պատրաստ են օգնելու և լսելու հոգևորականի խոսքը: Երբ տեսնում են հոգևորականին, մոտենում են նրան, որպեսզի զրուցեն հոգևոր թեմաներով:

### 4. ՀՈԳԵԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այսպիսի զինվորները հիմնականում նույնպես պատրաստ են լսելու հոգևորականի խոսքը և զգում են հոգևոր կյանքի կարևորությունը և հոգևոր մխիթարությունը: Ինձ պատահած զինվորներից մեկը երկար ժամանակ բուժվել էր հոգեբույժների կողմից և հիմա վախենում էր դիրքային հերթապահությունից: Նա պարզապես հոգեկան լարվածության և վախի երևույթների ներքո դիրքերում կորցնում էր իր հավասարակշիռ վիճակը և կարող էր անպատասխանատու ու ողբերգական քայլեր կատարել:

### 5. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Մեծ մասամբ խնդիրներ են ծագում կարոտի հետ կապված, որոշ հրամանատարների ոչ ճիշտ վարվելակերպի, ինչպես նաև միմյանց հետ փոխհարաբերությունների պատճառով: Հաճախ այսպիսի խառնվածք ունեցող զինվորներին թվում է, թե ինչ փորձում են ձեռնարկել, չի ստացվում, իրենց համարում են ձախողակ, նրանցից ոմանք հաճախ մեկուսանում են, կաշկանդվում, չեն կարողանում ընկերություն անել մյուսների հետ: Նրանք առաջին հերթին կարիք ունեն լսելու հավատքի, հույսի և սիրո քրիստոնեական պատգամները: Հոգևորականը պետք է հաճախակի հանդիպի այսպիսի զինվորներին, որովհետև այս հանդիպումները նպաստում են, որ նրանք դուրս գան նման հոգեբանական բարդույթներից:

### 6. ԱՐՏԱՍՈՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Բանակում հանդիպող ամենահետաքրքիր իրավիճակներից է: Հաճախ ենք կարդում և լսում հոգեղեն աշխարհի մասին, որը երբեմն մեզ համար պարզապես մի հեռավոր և անմատչելի իրականություն է թվում, սակայն յուրաքանչյուր նման դեպքում զգում ես, թե անհավանական թվացող այդ իրականությունը որքան հավանական է և հաղորդակից մեր կյանքին:

Հիմնականում զինվորների մոտ հարցեր են ծագում երազների, ոգեկանչության վերաբերյալ: Զինվորների հետ նաև բացառիկ դեպքեր են լինում, մեծ մասամբ ոգիների հետ շփման հարցերում: Այսպիսի զինվորների առկայության դեպքում զորամասում հոգևորականն ամենից կարևոր դերն ու նշանակությունն ունի, քանի որ նա կարող է վճռորոշ դեր ունենալ բոլոր այն դեպքերում, երբ հրամանատարությունն ուղղակի անկարող է որևէ բան անել՝ հանդիպելով այդպիսի հոգեղեն իրողությունների: Օրինակ՝ մի քանի տպավորիչ դեպքեր, ուր հոգևորականի գործոնը մեծ է:

Զինվորներից մեկը հոգեկան տագնապի մեջ էր, պատմեց, որ երբեմն երազներ է տեսնում, որոնք իրականանում են: Եվ այժմ նորից մի երազ է տեսնում, որն անընդհատ կրկնվում է: Այս զինվորը տագնապի մեջ էր, որովհետև մի քանի տարի առաջ երազում հստակորեն տեսել էր, թե ինչպես է իր մայրը մահանում: Նրա երազը կրկնվում է մի քանի անգամ, տղան չի հավատում իր տեսած երազին: Անցնում է մի քանի տարի, և նրա մայրը հանկարծակիորեն հիվանդանում է և, ինչպես որ տղան իր երազում էր տեսել, այդ երազի նկարագրության համաձայն նրա մայրը մահանում է: Այժմ այդ տղան նորից մի կրկնվող նմանատիպ երազ էր ունենում, ուր տեսնում էր, որ իր հարազատներից մեկին վտանգ է սպառնում: Բավականին բարդ իրավիճակ էր, սակայն հոգևոր պատգամները, առավել ևս՝ աղոթքները փարատեցին այդ զինվորի հոգեկան տագնապները, քանի որ աղոթքների շնորհիվ այդ երազն այլևս չկրկնվեց:

Բերենք մեկ ուրիշ օրինակ. զինվորներից մեկը հրամանատարությանը շփոթության էր մատնել իր պահվածքով: Լինելով հավասարակշիռ և խելացի տղա, երբեմն ինքնիրեն խոսում էր՝ կարծես թե խոսելով ինչ-որ մեկի հետ: Չուներ որևէ հոգեկան խանգարում: Նա նաև սիմուլյացիա չէր անում՝ խուսափելու համար զինվորական կարգ ու կանոնից: Բայց ասում էր, որ ինքը սովորական ձայնի պես լսում է իր մահացած մոր ձայնը, որն իրեն խորհուրդներ է տալիս, ինչպես նաև ներքին ուժ ու զորություն: Նրան ներշնչում է նույնիսկ դիպչել էլեկտրական հոսանքին: Եվ մի քանի անգամ տղան կատարել էր հիշյալ ձայնի այս պատգամը և էլեկտրական հոսանքից ներքին էներգիա էր ստացել, սակայն հոսանքին դիպչելիս իրեն ոչինչ չէր եղել: Տղայի կարծիքով՝ այդ ուժը իրեն միայն օգնում է: Սակայն հանգամանքները ցույց տվեցին, որ դա չար ուժ էր, որը վստահություն էր ձեռք բերել տղայի մոտ՝ ներկայանալով որպես նրա մահացած մայրը: Նա խորհուրդ էր տվել տղային իր մահացած մոր գերեզմանի մոտ մի գերեզման փորել, որովհետև ասել էր, թե շուտով պիտի մահանա և գնա իր մոտ:

Այսպիսով պարզ էր, որ դա չար ոգի էր, որը փորձում էր կառավարել միամիտ տղային՝ իրականացնելով իր նպատակները: Երբ այդ զինվորը սկսեց հաճախակի աղոթել, կարդալ Սուրբ Գիրքը, հոգևոր գրականություն, կատարել քրիստոնեական պատգամները, այդ չար ոգին հեռացավ հատկապես այն պարագայից հետո, երբ տղան մի քանի անգամ նրան ասել էր, որ ինքը Հիսուս Քրիստոսի որդին է և ոչ թե այդ ոգու…

Այսպիսով, բանակում հանդիպում են նաև նմանօրինակ դեպքեր, և հոգևորականը պետք է պատրաստ լինի այսպիսի անակնկալներին և օգնի զինվորներին՝ հաղթահարելու այս փորձությունները:

**7. ՔՆՆԱԴԱՏԵԼ ՍԻՐՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ**

Այս տիպի զինվորները երբ հոգևորականի հետ երկխոսության մեջ են մտնում, հիմնականում իրենց չիմացության պատճառով սկսում են քննադատել քրիստոնեությունը, Եկեղեցին, հոգևորականների վարքն ու բարքը՝ մոռանալով այն պատգամը, թե նախ քո աչքի միջի գերանը հանիր, ապա ուրիշի աչքի շյուղը: Նրանց մեջ լինում են ծնողազուրկ երեխաներ, որոնք ասում են, թե եթե Աստված կա, Նա պիտի այնպես աներ, որ իրենք իրենց ծնողներին չկորցնեին: Լինում են նաև բարձրագույն կրթություն ունեցողներ, որոնք թերահավատորեն են վերաբերվում հավատքին, իսկ եթե հավատում են, ապա հոգևորականների վարք ու բարքն են քննադատում՝ լսելով ինչ-որ անհիմն պատմություններ, բայց նրանց մեծ մասը պատրաստ է լսելու հոգևորականի խոսքը և վերլուծելով այն՝ ընդունել որպես ճշմարտություն և հարգել հոգևորականին: Այսպիսի զինվորների հետ աշխատելիս պետք է լինել համբերատար, եթե նույնիսկ իրենց չիմացության պատճառով անհիմն եզրակացություններ են անում: Հիմնականում համբերատար լսելով նրանց խոսքը՝ պետք է պատասխանել նրանց քննադատություններին՝ բերելով տպավորիչ, հիմնավոր պատասխաններ:

**8. ԱՆԼՈՒՐՋ ԶԻՆՎՈՐՆԵՐ**

Այս տիպի զինվորները նույնպես հիմնականում իրենց չիմացության պատճառով են անլրջությամբ մոտենում հոգևորականին: Բայց երբ զգում են, որ հոգևորականի իմացությունն ավելին է և երկխոսության դեպքում նույնիսկ ճնշում է նրանց իրենց անգիտության պատճառով, լսում են հոգևոր ազդու խոսքը, մեծ մասամբ դառնում են հարգալից և զարմանալիորեն ավելի շատ են սկսում հարգել հոգևորականին, քան շատ այլ զինվորներ: Սակայն կան այնպիսիները, որոնք անլուրջ են իրենց հոգեկան անհավասարակշիռ վիճակի պատճառով: Այստեղ էլ մեծ համբերություն է պահանջվում, որպեսզի հոգևոր ազդու և տպավորիչ պատգամներով կարողանաս վերափոխել այսպիսի զինվորներին, հակառակ դեպքում առանց համբերատարության հոգևոր խոսքն ու պատգամը չես կարող հասցնել նրանց սրտերին:

**9. ԿԱՇԿԱՆԴՎԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐ**

Այսպիսի զինվորները թաքցնում են իրենց հավատացյալ լինելը՝ վախենալով, թե կարող են ծաղրուծանակի ենթարկվել: Նրանք զգուշանում են առանձին մոտենալ հոգևորականին, թեև մեծ ցանկություն ունեն զրուցելու նրա հետ: Երբ հոգևորականը իմանում է այս տիպի զինվորների մասին, նա պետք է փորձի այսպիսիներին հանել այդօրինակ կաշկանդներից՝ բացատրելով, որ ոչ թե պետք է թաքցնել հավատացյալ լինելու հանգամանքը, այլ ընդհակառակը՝ անսահման զորավոր հոգևոր խոսքի միջոցով պետք է անլուրջ և անհավատ ու թերահավատ զինվորներին ուղղել դեպի Հիսուս Քրիստոսը:

**10. ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ**

Իմ սպասավորության ընթացքում զորամասում բարեբախտաբար քիչ աղանդավորներ են եղել: Եհովայի վկաներ և մորմոններ չեն եղել, միայն հոգեգալստականներ:

Նրանց մեծ մասն էլ այդ խմբակցությունների մեջ խորապես ընդգրկված չի եղել: Ուրախալին այն է, որ նրանք հոգևորականի հետ հանդիպումից չեն խուսափում: Ինձ հանդիպած հոգեզավատականների մեծ մասը շատ քիչ հոգևոր գիտելիքներ ուներ: Երբ լսում էին Հայ Առաքելական Եկեղեցու պատմության, դերի ու նշանակության մասին, նրանց մեծ մասը հասկանում էր Հայ Եկեղեցու դերը մեր ժողովրդի կյանքում: Երբ հոգևորականի հետ հաճախակի շփվում են, նրանք արդեն իրենց լիովին համարում են Հայ Առաքելական Եկեղեցու զավակներ: Սակայն չի բացառվում, որ նրանցից ոմանք երբ զորացրվեն, կրկին հարեն կրոնական տարբեր հարանվանությունների, քանի որ նրանց բարեկամների մի մասը սովորաբար լինում է վերջիններիս խմբակների անդամ, և իրենք էլ առանձնակի ջանք չեն թափում հաղորդակցության մեջ լինել Հայ Եկեղեցու հետ:

Դեպքեր են լինում, երբ աղանդավոր զինվորները թաքցնում են իրենց ով լինելը:

Սակայն լինում է նաև, երբ զինվորը կամ զինվորներն իրենց հայտարարում են իրրև հավատացյալ անձինք և չեն ցանկանում զենք կրել՝ նաև ասելով իրենց վաշտի հրամանատարին, որ իրենք չեն ընդունում մոմավառությունը, մատաղը և այլն: Բայց հոգևորականի և ամբողջ վաշտի առջև ասում են, թե այդպիսի բաներ չեն ասել, ոչ էլ հրաժարվում են զենք կրելուց...

Իմ փորձառության ընթացքում միայն մոլականներն են, որ, պայմանավորված իրենց կրոնական համոզմունքներով, զենք կրելու հետ խնդիր են ունեցել: Նրանց հետ իմ հանդիպումների ընթացքում սուրբգրային վկայություններով ցույց եմ տվել, որ հանուն հայրենիքի, հավատքի սրբության և ընտանիքի անհրաժեշտ է զենքը ձեռքին պաշտպանել մեր սրբությունները: Հետաքրքրական է, որ ինձ հանդիպած մոլականները սկզբունքորեն չեն հրաժարվել իրենց կրոնական գաղափարներից, բայց իմ բերած սուրբգրային փաստարկներից հետո պատասխանել են, որ եթե պատերազմ լինի, իրենք այդ դեպքում զենք կվերցնեն՝ պաշտպանելու իրենց հավատը, ընտանիքը և երկիրը:

### 11. ԱՆՏԱՐԲԵՐ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այսպիսի զինվորների համար զորամասում հոգևորականի ներկայությունը այնքան էլ կարևոր չէ: Դասերի ժամանակ թույլտվություն են խնդրում ու անհետանում կամ դասերի ընթացքում անընդհատ քնում են: Նրանց հետաքրքրում է միայն իրենց նեղ անձնական խնդիրները ու թե ինչպես առօրյան զինվորական կարգ ու կանոնից ազատ անցկացնեն: Երբեք չեն մոտենա հոգևորականին ու որևէ հոգևոր խնդրի շուրջ որևէ հարցում չեն անի:

### 12. ՀՈԳԵՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՔԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այսպիսի զինվորները միշտ պատրաստ են լսելու հոգևորականի խոսքը և հարկ եղած դեպքում օգնելու հոգևորականին, բայց հոգևոր իմացության մեջ թույլ են կամ անտեղյակ: Օրինակ՝ Եհովայի վկաների կամ մորմոնների բրոշյուրները կարող են բերել տալ հոգևորականին կամ դնել զորամասի մատուռում՝ կարծելով, թե դրանք

Հայ Եկեղեցունն են... Եղել է նաև այնպիսի դեպք, երբ զինվորը նույնիսկ չգիտեր, թե ինքը գնացել է հոգեզալստականների մոտ, եկեղեցասիրաց եղբայրակցությա՞ն պաշտամունքներին, թե՞ ավետարանչականների մոտ: Եվ այս ամենը խառնել է Հայ Առաքելական Եկեղեցու հետ: Այսպիսի զինորները հիմնականում լինում են հեռավոր շրջաններից, ծնողազուրկ, դպրոցը ոչ լրիվ ավարտած և այլն:

### 13. ԹԵՐԱՀԱՎԱՏ ԿԱՄ ԱՆՀԱՎԱՏ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այսպիսի զինվորները երբ հոգևորականին տեսնում են, կարող են մոտենալ և հարցնել, թե՝ Դուք ո՞ր հավատքից եք՝ չկռահելով ու չհասկանալով հոգևորականի սքեմից, որ նա Հայ Առաքելական Եկեղեցու սպասավոր է: Կարող են նույնիսկ շփոթել Եհովայի վկաների հետ՝ տեսնելով հոգևորականի սքեմը... Այնպես որ չպետք է անակնկալի գալ նմանօրինակ զինվորների հանդիպելիս:

Հատկապես ոչ հավատացյալ զինվորները հպարտանում են իրենց անհավատությամբ: Այսպիսիների հետ պետք է երկարատև, համբերատար աշխատանք տանել: Ոմանց հետ այն հաջողությամբ է ավարտվում, և նրանք մեծ հարգանքով են սկսում մոտենալ հոգևորականին, իսկ մնացյալներն այլևս չեն մոտենում, երբ զգում են, որ իրենց աղքատիկ գիտելիքներով պարզապես չեն կարող վիճաբանել:

### 14. ՀՈՒՍԱԽԱԲՎԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Սրանք այն զինվորներն են, ովքեր իրենք իրենց վնաս են պատճառում՝ հուսախաբված, ընկճված լինելով տարբեր պատճառներից: Հուսահատությունից երբեմն կտրում են իրենց ձեռքերի երակները... Նրանք կարիք ունեն հոգևոր մխիթարանքի, պատգամների, հույսի, հավատքի և սիրո: Բայց նրանց մեջ եղել է նաև այնպիսի դեպք, երբ այդպիսի զինվորը պարզապես չի ցանկացել խոսել հոգևորականի հետ: Մնացյալ դեպքերում նրանք միշտ կարոտ են եղել հոգևոր խոսքին և հոգևորականի ներկայությանը:

### 15. ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՓՆՏՐՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Այս տիպի զինվորները նրանք են, ովքեր հավատում են Աստծուն, սակայն տարբեր անպատասխան հարցերի հանդիպելով՝ երբեմն կասկածանքի են ենթարկում իրենց հավատքը: Հոգևորականին տեսնելիս նրանք փորձում են հոգևորականի միջոցով ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

## ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Հետաքրքրական է, թե զինվորները հիմնականում ինչ հարցեր են տալիս հոգևորականին: Մոտավորապես իմանալով զինվորների հիմնական հարցադրումները՝ հոգևորականը կողմնորոշվում է, թե ինչպիսի պատրաստվածություն է անհրաժեշտ՝ տվյալ միջավայրի հետ շփվելու համար:

*Զիվորների հիմնական հարցադրումները վերաբերվում են՝*

1. Բարոյական ազատությանը.

2. Ինչո՞ւ Աստված չի վերացնում չարը, և կյանքն այսքան անարդար է.
3. Ոգեկանչությանը.
4. Երազներին.
5. Երբ որևէ միջավայրում ես հայտնվում և թվում է, թե այդ միջավայրում արդեն եղել ես.
6. Աղոթելուն, թե ինչպես աղոթել.
7. Ե՞րբ կարելի է եկեղեցի մտնել.
8. Մոմավառությանը.
9. Քրիստոսի Երկրորդ Գալստյանը.
10. Եկեղեցու նվիրապետությանը.
11. Հանդերձյալ կյանքին.
12. Աշխարհի արարմանը.
13. Զենք վերցնելուն և չվերցնելուն.
14. Խաչակնքելու կարևորությանը.
15. Աստվածհայտնությանը և Սուրբ Զատկին.
16. Խոստում տալուն և խոստումը դրժելուն.
17. Գուշակներին, բախտագուշակությանը.
18. Ինչո՞ւ Աստված չի երևում, և ո՞վ է Աստված.
19. Հոգևորականների կյանքին, վարք ու բարքին.
20. Մատաղին.
21. Աղանդների՝ մեծ մասամբ Եհովայի վկաներին.
22. Մկրտությանը:

Վերոհիշյալ հարցերը զինվորների այն հիմնական հարցադրումներն են, որոնք հանդիպել են բանակում իմ հոգևոր փորձառության ընթացքում:

## ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոգևորականի համար անհրաժեշտ է ունենալ որոշակի մեթոդիկա՝ բանակում հոգևոր առաքելություն իրականացնելու համար, այլապես նա կարող է ձախողել իր առաքելությունը, քանի որ բանակում անմիջականորեն հանդիպելու է զանազան խառնվածք ունեցող զինվորների, տարբեր հասարակական միջավայրերի: Այս պարագայում անհրաժեշտ է որոշակի մոտեցում՝ այդ տարաբնույթ խառնվածքի և հայացքների տեր զինվորների միջավայրում մատուցելու Աստծո խոսքը: Եթե հոգևորականը պարզապես մի մոտեցում որդեգրի ամբողջ զորամասում՝ իր քարոզչությունը ծավալելու համար, ապա իր գործունեությունը հասու չի լինի ամենատարբեր բնավորությունների տեր զինվորներին: Նա կբախվի այնպիսի խնդիրների, որոնք պահանջելու են ճկունություն և արագ կողմնորոշում տվյալ իրադրությունում: Օրինակ՝ եթե նրան մոտենան մի քանի զինվորներ և սկսեն զրուցել, ապա հոգևորականը, որն, օրինակի համար, որդեգրել է զուտ պատմողական ոճը՝ զրույցը վարելու համար, ցանկալի արդյունքի չի կարող հասնել, հատկապես եթե հանդիպել է այնպիսի զինվորնե-

րի, որոնք սիրում են ուղղակի քննադատել և այնպիսի հարցադրումներ առաջ քաշել, որոնք վերաբերում են առօրյա կյանքին առնչվող հոգևոր հարցերին:

Անգլիական թագավորական բանակի հոգևորականների գործունեությունը բաժանում են երեք մասի՝

1. **Ուսուցում.**
2. **Հովվական ծառայություն.**
3. **Պաշտամունքային ծառայություն:**

Կարելի է ասել, որ այս ընդհանուր համակարգումը բնորոշ է նաև մեր բանակում ծառայող հոգևոր սպասավորների ընդհանուր մեթոդիկային:

***Ուսուցման մեթոդիկայի*** մեջ մտնում են դասընթացները, դասախոսությունները, որոնք պարբերաբար անցկացվում են զորամասում: Ուսուցման մեջ հնարավոր է օգտագործել Սուրբ Գրքից հատվածներ կարդալու և մեկնաբանելու մեթոդը, որևէ թեմայի շուրջ քննարկումը հարց ու պատասխանների միջոցով անցկացնելը, որևէ հոգևոր խնդիր ներկայացնելու և զինվորների եզրահանգումների միջոցով խնդիրը լուսաբանելը:

***Հովվական ծառայության*** մեջ ամենահաճախակի օգտագործվող մեթոդը առանձնազրույցներն ու անհատական զրույցներն են զինվորների հետ: Այս դեպքերում զինվորները հաճախակի խոսում են իրենց հուզող անձնական հարցերի շուրջ:

Զորանոցներ, դիրքեր ու բուժկետներ այցելությունները, զորանոցներում հոգևոր զրույց-դասընթացներ կազմակերպելը ևս շատ կարևոր են: Մեծապես արժեվորվում են քարոզներն ու աղոթքները դիրքային հերթափոխների ժամանակ, քարոզչական գործունեության մեթոդները՝ պատմողական, քննախոսության, համոզելու, հարցադրումների, անձնական և զանազան օրինակների, քննադատության և ինքնաքննադատության, տեսական և պրակտիկ մեթոդները, մոնիտորինգային մեթոդը և այլն: Մոնիտորինգային մեթոդի միջոցով հոգևորականը պարզում է, թե իր հոգևոր գործունեության դաշտում ինչ արդյունքներ կարող է ակնկալել, թե ինչպիսի արդյունք է տալիս իր գործունեության այս կամ այն մեթոդը:

***Պաշտամունքային ծառայությունը*** նույնպես կարևոր է բանակում: Այս ծառայությունն ավելի արդյունավետ է, երբ հոգևոր սպասավորը քահանայական ձեռնադրություն է ունենում՝ կարողանալով մատուցել Ս. Պատարագ և կատարել խորհրդակատարություններ:

## ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոգևորականի հոգևոր ծառայությունը բանակում ավելի արդյունավետ է դառնում, երբ նա կարողանում է կողմնորոշվել տարբեր իրադրություններում հոգևոր քարոզչություն իրագործելիս՝ օգտագործելով քարոզչական համապատասխան մեթոդներ:

Ինչպես նշել ենք, բանակում ծառայում են տարբեր խառնվածք ունեցող անձինք: Հոգևորականը պետք է կարողանա ընկալել զինվորների խառնվածքների յուրահատ-

կությունները, որպեսզի տարբեր չափորոշիչներով մոտենա ամեն մի զինվորի՝ Աստծո խոսքը մատուցելով նրան:

Քարոզչական գործունեությունը արդյունավետ է, երբ, նախքան քարոզչություն ծավալելը, հոգևորականը մասնակի կամ ամբողջական տեղեկատվություն է ունենում տվյալ քարոզչական դաշտի վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը օգնում է ճիշտ և արագ կողմնորոշվել՝ քարոզչություն իրագործելու համար: Ուսուցման մեթոդիկան օգտագործելիս փորձառությունը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է հովվական ուսուցման ոճը, երբ ինքդ այցելում ես զորանոցներ, ծանոթանում զինվորների ներքին կյանքին, հետաքրքրվում նրանցով, դառնում ավելի անմիջական և վստահելի: Այսպիսի այցելությունների ժամանակ զինվորները հավաքվում են հոգևորականի շուրջը: Եթե նրանք լսարան ունեն զորանոցում, ապա հոգևորականի առաջարկությամբ հավաքվում են լսարանում, և հոգևորականը անցկացնում է զրույց-դասընթաց: Իսկ եթե նրանք լսարան չունեն, ապա հենց տեղում կարելի է անցկացնել այդպիսի հովվական դասընթաց: Ուրախությամբ կարող եմ նշել, որ լսարանները լեփ-լեցուն են լինում, թեև այսպիսի դասերին զինվորի մասնակցությունը կամավոր է:

Զինվորների համար բոլորից հետաքրքրական են այն դասընթացները, երբ Ս. Գրքից հանդիսավոր կերպով հոգևորականը կարդում է որևէ հատված և մեկնաբանում: Սուրբ Գրքի խոսքն ունի նաև հոգեբանական նշանակություն, մանավանդ, որ նշում ես, որ կարդում ես ոչ թե ուղղակիորեն քո խոսքը, այլ Աստվածաշնչում ամփոփված Աստծո խոսքը: Փորձառությունը ցույց է տալիս, որ զինվորների համար ավելի գրավիչ է պատկերավոր խոսքը: Այստեղ կարելի է նշել սուրբգրային առակները, խրատները և այլք:

***Առաջին***՝ արդյունավետություն ունենալու համար պետք է լսարանի համար անմիջականություն ստեղծել՝ դասընթացի կամ հոգևոր զրույցի մեջ ներգրավելու համար: Զինվորները ոչ թե պետք է լինեն ուղղակի լսողներ, այլ՝ հաղորդակից դասին կամ զրույցին՝ զգալով իրենց ոչ թե կողմնակիորեն դասի ունկնդիրներ, այլ՝ դասի անմիջական մասնակիցներ և դասը հոգևորականի հետ կայացնողներ, նույնիսկ որոշ դեպքերում միասնաբար դասը վարողներ: Այս պատասխանատվության և արժեվորման զգացումը երբ զինվորներն ունենում են, դասը կամ հոգևոր զրույցը, կարելի է ասել, լինում է կայացած:

***Երկրորդ***՝ հոգևորականը նախքան իր քարոզը, դասը, հոգևոր զրույցը սկսելը պետք է կարողանա այնպես ներկայացնել նախաբանը, որ զինվորները զգան այդ դասի, քարոզի, զրույցի ոչ թե միայն մտահայեցողական լինելը, այլ հատկապես այդ խոսքերի իրական, ռեալ լինելը՝ զգալով Աստծո ներկայությունը տվյալ պահին: Այս մեթոդը առավել նախընտրելի է, երբ զինվորները դեռևս պատրաստ չեն լսելու քարոզը, այլ իրենց առօրեական մտայնությանբ են տարված: Ահա այստեղ է, երբ մինչ բուն քարոզին անցնելը հոգևորականն իր խոսքը կարող է կյանքում կատարված մի այնպիսի իրական պատմությամբ սկսել, որ բոլոր զինվորներն ուղղակիորեն կամ մասնակիորեն առնչվել են նման իրողության և իրավիճակի հետ, որը նրանց զգացնել կտա Աստծո Խոսքի կարևորությունը:

***Երրորդ***՝ կարևոր է լսարանին տիրապետելը, որպեսզի բոլորը կամ մեծ մասը

լռությամբ լսեն հոգևորականի խոսքը, այլապես քարոզչությունը կկայանա մասնակիորեն կամ կխափանվի: Այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն և համբերություն: Օրինակ՝ երբ զորավարժություն է անցկացվում, երբեմն տեղական զինկոմիսարիատը պետք է զորակոչի ենթակա տղամարդկանց նշված ժամանակահատվածում բերի զորամաս, որոնք նաև որոշ ժամանակ պետք է անցկացնեն զորամասի ակումբում կամ որևէ սրահում: Եվ հոգևորականը նույնպես պետք է դասընթացներ անցկացնի նրանց հետ: Բոլոր դասընթացները արդյունավետ չեն կարող լինել, եթե հոգևոր սպասավորը փորձի դրանք սովորական դասաժամային կերպով մատուցել, որովհետև այս մարդիկ առաջին հերթին անհանգստացած են, թե ինչու են գտնվում այդտեղ, երկրորդ՝ նրանք սովորական զինվորներ չեն, որ պետք է պարտադրված լսեն, երրորդ՝ նրանց տարիքը տատանվում է քսանից մինչև հիսունի միջև, և նման լսարանին տիրապետելը շատ դժվար է:

Սովորաբար նման իրավիճակներում ակումբում կամ սրահում պարզապես մեկ վայրկյան իսկ չի դադարում աղմուկը: Լռում են միայն մի պահ՝ լսելու, թե ինչքան են մնալու և երբ են տուն թողնելու: Այստեղ ուղղակի ֆորմալ դաս ներկայացնելն անհնար է: Հոգևորականը պետք է կարողանա իր հոգևոր առաջադրանքը այնպիսի խնդրի շուրջ ներկայացնել, որի լուծման անհրաժեշտությունը կարևորում են այդտեղ հավաքված տարբեր տարիքի տղամարդիկ: Դա կարող է լինել սոցիալական և այլն: Նման պարագայում մի քանի վայրկյան անց քար լռություն է տիրում ակումբում կամ սրահում, քանի որ հոգևորականը ներկայացնում է մի խնդիր, որը բոլորին է հետաքրքրում: Հոգևոր սպասավորը պետք է կարճ ժամանակահատվածում փոխանցի իր հոգևոր պատգամը լսարանին, այլապես եթե փորձի երկար խոսել, ապա որոշ ժամանակ անց նրան միայն քչերը կլսեն:

Ուստի, կարևոր է տիրապետել լսարանին, որպեսզի քարոզչությունը չձախողվի:

Սովորաբար ակումբներում հավաքվող մեծաթիվ զորակոչիկների հետ, որոնց թիվը երբեմն անցնում է չորս կամ հինգ հարյուրից, դասընթացը կամ քարոզչությունը բոլորի համար արդյունավետորեն ծավալելը տատանվում է ամենաշատը 15-25 րոպեի միջև, այնուհետև նրանց մի մասը սկսում է պարզապես չլսել. սկսում են քնել, մյուս մասը ցանկանում է դուրս գալ ակումբից, ոմանք էլ սկսում են խոսել միմյանց հետ և այլն: Սակայն երբ սպաները կամ նրանցից որևէ մեկը նույնպես ներկա է լինում այդ դասին, օգնում են, որպեսզի դասի ընթացքը չխանգարվի, սովորաբար նման դասընթացները կարող են արդյունավետորեն տևել մինչև 40 կամ 45 րոպե: Այդ իսկ պատճառով քարոզչության հիմնական կետերը պետք է ներկայացնել առաջին տասնհինգ կամ քսան րոպեների ընթացքում:

Հատկանշական է, երբ խոսում ես, 15 կամ 20 րոպե անց զինվորներից ոմանք սկսում են հարցեր տալ, և դասաժամը ավելի շատ վերածվում է հարց ու պատասխանի՝ ծավալվելով կոնկրետ թեմայից դուրս: Ուստի պետք է նկատի ունենալ, որ առաջադրված թեման ներկայացնելիս դրա հիմնական դրույթները պետք է մատուցել առաջին քսան րոպեների ընթացքում, հակառակ դեպքում հնարավոր է, որ տարբեր թեմաների հետ առնչվող հարցեր լինեն, և հոգևորականը չկարողանա լիարժեքորեն քառասուն րոպեի ընթացքում իր նախընտրած թեմայի հիմնական ուղղությունները

ներկայացնել:

Քարոզչական մեթոդիկայի կարևորագույն ուղղություններից մեկը ***անհատական զրույցներն*** են: Այս դեպքերում է, որ զինվորները անկաշկանդորեն խոսում են իրենց հուզող հարցերի շուրջ, հոգևորականը կարողանում է Աստծո խոսքը ամբողջապես մատուցել տվյալ անհատին: Փորձառությունը վկայում է այդ սկզբունքի արդյունավետությունը: Անհատական զրույցների շնորհիվ հավանականությունն ավելի մեծ է, որ աղանդավոր զինվորը վերադառնա Հայ Առաքելական Եկեղեցու գիրկը: Այս զրույցների ընթացքում հոգևորականը պետք է համբերատար լսի զրուցակցին, նրա մտահոգություններն ու հոգևոր խնդիրները, այնուհետև պատասխանի զրուցակցի հուզող հարցերին: Այս պարագաներում հոգևորականը հանդես է գալիս որպես մխիթարող ու հուսադրող անձ զրուցակցի համար, որը կարիք ունի լսելու հոգևոր պատգամները և կողմնորոշվելու իր հետագա քայլերի մեջ, եթե սիմուլյացիա չի անում:

Անհատական զրույցների միջոցով անհրաժեշտ է աշխատել նաև առավելապես երկկողմանի ծնողազուրկ զինվորների հետ՝ նրանց բացատրելով կյանքում ապրելու իրենց կարևորությունը Աստծո շնորհի միջոցով: Փորձառությունը ցույց է տալիս, որ հիմնականում նրանց մեջ են լինում այնպիսի զինվորներ, որոնք կարող են անպատասխանատու ու անհավասարակշիռ քայլեր կատարել, քանի որ նրանց համար կյանքն այնպիսի արժեք չունի, ինչպես նրանց համար, ովքեր ծնողներ ունեն, ուստի ծնողազուրկ զինվորները մտածում են, որ այլևս ոչինչ չունեն կորցնելու կյանքում:

Ամեն դեպքում, քարոզչություն ծավալելիս քարոզը չպետք է ուղիղ կերպով քննադատական, առավել ևս դատապարտող երանգ ունենա, ուր հոգևորականը հանդես է գալիս որպես ճշմարիտ կյանքով ապրող անձնավորություն, իսկ զինվորները ընկած են մեղքի մեջ ու հոգևորականի հորդորների շնորհիվ պետք է դուրս գան մեղավոր ու մոլորված վիճակից: Այսպիսի քարոզը կլինի վանող և անարդյունավետ, հոգևորականի ու զինվորների միջև անջրպետ կառաջանա: Եթե նույնիսկ ինչ-որ քննադատական խոսք պետք է ասվի, ապա ցանկալի է դերանվան երկրորդ դեմքը չօգտագործել զրուցակցի սխալները մատնանշելու համար, այսինքն՝ դու կամ դուք այսպիսին եք…, քանի որ նման հորդորը կամ քննադատությունը դիմացինին կտոգորի հակառակության ոգով ինքն իրեն արդարացնելու համար՝ չնկատելով իր սխալը: Սովորաբար պետք է օգտագործել դերանվան առաջին կամ երրորդ դեմքերը՝ զինվորի կատարած սխալը կամ մեղքը ցույց տալու համար, և նա այդ քննադատությունն անմիջականորեն չի ընդունի ուղղված իր անձին և լսելով հոգևորականի խրատը՝ կընդունի իր սխալ արարքը:

Այսպիսով, հոգևորականի գործունեությունը բանակում կարևոր նշանակություն ունի նախ հոգևոր, ապա՝ բարոյահոգեբանական առումով: Միայն այն, որ հոգևորականը սքեմով շրջում է զորանոցներում, արդեն իսկ զինվորների վրա հոգեբանական ազդեցություն է թողնում, որովհետև տեսնելով հոգևորականին, նրանք սկսում են մոտենալ՝ ցանկություն ունենալով լսել Աստծո հուսադրող Խոսքը, իսկ եթե նույնիսկ չեն մոտենում, ապա հոգևորականին տեսնելով ևս մեկ անգամ զգում են Աստծո ներկայությունը իրենց հոգիներում, որ Հիսուս Քրիստոս գործում է և իր մխիթարող ու հուսառատ Խոսքն է փոխանցում հոգևորականի միջոցով:

Ցանկալի է, որ բանակի հոգևոր սպասավորը ունենա քահանայական ձեռնադրություն: Լինում են դեպքեր, երբ իրոք զգացվում է տվյալ իրադրության մեջ քահանա լինելու առավելությունը, քանի որ սարկավագը չի կարողանում քահանայական օրհնություն տալ կամ մկրտություն անել կամ ծիսական այլ խորհուրդներ կատարել հրատապ անհրաժեշտության դեպքում:

Խնդիրներից մեկն էլ այն է, որ, ըստ զինվորական կանոնադրության, զինվորներին չի թույլատրվում պարանոցին որևէ իր կրել: Սակայն զինվորներից շատերը մեծ ցանկություն ունեն փոքրիկ խաչեր կրել: Երբ նրանց հրամանատարները տեսնում են նրանց պարանոցի խաչերը, պոկում են, լինում են դեպքեր, երբ պոկում ու գցում են մի կողմ: Ճիշտ է, զինվորները կարող են այդ խաչերը պահել իրենց գրպաններում, բայց և այնպես եթե նրանք միայն ընդունված խաչեր կրեն նաև իրենց պարանոցին, դա նրանց չի խանգարի: Վատ մտադրություն ունեցող զինվորը կարող է և իր գրպանում պահել տվյալ իրը իրեն կամ ուրիշին վնաս պատճառելու համար: Ուստի, երբ զինվորները մոտենում են ինձ ու բարձրաձայնում այս հարցը, հասկանում եմ, թե իրենց պարանոցին խաչ կրելը ինչ հոգեբանական նշանակություն ունի: Նրանք իրենց ավելի վստահ են զգում, հոգեկան ավելի կայուն վիճակում են գտնվում, որովհետև Ս. Խաչն ունենալով իրենց կրծքին՝ նրանք զգում են Աստծո զորությունն իրենց հետ, Աստծո պահպանության և նախախնամության ներկայությունը: Այս դեպքում պատկերացրեք, թե ինչպիսի հոգեկան վիճակում նրանք կարող են հայտնվել, երբ նրանց հրամանատարը պոկում է խաչը նրանց պարանոցից և, ավելին, մի կողմ շպրտում…

Հատկանշական է, որ հոգևորականը նպաստում է բանակի բարոյահոգեբանական կերտվածքի բարձրացմանը: Եվ բանակում հավաքված տարբեր խառնվածքներ, բնավորություններ, դաստիարակություն ունեցող զինվորների որոշակի հարցերի պատասխանները կարողանում է տալ հոգևորականը: Եվ նրա դերը կարևոր է բանակի բարոյահոգեբանական ներդաշնակ զարգացման համար:

*ԹԱՄԱՐԱ ԵԳՈՐՅԱՆ*
*ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ*

# ՈՒՂՂԱԴԱՎԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻԱԿԱՄՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԸ

Միակամության բանավեճերը Քրիստոնեական Եկեղեցու և աստվածաբանական մտքի պատմության կարևորագույն փուլերից են:

Հետքաղկեդոնական շրջանի առաջին տասնամյակներից սկսած՝ ներեկեղեցական հարաբերությունների զարգացման դինամիկայում ավելի ու ավելի ամրապնդվում ու ամբողջական տեսք էր ստանում առաջին երեք տիեզերական ժողովների ուղղադավան հավատքի վրա հենված միարարական շարժումը:

Պահպանված վավերագրերի անկողմնակալ վերլուծությունը ցույց է տալիս, որ Եկեղեցու միասնականացման վճռական փորձերից մեկը կատարվեց 7-րդ դարում՝ միակամության վարդապետության ծավալման շրջանում:

Արդի եկեղեցագիտական ու աստվածաբանական ուսումնասիրությունները միանգամայն օրինաչափորեն վկայում են, որ միակամության բանավեճերը թե՛ դոգմատիկ և թե՛ պատմական առումով կապված են քաղկեդոնական աստվածաբանության հետ[1]: Եկեղեցու պատմության այս փուլի առանցքը կազմեցին Հիսուս Քրիստոսի փրկչական առաքելության դրսևորումների և Աստվածամարդու բնությունների (հիպոստասային միություն) փոխհարաբերության տեսանկյունների մեկնության շուրջ ծավալված վիճաբանությունները: Այդ համակարգում իր խորությամբ ու հազեցվածությամբ առանձնանում են հատկապես միակամության բանավեճերը, ուր ամենայն սրությամբ քննարկվում էին Հիսուս Քրիստոսի կամքի և ներգործության հիմնահարցերը:

Լինելով միանգամայն բարդ գործընթաց՝ խնդրո առարկա հիմնահարցի լուծումը կարող էր ծավալվել հնարավոր երկու ուղղությամբ. Որդի Աստծո աստվածային ու մարդկային ներգործությունը վերագրելով միավորյալ բնությանը կամ էլ Հիսուս Քրիստոսի երկու բնություններին վերագրել երկու ներգործություն (դուռ էներգիա): Առաջին դեպքում Հիսուս Քրիստոսի կամքը վերագրվում է միասնական Աստվածամարդու դեմքին և համարվում է միակը, իսկ երկրորդը դիտարկում է Հիսուս Քրիստոսի մեջ երկու կամք և երկու ներգործություն:

Հարցի լուծման առաջին տեսակետի կողմնակիցները կոչվեցին «միակամականներ», իսկ երկրորդ հոսանքը կազմեցին քաղկեդոնականները կամ «երկկամականները»[2]:

Արդի եկեղեցական աստվածաբանական մատենագրությունը միակամության բանավեճերի պատմությունը ստորաբաժանում է երկու փուլի՝ Հիսուս Քրիստոսի ներգործության (էներգիա) և կամքի շուրջ ծավալված վիճաբանությունների[3]:

Միաէներգիզմի վարդապետության ակունքների վերաբերյալ մեզ են հասել եր-

---

[1] **Болотов В. В.**, Лекции по истории древней Церкви, т. 4, М., 1994, ст. 446-447, **Карташев А. В.**, Вселенские соборы, М., 1995, ст. 396-397, **Тальберг А.**, История Христианской Церкви, Нью Йорк, 1991, ст. 169.

[2] **Поснов М. Э.**, История Христианской Церкви, Брюсель, 1964, ст. 445.

[3] Христианство, энциклопедический словарь, ст. 170 ....

կու վավերագրեր: Դրանցից առաջինը Կ.Պոլսի Պատրիարք Սերգիոսի նամակն է՝ ուղղված Հռոմի Հոնորիոս Պապին: Նա պնդում էր, որ Կարին-Թեոդուպոլիս քաղաքում 622 թ. Հերակլես կայսրը սերիական (հակոբիկյան) Եկեղեցու ղեկավար Պողոսին միություն հաստատելու համար առաջարկում է հիմք ընդունել Հիսուս Քրիստոսի երկու բնություն և «μιά ενεργεια» (մի ներգործություն) բանաձևը: Հետազոտողներից ոմանք միակամության վարդապետության հեղինակ են համարում Հերակլես կայսրին[4]: Հեղինակների մի այլ խումբ միակամության վարդապետության ծագման գործընթացների մեկնաբանության համար հիմք է ընդունում Պյուռոսի դեմ Մաքսիմոս Խոստովանողի գրած ուղերձը, ուր մատնանշվում է, որ «μιά ενεργεια» բանաձևի հիման վրա Կ. Պոլսի Սերգիոս Պատրիարքը ձգտում էր միավորել Քրիստոնեական Եկեղեցիները[5]:

Իրականում միակամության վարդապետության ակունքներն ավելի խորն են և առնչվում են քրիստոնեական առաջին երեք տիեզերական ժողովների դավանաբանական հիմքերին: Հայտնի է, որ Հիսուս Քրիստոսի երկու բնությունների գոյությունը քաղկեդոնականների կողմից հաստատվում էր զուտ սիմվոլիկ նշանակությամբ, այսինքն՝ Քրիստոսի տարանջատ բնությունների մասին ուսմունքը ելնում էր զուտ արտաքին դրսևորումներից, քանի որ առաջին երեք տիեզերական ժողովների դոգմատիկ ուսմունքից անխուսափելիորեն բխում էր, որ Հիսուս Քրիստոսն իրականում օժտված է մեկ՝ Աստվածամարդու բնությամբ: Հիսուս Քրիստոսի բնությունների «երկատումը» նշանակում էր, որ Աստված-Լոգոսը իր մարդկային հատկանիշները կրում էր ակամա, ինչն ուղղակի հանգեցնում էր երկկամության վարդապետությանը, բայց քանի որ ուղղադավան քրիստոսաբանության համաձայն *Աստվածամարդու ինքնագիտակցությունը մեկն է*, նշանակում է՝ Քրիստոս օժտված է մեկ հիպոստասով և հիպոստասային մեկ գիտակցությամբ ու կամքով, այսինքն՝ *Հիսուս Քրիստոսի մեկ կամքը այնպիսի կենտրոն է, որը նրա անձում անխառն կերպով միավորում է և՛ մարդկային, և՛ Աստվածային ներգործությունն ու կամքը*:

Դեռևս Հերակլ կայսեր և Կ.Պոլսի Սերգիոս Պատրիարքի կրոնական քաղաքականությունից շատ առաջ, 7-րդ դարի երկրորդ կեսին, Ալեքսանդրիայի դպրոցի ուղղադավան աստվածաբանները, մեկնաբանելով Կյուրեղյան աստվածաբանության «մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևի բովանդակությունը, անխուսափելիորեն հանգել են «Քրիստոս մեկ էներգիա» եզրակացությանը[6]: Այլ կերպ ասած՝ Հիսուս Քրիստոսի Աստվածամարդու բնությանը կապված՝ մեկ է նաև Նրա կամքը (εν θέλημα): Ջգտելով չսրել ներեկեղեցական հարաբերությունները՝ միակամության վարդապետները փորձեցին քաղկեդոնական (դիֆիզիտ) ուսմունքը լրացնել ուղղադավան քրիստոսաբանության «մի կամք» վարդապետությամբ: Այստեղից էլ «միաէներգիզմի» «երկու բնություն, մեկ կամք» (δύο φύσεις, էն տելեմա) հայտնի բանաձևը: Եվ չնայած բանաձևն ուներ փոխզիջումային բովանդակություն, այնուհանդերձ, այն զգալի դեր կատարեց Ընդհանրական Եկեղեցու հիմքերը վերականգնելու գործում:

622 թ. կայսերական հրովարտակով արգելվեց Հիսուս Քրիստոսի «երկու էներգիաների» մասին ուսմունքը[7]: 626 թ. Հերակլեսը միակամյա վարդապետության

---

[4] Болотов В. В., նշվ. աշխ., էջ444:

[5] նշվ. աշխ., էջ 446-447, Карташев А. В., նշվ. աշխ., էջ 396-397, Walker W., A History of the Christian Church, p. 181.

[6] Поснов М. Э., նշվ. աշխ., էջ 445:

[7] Поснов М. Э., նշվ. աշխ., էջ 446:

շուրջ Լաոդիկեում բանակցություններ սկսեց տեղի Կյուրոս Մետրոպոլիտի հետ: Վկայելով, որ Լևոնի Տոմարում այս մասին ոչինչ չի խոսվում, Կյուրոսը նախապես հակադրվեց «միաէներգիա» բանաձևումին: Բայց մի փոքր ավելի ուշ, Կ.Պոլսի Սերգիոս Պատրիարքի միջամտությունից հետո, Կյուրոսը անցում կատարեց միակամության աստվածաբանությանը և, կայսեր կողմից Ալեքսանդրիա տեղափոխվելով, դարձավ միակամության ջերմ պաշտպաններից մեկը:

7-րդ դարի 30-ական թթ. սկսած՝ էական տեղաշարժեր նկատվեցին կայսրության միաբնակ ծայրագավառների և Կ.Պոլսի Պատրիարքության փոխհարաբերություններում: Կյուրոս Պատրիարքը հաշտեցնում է Եգիպտոսի հակամարտող Եկեղեցիներին դավանաբանական հետևյալ բանաձևի շուրջ՝ «Ով չի խոստովանում մի Քրիստոս, մի Որդի, Աստված-Բանի անփոխելի ու անայլայլելի մի մարմնացյալ բնություն, ինչպես որ ուսուցանեց Ս. Կյուրեղը, թող նզովյալ լինի»: Միարարական այդ քաղաքականության արդյունքը եղավ 633 թ. հունիսի 3-ի ինը կետերից բաղկացած «Համերաշխության ակտը», որն ուղղակի հռչակում էր. «Միևնույն Քրիստոսն ու Որդին միասնական Աստվածամարդու ներգործությամբ իրականացնում է աստվածայինն ու մարդկայինը»:

Միակամության վարդապետությունը հաջողության հասավ նաև Ասորիքում: 630-632 թթ. այդ հողի վրա դրացիական հարաբերություններ հաստատվեցին Հայ Եկեղեցու և Կ.Պոլսի Պատրիարքության միջև (85 տ.)[8]: Արևելքում ունեցած հաջողությունների մասին տեղեկացնելու նպատակով Կ.Պոլսի Պատրիարքը անձնական ուղերձով դիմեց Հռոմի Հոնորիոս Պապին, ուր ներկայացված էր քրիստոնեական Արևելքի կացությունը: Կ.Պոլսի Պատրիարքը պնդում էր, որ «չի կարելի դատել Աստվածամարդու ո՛չ մեկ և ո՛չ էլ երկու էներգիաների մասին, քանի որ Հիսուս Քրիստոսի մոտ իշխում է մեկ կամքը»: Այնուհետև նա պնդում է, որ «միաէներգիա» արտահայտությունը օգտագործվել է եկեղեցական հայրերի մոտ, բայց այն կարող է բացասական հետևանքներ ունենալ անփորձների վրա, քանի որ նրանք կարող են ենթադրել, թե այդ կերպ մերժվում է Քրիստոսի բնության երկուությունը: Իր հերթին «δύο ενέργειαι» արտահայտությանը շատերը դեմ էին, քանզի դեռ այս բանաձևը չի հանդիպում Եկեղեցու հայրերի մոտ և ենթադրում է երկու հակադիր կամք: Այնուհետև Սերգիոս Պատրիարքը կողմնորոշվելու համար Հոնորիոս Պապից խորհուրդ է հարցնում[9]:

Ընդառաջելով Կ.Պոլսի Պատրիարքի խնդրանքին՝ Հոնորիոս Պապը պատասխան նամակում հաստատում և ուղղադավան է հռչակում Սերգիոսի տեսակետները[10]: Նա ևս արտահայտում է այն համոզմունքը, որ մեկ կամ երկու էներգիաների մասին հարցադրումը «սխոլաստիկական անիմաստ վիճաբանություն է»: Հետևաբար, Հռոմը ոչ միայն չի կարող այդ ցանցի մեջ ընկնել, այլև իր ուսմունքի պարզությամբ պետք է ոչնչացնի այդ կեղծ ուսմունքը՝ մերժելով Աստված-Լոգոսին ներկայացված «բազմադիմության» որակավորումները: Հոնորիոս Պապը ընդունում է «միասնական ձգտում» և «միասնական կամք» արտահայտությունների ուղղափառությունը: Նա հաստատում է նաև Հիսուս Քրիստոսի մարդկային բնության անմե-

---

[8] Болотов В. В., նշվ. աշխ., էջ 456-461, Карташев А. В., նշվ. աշխ., էջ 399:

[9] Болотов В. В., նշվ. աշխ., էջ 463-464, Карташев А. В., նշվ. աշխ., էջ 402, Поснов М. Э., նշվ. աշխ., էջ 447-448:

[10] Հոնորիոսի նամակը մեզ է հասել հունարեն բնագրով, թեև ժողովում ընթերցվել է նրա լատիներեն տարբերակը:

դանչականության վարդապետությունը[11]:

Այդ պահից միակամության վերափոխված մոնոէներգիզմը Հոնորիոս Պապի ջանքերով վարդապետական ձևակերպում ստացավ և որն ամենականորն է՝ Հոնորիոս Ա Պապի ձևակերպած համակարգում Քրիստոսի կամքի գոյաբանական միասնությունը անխուսափելիորեն հանգեցնում է բնության միասնության վարդապետությանը: Միաժամանակ Պապն ընդունելի համարեց թե՛ միաբնակների «միաէներգիա» և թե՛ երկաբնակների «դիո էներգիե» բանաձևումները: Նա մեկ կամք և մեկ ներգործություն վերագրեց միայն Հիսուս Քրիստոսի միասնական հիպոստասին: Հոնորիոսի աստվածաբանական այս ուսմունքն էլ հիմք դարձավ նրա ընդդիմախոսների այն տեսակետի համար, թե իբր Պապը այդպես էլ «չկարողացավ ըմբռնել և արժեվորել այն հիմնահարցը, թե արդյոք Քրիստոսի կամքը նրա բնությա՞ն հատկանիշն է, թե՞ դեմքի»[12]: Դա միանգամայն հասկանալի էր, քանի որ մերժելով Հիսուս Քրիստոսի երկու էներգիաների գոյությունը՝ Հոնորիոս Պապը ոչ միայն նպաստեց միակամության ծավալմանը, այլև միակամության կողմնակիցներին քաղկեդոնականության դեմ պայքարում «աստվածաբանական զենք տվեց»: Այդ իսկ պատճառով էլ երկաբնակների «6-րդ տիեզերաժողովը» Հոնորիոս Պապին բանադրեց և հերետիկոս հռչակեց:

Պառակտված Եկեղեցու միության այս փորձը ևս, ցավոք, անհաջողության դատապարտվեց, որին մեծապես նպաստեցին թե՛ ներքին և թե՛ արտաքին մի շարք գործոններ: Օգտվելով արաբական արշավանքների ընձեռած հնարավորությունից՝ միակամության դեմ ազդեցիկ ընդդիմություն ձևավորվեց Երուսաղեմում, որի առաջնորդը Սոֆրոնիոսն էր: Իր ընդդիմադիր գործունեությունը Սոֆրոնիոսն սկսեց նրանով, որ մերժեց «միաէներգիա» բանաձևը և ուղղադավան հռչակեց միայն «դիոէներգիե»-ն: Երբ Սոֆրոնիոսը 634 թ. ընտրվեց Երուսաղեմի Պատրիարք, տեղական ժողով հրավիրեց, մերժեց միակամության վարդապետությունը և հռչակեց իր ուղղափառությունը: Դրանից հետո, Հռոմի աջակցությունը ձեռք բերելու նպատակով, Սոֆրոնիոսը Քրիստոսի կամքի ու էներգիայի վերաբերյալ աստվածաբանական մի ուղերձ ներկայացրեց Հոնորիոս Պապին, որը հայտնի է «Սոֆրոնիոսի սինոդիկա» անվամբ: Այն հռչակում էր, որ «Քրիստոսի բնություններից յուրաքանչյուրը գործում է ըստ իր էության» և այդ հիման վրա պնդում, որ Քրիստոսի գործողությունների տարբերությունը պայմանավորվում է նրա բնությունների տարբերությամբ:

Քանի որ Լոգոսի մարդկային էներգիան տարբերվում էր սովորական մարդու էներգիայից, ուստի անխուսափելիորեն հետևում է, որ Քրիստոս «մեկ է» և միաժամանակ «երկու», քանի որ նա հիպոստասային բարդ ամբողջություն է: «Սինոդիկայի» հրապարակումից հետո միակամության և երկկամության հակասությունները ծայրաստիճան սրվեցին: Խաթարվեց նաև Արևելք-Արևմուտք ներեկեղեցական համերաշխությունը, որի պատճառով էլ այն կտրականապես մերժվեց Կ.Պոլսի Սերգիոս Պատրիարքի կողմից: Այսպիսով, չնայած միակամության վարդապետության տարածմանն ու Եկեղեցու վերամիավորմանը, Անտիոքը, Ալեքսանդրիան ու Պաղեստինը նվաճելուց հետո էլ միարարական շարժումը մնաց անավարտ: Սակայն քրիստոնեական աստվածաբանության համար այն մնում էր հրատապ հարց և կարճ ժամանակ անց դավանաբանական ամփոփ տեսք ստացավ «Էկթեզիս»-ի

[11] Մանր. տե՛ս. **Болотов В. В.**, նշվ. աշխ., էջ 464-465:

[12] **Болотов В. В.**, նշվ. աշխ., էջ 471, **Карташев А. В.**, նշվ. աշխ., էջ 403:

շնորհիվ: Քրիստոսի ներգործության հիմնահարցի շուրջ ծավալված պայքարի արդյունքը եղավ Հերակլես կայսեր 638 թ. հրովարտակը՝ «Էկթեզիս»-ը, որը հավատո հանգանակի ձև ուներ և սահմանում էր միակամության դավանաբանության սկզբունքները: Այն դատապարտում էր և՛ «միաէներգիա», և՛ «դիո էներգիե» բանաձևումները: Նրանում ուղղադավան է համարվում միայն «էնթելիմա» (մեկ կամք) բանաձևումը («անխառն ու անբաժան միացում, ըստ համադրության»), և որ «Աստված-Բանը մեկ հիպոստաս է, մեկ դեմք»: Այն առաջ քաշեց միակամության նոր՝ «կամքի վարդապետությունը» կոնկրետ կոնտեքստով: Այն հռչակում էր. «Մեր Տեր Քրիստոսի մեջ մենք դավանում ենք մեկ կամք, քանզի բանական հոգով շնչավորվելուց հետո նրա անձը երբևէ չի բաժանվել Աստված-Լոգոսից, անձնապես միավորված է նրան և չի գործում իր սեփական նախաձեռնությամբ՝ ի հակադրություն Լոգոսի կամքի, այլ գործում է միայն այն ժամանակ և այնպես, ինչպես այդ ցանկանում է Աստված-Բանը»:

Ապագան ցույց տվեց, որ հրովարտակը բավարար չէր միության ամրապնդման համար: Անլուծելի էր մնում միասնության վերականգման համար գործընթացի ամբողջացման հարցը: Վավերագրերը վկայում են, որ սկզբնական շրջանում արևելյան Պատրիարքությունները լիովին ճանաչեցին էկթեզիսի ուղղադավանությունը, սակայն Հերակլեսի կրոնական քաղաքականությանը ընդդիմացավ Արևմտյան Եկեղեցին, որի հետևանքով այլ ընթացք ստացան ներեկեղեցական հարաբերությունները: Ընդդիմադիր դիրք ընդունեց քաղկեդոնական Սերիանոս Պապը և Կարթագենյան կենտրոնը:

Հերակլես կայսեր մահից հետո, 643 թ., Կիպրոսի Մետրոպոլիտը տեղական ժողով հրավիրեց, ուր պատրաստակամություն հայտնեց՝ մեռնել ուղղափառության համար, դատապարտեց միակամությունը և պաշտպան կանգնեց Արևմուտքին: Արևելցիների աջակցությունից քաջալերված՝ Թեոդորոս Պապը հանձն առավ միակամության ակնառու պաշտպանների գործնական դատապարտումը. բանադրվեց Կ.Պոլսի նախկին Պատրիարք Պիրոսը, աթոռազուրկ հռչակվեց Կ.Պոլսի Պատրիարք Պողոսը: Հաշվի առնելով Արևմուտք-Արևելք հակամարտության խորացումը՝ Կոնստանս Բ կայսրը 648 թ. հրապարակեց աստվածաբանական նոր հրովարտակ՝ «Տիպոս»-ը, որը հրահանգում էր վերջ տալ աստվածաբանական տերմինների շուրջ ծավալված պայքարին: Հետազոտողներից շատերը համարում են, որ «Տիպոսը» նահանջ էր, ավելին՝ օգտագործելով այն՝ երկաբնակները նոր հարված նախապատրաստեցին միաբնակ Եկեղեցու դեմ: Այս պայքարի առաջնորդը դարձավ Հռոմի նորընտիր Մարտին Ա Պապը և Մաքսիմոս Խոստովանողը: 649 թ. Լաթերանի ժողովում Պապը մերժեց «Տիպոս»-ը: Սակայն շուտով, կայսրին չենթարկվելու համար, ղեկավարներն աքսորվեցին, բայց և սպանվեց Կոնստանս Բ կայսրը:

Մարտին Պապի և Մաքսիմոս Խոստովանողի դատապարտումից հետո քրիստոնեական Արևելքի ու Արևմուտքի միջև ներեկեղեցական տարաձայնություններն ավելի էին խորացել: Դա բացատրվում էր նրանով, որ վիճաբանող երկու կողմերն էլ մերժում էին փոխզիջման բոլոր տարբերակները: Սկզբունքորեն դեմ դուրս գալով Հոնորիոս Ա Պապի կողմից ընդունված միակամության վարդապետության ուղղադավանությանը՝ Հռոմի հաջորդ Պապերը (Հովհաննես Դ Թեոդորոս, Մարտին Զ) հետևողական քաղաքականության միջոցով կարողացան հյուսիսային Աֆրիկայի, Գալլիայի և ընդհանրապես արևմտյան եպիսկոպոսներին միավորել միակամյա վարդապետության դեմ և միաժամանակ ձեռնամուխ եղան երկկամության վարդապետության աստվածաբանական հիմքերի մշակմանն ու պրոպագանդմանը:

Արևմտյան Եկեղեցում շրջանառության մեջ դրվեց Սերգիոս Պատրիարքին ուղղված Հոնորիոս Ա-ի «2-րդ նամակը», որը Պապի անունից հռչակում էր այն դրույթը, թե, իբր, «միևնույն Հիսուս Քրիստոս գործում է երկու բնություններով, ո-րոնք միավորված են անխառն, անշփոթ ու անանջատ ձևով», որից անխուսափելի-րեն հետևում է երկու կամքերի ընդունումը: Այս տեսակետը վերջնական տեսք ստացավ Լաթերանի 649 թ. ժողովում: Ներեկեղեցական հարաբերությունները կար-գավորելու համար կայսրը որոշել էր սահմանափակվել միայն տեղական քննար-կումներով: Այդ պատճառով էլ Հռոմի Պապը չհրավիրվեց 680 թ. Կ.Պոլսի ժողովին: Քանի որ միակամության հիմնահարցի քննարկումներին մասնակցում էին քրիս-տոնեական հինգ Պատրիարքությունների ներկայացուցիչները, «նախապես ծրագ-րավորված խորհրդակցության փոխարեն 680 թ. կազմավորվեց տիեզերական ժո-ղով»: Քաղկեդոնական հաշվարկի «6-րդ տիեզերաժողովի» քննարկումները սկսվե-ցին 680 թ. նոյեմբերի 7-ին և շարունակվեցին մեկ տարի: Դատելով տիեզերաժողովի գործքից՝ երևում է, որ միանգամայն կամայական մեկնաբանության ենթարկվեցին 1-ին երեք տիեզերաժողովների համապատասխան փաստաթղթերը: Մեծ տեղ տրվեց «հերետիկոսների ու հերետիկոսությունների բանադրմանը»: Բանադրվեցին Թեոդորը, Սերգիոսը, Հոնորիոսը, Կյուրոսը, Մակեդոնը և ուրիշներ:

Միամիտ կլիներ կարծել, որ դավանաբանական նոր «սահմանմամբ» միակա-մության վարդապետությունը դուրս եկավ պատմական թատերաբեմից: 6-րդ տիե-զերաժողովից 30 տարի անց, 712 թ., Բյուզանդիայի կայսր Վարդան-Ֆիլիպիկը Կ.Պոլսում հրավիրեց եպիսկոպոսական ժողով, որը բանադրեց 6-րդ տիեզերաժո-ղովը և հռչակեց միակամության ուղղադավանությունը: Սակայն գահակալական հեղաշրջման հետևանքով կայսրը 713 թ. գահազրկվեց, և 715 թ. հրավիրված Կ.Պոլ-սի ժողովը մեկ անգամ ևս բանադրեց միակամությունը և «վերականգնեց 6-րդ տիե-զերաժողովի ուղղադավանությունը»[13]: Այս իրադարձությունից հետո միակամութ-յան վարդապետությունը դուրս եկավ պատմական թատերաբեմից:

[13] **Болотов В. В.**, նշվ. աշխ., էջ 500, **Карташев А. В.**, նշվ. աշխ., էջ 450:

*ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ԵՎԱԳՐ ՊՈՆՏԱՑՈՒ «ՀԱՐԻՒՐԱՒՈՐՔ ՎԵՑԵՐՈՐԴՔ» ԵՐԿԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

> *«Ի բազում իրս կարի զարմանալի եւ հռչակաւոր երեւեալ վարուք, հաւատարիմ ծառայն Աստուծոյ Եւագրիոս. Այր վարժ ամենայնիւ ըստ նմանութեան առաքեալցն եւ մարգարէիցն... Բովանդակ ըստ զրեցեալս սպանանելով զանդամս զերկրաւորս ջերմեռանդ հաւատալով բռնեալ զխաչն Քրիստոսի, ոչ ի սակաւ ժամանակս մեծաց շնորհաց եհաս երանելին...»*[1]:

Այսպես է բնորոշվում չորրորդ դարի բյուզանդական մատենագիր, իմաստասեր-աստվածաբան, վանական-ճգնակյաց Եվագր Պոնտացին, որի մատուցած ծառայությունը Եկեղեցուն արտահայտվում է և՛ նրա գործունեությամբ, և՛ թողած մատենագրական վաստակով: «Անապատի իմաստուն» Եվագր Պոնտացու խորհրդապաշտական երկերը՝ «Վասն Յարութեան», «Յաղագս ութ խորհրդոց մեղաց», «Հարիւրաւորք վեցերորդք», «Նշանակ յԵզեկիէլ», «Գիտնաւոր եւ արդիւնաւոր», «Վասն պաշտաման», «Խրատ միայնակեցաց», «Ճառ Քրստեայ» և այլն, ուղղված են քրիստոնյային հոգևոր առաքինությունների, ամենօրյա աղոթքների, դեպ հոգևոր կատարելության հասնելու և Աստվածությանը հաղորդակցվելուն:

Բարսեղ Սարգիսյանը գրում է, որ Եվագրի գործերը, բացի ընդհանուր քրիստոնեական կարևորությունից, առանձնակի նշանակություն ունեն նաև հայ հին գրականության համար, քանի որ իրենց ազդեցությունն են թողել «մեր աշխարհի անապատականների և եկեղեցական գրողների վրա՝ Սահակ-Մեսրոպյան շրջանից սկսած»[2]:

«Հարիւրաւորք վեցերորդք»-ը կրոնա-աստվածաբանական, իմաստասիրական, բարոյական, կատարածախոսական լուծումներով մի աշխատություն է: «Հարիւրաւորք վեցերորդք. «Յաղագս ընդդէմ բանաստեղծիցն արտաքնոցն», վեց մասից է բաղկացած («բանաստեղծ»-ը հունարենում ունի նաև փիլիսոփա, գիտնական և գնոստիկյան իմաստները): Ստորև ներկայացնում ենք այս երկի մեկնությունը ըստ Կիրակոս Երզնկացու Լուծմունքի:

Կիրակոս Երզնկացին հայ իմաստասեր, մատենագիր, մեկնիչ, բանաստեղծ, մանկավարժ, եկեղեցական գործիչ է, որը եղել է 13-14-րդ դդ. գրական-իմաստասի-

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր թիվ 1734, «Վարք եւ մատենագրութիւն Եւագրի» (1651 թ.), թ. 1ա:

[2] **Հ. Բ. Սարգիսեան**, Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907, էջ Ժ:

րական դպրոցի ներկայացուցիչ, գրել է ճառեր, քարոզներ, կանոնական խրատական գործեր, մեկնություններ, շարականներ: Նա քննության է առել աստվածաբանական-փիլիսոփայական այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են մարմնի և հոգու, հավիտենականի, նյութի և ստեղծագործության, եզակիի և ընդհանուրի փոխհարաբերությանը, իմացության միջոցներին ու աստիճաններին: «Կիրակոս՝ Մտաց անապատի, այն է Եւագրի՝ դժուարապատում գործի մեկնութեան մէջ միանգամայն ընդ միշտ փայլուն փորձը տուած է նուրբ գրոց ներհուն և միանգամայն աստուածաբան վարդապետի»[3]:

Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք»-ը Երզնկացին մեկնել է՝ տալով և՛ աստվածաբանական, և՛ փիլիսոփայական, և՛ վախճանաբանական, և՛ բարոյագիտական լուծում-բացատրություններ (Լուծմունքը մեկնողական ժանրին է պատկանում, որը հայ աստվածաբանական մատենագրության մեջ լայն տարածում է ունեցել: Այն կարող է երբեմն նաև տվյալ երկի համար բառարանի դեր կատարել):

«Քննեցէք զբանս իմ, եւ իմացարուք զդոսա առողջ խորհրդով: Իմացարուք զառակս խորհրդաւոր՝ լիակատար բարձող եւ կրող խորհրդոց: Ուսուցէք զբանս զայս, իմաստունք հոգւով, այնցիկ՝ որ ունիցին զշաւիղս զայս»,- այսպես է դիմում Եվագր Պոնտացին իր երկի ընթերցողներին:

«Հարիւրաւորք վեցերորդք» երկի՝ Կիրակոս Երզնկացու Լուծմունքում հիմնականում շեշտը դրվում է հետևյալ հարցերի վրա՝ Ս. Երրորդության վարդապետություն, քրիստոսաբանություն, չարի քրիստոնեական ըմբռնում, ազատ կամք և մեղք, վերջին դատաստան ու փրկագործություն, Աստվածաճանաչողություն և Աստվածությանը հաղորդակցում:

Ս. Երրորդության խորհրդի մեկնությունը այս երկի կարևորագույն նպատակներից մեկն է: Այն նաև Աստվածաբանության առանցքային հարցերից է[4]: Արդարության պսակը Երրորդության գիտությունն է, և մենք պետք է իմանանք, որ արդարները Նրա գիտությամբ են թագավորում: Ճանաչել Ս. Երրորդության խորհուրդը, նշանակում է՝ մտնել Աստծո հետ կատարյալ միության մեջ, ողջ էությամբ հասնել աստվածացման: «Աստծո թագավորությունը Ս. Երրորդության հետ հաղորդակցումն է և նաև դուրս է գալիս նրա անմարմին սահմաններից»[5],- այստեղ հեղինակը նկատի ունի սքանչական կենդանի հաղորդակցումը Աստվածության հետ, որը հնարավորություն է տալիս անմիջապես շփվել Աստծո թագավորության հետ:

Ս. Երրորդության իմաստները անպարույր են, այսինքն՝ Երրորդությունն անեղ է, չունի սկիզբ և վախճան, անսահման է, անպարագրելի, անուր, աներբ, եղել է ամեն ինչից առաջ և հավիտյան է: Հավիտենական կյանքի և Աստծո պատկեր լինելու համար մարդու միտքը պետք է կարողանա ընդունել Ս. Երրորդության անեղ գիտությունը. «Կենդանութեանն նշանակ անմահութիւնն է. և անմահութեանն լծակից գիտութիւն Սուրբ Երրորդութեան է»[6] և «Միտք վասն այնորիկ պատկեր Աստծոյ է, զի ընդունակ է գիտութեան Սուրբ Երրորդութեանն»[7]:

---

[3] Նույն տեղում, էջ ճԾԲ:

[4] **Лосский В. Н.**, Очерки мистического богословия Восточной Церкви, М-1991, ст. 53.

[5] “Творения Аввы Евагрия” (Аскетические богословские трактаты), Мартис-1994, ст. 96.

[6] Ձեռագիր հմր 1980, Լուծմունք Կիր. Երզնկացու, «Եւագրիայ հարիւրաւորք վեցերորդք», թ. 91ա:

[7] Նույն տեղում, թ. 144բ:

Աստված մեկ է և միակ: Աստվածաբաններն ասում են՝ Աստված մեկ է, Մովսեսը և Պողոս առաքյալը շեշտում էին Աստծո մեկ լինելու գաղափարը: «Գիտութիւն չորիցն՝ հասողութիւն է բնութեան արարածոց, գիտութիւն միոյն՝ քննութիւն միայնոյն է»[8]: Ամեն մի թիվ մեկին է հաղորդ, բոլոր պատահմունքները մի ենթակայության են, բազում անհավատներ մի տեսակի են: Առանց մեկի չկա բազմություն, իսկ մեկը առանց բազմության կլինի. «Եւ վասն այսորիկ զԱստուած մի ասացին աստուածաբանքն, բայց Աստուած ոչ է թիւ, այլ Արարիչ թուոց և որք ընդ թուովն են. եւ ի վեր քան զամենայն միակ»[9]:

Աստված ամենուր է արարչագործությամբ, որով արարեց ամեն ինչ, «եւ այժմ առնէ միջնորդութեամբ բնութեանն»: Ինչպես լույսը ամեն ինչ և ինքն իրեն ցույց է տալիս, ուստի և օտար, այլ լույսի կարիք չունի, նույնպես և «Աստուած ոչ կարաւտի արտաքուստ տեսանել, զի զամենայն ի գիտութիւն առ ինքն ունի ամբարեալ», իմաստության աղբյուր է և նրանից է ամենայն իմաստություն:

Լուծմունքում արծարծվում են քրիստոսաբանական հարցեր: Աստծո Որդին Միածին է: Նրանից առաջ չկար այլ ծնունդ և նրանից հետո չի լինի նման ծնունդ, քանի որ միակ Ծնունդն է Հորից՝ առանց մոր, և մորից՝ առանց հոր: Առաջին խորհուրդը արարչությունն է կամ Հին Ուխտը, իսկ երկրորդը՝ Երկրորդ արարչությունն է, որ Քրիստոսով եղավ՝ Նոր Ուխտը:

Լուծմունքում ներկայացված են նաև հոգու, մարմնի և մտքի փոխհարաբերությանը վերաբերող հարցեր: Միտքն անմարմին է, երբ ձգտում է Աստծուն գիտությամբ, բարությամբ և կարողությամբ: Մարմնի զորությունը հենց հոգին և միտքն են, որ ներգործելով մարմնին՝ կենդանություն են տալիս և բնությամբ իրար լծակից են ամեն գործում. «Եւ յամենայն ի սպւոյ եւ ի պալարէ ազատ է միտք՝ որ միշտ յԱստուած հայի»[10]:

Միտքը միայն Աստծուն հայելու դեպքում է Նրա նման անմեղ լինում: Երզնկացին այստեղ չափազանց գեղեցիկ համեմատություն է անում. ինչպես պայծառ հայելին երբ արեգակի դեմ ես պահում, արեգակն իր ողջ բոլորակությամբ հայելու մեջ է արտացոլվում (հայելին իր մեջ է ընդունում), այնպես էլ միտքը երբ Աստծուն է հայում, մաքրագործվելով՝ Նրան է նմանվում, մարդն ամբողջովին աստվածանում է. «Որ յամենայն ահաւոր կրիցն միտքն ազատ լինի, յայնժամ պայծառանա միտքն, որպէս զարեգակն»[11]:

Արարվածները արարողի իմաստությունն են ցույց տալիս և, ինչպես «Սաղմոսաց գրքում» է ասվում՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

Մտքի մերկությունը ախտից ազատ լինելն է, մաքրագործվելը: Ինչպես «Ծննդոց գրքում» է ասվում՝ Ադամն ու Եվան մերկ էին և չէին ամաչում: «Այժմ ոչ զոյ ասել թէ որպէս էին» մաշկեղեն պատմուճան հագնելուց առաջ, և մեզնից հետո հարցնել էլ պետք չէ, «զի անճառ է, այլ այսպես է»: Երբ Աստված Ադամին կենդանի շունչ փչեց, Ադամը կենդանի հոգի եղավ, նույնպես և երբ Աստված միտքն արարեց, այն ստեղծեց ունակ իր գիտությունն ընկալելու: Փաստորեն միտքը պետք է ենթարկվի կա-

---

[8] **Հ. Բ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 149:

[9] Ձեռագիր հմր 1980, թ. 49ա:

[10] **Հ. Բ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 152:

[11] Ձեռագիր հմր 518, թ. 29ա:

տարսիսի, և այդ կերպ միայն հնարավոր է հասնել Աստվածային լույսի հետ հաղորդակցման: Ամուլ է այն միտքը, որ զրկված է հոգևոր գիտությունից:

Ինչպես հուրն իր զորությամբ մարմին ունի, այնպես էլ միտքը հոգի ունի: Հուրը առանց նյութի իր ներգործությունը ցույց տալ չի կարող, քանզի անշոշափելի և անըմբռնելի է: Իսկ երբ նյութի է հանդիպում, այն ժամանակ ներգործությամբ ունի մարմին եռանկյան ձևով: Նույնկերպ և միտքը զորությամբ ունի հոգի: Այնուհետև վերստին շեշտվում է այն գաղափարը, որ երբ միտքը մաքրագործվում է ախտերից, հայում է Աստծուն, նման է լինում Նրան, աստվածանում է, և հոգին լուսավորվում է մտքից, զգայությունը պայծառանում է հոգում և հոգիանում. «Եւ մարմինն ի զգայութիւն դառնա»: Նյութը, որ անզարդ է, զարդարվում է, և ամենքը խառնվում են Երրորդության լույսին և Աստծո շնորհով աստվածանում:

Հոգևոր միտքը Աստծուն կարող է տեսնել, ինչպես աչքը մարմնում, նույնպես և միտքը՝ հոգում, և ինչպես աչքը լույսով է տեսնում երևացող ամեն բան, այնպես էլ միտքը հոգով տեսնում է Աստծուն: Որչափ մեղքը շատանում է, այնչափ միտքը խավարում և կուրանում է: Գիտությունն է բժշկում միտքը: Ամուլ է այն միտքը, որ զրկված է հոգևոր գիտությունից կամ որ նրանից պակասում է բանականության սերմը, որը Սուրբ Հոգուց է սերմանվում մտքում. «Քնար հոգւոյ է յըստակ միտք, որ ի գիտութենէ հոգւոյ շարժի»[12]:

Մարդու զգայարանները հինգն են, իսկ միտքը առավել է, քան բոլոր զգայարանները:

Մտքի լույսը երեք մասի է բաժանվում՝ տեսնել Աստծուն, անմարմիններին և մարմնավորներին: Այսպիսով փաստորեն հստակ արտահայտվում է Եվագրի աստվածաբանության խորհրդապաշտական ուղղվածությունը: Այստեղ Երզնկացին հետաքրքիր լուծումներով է մեկնաբանում Եվագրի այս միտքը: Ինչպես լույսը երեք մասի է բաժանվում՝ արեգակ (ցերեկվա իշխան), լուսին և աստղեր (գիշերվա), և ճրագի լույս, և ամենայն լույս նախ ինքն իրեն է տեսնել տալիս, ապա իր շուրջը, և աչքը թեպետ առողջ է, սակայն առանց լույսի չի կարող տեսնել, և լույսն էլ իր հերթին օգտակար չի կարող լինել, եթե այն վնասի կամ կուրացնի: Զարգացնելով այս միտքը, ասում է, որ նույն ձևով աչքերին որպես իմանալի լույս արեգակ Աստծո գիտությունն է: Երկրորդ լույսը իբրև լուսնի և աստղերի՝ անմարմինների գիտությունն է, և իբրև ճրագի լույս՝ մարմնավոր աշխարհի գիտությունը, որը տեսություն է և քննություն: Նրանք են ընդունակ տեսնելու, ովքեր առողջ են հավատով, բարի՝ գործով, և մաքուր՝ մտքով: Աստծուն տեսնելը, այսինքն՝ Աստվածճանաչողությունը հասու է միայն վերջիններիս: Իսկ պիղծ և անհավատ մարդիկ կույրի նման օտար են այս լույսին: Երբ հարցը վերաբերում է մարմնի բնությունը քննելուն, ապա մարդը մաքուր և հստակ միտք ունենալու կարիք ունի, սակայն անմարմինների ճանաչողությունը պահանջում է մտքի առավել մաքրություն, իսկ Երրորդության ճանաչողության համար արդեն կատարյալ մաքրության կարիք է զգացվում:

«Խորան Աստուծոյ է մաքուր միտք»[13]. երբ միտքը սիրում է աշխարհը ցանկությամբ, մոլորվում է: Իսկ մաքուր միտքն իր մեջ է ձգում սուրբ գիտությունը: Միտքն ունի հինգ զորություն, որոնցով տեսնում և ճանաչում է արարածներին, ինչպես

[12] Նույն տեղում, թ. 82ա:

[13] Նույն տեղում, թ. 87բ:

զգայարաններով մարդը տեսնում է, լսում և այլն: Նույնպես և միտքն իր զորությամբ իմանում, ճանաչում է ճանաչելին, և երբ հինգ զգայություններն ախտից մաքրագործում ենք, այն ժամանակ հոգու հինգ զորությունները լուսավորվում են, և հոգին տեսնում է նախ Աստծուն, և իմանալին լսում է իմանալի ձայնը, առնում սրբության հոտը և ճաշակում համը: Հինգ զորություններն են՝ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք: Միտքը հոգու գլուխն է: Հոգևոր գործերի (պրակսիս) նպատակն է մտքի մաքրագործումը և բացարձակ անկրքությունը:

Խորհրդապաշտի ուղին ուղեկցվում է աշխարհուրացումով՝ Հոգու նյութազերծման միջոցով կատարելագործման և Աստվածությանը հաղորդակցվելու համար: Առաջին քայլը աշխարհից հրաժարվելն է, այսինքն` աշխարհի «ստացուածը»՝ աշխարհի ունեցվածքը, թողնելը հանուն Աստծո գիտության՝ ճանաչողության: Երկրորդը՝ հեռանալ չարից, որ մարդու գործադրած ջանքերով և Տիրոջ շնորհով է կատարվում և որը մոտեցնում է բարուն: Երրորդը՝ անգիտությունից հեռանալն է, «որով սովոր է երեւել որդւոց մարդկան իբրև զնախակրթութիւն ի պատերազմ, իբրեւ զստացուած նոցա»:

Անգիտությունը գիտությանը հակառակ է, այսինքն ճանաչողությունը անճանաչելիության դեմ է պատերազմում, և ինչպես Քրիստոս մեր Իմաստությունն է, այնպես էլ սատանան անգիտությունը և խավարն է, որն ուրանալ է պետք և դեպի Քրիստոս գնալ, Որ Լույս է և Իմաստություն: Հոգևոր գիտությունը մտքի լույսն ու փառքն է, և փառքի ճառագայթը՝ նրա անախտությունը, մաքրությունը: Մտքի մաքրագործումը, «ամեն ահավոր բաներից ազատվելը» տանում է նրան, որ միտքը պայծառանում է ինչպես արեգակը: Եվագրի՝ ճշմարտությունը տեսնելու վերաբերյալ խորհրդապաշտական միտքը Երզնկացին շարունակում է` ասելով, որ երբ ելնենք մեր մարմնից և «մտանեմք առ Աստուած», կտեսնենք Նրան: Ճշմարիտ է Աստված, քանի որ Նա հավիտենական է: Իսկ ճգնակեցական ուղին անցնելու համար պետք է արիանալ, քանզի դևերը ճգնության հակառակորդներն են:

Հոգու հարստությունն իր գիտությունն է, իսկ աղքատությունը՝ անգիտությունը: Հոգու գիտությունը գործով է, որ գիտի, ճանաչում է և ընդունում է Աստծո կամքը, իսկ աղքատությունն անգիտությունն է, որ չի ընդունում բարին: Ինչպես լույսի պակասից է մարդը կոչվում կույր, այնպես էլ գիտության և առողջության պակասից է կոչվում տգետ և հիվանդ: Ճգնությունը իմացությամբ է հնարավոր, և բարու մեջ անշարժ, անսասան մնալն է նրա հիմքը:

Այս երկում «Բարու» գաղափարն այսպես շեշտվում է, քանի որ այն սրբերի գիտության աղբյուրն է: Քանի որ մարդը Աստծո պատկերն է, նա բարի է և իմաստուն, նման է Աստծուն և բոլորին բարի պետք է կամենա, ինչպես Աստված է կամենում, որ մարդիկ ճշմարիտ գիտության գան: Սիրո մասին բազմիցս խոսվում է աշխատության մեջ` կարևորելով այն որպես առաքինության հաստատություն, հիմք, քանի որ, ինչպես առաքյալն է ասում, սերն օրենքի լրումն է: Ավետարանում ասվում է, որ Աստված ինքը սեր է. «Եւ որ կա ի սէրն, բնակէ յԱստուած»: Այս պատճառով սերն այլ սիրելի չի կարող գտնել, քան Աստծո գիտությունը: Հոգու խավար մասը երկու գործ կարող են լուսավորել՝ Տիրոջ պատվիրանների կատարումը և մտքի խոնարհությունը: Երբ խոնարհությունը առաքինությանը որպես հենարան չունի, հեշտությամբ կարող է խորտակվել ամբարտավանությամբ: Առաքինի գործերն են լու-

սավորում հոգին, ինչպես արեգակն աչքն է լուսավորում: Ինչպես սաղավարտն է գլուխն անվնաս պահում, այնպես էլ ապաքինությունը, գիտությամբ գործելով, հոգին է անախտ, անմեղ պահում:

Երկում հետաքրքիր տեսակետներ են արտահայտվում նաև չարի գոյության, մեղքի և ազատ կամքի վերաբերյալ, որոնք հարստացվում են Կիրակոս Երզնկացու մեկնություններով: Քննելով այս կյանքում մարդու անկյալ վիճակը ասվում է, որ այդ մեղքի մեջ մենք «ընկել ենք», քանի որ չարը ոչ թե էություն է, այլ գործ, և Աստված չարը չի ստեղծել, չի ստեղծել նաև սատանային: Դևերի մասին խոսելիս Եվագրը նրանց բաժանում է երեք դասերի: Երզնկացին տալիս է այս բաժանման հետևյալ մեկնությունը. «Երեք դաս են դեւքն հակառակ երկնայնոցն, զի նոքա եւս երեք են, առաջին, եւ միջին, եւ վերջին, առաջին են՝ սերովբէքն եւ քերովբէքն, եւ աթոռքն, ներքուստ ի վեր որպէս աթոռքն հուպ են առ Աստուած և նախ ի նոսա իջանէ ամենայն գիտութիւն: Նոյնպես եւ հուպ առ սատանա այն դեւքն են, որ աստուածաբանութեան հակառակ են: Եւ յետ նոցա որ գիտնականացն, եւ զկնի գործնականացն»[14]:

Գործնականները ճգնավորներն են, որ պահքով, աղոթքով և ծնկի գալով են ճգնում, և դևերը պատերազմի մեջ են նրանց դեմ: Գիտնավորներն արդեն կատարել են իրենց գործնական առաքինությունը և Աստծու գիտությանն են արժանացել: Դևերի կեսը նրանց դեմ է պայքարում, իսկ առաջին դևերը պայքարում են աստվածաբանների, այսինքն՝ քրիստոնեական հավատը քարոզողների դեմ՝ ոմանց մոլորեցնելով, ինչպես, օրինակ՝ Արիոսին և Մակեդոնին: Եվագրը չարի մասին խոսելիս համեմատում է այն մահվան ու կյանքի հետ. ինչպես մահն է կյանքին հաջորդում, այնպես էլ չարը՝ բարուն: Սակայն բարու առաջ հակառակ չկա, քանի որ նրա էությունը «անեղ եւ միաւոր է եւ ներհակ ոչ ունի»: Եւ ամեն մի բանական արարված բնություն հասանելի է, «բայց ի յօրինողէն՝ որ բնակէ ի նոսա և ոչ բաժանի առ նոսա անձամբ»:

Եվ սա նման է այն բանին, որ արվեստավորին իր արվեստով ենք ճանաչում, սակայն արվեստը անձ չէ, իսկ Հիսուս անձամբ է իջել: Եթե Պոնտացին ասում է, որ մահը հաջորդում է կյանքին, ապա Երզնկացին տալիս է հետևյալ մեկնությունը, դրա պատճառը մեղքն է, քանի որ մահը մեղքից է եղել, և բարին առավել է, քան չարը: «Ինչ ոչ է ի հոգի՝ որ ներգործութեամբ ոչ ցուցցի նմայ. և ըստ ազատ կամացն աճէ և ի Տեառնէ կատարի»[15]:

Բարի խորհուրդը, որ հոգում է, առանց ներգործության չի մնում, այլ ազատ կամքով աճում է և «յԱստուծոյ ի կատարումն հասանէ»՝ կատարելության է հասնում: Հոգին ազատ է իր կամքով և անձնիշխան՝ ընտրելու՝ զնալ Աստծո կամ հակառակողի՝ սատանայի կամքով: Այս միտքը բազմիցս կրկնվում է հեղինակի կողմից, ինչպես օդն է ընդունակ լույսի և խավարի, այնպես էլ հոգին է ընդունակ գիտության և անգիտության, բարու և չարի: «Այլ մարդն անձնիշխան կամաւք լինի ընդունակ բարւոյ եւ չարի, եւ աւդն բնութեամբ»,- ավելացնում է Երզնկացին[16]:

Մարդիկ երեք օրինակով են ապրում. Աստված բնությունը բարի է ստեղծել, և ով բնությամբ է առաջնորդվում, ըստ Աստծո կամքի է, ինչպես Նոյը, Աբրահամը ապ-

---

[14] Ձեռագիր հմր 518, թ. 14ա:

[15] **Հ. Բ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 152:

[16] Ձեռագիր հմր 1980, թ. 58բ:

րեցին, և ինչպես առաքյալները՝ իրենց բնությունից ավելի բարձր, ավելի վեր: Այս երկուսն Աստծո կամոք էին: Եվ երրորդն էլ՝ մարդկային բնությունից դուրս կեցությունը, այսինքն՝ մեղքն է, որ չի ստեղծել Աստված: Այն մարդու բնությունից չէ, այլ մարդկանց մոլորված կամքի գործը, դևերի, որ Աստծուց օտարացան և մոլորվեցին: Ինչպես ճարպն է ցրտից սառելով թանձրանում, կարծրանում, այնպես էլ միտքը չարությունից թանձրանում է և մարմին է դառնում: Մեղքը մարդու անձնիշխան կամքի և դևերի պատճառով եղավ, մեղքն էություն չէ, այլ թերի և բնությունից դուրս գործ:

Եվագր Պոնտացու այս երկում տեղ են գտել նաև վախճանաբանության՝ վերջին Դատաստանի վերաբերյալ ըմբռնումներ: Այս կյանքում գործում ենք հավատի և առաքինության ընձեռած հնարավորությամբ, իսկ այն կյանքում չենք զգալու այդ հնարավորության կարիքը, քանի որ խաբեություն և մեղք չկա այնտեղ, և մենք հրեշտակներին հավասար Աստծո որդիներ կլինենք: Աշխարհի վերջի ժամանակ սատանան կկապվի գեհենի կրակի մեջ, և մեղքը դրանով կխափանվի: Այս կյանքը երազի նման է, հանդերձյալ կյանքում իբրև երազ է հիշվելու, քանի որ ճշմարիտ կյանքը այն կյանքն է:

Հրեշտակները, որ չարից ազատ են, անմահ են և առաջինը նրանք են եղել անմահ: Հրեշտակներն ավելի վաղ են եղել, քան մարդիկ, և ինչպես Երզնկացին է գրում, նրանց մտքի գիտությունը առավել է, քան մերը, քանի որ նրանք ավելի շուտ են ճանաչել Աստծուն և Արարչությունը: Հրեշտակներն անմարմին են և իմանալի, պարզ էությամբ: Հրեշտակների և դևերի միջև մարդիկ են, հրեշտակները մարդկանց պահապանն են և օգնականը, իսկ դևերը՝ թշնամի և հակառակորդ: Ինչպես արեգակը, լուսինը և աստղերն են մարդու մարմնավոր աչքի լուսավորիչները, այնպես էլ հրեշտակները մարդկանց միտքը լուսավորողներն են: Հրեշտակները մարդու մտքում բարիք են սերմանում: Եթե լսեն և գործեն ըստ նրանց, հրեշտակներն օգնական և գործակից կլինեն՝ հանդերձյալ կյանքում իրենց փառքի մասնակիցը դարձնելով, ըստ մերձավորության չափի: Մարդու միտքը առաքինությամբ է լուսավորվում և հասնում է հրեշտակների գիտությանը, որը ամենաբարձրն է Աստծու գիտությունից հետո:

Եվագրի իմաստասիրական-աստվածաբանական մտակառուցումներն առնչվում են գիտության ճանաչողության աստիճաններին. գիտության գլուխներն, ըստ նրա, հինգն են. նախ՝ գիտություն Ս. Երրորդության, որն է՝ ճշմարիտ հավատի դավանությունը՝ երեք անձ, մի բնություն, մի աստվածություն: Պոնտացու մատնանշած վերագույն գիտությունը՝ Ս. Երրորդության ճանաչողությունը, չնայած վերագույն է անգիտությունից, սակայն խոնարհ է, քանի որ այն Աստծո գիտությունն է: Երկրորդ՝ անմարմինների գիտություն՝ հրեշտակների դաս, երրորդ՝ մարմնավորների գիտություն՝ նրանց, ովքեր չորս տարրերից են բաղկացած, որն, ըստ Երզնկացու, մարմնավոր մարդու բնությունն է: Չնայած հոգին անմարմին է, բայց շնչով կապված է մարմնին: Չորրորդ՝ արարչությունը և աշխարհի գիտությունը, վեց օրում Աստված ստեղծել է աշխարհը, մարդկանց և կիրակին էլ յոթերորդ օրն է: Աշխարհը երկինքն ու երկիրը, ծովը և նրանցում ապրող արարածներն են: Սրանց ճանաչողությունը հույժ օգտակար է և աստիճաններով վեր է հանում դեպի անմարմինների ճանաչողություն: Հինգերորդ գիտություն՝ դատաստանն է: Իսկ երբ խոսվում է մար-

դու՝ Աստծո պատկեր լինելու և Ս. Երրորդության ճանաչողությանն արժանանալու մասին, ապա հինգերորդ աստիճանը համարվում է հոգու ճանաչողությունը: Հոգին եռամասնյա է՝ բան (բանական մաս), ցասում, ցանկություն: Երբ հոգու երեք մասերը՝ բանականը, ցասումնականը և ցանկականն, իրենց առաքինությամբ զարդարվեն, այն ժամանակ էլ միտքը ամբողջովին իմաստուն, արի, ողջախոհ և արդար կլինի:

Արդարները լույսի ճանապարհով են գնում, իսկ անմիտները՝ խավարի: Սակայն Տերը ոչ թե տանջում է վերջիններիս, այլ ժամանակ է տալիս ապաշխարելու և դեպի ճշմարիտ գիտություն գալու: Աստված ողորմած է, և Նրա ողորմությամբ է մարդն արժանանում շնորհի, և այդ շնորհով էլ ստեղծվել են արարածները: Բանականների գիտության սնունդով, այսինքն՝ աշխարհաճանաչողությամբ, աշխարհը փոփոխվում է: Ինչպես որ տունկն է ջրով սնվում, այնպես էլ բանական արարածները՝ իմաստությամբ, որովհետև մարդն ապրում է ոչ միայն «հացիւ, այլեւ բանիւ Տեառն»: Ինչպես զգեստն է մարմնի մերկությունը ծածկում, այնպես էլ առաքինությունը՝ հոգու: Գիտությունը երկու մասի է բաժանվում՝ գործնական և տեսական (մտավորական): Գործնականը դասակարգվում է՝ բարոյական, տնտեսական, քաղաքական, իսկ տեսականը՝ բնաբանական, ուսումնական (երաժշտական, թվական, երկրաչափական, աստղաբաշխական), աստվածաբանական: Տեսականի և գործնականի վերաբերյալ երկում ասվում է, որ երբ գործնականը կատարվում է, հեշտությամբ ես տեսնում ողջ գիտությունը, այսինքն հասու լինում ճանաչողությանը, քանի որ գործը տեսությունից չի կարող առաջանալ: Աստծո կատարյալ պատկերը գործնական և տեսական առաքինի մարդն է, անգետը և մեղսասերը չի կարող Աստծո պատկեր լինել:

«Հարիւրաւորք վեցերորդք»-ի՝ Կիրակոս Երզնկացու այս Լուծմունքը կարևորվում է երկու տեսանկյունից, մի կողմից այն մեզ համար ավելի մատչելի և ըմբռնելի է դարձնում Եվագր Պոնտացու խորհրդապաշտական աստվածաբանության հիմնական նյութը, իսկ մյուս կողմից՝ բացահայտում է հենց իրեն՝ Երզնկացի-իմաստասերին:

Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք»-ից ներշնչվել է Գրիգոր Նարեկացին: «Բոլոր մարդկային այն խորհուրդները՝ կրքերը, ներգործութիւններն ու վարդապետականները, զորոնք Եվագր յունական նրբամտութեամբ իմաստասիրած է իր Ընդդէմ պատասխանի առ դեւսն և Վեցհարիւրակներուն մէջ, նոյնը արթունն և զուարթունը Գրիգոր՝ բանաստեղծօրէն խտացուցեր է - իր տեսակին մէջ եզական - աստուածային Ողբերգութեան մէջ, իբր ի խնկակնոց սրտին, և Բան Զ.ի երրորդ և չորրորդ պարբերութիւնները՝ այդ ամենուն այլաբանական ուրուագիծը կը ներկայացնեն մեզ՝ ըստ հոգերգողին Գրիգորի, զոր կը բարգաւաճէ ամբողջ գրքին մէջ»[17]:

«Անձն որպէս ասացաք եռամասնեայ է. բան, ցասումն և ցանկութիւն»[18],- ասվում է «Հարիւրաւորք վեցերորդք»-ում:

Զորացրու շնորհիդ փայլը շողշողուն որպես շուք դեմքիս,
Մտատեսության ընդունակություն տուր հողեղենիս,

---

[17] Հ. Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ ճԿԱ:

[18] Ձեռագիր հմր 1980, թ. 128ա:

Հարմար հորինմամբ վերահանդարտիր, որ տեսնի Քեզ պարզ՝
Լուսազարդ մաքրությամբ զտելով մռայլը մեղավորիս.
Աստվածային կենդանի, անեղծ, երկնավոր լույսովդ ծածկելով
երեք պատկերներն անձիս[19]:
(Բան ԽԳ)

Այսպիսով, երկու խորհրդապաշտ հեղինակներն էլ գտնում են, որ հոգին եռամասնյա է, բացի այդ «Մատյան»-ում մաքրագործման ուղի անցնելու և «հոգու մեջ անփոփոխ կերպով Տիրոջ պատկերը նկարելու» Նարեկացու հորդորը հիշեցնում է «Հարիւրաւորք»-ում Եվագրի աստվածաբանության հիմնական գաղափարները՝ մարդն Աստծո պատկերն է, խորհրդապաշտի ուղին պետք է ուղեկցվի աշխարհուրացումով և հոգու նյութազերծման միջոցով կատարելագործումով, որը տանում է Աստվածությանը հաղորդակցվելուն:

[19] Գրիգոր Նարեկացի, Մատյան Ողբերգության (թարգմ. Մ. Խերանյան), Երևան, 1960, էջ:

*ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների*
*դոկտոր, պրոֆեսոր*

# ԳԵՐՀԶՈՐ ՈՒԺԵՐԻ ԼՈՒՅՍԸ

Հայ գրականության պայծառ դեմքերից մեկը Կոստան Զարյանն է: Ինչպես նրա կյանքը, այնպես էլ նրա գրականությունը արժանացել է տարաբնույթ գնահատումների՝ վատաբանվելուց ու հալածվելուց մինչև փառաբանում ու պանծացում: Տևականորեն ապրելով անդաստական վիճակի մեջ՝ գրողը այդուհանդերձ ստեղծել է մի մնայուն գրականություն, որ համահունչ էր ոչ միայն իր ժամանակին, այլև արդիական է մնում մեր օրերում: Հարուստ ու բազմիմաստ այդ գրականության էջերում Կոստան Զարյանը կերտել է նաև հոգևորականների ուշագրավ կերպարներ: Դեռևս 1926 թ. տպագրած «Անցորդը և իր ճամփան» գրքում նա անդրադարձել է եկեղեցական սպասավորի ծանր կացությանը, որ արդյունք էր խորհրդային իրավակարգի բերած օրենքների. «Եկան, քանդեցին, տակնուվրա արին»:

Ազնվական կրոնավորի մի կերպար էլ Զարյանը ներկայացնում է «Բակոնց գյուղի քահանան» պատմվածքում, որն առաջին անգամ տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (1929, հ. 11):

Լինելով հայ գրականության փոքր ժանրի լավագույն գործերից մեկը, այնուամենայնիվ, այս պատմվածքը չի տպագրվել ո՛չ գրողի գրքերում և ո՛չ էլ Մայր Հայրենիքում: Պատմվածքում Կ. Զարյանը առաջ է քաշում այն հարցը, որ հայ մարդու մեջ միշտ էլ կա գերհզոր մի ուժ, որը մե՛րթ մայր բնության կերպավորում է ստանում, մե՛րթ նվիրման ու զոհողության գաղափար, մե՛րթ հավատքի խորհուրդ ու մե՛րթ էլ գործունեության ուղի դառնում: Ահա հայկական մոռացված գյուղերից մեկը, որտեղ կյանքն իր շրջապտույտն է արել, ու եկել են նոր ժամանակներ, երբ մարդիկ ոչինչ չեն հասկանում, թե իրենցից ինչ են ուզում իշխանությունները: Մարդկանց նման լուռ ու մտատանջ է նաև հայրենի հողը: Շրթները սեղմել է, գունաթափ հայացքը երկնքին հառել. «Երբ վրան քայլես, խուլ ձայն է հանում, մղկտում է, և գիտես, որ անհունորեն տխուր է»:

Բակոնց գյուղը մերձակա փուլ եկած ժայռի վիճակին է հասել: Նրա բնակիչներն էլ նման են իրենց գյուղին՝ քայքայված ու մռայլ: Ինչպես գյուղը, տխուր է նաև Տեր Մեսրոպ քահանան: Նա նայում է ու ոչինչ չի տեսնում, լսում է ու ոչինչ չի հասկանում: Մրմռում է նրա ծերունական սիրտը: Չեկայի անդամ Առաքելի պատճառով նա այլևս քահանա չէ, այլ սովորական քաղաքացի Մկրտիչ Շարամբազյանց: Տասնամյակներ շարունակ իր ժողովրդին ու եկեղեցուն ծառայած Տեր Մեսրոպը աշխարհի դժբախտ մարդկանցից մեկն է հիմա: Գյուղի՝ խորհրդային իշխանությամբ մեջտեղ ընկած ամենաանպետք մարդիկ հալածում են նրան, ծաղրի ենթարկում՝ «կրոնքը թույն ա», եկեղեցին՝ չարիք: Տեր Մեսրոպը փորձում է ընդդիմանալ, նույ-

նիսկ մարտիրոսության է պատրաստ, ինչպես վայել է քրիստոնյա քահանային:

Մարդիկ վախենում են եկեղեցի այցելել, և շուտով այն փակվում է: Իշխանությունները քահանային ստիպում են հրաժարման թուղթ ստորագրել: Գտնվում է «ճշմարտության» միակ ճանապարհը. եկեղեցին վերածվում է կոմերիտականների ակումբի: Կնոջը կորցրած, որդուն պատերազմում զոհ տված Տեր Մեսրոպի համար բնությունը, մայր բնությունն է մնում միակ մխիթարիչ ուժը: Նրա առջև փակված են եկեղեցու դռները, բայց բաց են հարազատ հողի գեղեցկությունները: Գնալ, ուր որ ոտքերը կտանեն, որքան որ աչքերը կտեսնեն: Նա բարձրանում է մոտակա բլուրը՝ մի վերջին անգամ նայելու իր գյուղին ու սուրբ եկեղեցուն: Ո՞ւմ պատմի իր վիշտը, իր նվաստացումը, իր ... ուրացումը: Կոշտ ու ցուրտ են ոչ միայն մարդիկ, այլև հայրենի երկիրը: Տեր Մեսրոպը մոռացել է անգամ աղոթքի խոսքերը:

Երկար թափառելուց հետո նա հանկարծ զարմանքով նկատում է, որ շուրջբոլորը զարնան տենդով է բռնված՝ հոսող աղբյուրներ ու երգող թռչուններ, ծաղկած նշենիներ ու խնձորենիներ: Կյանքի ու բնության այս արթնացումը լցնում է քահանայի հոգին, նրան հավատ ներշնչում. սա իր տունն էր: Միտքն են գալիս զգեստավորման աղոթքները. «Զգեցո՛, Տէ՛ր, ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան»: Տեր Մեսրոպը պատարագում է, ծաղիկները բուրվառում են, թռչունները՝ դայլայլում, ծառերը՝ տաղեր ու շարականներ երգում: Այստեղ լույս է, ու ծաղկել է Հայաստան աշխարհը: Տեր Մեսրոպը գյուղ է վերադառնում: Ուրիշ մի լինելիությամբ լեցուն, առանց վախի, նա վերադառնում է՝ անբաժան մաս կազմելու հարազատ մարդկանց, երկրի ու աստվածների հետ. «Քար, հող, լեռ. ես ևս քա՛ր եմ, և՛ հող, և՛ լեռ»: Վճռականությամբ լցված դեպի իր ժողովուրդն ու եկեղեցին՝ Տեր Մեսրոպը կերպարանափոխվում է, անձը՝ վեհանում: Մայրենի բնության մեջ նա տեսել ու համոզվել էր, որ Աստվածը կա՝ ապրեցնող ու հուսադրող Աստվածը: Աստվածն ինքը հայրենի հողն է նաև, երգող թռչունները, ծաղկող ծառերը:

Տեր Մեսրոպն իր անարատ կյանքով ու քրիստոնեական նվիրումով հաստատում է, որ եկեղեցին հայ մարդու համար լոկ աղոթատեղի չէ: Այն նաև ոգու ազատության խորհրդանիշ է, կառուցման գաղափար, մտածողություն, ներքին համոզում ու վճռականություն: Կյանքի նման ճանապարհը շատ ստույգ է ձևակերպել Զարյանն իր «Անցորդը և իր ճամփան» գործում՝ գրելով, որ հայ մարդը իր նպատակին հասնելու համար «սուրբէ սուրբ» պիտի զնա, անցնի լեռներ ու հովիտներ, ապրի ժուժկալ կյանքով, հաղթահարի դժվարություններ՝ «ուրիշ մի լինելութեան» մեջ *ընտրյալ* դառնալու համար, հոգեկան հարստությամբ լցված լինելու ու հաղթելու համար:

*ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ*

# ԲԱԿՈՆՑ ԳՅՈՒՂԻ ՔԱՀԱՆԱՆ

Բակոնց գյուղը պառկած է լեռան տակ՝ ճանապարհի կեսին, հոգնատանջ ուխտավորի նման ոտքերը երկարած, գլուխը ժայռի դեմ թեքած և մեծ կաղամախիների պատճառով բազուկները օդի մեջ շարժուն:

Մոտակա սրածայր լեռը ոտքը ծանրորեն սեղմել է տանիքների վրա, և տուները տնքալով մտել են մինչև մեջքը հողի մեջ, քարակույտներով ծածկված գոմերը գերեզմաններ են փորել, ծառերը անբնական կերպով վեր են բարձրացել, և ամբողջ գյուղը թաքնվել է շրջապատող ժայռերի անորոշ այն գույնի տակ, որը փոխվում է միայն ամպերի ձգած լայն շուքերի հետ:

Եթե հեռվից նայես, Բակոնց գյուղը նմանում է փուլ եկած ժայռի, որի մեջ անապատի թռչունները մեծ բույներ են շինել: Միակ կետը, որ գյուղին մարդկային բնակավայրի կերպարանք է տալիս, եկեղեցին է: Լերկ և տարօրինակորեն ներդաշնակ, խոնարհորեն վեհ այն հայ եկեղեցիներից՝ կառուցված հոգիների բարդ քարտեսի վրա, որոնց կատարին հարյուրավոր ձմեռներ են նստել, և որոնց մակերեսի վրա բոցավառ արևները անթիվ ջահերի ծայրեր են մարել:

Հեռվում հորիզոնը դաշտերի ծոցից քաղած ալիքների թմբեր է դիզել:

Սարի ճեղքված կողքը արծաթե վերք է բաց արել. երկայն մի երակից պսպղուն ջուր է թափվում: Ամառային եղանակին այս ջուրը աղմկալից ծնծղաներ շարժող զվարթ աղբյուր է, որի շուրջը կեսօրեին բառաչում են գանգրավարս ոչխարներ, իսկ ձմեռը նա հանկարծ բոլորովին կերպարանափոխվում է, վեր է ածվում մութ, պղտոր, աղմկալից և բարկացած ջրվեժի:

Ջուրը գյուղի շուրջը փոքրիկ գետակ է կազմում, տեղ-տեղ համառորեն քարերը շփելով՝ արագորեն վազում է և տեղ-տեղ էլ առանց պատճառի հանկարծ միտքը փոխում է, հորանջելով կանգ է առնում և լճանում: Շարժուն այս գիծը շրջապատող դաշտի որոշ մասերին թրթռացող կենդանություն է տալիս, մտնում է նրա երակների մեջ, զով է սփռում և շերտերի տակ սպասող դարավոր ուժերը կյանքի է կանչում: Իսկ այն տեղերում, ուր ջուրը տարածվելով կանգ է առնում, լպրծուն, անհանգիստ և տխուր ճահիճներ են գոյանում: Այդ խոր ցեխերի վայրերում տաք օրերին դեղին շոգիներ են լողում, միջատները թույն են արտադրում, գորտերը ուռած աչքերով երգում են վայր ընկնող աստղերին, և տենդը՝ խելագարած ուրվականի դեմքով, դողահար ձեռքերով, աչքերը վար, դուրս է գալիս և երերուն քայլերով մտնում է խրճիթներից ներս:

Այս պատճառով էլ Բակոնց գյուղի բնակիչները անհավասարակշիռ բնավորության տեր մարդիկ են՝ լուռ, մռայլ, խստաբարո, շուտ ոգևորվող և առանց պատճառի հանկարծ բռնկող:

- Դե, ամեն մարդ խոմ գիտի՝ բակոնցցիք մի քիչ խև են,- ասում են շրջակա գյուղերի բնակիչները:

Այս նշմարելի է մանավանդ կանանց քայլելու ձևի մեջ, զիստերի ներդաշնակ տատանման հաջորդող անկյունավոր շարժումների և ոտքերը գետին տալու ջղային կերպի մեջ:

Նույնպես դաշտը:

Գարնան եղանակին (հիմա հենց գարուն է) դաշտի բաց մասերի վրա կանաչ աչքերով մի հով է վազում, օդը իր թափանցիկ ձեռքերի մեջ փերուզա է փշրում, հետո ոտքերի մատերի վրա, մի քիչ հարբած, քայլում է դես-դեն և ուր որ քայլում է, կանաչներ են շողշողում, նոր ծլած ծաղիկներ բուրում, և թռչունները երգում են մոլեգին կոկորդներով:

Մինչ շատ տեղեր էլ հողը մնում է լուռ: Սեղմում է կարծր շրթերը, դեղնած ճակատը տալիս երկնքին և մնում պապանձված: Երբ վրան քայլես, խուլ ձայն է հանում, մղկտում է, և գիտես, որ անհունորեն տխուր է:

Ինչպես Տեր Մեսրոպ քահանան:

* * *

Տեր Մեսրոպը (այժմ նախկին քահանա) շաբաթներից ի վեր ծալապատիկ նստել է մութ խրճիթի անկյունում, մեկ ծունկը վեր է ցցել, ճերմակ մորուքով ծածկված դողդոջուն կզակը վրան սեղմել. նստել է, լռում է, նայում է:

Նայում է և ոչինչ չի տեսնում:

Ուզում է մտածել, և գլուխը չի բանում:

Աչքերը ընկել են կլանող մի պարապության մեջ, ուր ամեն ինչ կարծես թե հանգիստ է, բայց իրականի մեջ ամեն ինչ շարժվում է գորշ, անհասկանալի ձևերով: Վարագույր, որի ետև վախում է նայել: Երբեմն կլոր լույսեր են երևում, մեկը մյուսի ետևից լողում են և անհետանում:

Տերտերը կզակը ավելի ուժեղ է սեղմում ծունկին՝ բնազդորեն թեթևացնելու համար ինչ-որ մի ծանրություն, որ կախվել է գլխի ետևի կողմում և ուսերի ծայրին: Ոտքերը թմրել են, և ամբողջ մարմինը կարծես անհետացել է: Միայն այնտեղ՝ սրտի մեջ, մի ինչ-որ մրմռոք է զգում, մի վերք, որ ուզում է մոռանալ, որովհետև եթե շարժի, վայրի մեղուների բույնի նման ցավերը կբզզեն, և մսերի վրայից կրակ կվազե:

Երբեմն փորձում է մտածել, ինքն իրեն հաշիվ տալ, հասկանալ և որևէ որոշում առնել: Իզո՜ւր. երկաթե մեծ մի աքցան սեղմում է սիրտը, ինքը իր մտքից վախում է, օ՜խ է քաշում, և մեջքը երերալով՝ ընկնում է անորոշ այն մառախուղի մեջ, որը մոռացումի պատրանք է տալիս նրան:

Դռան առջև հավերը կչկչում են:

Մի աքլոր ներս է մտնում, չորս կողմը նայում, թևերը թափ տալիս և գոռոզ քայլերով դուրս գնում:

Տեր Մեսրոպը պիշ-պիշ նայում է, հետո *քը՜շտ, քը՜շտ* է անում, թեպետ աքլորը վաղուց արդեն մեկնել է:

*Քը՜շտ, քը՜շտ*... Աներևս այդ աքլորի դեմ հակակրանք է զգում: Ո՞վ գիտե՝ ինչո՞ւ: Երևի նրա համար, որ այն շուն Առաքելը՝ *Չեկայի* այն անդամը, որ պատճառ եղավ իր բոլոր դժբախտություններին, նույն գոռոզ քայլվածքն ունի: Կարճ մարդ՝ կուրծքը դուրս ցցված, *կարտուզը* գլխի կատարին, ձայնը խռպոտ և վճռական:

Ի՜նչ ժամանակներ եկան, ի՜նչ ժամանակներ...

Աշխարհը տակն ու վրա եղավ, մարդիկ փոխվեցին, ուրացան, դավաճանեցին: Քրիստոնյա ազգը կորուստի մատնվեցավ, դժոխքը աղմուկով տեղից շարժվեց և սկսեց քայլել գյուղից գյուղ, քաղաքից քաղաք:

Աստուծ լռեց: Քե՛ մատաղ, քե՛ ղուրպան, Աստուծ լռեց:

Տեր Մեսրոպը աչքերը բարձրացնում է վեր, որպեսզի բարձրագույնի հետ խոսի, սակայն նրա հայացքը կանգ է առնում ձեղունի՝ մուխ ու ծխով ծածկված գերանի վրա, որտեղից ուռած մի մամուկ է կախված: Հաստափոր, մեծ մի մամուկ բարակ թելի վրայից մագլցում է վեր, իջնում է վար, կանգ է առնում և կռացած ոտքերը (քանի՛ ոտքեր) երկարորեն շարժում:

Ծերունին ոսկրոտ մատերը քսում է աչքերին, նայվածքը սրում, նորից նայում: Նրան թվում է, որ մամուկը մտել է իր գանկի տակ և սրածայր ոտքերով ման է գալիս ուղեղի է՛ն խոր անկյուններում:

Գլուխը թափ է տալիս, աչքերը պինդ փակում: Հազար տեսակ մտքեր ճակատի տակ հանգույցներ են կապում: Մի վայրկյան կարծես ամեն ինչ պայծառանում է, գիտակցությունը փոքրիկ մի պատուհան է բաց անում, դեպքերը դասավորվում են, հիշողությունները գոց արկղներից դուրս են սողում, և հազիվ թե ահա ամեն ինչ պիտի լուսավորվի, մեկ էլ միտքը կռճկում է իր բաճկոնը, սեղմվում, փակվում:

Տեր քահանան նորից կզակը դնում է ծունկի վրա և երերալով սպասում:

Խիղճը նրան տանջում է:

* * *

Երեսուն երկար տարիներ նա ծառայել է իր ժողովուրդին: Մասնակցել է գյուղի ցավերին և ուրախություններին: Մեռել է թաղել, կնունք է արել, պսակ է դրել: Տեր Մեսրոպ քահանայից ոչ ոք գանգատ չէ ունեցել: Խղճամիտ, հեզաբարո, ոչ շատ գիտուն, ոչ շատ տգետ, բարի աչքերով այս մարդը աշխատել է ուրիշների ցավերին ըստ կարելվույն հասնել, մխիթարել, լուսավորել: Եկեղեցին զարդարել է, քանդված պատը շինել, գմբեթը ամրապնդել:

Ո՞վ չէր ճանաչում Բակոնց գյուղի քահանային: Նրա համբավը տարածվել էր ամբողջ գավառում:

- Մեր տերտերն էլ վատ չի, համա ձեր Տեր Մեսրոպը ուրիշ բան ա, իսկական քրիստոնյա մարդ ա, բերանի հացը կհանի, քեզ կտա,- ասում էին եկվոր մարդիկ:

- Հա՛, աղբե՛ր,- պատասխանում էին բակոնցցիք,- բախտավոր ենք, լավ, արդար մարդ ա մեր տեր պապան:

Տարիները, մեկը մյուսի ձեռքից բռնած, դանդաղորեն քարշ էին եկել: Եկեղեցու զանգը ամեն օր հնչել էր, և գյուղը հորանջելով լծվել էր իր աշխատանքին:

* * *

Բոլոր դժբախտությունները սկսվեցին սովետների գալուց հետո:

Նախ այն տարին մեռավ տիրամայրը: Չկարողացավ տանիլ իր միակ զավակի կորուստը: Երիտասարդ տղա՝ խելացի, ուսում առած, պատերազմին կամավոր գնաց և էլ չվերադարձավ:

Տեր Մեսրոպը միաժամանակ ուրվականի նման քայլեց՝ աչքերը պլշած, շշմած, հետո ջերմորեն ամեն առավոտ և երեկո աղոթեց, համակերպեց ճակատագրին և ավելի մեծ ոգևորությամբ փարեց եկեղեցուն և ժողովուրդին:

Մի կտոր հող ուներ, բայց ծերության պատճառով չէր կարողանում վար ու ցանքս անել:

«Տերտե՛ր ջան, հոգս մի՛ անի, մեր ջահիլները կվարեն ու կցանեն: Դու գործիդ նայի՛ր. էլ մենք ի՞նչ մարդ ենք, եթե մեր տերտերին չկարողանանք պահել»:

Հաց էին թխում, դրկում, կերակուր էին տանում:

Ու Տեր Մեսրոպը ման էր գալիս` վշտահար և մորուքը շոյելով, համրիչը ձեռքին, կանգնում էր եկեղեցու առջև, դիտում էր դաշտը, դիտում էր լեռը` շարականների գեղեցիկ և խրթին նախադասությունները շրթունքների ծայրին կախված:

Տոներին սեղանի գլուխն էր նստում... «Հայր մեր»-ից հետո աչքերը փակում էր, օ-ղին կուլ տալիս, ուրախ, զվարթ խոսում:

Կիրակնօրյա պատարագից վերջ ճառ էր ասում` կմկմալով, բառերը ուտելով, գավառաբարբառը գրաբարին խառնելով և հայոց պատմությունից միշտ նույն` տե-ղի-անտեղի, «Քաջն Վարդանի» օրինակը մեջ բերելով:

Նոր *չուխա* հագած գյուղացիները լռիկ լսում էին, և եկեղեցուց ոչխարի և խնկի հոտ էր գալիս: Ժամկոչը` կաղ Սիմոնը, զանձանակ էր ման ածում, և կոպեկները ուրախ չրխկում էին պղնձե պնակի մեջ:

Լա՛վ էր:

Սեղանի գլխին կախված` սևաչյա, խսկա մորուքով մի Աստված հանգիստ դի-տում էր և, չնայած որ տեղ-տեղ պատկերի վրայից ներկը թափվել էր, թվում էր, որ զոհ է:

Բայց այս աշխարհի վրա ոչ մի բան տևական չէ: Սովետական իշխանության տե-ղավորվելուց հետո մթնոլորտը կամաց-կամաց սկսեց փոխվել:

Մեջտեղ ընկան լակոտ-լուկուտներ: Գյուղի ամենաանպետք տղաները` ծույլ, չար, ըմբոստ, որոնց երեսին ոչ ոք չէր նայում, հանկարծ մի-մի *սալան* դարձան, ձայն բարձրացրին, հրամաններ տվին և իմաստություն ծախեցին: «Կրոնքը ի՞նչ ա... եկեղեցին ի՞նչ ա... կրոնքը թույն ա, և Աստուծ չկա՛»...

Աստուծ չկա՞... շինականները նախ խաչ հանեցին, ապա մրթմրթացին զայրա-ցած և մի օր էլ այս տղաներից մեկին բռնեցին ու ծեծեցին: Մյուս օրը գյուղը լեցվեց զինված մարդկանցով` հակահեղափոխականությունը զսպելու համար. տուները խուզարկեցին և մի քանի հոգի էլ բանտ տարին: Երբ տերտերին քարշ տվին *չեկայի* անդամի առջև և վրան պոռացին, բակոնցցիք շշմեցին, *փափախները* հանեցին և սփրթնած բերանների շուրջը վախկոտ ժպիտներ կախեցին:

Տեր Մեսրոպը այն գիշեր ջերմ ունեցավ: Մոտը ժողված մի քանի ծերերի առջև անհեթեթ բաներ էր ասում. «Տեսա, տեսա, ձեզ մատաղ, տեսա, Մամիկոնենց Վար-դանը, քուռակի վրա նստած, երթում էր Երու... Երու... Երուսաղեմ...»

Տուն գնալու ժամանակ ծերերը տխրած մեկմեկի երեսն էին նայում և զարմա-նում.

- Տերտերը ցնդել ա, զառանցում ա...

* * *

Քաղաքից ամեն օր վատ-վատ լուրեր էին գալիս: Եկեղեցիները փակում են, կա-թողիկոսը վանքում բանտարկել են, եպիսկոպոսներին Սիբիր են դրկում, և թուրքը բոլշևիկներին դրամ է տվել, որպեսզի հայ ազգը հալածեն:

Ամեն կիրակի, մինչ ժամում պատարագ կար, դրսում` ճիշդ եկեղեցու առջև, ջա-հել տղերք բարձրանում էին սեղանի վրա և սկսում խոսել կրոնի դեմ: Ամեն ինչ սո՛ւտ է, կեղծիք... տերտերները ձեզ խաբում են, նրանք տզրուկներ են, որ ձեր հացը ձրի ուտում են: Եվ այսպես մի ժամ:

Նախ գյուղացիները, վարժված այս ճառերին, ուշադրություն չէին դարձնում, և

եկեղեցին միշտ լեցուն էր: Հետո կամաց-կամաց սկսեցին ճնշում բանեցնել երիտասարդների վրա, սպառնալ, խոստումներ անել, պաշտոններ տալ, և մի մասը քաշեցին իրենց կողմը: Եվ ամիսներ հետո Տեր Մեսրոպը սարսափով տեսավ, որ եկեղեցին կիսով դատարկ է: Հարց ու փորձ արավ:

- Կներես, տերտե՛ր ջան, վախում ենք: Էն ա Զանանենց Միսաքի ձեռքից հողը առին, էսինչի տունը զրավեցին, էնինչին սերմացու չտվին: Տղաներին դպրոց չեն ընդունում, թե եթե հավատացյալ եք, գնացեք, ավետարան կարդացեք: Կներես, տերտե՛ր ջան, վախում ենք...

Խանութ էին բաց արել. չորս թոփ կտավ կար, մի քանի թիթեղե պնակներ:

- Ընկե՛ր, մի քիչ չիթ եմ ուզում օղլուշաղիս համար. ինչ որ պետք է, կվճարեմ:

- Գնա՛, տերտերից ուզի...

Գյուղացիները գլուխները կորցրին: Արորի տակ տքնող տավարի նման աչքերնին պլզեցին և մտածումների մեջ ընկան: Լա՛վ, եթե եկեղեցի չգնանք, չիթ կառնենք, խոսք չկա. բա եթե տարին չոր եղավ, և անձրև չեկավ, ո՞վ պիտի ավետարանը դուրս հանի և սրբի մասունքները պտըտցնի: Եթե կովը ազատվի, ո՞վ պիտի մոմ վառի. եթե հիվանդանանք, ո՞ր սրբատեղին պիտի աղոթենք...

Լա՜վ, Աստուծ չկա... բա մասո՞ւնքը... բա քանդված վանքի հրաշքնե՞րը...

Եվ խորամանկ շինականները որոշեցին թե՛ եկեղեցին պահել առանց հաճախելու և թե՛ նոր տերերի կամքը կատարել: Շահը այդ էր պահանջում:

Տերտերին շարունակում էին ծածուկ կերակուր ղրկել, բայց առհասարակ, բացի մի քանի պառավներից, նրա հետ աշխատում էին չտեսնվել: Ի՜նչ կլինի, ինչ չի լինի:

Տեր Մեսրոպը՝ իբրև գյուղացի, այդ ամենը շատ լավ հասկանում էր, բայց իբրև հարգանքի վարժ քահանա՝ ճնշվում էր, տխրում և զանազան հույսերով ապրում: Կանցնին, այդ օրերն էլ կանցնին. առաջնորդը ասել է, որ շատ չի տևի, իսկական իշխանությունը էն ա կվերադառնա:

Գյուղի փողոցներում շատ չէր երևում: Մի քանի անգամ վրան ծիծաղել էին, ետևից խոսք էին նետել: Ժամից արագ քայլերով վերադառնում էր տուն, ոչ ոքի երեսին չէր նայում. կուչ էր եկել, փոքրացել, նսեմացել:

Մի օր էլ՝ ճիշդ երեք շաբաթ առաջ, պատահեց ամենասոսկալին:

Ամենասոսկալի՛ն:

* * *

Ամեն անգամ, որ Բակոնցի քահանան վերահիշում էր այդ վայրկյանները, սիրտը նոր վանդակ ընկած թռչունի նման թևերը երկաթներին էր զարնում, ճակատի վրայից պաղ քրտինքի կաթիլներ էին վազում, և ողնաշարը փայտանում էր:

Հիմա էլ միտքը, հոլի նման պտույտ գալով, սկսեց պատերին քսվել, ուսերի վրա հաղթանդամ ձեռքեր սեղմվեցին, և չնայած ոտքերի թուլության՝ նա գերմարդկային ճիգ արեց տեղից բարձրանալու համար և տատանվելով ման եկավ սենյակում, որպեսզի ավելորդ շարժումներով ուղեղը թմրեցնի և հիշողությունների՝ դեպի իր կուրծքը երկարած սուր նիզակները հեռացնի:

Ավելո՛րդ ջանք: Անցած օրերը, մի-մի հայելի բռնած, կանգնել էին իր առջև: Ամեն ինչ բոլոր մանրամասնություններով արտացոլում էր, կենդանանում այս հայելիների մեջ:

Տեր Մեսրոպը, որպեսզի ինքը իրեն խաբի, փորձ արավ իր մտածումների կեդրո-

նը տեղափոխել իր կյանքի ուրիշ տարաբախտ վայրկյանների վրա: Ճիգ արավ վերհիշել կնոջ մահը: Ահա նա պառկած է անշարժ անկողնի վրա՝ գույնը դեղնած, աչքերը փոս ընկած, դեմքի գծերը քաշված, և հիշում է՝ քիթը տարօրինակ կերպով երկարած: Քիթը... Այդ քիթը քանի գնաց, իր մտքի մեջ մեծցավ: Դեղին, սրածայր, այլանդակորեն բարձրացած մի քիթ՝ փոքրիկ դեմքի վրա տնկված: Տեր Մեսրոպը գլուխը թափ տվեց ծիծաղելի տեսիլքը հեռացնելու համար և փորձեց միտքը կեդրոնացնել մի ուրիշ՝ ավելի սրտաճմլիկ տեսարանի վրա. այնտեղ՝ անորոշ պատերազմի դաշտը, ուր մահացու վերքով պառկած էր իր սիրելի զավակը: Նա երևակայեց մեծ մի տարածություն՝ ձյունով ծածկված, և ձյունի վրա՝ արյուն: Ամեն կողմ զինվորներ են վազում, պոռում են, կրակում: Դաշտի մեծ սավանը տատանվում է, ռումբերը պայթում են, և երդիկի մեջ ընկած քամու մի անտանելի սուլոց օձի նման սողոսկում է, մտնում է ուղեղի մեջ, թավալ գալիս և ամբողջ իր էությունը ցնցում:

Այս սուլոցը պատճառ եղավ, որ ամեն ինչ նորից վերհիշի: Կնոջ մահը, զավկի՝ պատերազմական դաշտում ընկած մարմինը, հինցած, ընտանի դարձած բոլոր վշտերը թևեր առան, թեթևորեն անհետացան, և քահանան նորից կանգ առավ՝ շշկլած դաժան հիշողությունների առջև:

Այդ սուլոցը...

Մեղա՛, մեղա՛ քեզ, Աստվա՛ծ:

* * *

Կիրակի էր:

Տեր Մեսրոպը այդ առավոտ արթնացել էր մի քիչ տխուր և շատ անոթի: Քանի անգամ նայեց մածունով լեցուն պնակին, բայց ձեռք չտվեց մեղք չգործելու համար, որովհետև պատարագ պիտի աներ: Իր աղոթքը մրմնջելու ժամանակ նկատեց, որ ձախ աչքը խաղում է. այդ պատճառով «Հայր մեր»-ը երեք անգամ կրկնեց: Անօգուտ. աչքը շարունակեց խաղալ: Սակայն, երբ դուրս նայեց, սիրտը մի քիչ հանգստացավ. լավ օր էր, թեպետ մի քիչ քամի կար, սակայն արևն էլ պակաս չէր: Ցվիքների վրա նոր եկած ծիծեռնակները շարքով նստել էին, և հավերն էլ ուրախ կչկչում էին:

Գարունը քթին կպավ կարասից նոր հանած գինու նման, և անշուշտ այդ պատճառով Տեր Մեսրոպը որոշեց հագնել իր այն *կապան*, որ նա անվանում էր նոր՝ չնայած նրա վաղուց կանաչած գույնին: Համրիչը ձեռքը առավ, մորուքը տակից և վրայից շոյեց և մի քիչ այնպես, ինչպես դերասանը, որ բեմ պիտի ելլե, վստահ քայլեց:

Գիտեր, որ նորից պիտի գան, ժամի առջև ճառեն, որ եկեղեցին գրեթե դատարկ պիտի լինի, որ պատարագը կրճատված պիտի ասի, բայց ինքը վերևից ամեն ինչ խոմ տեսնում է, և մի քիչ հալածվելը և նույնիսկ մարտիրոսանալը վայել է քրիստոնյա քահանային: Մի քիչ... Վաղը, երբ նոր իշխանությունը գա, կտեսնեն և կգնահատեն: Ո՞վ գիտի, գուցե նոր մի աստիճան էլ տան, կաթողիկոսը կոնդակ ղրկի...

Երբ մոտեցավ եկեղեցու դռան, ժամկոչը մտահոգ կանգնած էր, մինչև իսկ հուզված, որովհետև ման գալու ժամանակ ավելի էր կաղում, քան մյուս օրերը:

- Հը՛, ի՞նչ կա,- հարցրեց տերտերը:

- Չեմ գիտի... համա մի բան կա... նոր-նոր շուներ են եկել, լեցվել՝ առանց ձիի *արաբայով*:

- *Ավտալաբիլո՞վ*,- ուղղեց քահանան:

- Հա, էլի, էն գրողով: Ասում են՝ վրան սատանայի մի գոռոց են դրել, զուռնայի նման մի բան, թե՛ կրակում ա, թե՛ չալում...

Տերտերը պիշ-պիշ նայեց մոտակա լերան. լեռը շարժվում էր:

Հետո ուզեց քաջություն ծախել:

-Դե՛, դե՛, խն-խն բաներ մի՛ ասի, զանգը տո՛ւր, ածուխը վառի՛ր, շապի՛կ հագիր՝ մեր գործը տեսնենք:

Սեղանի առջևից անցնելու ժամանակ, երբ Տեր Մեսրոպը ձեռքը բարձրացրել էր խաչ հանելու համար, մրրուքավոր Աստուծո մեծ պատկերը աչքերը շարժեց, և մոտի անկյունի Պողոս առաքյալի ձեռքից ավետարանը աղմուկով վայր ընկավ: Տերտերի ձեռքը մնաց օդում և միաժամանակ չկարողացավ տեղից շարժվել: Հետո, միշտ ձեռքը վեր բռնած, քարշ եկավ մոտակա խորանատունը և քարերի վրա հնչող իր ոտնաձայնից վախնալով՝ մտավ ներս և ընկավ աթոռի վրա:

Աստո՛ւծ, Տե՛ր իմ Աստո՛ւծ...

Այն օրը եկեղեցու փոքրիկ զանգը Բակոնց գյուղի գլխին ման եկավ կաղալով: Դաշտը դուրս եկած տավարը պոչը ջղայնորեն շարժեց. ճահիճների մեջ գորտերը փորձեցին երգել, իսկ հավատացյալները խուլ ձևացան. չլսեցին:

Երբ Տեր Մեսրոպը, պատարագիչի զգեստներ հագած, խորանի վրայից շուռ եկավ ժողովուրդը օրհնելու համար, նրա շրթունքների վրայից մեծ մի պարապություն կախվեց: Մուտքի դռան մոտ կանգնել էր Գիժ Նիկոլը՝ խելքը կորցրած, ցնցոտիներով ծածկված դժբախտ մի մարդ, որը ամառ ու ձմեռ գյուղից գյուղ էր գնում և, չարաճճի երախաներով շրջապատված, հաց մուրում: Մի սյունի տակ ծալապատիկ նստել էր պառավ մի կին, ուրիշ տեղ՝ մի քանի կանայք և երկու-երեք ծերեր: Իսկ եկեղեցու ճիշդ մեջտեղը՝ այրի կին Սաթոն՝ ծծկան երախան պինդ բռնած կրծքին:

Հավատացյալների այս ներկայությունը պատարագիչին ուժ տվեց: Մինակ չէր: Ժամկոչը, այլանդակորեն երկայն մի շապիկ հագած, կաղալով վազում էր վեր, սարկավագի դեր կատարում, իջնում էր, խմբի տեղ երգում, հետո գնում, բուրվառի ածուխը լեցնում և նորից, ձայնը քթի մեջ կլկլացնելով, երգում վարը:

Խորհրդի վայրկյաններին լռությունն այնքան մեծ էր, որ կարելի էր ճանճի թռչելը լսել: Երբ ծերերից մեկը փռշտացնում էր, գմբեթի ապակիները դողում էին:

Սուրբ-սուրբի ժամանակ հանկարծ դրսից աղմուկ լսվեց: Նախ ինքնաշարժի թմբթմբոց, ապա երախաների աղաղակ: Տեր Մեսրոպը զգաց, որ ժամկոչի ձայնը դողաց, բառերը կուլ տվեց, և երգի տեղ առհասարակ ինչ-որ անորոշ խռփոցներ լսվեցին: Ոտքերը ևս թուլացան, և որովհետև ճիգ արավ իր վախը չզգացնել ժողովուրդին, ձայնը անբնական կերպով պայթեց և թավալ եկավ քարերի վրա: Այրի կին Սաթոյի ծծկան երախան վախցավ և թոքերի ամբողջ ուժով ճչաց:

Հետո նորից լռությունը կախեց իր ծանր քարը:

Քիչ անցած, երբ տերտերը շուռ եկավ դեպի ժողովուրդը՝ «խաղաղություն ամենեցուն» ասելու համար, գույնը նետեց և մնաց սառած: Դրսի դռնից նախ խշշոցներ լսվեցին, ռետինե մեծ գնդակներ պայթեցին, ապա տարօրինակ օձի նման սողոսկող սուլոցներից հետո պոռթկաց անդնդային քառապատկված մի ձայն, որը ավելի որոտումի էր նմանում, քան մարդկային ձայնի:

Մինչ քահանան մնացել էր պապանձված, ներսը գտնվող մարդիկ սարսափած դուրս վազեցին. այրի կին Սաթոն, ճչող երախան կրծքի վրա ճզմելով, սկսեց օգնություն աղերսել. Գիժ Նիկոլը պարելով վազեց, ժամկոչը մտավ խորանատուն և դուռը փակեց:

Դրսում բոլոր տներից գյուղացիները դուրս էին եկել և տանիքների վրա բարձրացած՝ լսում էին: Հսկա այդ ձայնը առասպելական էակի նման բաց էր արել անտեսանելի իր դունչը ու գյուղի վրա կրակ ու բոց էր փսխում:

«Ընկերնե՛ր,- որոտում էր բարձրախոսը,- կրոնքը ձեզ շահագործում է, տերտերները և վարդապետները ձեզ խոսում են հրաշքների մասին, այն, ինչ որ ահավասիկ մենք ցույց ենք տալիս գիտության իսկական հրաշքը: Ահա ես խոսում եմ ձեզ, ես՝ Ասքանազ Պառավյանս, հեռավոր մայրաքաղաքի անթել *ռադիոյի* միջոցով. ազատագրվեցե՛ք, փակեցե՛ք եկեղեցիները... փա... փա... փա... վըըը... վըըը... գիտությունը ձեզ ցույց պիտի տա, որ Աստված չկա՛... փա... փա... փա»...

Տեր Մեսրոպի աչքերը սևացան, գլուխը պտույտ եկավ: Էլ չէր հիշում, թե ինչքան ժամանակ նա մնաց այս դրության մեջ. հիշում է միայն, որ ժողովուրդը էն անզգամ Առաքելի առաջնորդությամբ խուժեց եկեղեցի, նրան դուրս տարավ, փիլոնը ուսերից հանեց և ընդհանուր ծափահարության մեջ քահանայությունից հրաժարման թուղթ ստորագրել տվեց: (Ամեն ինչ սուտ է, և ես՝ Տեր Մեսրոպ՝ Բակոնց գյուղի քահանա, այլևս ճշմարտության ճանապարհը գտած, վերընդունում եմ իմ նախկին՝ Մկրտիչ Շարամբազյանց անունը և դառնում եմ պարզ, բեժիմին հավատարիմ քաղաքացի):

Խորհրդային թերթերը այս հայտարարությունը տպեցին առաջին էջի վրա: Եկեղեցին փակվեց: Հիմա նորից բաց են արել, բայց ոչ իբրև աղոթատեղի, այլ կոմսոմոլների ակումբ:

Տե՛ր մեղա, Տե՛ր մեղա...

Տեր Մեսրոպը, այսինքն՝ Մկրտիչ Շարամբազյանը, այս բոլորը հստակորեն վերհիշեց. էլ չկարողանալով քայլել (վերջին օրերը մնացել էր մի կտոր սև հացով)՝ հոգնած, ընկճված նորից ծալապատիկ նստեց և կզակը սեղմեց ծունկի վրա:

* * *

Տեր Մեսրոպը ամբողջ օրը թափառել էր:

Նա դուրս էր եկել իր խրճիթից գաղտագողի լուսաբացի այն ժամին, երբ մութը, լերան գլխին զարնվելով, պատռվում է, և ամպերի ճեղքված կրծքից վարդագույն լույս է թափվում: Որպեսզի ոչ ոք նրան չտեսնի, ծերունին իր երկար *կապան* խոթել էր տաբատի մեջ և գլխի կատարին դրել հանգուցյալ որդու հինցած դպրոցական *կարտուզը*:

Ման էր եկել վեհ և ծիծաղելի: Աչքերը վառված, մորուքը քամիին քսելով, հոնքերը կախված և ոսկրուտ մատները օդի մեջ շարժելով:

Վաղուց է, որ նա երկար գիշերներ անքուն էր անցրել: Կյանքը տակն ու վրա եղած փոթորկալից երկնքի նման նրա աչքերից երկաթե գնդեր էր կախել: Ճահիճի մեջ ընկած լուսնի պես իր գիտակցությունը տրորել էր տառապող էությունը: Մինակ էր: Ոչ ոք իր դուռը չէր զարնում, ոչ ոք ուտելիք չէր բերում, և նա իրեն զգում էր այնպես, ինչպես ծերացած և հիվանդ նախիրի շուն, որը անկարող է շարժվել, և որի մահը ոչ ոքի չի հետաքրքրում:

«Գլուխս առնեմ,- մտածել էր նա,- գնամ՝ ուր որ լինի, որքան որ աչքերս տեսնեն, և ոտքերս կարողանան քայլել»:

Եվ նա քայլել էր՝ դողդոջուն և թուլցած ոտքերը քարերին զարնելով, ուժասպառ, անոթի և դժբախտ:

Անկարող հստակ մտածելու՝ նա իր ճակատի տակ մութ մի ծանրություն էր զգում, մի բան, որ մեծ ձեռքի պես սեղմվել է այնտեղ՝ զանկի տակ, փակել է, կոճկել է: Անցյալի և ներկայի պատկերները, մեկը մյուսին խառնված, փլած տանիքի տակ մնացած կահկարասիների դժնդակ երևույթը ունեին: Ահագին մի վիշտ պատռած *դհոլի* նման խուլորեն թմբկում էր իր՝ դժվար շունչ առնող սրտի մեջ: Ծանր հուսահատությունը, կրծքի ճնշված բեռան մակերեսից կախված, արցունքաթոր լաց էր լինում, և այդ վայրկյաններին ոտքերը դեռ ավելի էին թուլանում, աչքերը պղտորվում էին, և բազուկներից շղթաներ էին կախվում:

Գյուղից մեկնելու ժամանակ նա իր քայլերը բնազդորեն ուղղել էր դեպի մոտակա բլուրը, տնքալով վեր էր բարձրացել և մեծ մի քարի ետև կանգ էր առել նորից և, ո՞վ է իմանում, գուցե և վերջին անգամ նայելու համար այն վայրը, ուր նա երկար մի կյանք էր ապրել:

Բակոնց գյուղը դեռ քնած էր:

Մոտակա սարի վրա դիզված ամպերի միջից հրավառ լույս էր մաղվում: Բարձր կաղամախների կատարները ծնող օրվան շնչի տակ կամաց շարժվում էին: Տների մազլցող սանդուխը տեղ-տեղ շուքերի կույտեր էր թաքցնում. վարի մասում մեծ հողակույտեր էին պառկած թարմ գերեզմանների նման, և թեթևորեն տարածվող աղոտ լույսի շուրջ եռանկյունի և երկայն ստվերներ էին ուրվագծվում: Ճամփուց շեղած մի ճառագայթ բարակ ասեղի նման ընկել էր եկեղեցու խաչի վրա և պսպղում էր:

Տեր Մեսրոպը նստեց, և աչքերը լեցվեցին արցունքով, այն մեծ, ծանրակաթիլ արցունքներով, որ հատուկ է ծերերի վշտին: Ինչպե՞ս նա կարող է բաժանվել հայրենի այդ վայրից, որին տվել էր իր էության լավագույնը, որի հետ կապված էր, ինչպես ծառը իր արմատին, և որի հողը մոտ էր իրեն, ինչպես իր մարմինը:

Երկինքը հաջորդաբար բաց էր անում իր լուսամուտները:

Դուրս ցցվող արևը հեռավոր հորիզոնի լեռնաբնակ բարձրությունների վրայից դանդաղորեն ներս էր առնում իր լայն, ծոպավոր վերարկուի ծայրերը, որոնց շուրջը կարմիր հով էր ման գալիս:

Բլրան վրա՝ վարը տարածվող պղնձագույն դաշտում, ճառագայթներ էին կայծկլտում, լույսը զգուշորեն իջնում էր վար, պլլվում մացառներին, տեղ-տեղ բուսած խոտերին և այնտեղ կառչած՝ ազատելու անհաջող փորձեր էր անում և մնում:

Դիմացի սարը կարծես նոր էր դուրս եկել անտեսանելի մի ծովի լոգանքից: Կրծքից լայն արծաթե շերտով ավելորդ զարդի նման ջրվեժ էր կախվել:

Երբ հեռվից աքլորները երգեցին, մի երդիկից ծուխ դուրս եկավ, և կաղամախների վրայից ծանր մի արագիլ թռավ. Տեր Մեսրոպը ոտքի կանգնեց և չուզելով հանդիպել գյուղացիներին՝ իջավ բլուրի մյուս կողմից և քարշ եկավ:

Քարշ եկավ:

Ո՞ւմ պատմեր, ո՞ւմ ասեր... Մինակ էր, դժբախտ էր, անոթի էր, վախում էր: Նրան թվում էր, որ իր ետևից մարդիկ են ընկել և հետապնդում են նրան: «Ամա՛ն, բալա՛ ջան, ինձանից ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես ուզում»... Պատռած տրեխների միջից մատները դուրս էին եկել և կարծր քարերին կպչելով՝ արյունել: «Ամա՛ն, բալա՛ ջան, քե մատաղ»... Իսկ ներսից մի ձայն. «Հա՛, հա՛, տերտե՛ր, հա՛, հա՛ ուրացար, դավաճանեցիր, ստորագրեցիր, կոչումդ ոտքի տակ առիր: Աստծուդ ուրացար, սատանայի հետ դաշինք կապեցիր, կրոնքը սուտ հայտարարեցիր. հա՛, հա՛, տերտե՛ր ջան... այսինքն՝ քաղաքացի Շարամբազյան, հա՛, հա՛...»: Տեր Մեսրոպը շունչը

կտրած ճիգ էր անում վազելու, հաճախ վայր էր ընկնում, դեմքը հողերին քսում և երկար ժամանակ այդպես փռված մնում: Այդ վայրկյաններին նա փորձում էր աղոթել, բայց անկարելի էր, որովհետև աղոթքների բոլոր խոսքերը մոռացել էր. «Առի՛ր, ամեն ինչ ինձանից առի՛ր, հոգիս դատարկեցիր, մտքիս մեջ գիշեր զետեղեցիր, ո՛վ ամենակալ»... ասում էր և ոչ մի պատասխան չէր ստանում, ոչ մի արձագանգ իր սրտին չէր մոտենում, ոչ մի լույս չէր երևում...

Անապատը նայում էր անտարբեր և տխուր: Երկինքը փակ էր:

Ո՛չ, այլևս չես Տեր Մեսրոպ, այլ ես՝ ընկեր Մկո Շարամբազյանց:

Մկո... կո... կո.... Մի ձայն ծիծաղում էր:

Ժամերով քայլեց: Ինքը և իր միտքը:

«Չո՛ր ա մեր երկիրը, չո՛ր ա... Մեր մարդիկ էլ չոր են: Այրած, կարծր են քարերի նման: Էրված ենք, ամենքս էրված ենք... Ասում են՝ ղզլբաշների երկրում էսքան մեծ վարունգ ա բուսնում, խոտը բարձր ա, տավարը՝ ժիր, և մարդիկն էլ՝ բախտավոր... Էն ա, ասում էր տիրամայրը, ժամանակը կգա, բախտավոր կըլլենք... Եվ ժամանակը չեկավ, դու տե՛ս, որ չեկավ... Այլ եկավ մեծ ցավ, մեծ տակնուվրայություններ. այլ եկավ զազրանք, եկավ. էլ ինչե՞ր չեկան, քե մատաղ»...

Իսկ դաշտը նրա մտածումների հետ սողոսկում է, կուրծքը փշրված ալիքի նման վեր է ցցում, տափակ գլուխը կպցնում է հորիզոնին, սարսռում է և մելամաղձոտորեն տնքում:

Ժամերով քայլեց:

Թևը կոտրած թռչունի նման նրա մտածումները ցատկոտեցին փոսերի և առուների վրայից, լույսի մեջ թափահարեցին իրենց արյունած գլուխը, ջերմերի մեջ թավալ եկան ու սուր մորմոքումի նման խուլորեն վայեցին:

Ուզում էր նստել, ուժ չուներ: Շարժվում էր մեքենաբար. գնում էր մի ինչ-որ ձայնի ետևից: Ձայն, որ գետի քարեքար վազող ալիքի նման նրա ամբողջ մարմինը իրեն հետ քարշ էր տալիս, տանում: Ականջները լեցուն էին բզզոցով, մետաղի ձայն հանող մի բզզոցով, ուր տենդագին աշխատում էին արծաթ թևերով մեծ-մեծ մեղուներ: Բարձր լույսի մեջ պայծառորեն պսպղող լեռները իրենց ոտքը սեղմել էին հսկա երգեհոնի *պետալի* վրա և անասելի վշտի բամբ մի աղաղակ էին պահում:

Մկո... Մկո... կո... կո... Մի ուրիշ ձայն ծիծաղում էր:

Երբ անցան շատ երկար ժամեր, ծերունին նայեց չորս կողմը և զարմացավ. գարուն էր:

Մինչև հիմա նա քայլել էր և ոչինչ չէր նկատել, ոչինչ չէր լսել: Ահավասիկ նա մի գեղեցիկ բլրի ստորոտին: Ի՜նչ պայծառ օր, ի՜նչ թեթև օդ:

Կո.. կո... Մի թռչուն երգում էր:

Բլրի վերևից մի աղբյուր է կարկաչում: Քահանան հանկարծ ծարավ զգաց: Պառկեց, շրթունքները տվավ ջուրին և ագահորեն խմեց: Հետո դեմքը լվաց, ոտքերի *փափուչ*ները, որ բոլորովին պատռտած էին, հանեց և մտավ ջուրի մեջ: Պաղ էր. շուտ դուրս եկավ: Սակայն իրեն զգաց զովացած, թարմացած, ուսերի վրայից մի բեռ ընկած: Ձեռքերը թափանցիկ դարձան, գլուխը թեթևցավ, և երակների մեջ կյանքը տենդի հետ վազեց արագորեն: Թեթև հովը նրա գլխի ճաղատ մասի վրա զովություն սփռեց. կոպերը արթնացան, և աչքերը ծնան այս աշխարհի համար:

Ի՜նչ պայծառ էր օդը, ի՜նչ լավ էր, ինչ լավ էր...

Մի քիչ վերը, բլրի կողքից գրեթե կախված, լեցուն մեծ փնջի նման մի նշենի էր

կանգնել՝ լուսավոր, ծաղկած: Աջ կողմից, ճերմակ շապիկներ հագած, շարքով խնձորիներ էին կանգնել: Վարը՝ դաշտում, կաղամախները և բարտիները փայլփլուն խշշոցներ էին հանում: Արևը իջել էր լերան կողմը և մայր մտնելուց առաջ իր փայլը կրկնապատկել էր փոսը ընկած ադամանդի նման:

Միջատները սազերգում էին: Թռչունների կոկորդը բացվել էր: Օդը իր թևերի տակ ակունքներ էր տրորում և շրթների վրա դյութիչ մի համերգ էր ման ածում:

Ծերունին կանգ առավ հիացած ու թևերը քսեց չտեսնված այդ կախարդանքին: Ամբողջ իր ծեր մարմինը թրթռում էր, իր հոգնած ոսկորների վրա թմբուկի նման լարված կաշին անուշորեն ողողում էր, և ուղեղը տարօրինակ պայծառություն էր զգում:

Ներկարար թռչունները ծառից ծառ արագորեն բոց ու կրակ էին տեղափոխում: Մի սոխակ, բուրումներից հարբած, երգում էր: Ամեն անգամ, որ նա մի վայրկյան լռում էր, քահանան անգիտակցաբար փսփսում էր՝ ամեն: Հետո նորից մեծ ուշադրությամբ ականջ էր դնում:

«Այստեղ ծաղկել է Հայաստան Երկիրը. քարերը հնչում են, ժայռերը իրենց կրծքի վրա լույս են տրորում»,- մտածեց նա, և թվաց նրան, որ իր ոտքերը պատրաստ են պարելու. թեթև մի կշռույթ զվարթորեն քայլում է երակների մեջ, և իր մարմինը լեցվել է լույսերով:

Որոշեց վեր բարձրանալ: Բայց նախ անդրադարձավ ինքը իր վրան. ոտաբոբիկ էր, կապան տաբատի մեջ սեղմած, փորը այլանդակորեն ուռած: *Կարտուզը* հանեց, պիշ-պիշ նայեց և զզուշորեն դրավ խոտի վրա: Իր զավկի գլխարկն էր: Նորից ձեռքն առավ, դարձրեց, համբուրեց և վար դրավ: Ուզեց վայելուչ լինել, ուզեց լինել, ինչպես եղած էր ժամանակին՝ մաքուր հագնված քահանա, որովհետև աստ իր տունն էր: Շտկեց իր զգեստը: Մազերը շոյելու ժամանակ հանկարծ միտքը կամաց-կամաց սկսեց բացվել, և նա հստակորեն վերհիշեց պատարագից առաջ ավանդատան մեջ այդքան տարիների ընթացքին արտասանած զգեստավորման աղոթքները:

«Դի՛ր, Տե՛ր, սաղավարտ փրկութեան ի գլուխ իմ»:

Այդ ասելու ժամանակ նա հստակորեն զգաց, որ գլխի շուրջը անցնող մկանունքները, զանկի այն տեղը, որ վարժ էր խույր կրելու, սեղմվեցին պարզորոշ մի ծանրության տակ:

«Զգեցո՛, Տե՛ր, ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան»...

Քանի վերհիշում էր աղոթքները, այնքան նրան թվում էր, որ լուսավոր մի երաժշտություն ծածկում էր իր մարմինը մեծափարթամ, ոսկեզօծ թելերով հյուսված, Հնդկաստանի աղջիկների ձեռքերով զարդարված ակնապարար զգեստներով: Բլրի այդ կատարը՝ գրեթե ամբողջովին ծաղկած ծառերով ծածկված, նրա աչքերի առջև շքեղ մի խորանի ձև էր առել, որի առջև նա պատրաստվում էր պատարագելու:

Մի քայլ առաջ գնաց և, «Լուացից սրբութեամբ զձեռս իմ», ձեռքերը նորից լվաց աղբյուրի մեջ:

Հետո, միշտ վերհիշելով բառերի տակ թաքնված շարականների ներքին իմաստը, մինչ խնձորենիները դանդաղորեն շարժում էին իրենց ճյուղերը և ծաղիկներ վար թափում, նա բարձրանում էր վեր՝ ձեռքը կրծքին սեղմած և խոր կրոնական տվայտալից զգացումով լեցված:

«Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած»:

Ասեց և հստակորեն լսեց, որ երեք թռչուններ, նստած վայրի վարդենու թուփի վրա, ծլվլվացին այնպիսի կերպով, որ, օ՜ հրաշք, նա պարզորեն հասկացավ պա-

տասխանը:

«Դա՛տ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում»:

Երբ նա հասավ բլրի էն վերի մասը, ուր կախվել էր բոցակիզված նշենին, դեմքը դարձրեց դեպի դաշտը և դիմելով թրթռացող բարտիների շարքերին՝ թևերը վեր բարձրացրեց ու պատարագեց, ինչպես չէր պատարագել երբեք իր երկար կյանքի ընթացքում:

Մայր մտնող արևը դեպի երկիրը երկարած նրա ձեռքերի վրա բոցե ձեռնոցներ անցրեց, տժգույն դեմքի վրա ճառագայթներ սփռեց, ու նրա աչքերը, լայնցած ներքին բոցով, սավառնեցին բնության կախարդված և վերածնված այդ կյանքի վրա, մինչ ամեն կողմից նրան այցելության եկան քաղցրորեն շշնջող ձայներ:

Շրջակա պարտեզներից և բլուրներից բոլոր թռչունները եկել, հավաքվել էին ծառերի վրա. դանդաղորեն նավարկող արագիլները, քնքուշ կոկորդներով կաքավները, պարսկական մետաքս հագած ներկարար թռչունները վրանին գույնզգույն շապիկներ առած՝ ծվալով, ծվալով մասնակցում էին գերբնական, տիեզերական այս արարողության:

Լեռների բարձունքներից վարդագույն թևերի վրա իջել էր հովը, և այդ պատճառով կաղամախիները և բարտիները կամաց շարժում էին իրենց ճյուղերի մեջ բռնած արծաթե խշշոցները և ծառերին հատուկ ներքին, անլսելի ձայնով երգում էին տաղեր և շարականներ. խնձորենիների և նշենիների վրայից թիթեռնիկների նման վայր էին թափվում փերթերը, ծաղիկները շարժում էին իրենց կատարների փոքրիկ բուրվառները, և նոր բուսած խոտերի միջից մելանուշ ձայներ էին վազում:

Տեր Մեսրոպը՝ վեհաշուք և հեղինակած, կանգնել էր «Աստվածաշնչի» էջերից դուրս պրծած Րաբբունապետի նման և խոսում էր ամբողջ աշխարհի հետ: Առաջին անգամ իր կյանքում նա զգում էր իր արտասանած բառերի այս խոր իմաստը, որը մարդկային իմացականության շղթայված շրջանից դուրս գնում, գտնում է բովանդակ կյանքի թաքնաթաքուր երաժշտականությունը:

Աննյութացած իր ձեռքերում բռնած հսկա սկիհը՝ մինչև ծայր լեցված էր փերյուզանների եռացող արյունով, և մասունքը, որ թվում էր, թե նա կարկառում է, մարմինն էր անսահման այն հողերի, որոնց մեջ Աստվածությունը թափառում է և ամեն մի հյուլեի մոտ մոլեգնորեն բոցկլտում:

«Ո՞վ է նա, թագաւո՛ր փառաց, Տէր զօրութեանց»,- բարձր հնչում էր նրա ձայնը:

«Սա՛ ինքն է թագաւոր փառաց»,- պատասխանում էին նշենիները:

-Ալելուիա,- խարշափում էին բարտիները, մինչ թռչունները, ծաղկած ճյուղերի վրա տատանվելով, իրենց դեղին կտուցները բաց էին արել և տաղերգում էին:

Լերան ետև վառված արևի հսկա խարույկը կամաց-կամաց մարում էր: Հարավից գիշերվան սև թափորը, զանգուր ամպերի վրա կանգնած, դանդաղորեն առաջանում էր. հովը թևերը ծալել, նայում էր, և մինչ քահանան, պատարագի վերջին խոսքերը արտասանելով, չոքել, աղոթում էր, ծառերը նույնպես վայր էին կախել իրենց ճյուղերը և, այլևս իրենց մեջ ամփոփված, սպասում էին, ավելի շուտ ականջ էին դնում սև սավանների վրա ոսկե քայլերով մոտեցող աստղերին:

* * *

Երբ Տեր Մեսրոպը բլուրից վայր իջավ, արդեն գիշեր էր: Բոպիկ իր ոտքերը քարերին տալով՝ նա քայլեց նորից: Քայլեց այլևս վերածնված: Առանց մտածելու, թեթև

և գրեթե երջանիկ: Նրան թվում էր, որ իր մկանունքներում ճառագայթները բույն էին կազմել, որ ոտքերը սահում էին գետնի մակերեսի վրայից, առանց որ նա որևէ դժվարություն զգա:

Խոր լռությամբ համակված երկինքը մի քիչ վար էր իջել, և աստղերը հազար աչքերով նայում էին նրա տենդագին աչքերի մեջ:

Իսկ նա ուրախ էր: Ուրախ էր, որ այլևս ուրիշ մի կյանքի մեջ մտած, զգալու և հասկանալու ուրիշ մի կարողության տեր դարձած՝ նա կարող էր նայել աստղերին և լեռներին, խոտին և կարիճներին, մարդկանց և անասուններին պայծառ ու նոր ծնած աչքերով:

Նա, որ առաջ անապատի վրա ման եկող գիշերային մութից վախենում էր, վախում էր գայլերից և բոլոր այն ոգիներից, որ դուրս են գալիս կեսգիշերին՝ ամեհի և խիստ այս երկրում մարդկանց ճակատագրին հանդիպելու համար, այլևս ոչ միայն վախ չէր զգում, այլ զգում էր, որ ինքը անբաժանելի մասն է բոլոր շրջապատող երևույթների, որ իր երակների մեջ վազող արյունը հոսում է դրսից, որ իր մարմինը սերտ կապով կապված է հողերի հետ, և՛ հետը աստղերի, և՛ հետը քարերի մեջ բուսնող թշվառ և անոթի խոտերի:

Նա քայլում էր, և թվում էր նրան, որ առաջին անգամն է տեսնում աշխարհը: Ամեն ինչ նոր էր, ամեն ինչ՝ զարմանալի և գեղեցիկ, հոյակապ և անհրաժեշտ:

Գիշերը նա անցրեց քարերի վրա՝ աչքերը մութին տված, շրթները զովության քսելով և սիրտը հարուստ հազար նոր զգացումներով: Քար, հող, լեռ. ես էլ եմ քար, և՛ հող, և՛ լեռ: Ես եմ գիշեր մշտնջենական և լույս լայնատարած: Ես եմ մահ՝ կառչած կյանքին, և կյանք՝ կառչած մահին: Անուշ է և ցանկալի նույնպես կյանքը:

Առավոտյան մոտ, երբ առաջին ճառագայթները ճեղքեցին երկինքը, նա կանգ առավ դաշտի մեջ և երեք անգամ խոնարհեց արևելքի առջև և երեք անգամ՝ արևմուտքի առջև:

Հետո քայլեց դեպի գյուղը: Քայլեց առանց մտածելու, բնական և անհրաժեշտ ճանապարհը շարունակելու համար: Վստահ քայլերով:

Երբ Բակոնց գյուղի բնակիչները այն առավոտ արթնցան, զարմանքով տեսան, որ Տեր Մեսրոպը՝ նախկին քահանան՝ այժմ ընկեր Շարամբազյանցը, *կապան* բոլորովին պատռտած, ոտաբոպիկ, ճակատը վիրավորված, չոքել էր եկեղեցու առջև և խորասուզվել աղոթքի մեջ:

Գյուղի տղաքը վազեցին նայելու և *հարայ-հուռայով* շրջապատեցին նրան: Քիչ հետո եկան հետաքրքրված կանայք, ու կամաց-կամաց գրեթե ամբողջ բնակչությունը կուտակվեց այնտեղ:

- Ընկե՛ր Մկո, ընկե՛ր Մկո,- կանչում էին նրան:

Իսկ նա ոչինչ չէր լսում. նա աղոթում էր:

Երբ երկար ժամանակ չոքած մնալուց հետո նա ոտքի կանգնեց և անվախ նայեց, շինականները զարմանքով տեսան, որ տերտերը բոլորովին կերպարանափոխվել է: Աչքերը անբնական կերպով փայլում էին, արյունած ճակատը ճառագայթում էր, և նրա ամբողջ անձը մեծցել ու վեհացել էր:

Նայեց ու ուժեղ ձայնով ասեց.

- Աստված կա՛: Ղո՛րդ կա. ես տեսա, որ կա:

Նրա ձայնը այնքան վճռական էր, նրա նայվածքը այնքան ազդու, որ ոչ ոք չհամարձակվեց հակաճառելու: Ջահիլներն իսկ լռեցին: Իսկ ծերերից ոմանք թե.

- Բա ինչպե՞ս չէ, առանց Աստուծու խոմ աշխարհ չի դառնա...

Մեկն էլ թե.

- Եկեղեցին փակեցինք, սատանայի էն ձայնը լսեցինք, մեծ մեղք գործեցինք, տե՛րտե՛ր ջան...

Բոլոր սրտերում խուլ մի ձայն հեծկլտաց:

- Իրա՛վ ա, ասածը իրա՛վ ա...

- Եկեղեցին նորից բանալու ա... թող ինչ ուզում են, անեն...

- Հա՛, հա՛, բանալու ա...

Քիչ հետո ոգևորությունը այնքան մեծ էր, որ ժամկոչը կաղալով վազեց՝ զանգը տալու, մինչ հեռաձայնի առջև կանգնած, *կարտուզի* տակից զլուխը ուժգին քերելով, դեմքը արյունով լեցված՝ ընկեր *չեկիստը* հևալով պոռում է.

«Տավարիշչ Մարկոսին *խաբա՛ր* տվեք... հա, *պաժալստա*... Բակոնցում տերտերը դավաճանել ա... *սուկին սինը*... ժողովուրդը հարձակել ա կոմսոմոլների կլուբի վերա... *պրովակացիա... ագիտացիա...* հակահեղափոխություն...»:

*ՍԵՐԳԵՅ ԱՂԱՋԱՆՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# Գ. ՄԱՀԱՐՈՒ «ՍԱՀՄԱՆԱԳԾԻ» ՉԱՓԱԾՈՆ

*Ո՜, որքան դժվար է դավել*
*մարդը՝ իր ներքին մարդուն...*
(«Երգի տեղ՝ դրոշակ»)

Գ. Մահարու չափածոն արձակից անհամեմատ ավելի մանրակրկիտ է ուսումնասիրված: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Գրականագիտությունը Գ. Մահարու ստեղծագործությանը պատշաճ լրջությամբ սկսեց վերաբերվել հեղինակի «վերադարձից» հետո՝ 1950-ականների երկրորդ կեսից: Նա արդեն դեպքից դեպք էր դիմում չափածոյին, և իր գրականությունն այդ մասով արդեն կայացած ու ավարտուն իրողություն էր, որը մանավանդ հետադարձ հայացքով գնահատելն ավելի հեշտ էր, իսկ սխալվելու հավանականությունը՝ քիչ: Կարևոր է և այն, որ Գ. Մահարու արձակը չափածոյից անհամեմատ ավելի բարդ ու բազմաշերտ գեղարվեստական արժեք է, որն արարվում էր մինչ 1960-ականների համարյա վերջը: Չպետք է անտեսել նաև հետևյալը: Գ. Մահարու արձակ որոշ ստեղծագործություններ (նկատի ունենք հատկապես «Ծաղկած փշալարեր» (1965) վիպակը) հասան մասսայական ընթերցողին նրա մահվանից բավականին հետո (1988), իսկ «Այրվող այգեստաններ» (1935-1964) վեպի հեղինակային անխաթար տարբերակը հրատարակվեց միայն վերջերս (2004): Եթե նկատի ունենանք նաև այն, որ Գ. Մահարու լավագույն ստեղծագործությունը՝ «Այրվող այգեստաններ» վեպը, առաջին տպագրությունից (1966) առ այսօր ավելի շատ դարձել է քաղաքական կրքերի դրսևորման առիթ, քան գնահատվել որպես գեղարվեստական արժեք, ապա ակնհայտ կդառնա վերագնահատումների հասունացած անհրաժեշտությունը:

Հայտնի իրողություն է, որ արվեստի արժեվորման մեջ էական նշանակություն ունի ժամանակի գործոնը: Յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջան ձևավորում է գեղարվեստական պահանջմունքի հասարակական կողմնորոշիչներ, որոնք դառնում են գրական ստեղծագործությունների վերագնահատման հիմք: Այդպես նորովի հայտնաբերվող կամ վերադարձող ստեղծագործությունների թվում է, անշուշտ, Գ. Մահարու գրական ժառանգությունը նաև հետևյալ կարևոր պատճառով: Նրա և՛ չափածոն, և՛ արձակը հաճախ երկիմաստությունների, կամա-ակամա թերասացության, ժամանակի հետ բանավիճող, հարցեր առաջադրող, ներքին դրամայի գրականություն է: Այդպիսի գրականությունը սովետական իրականության մեջ, նայած հանգամանքների, կարող էր գնահատվել հասկանալի վերապահումներով, որոշ իրողությունների անտեսումով կամ չափազանցումներով:

Գ. Մահարու գրականությունը երբեմն անթաքույց, ավելի հաճախ՝ ենթատեքստային ակամա բովանդակությամբ զգալիորեն տարբերվում է ժամանակի պաշտոնական գաղափարախոսությունից: 1920-30-ականներին նա լրջորեն մեղադրվել է

նոր գաղափարախոսությամբ արարվող կյանքին ու գրականությանը չձուլվելու, հնից պոկվել չկարողանալու համար: 1950-60-ականներին ջանք էր գործադրվում ապացուցելու այդ գնահատականների սխալ լինելը, նրա գրականության բովանդակության համապատասխանությունը սովետական գաղափարախոսությանը: «Այրվող այգեստաններ»-ի տպագրությունը (1966) նորից սրեց իրադրությունը, և եթե լինեին ստալինյան ժամանակները, ապա Մահարու տառապալի հոգեկան ապրումներին կարող էր ավելանալ ևս մի տասնյոթամյա բռնադատվածություն: Մինչդեռ պիտի նկատի ունենալ, որ ինչպես որ նրա՝ սովետական գրականություն ստեղծելու ճիգերը, այնպես էլ հակադաշնակցական գաղափարները ոչինչ չեն ավելացրել վաստակի գեղարվեստական արժանիքներին: Գ. Մահարու համար քաղաքական գաղափարների ոլորտը միշտ էլ սայթաքուն դաշտ է եղել: Նրա գրականությունը բարձր որակի չափանիշ է առավելապես իբրև գեղարվեստական խոսք, իբրև միանգամայն ինքնատիպ տաղանդով գործադրված գեղարվեստական պատկերավորման միջոցների ամբողջություն, որը լի է ժամանակի կենսական իրողությունների և մարդկանց նկարագրերի խորքային բացահայտումներով:

Մահարու չափածոն թեև արձակից ավելի մանրամասն է ուսումնասիրված, բայց դա դեռևս չի նշանակում, թե այստեղ ամեն ինչ քննված է և վերանայումների կարիք այլևս չկա: Իրականում կա թեկուզ և այն պարզ պատճառով, որ Մահարու չափածոն 1950-ականներից սկսած գնահատվել է գլխավորապես սովետական գրականության թեմատիկ-գաղափարական շրջանակներում տեղակայելու ձգտումով: Կենսական նոր հանգամանքներում Մահարին իսկապես աշխատել է լինել նոր գաղափարների մարմնավորող և գրական նոր ըմբռնումները «կը կիրարկէ յախուռն ձեւով»[1]: Դիտարկումն իհարկե ճիշտ է, սակայն առկա է մի վերապահում. նա իր կենսափորձով ու գաղափարների ընթացքով չէ, որ հանգել էր նորին: Հասարակական կյանքի ու գրականության ընթացքի հանգամանքները նրան հանգեցրել էին նորը յուրացնելու, նորի կրողը լինելու անհրաժեշտության (այս դեպքում՝ նաև պարտադրանքի) գիտակցմանը: Եվ սկսվել է ստեղծագործողի հոգեկան դրաման, որի մի երեսը Գ. Շահինյանը դիպուկ է նկատել. «Նորը տարբեր չէ միայն հինէն. ժխտու՛մն է անոր: Մահարիի համար նման ժխտում մը համապատասխան է ինքնաուրացումի»[2]: Հենց դրա համար էլ «հաղորդական ջերմութենէ զուրկ են» այս շրջանում գրված պոեմները, որոնք շարադրվել են «նոր երգի բոլոր հրամայականները նկատի ունենալով, բայց բռնազբոս ճիգով մը կարծես»[3]: Մինչդեռ սովետահայ գրականագիտությունը, նրա պոեմների և բալլադների մեջ թերություններ մատնանշելով հանդերձ, համենայն դեպս, դրանք Մահարու ստեղծագործության մեջ կարևորում էր որպես հեղափոխական և սովետական թեմատիկայի գեղարվեստական յուրացման փորձ:

Այսօր եթե նույնիսկ լրջորեն վերագնահատվի Մահարու չափածոն, ապա դրանից այն ոչինչ չի շահելու. այդ պոեզիան չի դառնալու գրական պրոցեսի մասնակիցը և մնալու է որպես գրապատմական արժեք: Հայտնի է, որ Գ. Մահարին Գ. Շահինյանին և Շ. Շահնուրին գրած նամակներում դժգոհել է իր պոեզիայի լիարժեք գնահատված չլինելուց. «...ես շարունակում եմ մնալ այն համոզման, որ իմ բանաստեղծութիւնը դեռ չի գտել իր քննադատողին եւ գնահատողին», նաև «Եթէ ես ար-

ձակ չունենայի, այո, իմ չափածոն պիտի գնահատուէր ըստ արժանւոյն, բայց իմ արձակը... խիստ լեզուով ասած՝ իմ արձակը եղաւ բանաստեղծութեանս գերեզմանափորը»[4]: Գ. Մահարին թերևս հիմքեր ուներ դժգոհելու իր պոեզիայի չգնահատվածությունից, սակայն, վստահ ենք, նա հանիրավի է «գերեզմանափորի» դեր վերապահում իր արձակին: Անցած տասնամյակները միանշանակ ճշտեցին իր չափածոյի արժեքը. ստեղծման տարիներին այն հայ գրականության համար, ողջ կարևորությամբ հանդերձ, հետագայում դարձավ միայն գրապատմական արժեք: Անկախ իր արձակի կշռից՝ Մահարու չափածոյի այդ ճակատագիրն անփոփոխ կմնար:

Բոլորովին էլ մտադիր չենք թերագնահատել Մահարու չափածոյի գրականագիտական գնահատականների մեջ առկա արժեքավորը: Նշենք, որ այսօր էլ իրենց հրատապությունը պահպանում են նրա պոեզիայի ծագումնաբանության, քնարական էության վերաբերյալ դատողությունները, քնարական պատկերների վերլուծությունները, նաև սրինգ-շեփոր փոխհարաբերության, սահմանային վիճակի, հանգույցում հայտնված գրողի ստեղծագործական դրամայի փաստարկումները: Ահա դրանցից մեկը. «Մահարու ստեղծագործական հակասության ակունքը բանաստեղծական հույզին, սրտին ու սիրուն, բնական ապրումին ու քնարականությանն հրաժեշտ տալու ներքին անկարողությունն է»[5]:

Կարծում ենք, Գ. Մահարու չափածոյին մերօրյա անդրադարձի համար ամենից հետաքրքիրը կարող է լինել հենց այդ դրաման, որը լիարժեքորեն արտահայտվել է նրա մի խումբ բանաստեղծություններում: Դրանք վերափոխվելու ձգտման, ժամանակի պահանջին հնազանդ լինելու դրսևորումներ են, որոնց վերաբերյալ Գ. Շահինյանը դիպուկ դիտարկում ունի. «Մահարի տեւաբար ինքն իրեն հրաւէր կը կարդայ մոռանալու անցեալը, երգելու ներկան ու պայծառ գալիքը: Տասնեակներով բանաստեղծութիւններ կը վերածուին **մանիֆեսթի** (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ա.), այս ձեւով: Ըսելու ձեւը քիչ մը կը տարբերի, վերնագիրը կը փոխուի, բայց արտայայտուած միտքը կը մնայ նոյնը»[6]:

Ստեղծագործական նույն ձգտումի արտահայտություններն են այդ բազմաթիվ բանաստեղծությունները, որոնց վերաբերյալ «մանիֆեսթ» բնորոշումը թերևս ճիշտ է գտնված: Բայց ոչ միայն այդքանը: Նրանք հաճախ հեղինակի հոգեվիճակների բազմազանություն են դրսևորում, որն ավելի մանրակրկիտ դիտարկման է արժանի: Այս խմբի բանաստեղծությունների առիթով Ս. Աղաբաբյանը նկատել է. «Դա պոլեմիկա էր նախ և առաջ իր անցյալի, իր նախկին գրական դավանանքների, իր դավանած հին ուղիների դեմ»[7]: Բայց ահա թե ինչպես է տեսել գրականագետն այդ հանգույցի լուծումը. «Այն (պոլեմիկան - Ս. Ա.) արդյունավետ անդրադարձավ նրա գաղափարական և ստեղծագործական էվոլյուցիայի վրա: Այդ էվոլյուցիան, որ և՛ թեմատիկական, և՛ ժանրային, և՛ մանվանդ՝ էսթետիկական որոշակի սկզբունքների վրա էր խարսխվում, Մահարուն կանգնեցրեց սովետահայ պոեզիայի մայրուղու՝ չարենցյան տրադիցիաների ուղու վրա: Մահարու էվոլյուցիան սկսվեց նրա լիրիկական պոեմներով, շարունակվեց բալլադներում և ավարտվեց «Մրգահաս» գրքով, որտեղ առավել որոշակի արտահայտվեցին նրա ինքնատիպ տաղանդը և գրական վարպետությունը»[8]:

Թեև Գ. Մահարին 1920-30-ականներին դարձավ բնության, հնձանների շենացող հայրենիքի թեմաներով ժամանակի համար նշանակալի բանաստեղծությունների հեղինակ, սակայն դա դեռևս չէր նշանակում «պոլեմիկայի» ավարտ: Մանավանդ որ պոեմներն ու բալլադները չէ, որ դրսևորում էին բանաստեղծի վարպետությունը չափածոյում: Ճիշտ է, հնարավոր չէ անտեսել «Մրգահաս»-ի (1933) կարևորությունը տպագրության ժամանակի սովետահայ պոեզիայում: Բայց այն ամփոփումն էր հեղինակի ինչպես չափածոյի, այնպես էլ ներաշխարհի նաև ակնհայտ հակասականության: Գ. Մահարու պոեզիան ինքնատիպ էր այնքանով, որքանով հեղինակին հաջողվում էր նույնիսկ հրատապ թեմաները մարմնավորել իր քնարական նկարագրին հարազատ մնալով: Այս առումով միանգամայն անվիճելի են Կ. Աղաբեկյանի համառոտ, բայց դիպուկ բնորոշումները. «Չնայած ներքին ծանր տառապանքով նա հաճախ հայտարարում է, որ ինքը շպրտել է հին սրինգը և դարձել է նոր օրերի շեփորահար, բայց ըստ էության նա երկար տարուբերվեց այս հակասական մտքերի մեջ»[9]: Նաև՝ «Քնարականության լքումը Մահարուն զրկում է ինքնատիպությունից»[10]:

Ս. Բողոսյանը ևս, նկատելով Մահարու պոեզիային բնորոշ երկվությունը, դրան տվել է որքան անսպասելի, նույնքան էլ անհամոզիչ մեկնաբանություն. «Այս տարիներին (1920-30-ականներին – Ս. Ա.) Մահարին հաճախ գրում է գրական դեկլարացիաներ հիշեցնող բանաստեղծություններ («Խոհ», «Եկավ ինձ այցի», «Հաշտություն», «Սոնետ անձկության» և այլն), ուր նա ի լուր բոլորի հրաժարվում է իր, այսպես կոչված, «հին երգերից», սիրո, բնության, հոգեկան ապրումների թեմաներից: Սակայն սրանք, մի տեսակ, վահաններ էին, որոնց ետևում գրողը փարթամորեն աճեցնում էր իսկական պոեզիայի ծաղիկներ»[11]: Կարծում ենք՝ ակնհայտորեն պարզեցվել է հեղինակի հոգեկան ու ստեղծագործական լուրջ դրաման, դրան տրվել գրական խաղի, խորամանկության տեսք:

Խնդրո առարկա բանաստեղծությունների նկատմամբ «մանիֆեստ»-ից և «դեկլարացիա»-ից զատ, թերևս կիրառելի է նաև «ծրագրային» բնորոշումը: Դրանք չափածո տողեր են, որոնցով հեղինակը ձևակերպել է իր անելիքը, գրական գործունեության առաջիկա իր ծրագիրը: Այդ ստեղծագործությունների հետ հպանցիկ ծանոթությունն անգամ ցույց է տալիս, որ Գ. Մահարին որոշակիորեն գիտակցել է երեք կարևոր հանգամանք՝

ա. իր տաղանդի բնույթը և ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը.

բ. ժամանակի պարտադրանքը, որը լրջորեն տարբեր է իր նախասիրություններից.

գ. ստեղծագործական ճգնաժամը՝ որպես հնարավորից հրաժարում և ձգտում իր համար անբնականին:

Ստեղծագործական այս իրադրությունը գոյացել էր ակամա: Դա հասարակական հանգամանքների, նոր կենսապայմանների անկասելի հրամայականի հետևանքն էր և ոչ թե հեղինակի ստեղծագործական հասունացման ճանապարհի հերթական աստիճանը: Ժամանակն իր հարկն էր պահանջում գրողից: Հենց այդ պատճառով էլ Մահարու ծրագրային բանաստեղծությունները նոր անելիքի,

գտնված նոր թեմատիկայի կամ ոճի համար ուրախությունից, պոեզիայի առաջ բացվող նոր հորիզոնի հրապույրից ավելի լցված են հոգեկան այնպիսի ապրումներով, որոնց մեջ գերիշխողը, համենայն դեպս, զոհությունը կամ ոգևորությունը չէ: Ստեղծագործող անհատ և ժամանակաշրջան փոխհարաբերության այս մասնավոր դրսևորումը հետաքրքիր է հեղինակի հատկապես հոգեկան ապրումների բազմազանությամբ: Այդ բանաստեղծությունները միայն որպես մանիֆեստ, դեկլարացիա կամ ծրագրային չափածո դիտարկելը զգալիորեն կվնասի երկվության մեջ հայտնված հեղինակի մարդկային դրամայի մեր իմացությանը: Իսկ այն, մեղմ ասած, աննախանձելի է:

Դեռևս «Տիտանիկ» (1924) ժողովածուում տպագրված «Մեռնող երգեր» (1920)[12] բանաստեղծությունում Գ. Մահարին վարակիչ տխրությամբ արձանագրում է հուր հագած աշխարհում խորթ ու օտար, սրտակեզ երգերի մահը: Բանաստեղծի խոսքը զգալիորեն անորոշ է. այն ասես ավելի շատ տրամադրություն է, հաջողությամբ չափածոյի վերածված անկումային հոգեվիճակ, սակայն վերը նշված հակադրությունն ընդգծված է.

Աշխարհի երգերը հին մեռնում են քո ցուրտ շնչում,-
Աշխարհը հուր է հագել, քո երգը չի ճանաչում.

Աշխարհում սենտիմենտալ, քաղաքում իմ խենթ հոգու,
Մեռնու՜մ են խորթ ու օտար սրտակեզ երգերը քո…

(1, 4)[13]

Բանաստեղծության որոշակիության պակասը կարող է լրացնել հետևյալ հանգամանքը: Գ. Մահարին չնչին խմբագրումներով այն հետագայում ընդգրկել է «Երկերի ժողովածու»-ի առաջին հատորի (1966) «Արտամետյան գիշերներ» շարքում:

Ուրեմն խոսքը հայրենի, բայց կորուսյալ եզերքի վերաբերյալ երգի մասին է: Բանաստեղծության հույզը և միտքը խտացնելու, «մեռնող երգեր»-ի առթած խաղաղ, անաղմուկ ցավն ընդգծելու համար հեղինակը դիմել է պոեզիայում իր նախասիրած կոմպոզիցիոն հնարանքներից մեկին: Դա որոշ խմբագրումով կամ տողերի վերադասավորումով բանաստեղծության առաջին տունը վերջին տուն դարձնելն է:

Այսպես`

Աշխարհում սենտիմենտալ, քաղաքում իմ խենթ հոգու
Հնչում է որբ ու օտար, սրտակեզ սոնետը քո:

և

Աշխարհում սենտիմենտալ, քաղաքում իմ խենթ հոգու,
Մեռնու՜մ են խորթ ու օտար սրտակեզ երգերը քո…

(1, 4)

Բայց ժամանակը ցույց տվեց, որ դրանք մեռնող երգեր չէին: Այդ մոտիվը գալիս էր իր էության շաղախից ու ճակատագրից և մի օր, հաղթահարելով արտաքին ու ներքին արգելքները, ավելի հուժկու էր հնչելու: Նույն «Տիտանիկ» (1924) ժողովածուի մեկ այլ` «Հանգույցում»[14] բանաստեղծության մեջ արդեն բացահայտորեն արտահայտվել է ինքնապաշտպանական ըմբոստությունը: Նա գիտակցում է, որ անցյալն ամուր է նստած իր մեջ, հետը բերել է «գորշ ստվերների» հիշողություններ,

ապրում է օրերի «շփոթների տագնապով»: Եվ եթե անգամ

Գուցե վաղն իսկ ես զղջամ
այս երգերի համար հին,
գուցե վաղն իսկ գույների
հյուսկենները միֆանան
կամ կարոտս միօրյա
տարիներով համառի
ու ավելորդ բեռ դառնա
այս երգեցիկ սիմֆոնիան…

Միևնույն է, ինքն իր մեջ անանց ցավ ունի, հնի հետ՝ անքակտելի կապ: Հասկանում է, որ հայտնվել է վճռական ճամփաբաժանում, որից նոր հեռուներ էին երևում, որը շրջադարձային է գալիքի իր ոգով: Բայց անհնար է հեշտությամբ մի կողմ թողնել սկիզբը, հիշողությունը, եթե այն անգամ անհարիր է նորին: Դրանից էլ այն ըմբոստ վճռականությունը, որով գրողը տեր է կանգնում իր կենսափորձին, մտքի ազատության իր իրավունքին.

Պիտի ճչամ օրերիս
շփոթների տագնապով.
- Հեռու՛ պահեք ձեր ձեռքը.
մենք հասել ենք ձեր երթին,
բայց դուք մեր դարը վերջին
չեք ապրել ո՛չ մի րոպե…

Սակայն այդ ինքնավստահությանը վիճակված չէր երկար գոյատևել: Նոր քաղաքական կարգը շուտով որոշակիացնում է արվեստագետի ու գրականության նկատմամբ իր վերաբերմունքը, նրանից իր սպասելիքներն ու հարկը: Այդ ճշգրտումները գրողին ստիպում են ավելի սթափ հայացքով նայել կյանքի իրողություններին, լրջորեն մտածել ոչ միայն սեփական ստեղծագործական սկզբունքների, այլև նոր արվեստում, հատկապես նոր կառուցվող կյանքում տեղ ունենալու մասին:

Ահա հասունացած անհրաժեշտության գիտակցման արտահայտություններից մեկը՝ «Օրե՛ր իմ օրորուն, օրե՛ր անհանգիստ…» (1926): Հույզ ու զգացմունքի համարյա բացակայությամբ գրված այս բանաստեղծությունը միանշանակ մտքի չափածո շարադրանք է: Առաջին տան երկու տողն իր ձգտումի, իսկ հաջորդ երկուսը՝ դրանից ունեցած մտավախության խոստովանությունն են.

Հազար թելերով կապում եմ ինձ կյանքին,
Հազար թելերով՝ արևոտ այս գարնան.
- Օրե՛ր իմ օրորուն, օրե՛ր իմ անհանգիստ,
Թող որոնումը ձեր մորմոք չդառնա:

(1, 122)

Հաջորդ երեք տները ժամանկի ոգուն ձուլվելու, «մարտնչումի բիրտով» զրահավորվելու կոչ ու հորդոր են ինքն իրեն: Հասունացած անհրաժեշտության գիտակցումը («Հերոսաբար անցիր անցման այս կամուրջը» (1, 122), սակայն, մի քանի տեղ ճեղք է տալիս, ի հայտ բերում ստեղծագործական իր այն «թուլությունները», որոնք

իրեն հարազատ են, և որոնցից դեռ պիտի ազատվի.

……………………. թող սի՛րտըդ, սի՛րտըդ ,
Որ ցավում է աշնան այս թաց առավոտով:
Ու թող մորմոքը հին էլետ չդառնա:

(1, 122)

Դրանից առաջ` 1925 թ. («Այսօր») Մահարին իր սրտին հղում էր հորդորով ու խրատով լի խոսք, որի իմաստը սթափ լինելն է («խելոք պիտի մնաս») և հրաժարումը.

Հիմա պետք չէ ո՛չ սեր, ո՛չ էլ քնար,
Ո՛չ էլ քնքշանք` շաղախված հին ցավով:

Թո՛ղ քեզ թովլի նոր օրերի վարդը,
Թո՛ղ մորմոքը[15], թո՛ղ ցնորքը, անգի՛ն,
Այսօր, այսօր դու ավելի հանդարտ ես,
Սի՛րտ անուրախ, իմ զանգրահե՛ր մանկիկ…

(1, 45)

Այս երկու բանաստեղծությունները նման են ոչ միայն բովանդակությամբ, այլ նաև հեղինակի հոգեվիճակով կամ ստեղծագործելու պահի տրամադրությամբ: Դա սթափ խաղաղությունն է, իրադրության գիտակցումը, որը սակայն լցված չէ գտնված, գիտակցվող նորի ուրախությամբ: Դեռ ավելին, դա «անուրախ», կոտրված սրտի թևաթափ վիճակ է:

Նոր կյանքին կապվելու, նրա առօրյայով լցվելու ինքն իրեն ուղղված կոչերն ավելի կտրուկ ու միանշանակ են դառնում հատկապես շենացող հայրենիքի բանաստեղծական համայնապատկերում («Մտերիմ խոսքեր»)[16]: Այստեղ բացակայում է նախորդներին բնորոշ հոգեկան կիսաթաքույց խռովքը: Անցած տարիների կենսափորձն ու ստեղծագործությունն ամփոփելիս էլ ասես շատ ավելի թեթև սրտով է խոսում ճակատագրով իր համար կանխորոշված «ոսկևոր ու մեղմ սրնգի», «շաղոտ» (1, 238) երգի մասին: Սա հրաժեշտ է մուտքի ստեղծագործական նախասիրություններին («Մնաք բարով, երգեր մշուշոտ ու տարտամ» (1, 238), որը սակայն վերնագրված է «Սոնետ անձկության» (1936): Ուրեմն… հրաժեշտի բովանդակությամբ խոսքեր, որոնք շաղախված են կարոտով, սրտնեղությամբ:

Խոսքերը խոսքեր, սակայն ստեղծագործական հոգեվիճակն ակնհայտորեն մատնում է իրեն թեկուզ հենց միայն նրանով, որ անցյալի նախասիրություններից հրաժարումի և նորը երգելու կոչերն ու պատրաստակամության հավաստիացումները տևել են… տասը տարուց ավելի` մինչ իր հանիրավի ազատազրկումը: Այդ հոգեվիճակին բնորոշ էր, մեղմ ասած` երկվությունը, սահմանազիծը մեկընդմիշտ անցնելու անկարողությունը: Մահարուն հանգամանքները հրում էին սահմանագծից այս կողմ: Նա փորձում էր անցնել, բայց հակառակ իր կողքին ստեղծագործող մի խմբի, որը շնչակտուր փոխել ու փոխում էր գույնն ըստ պատեհության, չէր կարողանում հայացքը կտրել անցյալից: Դա և՛ ճակատագրի, և՛ ստեղծագործության առումով իր խղճելի տեղն էր 1920-30-ական թվականների մթնոլորտում: Որ Մահարուն իսկապես չի հաջողվել մեկընդմիշտ մի կողմ թողնել «ոգին հին երգի» (1, 70), ե-

ընում է հրաժարումի երգերի թվականներին գրած այլ բանաստեղծություններից ևս.

Այսօր ոգին հին երգի
Ծեծեց իմ դուռը,
Ու երբ բացի ես դուռը՝
Ընկել է սեմին-
Ճերմա՛կ, ճերմա՛կ մի աղջիկ՝
Բերնին փրփուրը,
Թղթե ծաղկած մի պսակ
Դեղին վարսերին:

(1, 70)

Բանաստեղծ Գ. Մահարու այս ինքնավստահ հավաստումը 1926 թ. է վերաբերում: Բայց ժամանակը ցույց տվեց, որ ավելորդ էր այն: 1933 թ. գրված «Շունը» բանաստեղծությունը դրա վկայություններից է: Թեև հեղինակի գրասեղանը ծանրաբեռն է նոր երգերով, բայց «տխրության շունը» ողջ գիշեր հաչացել ու նվացել է իր տան շեմին: Այստեղ էլ հին երգի ոգին խորհրդանշող տխրության շունը ներկայացվում է «անշնչացած»:

Սակայն այն չէր մեռել, ինչպես հավաստիացնում էր բանաստեղծը 1926 թ.: Եթե վերադարձել է, ուրեմն ողջ այդ ընթացքում, թեկուզ անտեսված ու արհամարհված, գոյություն է ունեցել, իրեն զգալ տվել: Խոստովանության արժեք ունի բանաստեղծության տողերից մեկը.

Ստվերի պես ստվերիս հետևել է նա համառ...

(1, 217)

Դեռևս 1924 թ. Գ. Մահարին խոստովանելու պես հրապարակավ ազդարարել էր.

Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,
Վերջին կարոտն եմ՝ նաիրաբաղձ...
Ինձանից հետո վիհ կբացվի,
Սահմանագիծը կլինի պարզ:

(1, 28)

«Վերջին պոետը», «սահմանագիծը», «վիհը» և այլ արտահայտություններ թեև անորոշություններով, բայց մարմնավորում են հնի ու նորի սահմանում հայտնված գրողի տագնապները, ինչ-որ թանկ բան կորցնելու մտավախությունը և նորի առաջ շփոթմունքը.

Կքայլեմ հետո դեպի քաղաք,
Ու հին սրինգը նետելով դեն,
Կվերցնեմ շեփո՛ր բազմաղաղակ,
Պղնձե երգեր հետո կերգեմ:

Իսկ ինձնից հետո վիհ կբացվի
Սահմանագիծը կլինի պարզ.
Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,

Վերջին կարոտն եմ՝ նախրաբաղձ:

(1, 28)

«Մրգահաս» (1933) ժողովածուից սկսած՝ «Վերջինը» վերնագրով ներկայացված այս բանաստեղծությունը նախապես ունեցել է «Ես» («Յես») վերնագիրը[17]: Մահարին հետագայում վերամշակել է բանաստեղծությունը, որի պատճառով դուրս է մնացել հնի և նորի ճամփաբաժնում հայտնված պոետի անորոշ խոսքն ու շփոթմունքը մարմնավորող արտահայտություններից մի խումբ: Օրինակ՝

Վերջին պոետն եմ, որ եկել եմ
շփոթ գույների հյուսկեններից…

………………….. որ տեսել եմ
վառվող գծերը հանգույցների,

տագնապն իմ շփոթ ու անծիր է:

Արդեն «Տիտանիկ»-ում (1924) տպագրված այս բանաստեղծությունը թեկուզ ուրիշ վերնագրով (իմիջիայլոց, բանաստեղծության բովանդակության առումով կարելի է երկու վերնագրերն էլ հաջողված համարել) նոր ժողովածուի մեջ ընդգրկելը, նույնիսկ նրանով ժողովածուն բացելը պատահական չէ: «Մրգահաս»-ի (1933) մուտքի «Երկու խոսք»-ում Մահարին նշում է, որ գրքում չի ընդգրկել «բազմաթիվ բանաստեղծություններ և պոեմներ»[18], սակայն ավելորդ չի համարել ընդգրկել իր անցած «գրական ճանապարհը»[19] ցույց տվող բանաստեղծությունները: «Վերջինը» (1924) դրանցից մեկն է և ժողովածուի առաջին բանաստեղծությունը: Ուրեմն՝ հեղինակը ժողովածուի տպագրության ժամանակ էլ կարևորել է համարյա տասը տարի առաջ գրած բանաստեղծության բովանդակությունը, նրանում արտահայտված ստեղծագործական հոգեվիճակը:

Գիտակցելով «պղնձե երգեր»-ի անխուսափելիությունը՝ համենայն դեպս անհրաժեշտ է համարում հրապարակել «նախրաբաղձ» իր էության մտատանջությունները: Թեև չի մանրամասնում, սակայն ակնհայտ է, որ «սահմանագիծն» ու «վիհը» նոր քաղաքական հանգամանքների բերումով ձևավորված երկընտրանքի խնդիր են: Ընդ որում, ընտրության տարբերակը… կանխորոշված մատուցվում էր: Մահարին չի անտեսել ավերի ու որբի երկրի թեկուզ մի փոքր մասում կյանքի վերածնության նշանները: Սիրտն ուտող թախծի «ժանտաթերթ վարդերի», «ցավով դժգունող երգերի» անխուսափելիությամբ էլ՝ նա բաց է նոր կյանքի ուրախությունների առաջ («Բրոնզե լուսին» (1927): Բայց դրանով հոգեբանական իրադրությունը չի պարզվում: Ճշմարտախոս արվեստագետի պատասխանատվությունը ստիպում է չգունազարդել նոր կյանքը, չանտեսել առկա թշվառությունը: Եթե պետք լինի, ինքն էլ կարող է չլսված խոսքերով գովերգել իր երկիրը: Բայց երկրին դա չէ, որ հարկավոր է՝ «խնդությունն այդ սին ու թեթև…».

Երկի՛ր հյուղերի, պսա՛կ հասկե,
Եթե պետք է քեզ անվերջ գովել,
Ես էլ կգտնեմ ոսկե խոսքեր,
Խոսքեր, որ չունի ոչ մի պոետ…

Եվ մի՞թե այդ է քեզ հարկավոր,
Եվ կարո՞տ ես դու նրան միթե՝
Հաճույքին այդ խեղճ ու անկարող,
Ու խնդության այդ սին ու թեթև…
. . . . . . . .
Հիվանդ է հոգիս քո ցավերով,
Երկաթի սերը տանջում է քեզ,
Կարոտս խորն է ու ավերող,
Իսկ քո թևերին աթար ու դեզ…

(1, 137)

Մանավանդ այդ օրերի համար սա լուրջ, ներհուն դիտարկում էր, նաև գրականության դերի, գրողի կոչման ճշգրտում: Իրենը վատի, պակասության ցավն ու հոգսն է: «Երկիր» (1925) վերնագրով այս ծավալուն բանաստեղծությամբ դժվար չէ ամբողջական պատկերացում կազմել հոգեբանական այն անելանելի վիճակի վերաբերյալ, որի մեջ հայտնվել էր Գ. Մահարին: Սահմանագծից այն կողմում անդարձ կորստի կսկիծն էր, այս կողմում՝ աննախադեպ թշվառությունը: Առաջինի մասին չէր կարելի գրել ու խոսել, երկրորդի մասին կարելի էր գրել բաց կարմիր ակնոցների տոնականությամբ՝ շատ ու շատ բաներ անտեսելով:

Մահարուն դժվարությամբ էր հաջողվում համակերպվել թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ: Անխուսափելի էր դառնում ստեղծագործական կեցության այն կերպը, որին բնորոշ է ինքնամփոփ, ընդհանուր եռուզեռից մեկուսի լինելը: Մինչդեռ հենց իր աշխարհի մեջ էր հաճախ նրա վտանգավոր մխիթարությունը.

Ու երգում է թախիծը անօթևան սրտում քո,
Ու թախիծն այդ քաղցր է ու թախիծն այդ թո՛ւյն է…

(1, 203)(«Ինձ հետ», 1929)

Ստեղծագործական այսպիսի մթնոլորտում, ճգնաժամի մոտ հոգեկան երկփեղկվածության իրադրությունում օրինաչափ են այն բանաստեղծությունները, որոնք կարելի է պայմանականորեն անվանել «հակածրագրային»: Դրանք զիտակցության, անհրաժեշտի նկատմամբ գրական նախասիրության հաղթանակի դրսևորումներն են: Նաև իր անզորության, սրնգի, տխրության ստեղծագործական մթնոլորտի հոգեհարազատության անուղղակի խոստովանությունը.

Տխու՛ր իմ տխրություն,
Անուշ իմ ցավ,
Մտար դու իմ սիրտը
Ու էլ չանցար:

Բախտ իմ սևազգեստ,
Հարազա՛տ քույր,
Հնազանդ եմ քո դեմ,
Եվ կու՛յր:

Համբուրում եմ ահա
Մատներդ պաղ,
Քո զիրկն ինձ համար
Շիրիմ ու բախտ…

(1, 110) («Տխրություն», 1926)

Ճակատագրով դատապարտվածությանը հնազանդ լինելու, սեփական խաչը կրելու պատրաստակամությունը հասկանալի պատճառով շաղախված է տառապանքով ու ցավով: Նոր օրերի երգիչը դառնալու իր պատրաստակամության ու վճռականության վերաբերյալ հայտարարություններից հետո նա պետք է որ ուրախությամբ հրապարակեր իր ստեղծագործական աշխարհում կույր ու խեղճ սրնգահարի մահը: Մինչդեռ հնարավոր չէ չնկատել «Սրինգ» (1927) բանաստեղծության գերիշխող տրամադրությունը՝ կորստի ցավը.

Ու կմեռնի նա մի օր
Այդ մայթերի վրա պաղ,
Սրնգահարը կույր ու խեղճ,
Ու փողոցը կդառնա
Նրա համար ցուրտ դագաղ:

(1, 76)

Նույն թվականին գրված «Առաջինը» բանաստեղծության մեջ հեղինակի պահվածքը շատ ավելի հաստատուն է, իր ճշմարտության մեջ՝ աներեր: Հակառակ «Վերջինը» (1924) բանաստեղծության տագնապոտ կոչերին («Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ, / Վերջին կարոտն եմ նաիրաբաղձ…»)՝ այստեղ ամբողջ ձայնով խոսում է համոզմունքը, անսխալականության վստահությունը, որով էլ դիմում է «վերջին պոետ»-ին.

Որքան խաչեն քեզ ու հայհոյեն,
Այնքան թող երգդ խորունկ հուզե:

կամ

Վերջինը չեմ ես, հասկացե՛ք ինձ,
Ու բորբ կարոտն իմ վերջինը չէ…

(1, 78)

Այս բանաստեղծության բովանդակության առումով էական նշանակություն ունի խմբագրված լինելը: «Մրգահաս»-ի (1933) և «Երկերի ժողովածու»-ի առաջին հատորի (1966) տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին տունը լրջորեն վերափոխվել է՝ արտահայտելով միանգամայն հակադիր միտք ու տրամադրություն:

Այսպես՝ «Մրգահաս»-ի տարբերակը.

Ես վերջինը չեմ, հասկացե՛ք ինձ,
Եվ որբ կարոտն իմ վերջինը չէ,
Ախ, կծնվի դեռ այնքան թախիծ,
Այնքան վիհեր դեռ պիտի շնչեն:

Առաջին հատորի տարբերակը.

Ես վերջինը չեմ, հասկացե՛ք ինձ,

Եվ բորբ կարոտն իմ վերջինը չէ,
Կմահանաս դու, կապույտ թախիծ,
Այնքան նոր երգեր պիտի հնչեն:

Ակնհայտ է, որ առաջին տունը նախնական տարբերակով ավելի համահունչ է բանաստեղծությանը:

Նկատի ունենալով դիտարկված ստեղծագործությունները՝ կարելի է փաստել, որ 1920-30-ականներին բանաստեղծ Գ. Մահարին ըստ էության կանգնած էր «իր ներքին մարդուն»[20], բանաստեղծական էությանը դավելու երկընտրանքի առջև: Իսկ դա ոչ այնքան թեմատիկայի, որքան ստեղծագործական նկարագրի խնդիր էր: Որովհետև բոլոր այն դեպքերում, երբ Մահարին հարազատ է մնացել քնարական իր էությանը, բառապաշարին, նույնիսկ նոր կյանքի, հնձանների, շենացող երկրի երգը ստացվել է անբռնազբոս, անկեղծ ու սրտառուչ: Այս ստեղծագործություններում գերիշխող է հեղինակի ներքին խաղաղությունը, աներկդիմի խոսքի միանշանակությունը: Ծավալով ու քանակով քիչ չեն Մահարու նաև այն չափածո ստեղծագործությունները, որոնք շարադրվել են ժամանակի անցողիկ գրական հովերի չափանիշներով: Ու դժվար է համաձայնել գրականագետի կարծիքի հետ, թե իբր «Բանաստեղծութեան մէջ (Գ. Մահարու – Ս. Ա.) նորի փառաբանումը աւելի տեսական իրաւէրի բնոյթ կը ստանայ, քան՝ գործնական իրականացումի»[21]: Հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, երկաթի ու շինարարության մոտիվներով նրա բազմաթիվ ստեղծագործությունները ժամանակի գրական կաղապարի հարահոսից են և ինքնատիպ միայն նրանով, որ մահարիական չեն: Մինչդեռ հաճախ գրական փորձարարության նմանվող այդ գործերը նրանից բավական ժամանակ ու ջանք են խլել:

Սակայն թե՛ առաջին, առավել ևս՝ երկրորդ դեպքում Գ. Մահարու ստեղծագործական ինքնատիպությունը չկայացավ նոր կյանքի գեղարվեստական արծարծումներով: Ի վերջո, նրա «ներքին մարդը» հաղթահարեց ժամանակի պարտադրանքը և ողջ ձայնով խոսեց իր «նաիրաբաղձ» գրական հղացումներով: Դրանք դեռևս առավելապես իբրև բանաստեղծ հայտնի Գ. Մահարու մեծ արձակի սկիզբը նշանավորող վիպակներն էին՝ «Մանկություն» (1928), «Պատանեկություն» (1929-1930):

*ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ*

*ՄԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ*

# ՀՈՎՍԵՓ ԿԱՐԱԼՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Նա նման է Փարիզի փողոցներից մեկում նստած այն մարդուն, որը մեծ քաղաքի թոհուբոհում, առանց ուշադրություն դարձնելու շրջապատի աղմուկին ու իրարանցմանը, սրինգ է նվագում: Իր սրինգը իր աշխարհն է և այդ աշխարհը՝ իր կյանքը:*

Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ Հ. Կարալյանը (1897-1981 թթ.) ժամանակակից հայ գեղանկարչություն բերեց իր ինքնատիպ աշխարհը, իր արվեստի պարզությունը, անկեղծությունը և բանաստեղծական ամբողջականությունը: Մարդիկ միշտ էլ իդեալականացնում են մանկությունը, իրենց բոլոր լավ հուշերը կապում նրա հետ, սակայն դա դառնում է սահմանափակ սենտիմենտալություն կամ հարգանքի մատուցում անցյալին: Հ. Կարալյանը այլ կերպ վարվեց: Նրա ստեղծագործությունը դարձավ հմայիչ մանկության հուշ, ժողովրդի մնայուն կեցության վերապրում: Նա մանկությանը վերաբերվում է որպես անմոռանալի մի հուշ, նրա մասին խոսում մանկական պարզ, անմիջական ձևով՝ խոր հուզականությամբ, ժպիտով, երբեմն էլ՝ թախիծով:

Կարալյանը իրավամբ ժողովրդական նկարիչ է. նա արտացոլել է ժողովրդի կենդանի, խոսուն տիպարների հարազատ և անկեղծ ապրումներն ու հոգեբանությունը, ոգին: Այդ են վկայում նրա բոլոր աշխատանքները: Նկարիչը ձգտել է պահպանել ամեն լավը՝ ստեղծելով հուշերի լուսավոր աշխարհ: Այդ է պատճառը, որ Հ. Կարալյանի արվեստում գրեթե բացակայում են դրամատիկ բախումներն ու մռայլ կողմերը: Պոետիկությունը նրա արվեստի գլխավոր ուժն է եղել: Յուրաքանչյուր երևույթ գնահատել է անսովոր բարի, մարդասիրական հայացքով: Արվեստագետը ամբողջ կյանքում նկարել է իրեն շրջապատող իրականությունը, որն այնքա՜ն հարուստ է թեմատիկայով և հենց դրանից էլ բխող անհատական խոհափիլիսոփայությամբ: Նա իր արվեստով առաջադրում է տարբեր հոգեբանական խնդիրներ, մարդկային ապրումներ. պատկերում է մարդուն իրեն շրջապատող աշխարհում, կապում նրան իր հայրենի հողի հետ: Նկարչի այդօրինակ աշխատանքներից է *«Աղբյուրի մոտ» (1961 թ.)* կտավը: Սովորական մի թեմա է, որը, սակայն, նկարչի կողմից վերակենդանանալով և վերաիմաստավորվելով՝ ծիսական, մշտնջենական խորհուրդ է ստացել: Նկարիչը կոմպոզիցիան կառուցել է՝ երեք գեղուհիներին համախմբելով աղբյուրի մոտ: Խոհափիլիսոփայական մոտեցում և կյանքի փիլիսոփայական գաղափար է ընկած նկարի հիմքում: Կանացի ֆիգուրներից յուրաքանչյուրը շնչում է ներքին համեստությամբ, կանացիությամբ և նրանցից յուրաքանչյուրը ճառագում է կանացի նրբագեղություն: Ֆիգուրներն ունեն ընդգծված պլաստիկություն և, չնայած ներքին մոնումենտալությանն ու մարմինների պայմանական ստատիկությանը, նրանք արտաքուստ և ներքուստ արտահայտիչ են և խոսուն: Ի տարբերություն նկարչի շատ այլ գործերի, որտեղ զուգակցված են հորիզոնական և ուղղահայաց գծերը, այս նկարը կառուցված է

կորաձև պլաստիկ անցումների հիման վրա: Դա երևում է երկու դեմ-դիմաց կանգնած կանանց մարմինների համաչափությունների և հատկապես գլուխների դասավորման մեջ, որոնք կորերով կարծես կամար են կազմում և համահունչ դառնում աղբյուր-հուշարձանի կամարին: Յուրօրինակ պլաստիկությամբ, փափկությամբ է լուծված առաջին պլանում կռացած կնոջ մարմինը: Առաջին հայացքից կանացի ֆիգուրը մերկ է թվում, բայց ուշադիր դիտելուց հետո տեսնում ենք, որ նա կրում է նուրբ թափանցիկ հագուստ, որն ավելի է ընդգծում նրա կանացի մարմնի բարեմասնությունները, և, չնայած նկարչի կողմից արված որոշ ընդհանրացումներին, կտավում ֆիգուրները շատ արտահայտիչ են և խոսուն: Կանացի մերկ թվացող ֆիգուրը առանձնանում է մյուս երկուսից իր կոմպոզիցիոն կատարմամբ և թողնում կենցաղային գործողության տպավորություն: Ընդհանուր հոգևոր կապ կա երեք կանացի ֆիգուրների միջև, և իհարկե նրանց համախմբում է միևնույն թեման: Նկարիչը կյանքի խորհուրդը տալիս է մոտիվի կարևորումով: Կենցաղայինի, առօրեականի, սովորական մոտիվի մեջ արվեստագետը դնում է խորհուրդ, իմաստ: Նկարում կա կենցաղային կոնկրետ գործողություն: Արվեստագետը շեշտում է կյանքի, գոյության հավիտենականության խորհուրդը, ընդգծում կանացիությունը, գեղեցկությունը, բանաստեղծականը: Աղբյուր-հուշակոթողի ճարտարապետական ձևի ուղղանկյունը ասես ֆոն է հանդիսանում նկարի համար, ուր կարևորվում է աղբյուրի ջրի շիթը, որը հուշակոթողի ֆոնի վրա ընկալվում է որպես լույս: Նկարում առանձնահատուկ ուշադրություն է գրավում դեկորատիվ ծառը, որին արվեսագետը ճկելով, երկարացնելով տարածել է հուշարձանի երկայնքով մեկ և տվել կյանքի խորհրդի գաղափարական իմաստ: Նկարում ջուրը զրկված է նյութականությունից, շոշափելիությունից և շեշտված է կյանքի սկզբի, նրա արժեվորման փիլիսոփայական խորհուրդը: Նյութի նկատմամբ նրա ֆակտուրային պատկերը շեշտված չէ: Նկարիչը արժեվորում և իմաստավորում է կոմպոզիցիայում տեղ գտած յուրաքանչյուր իր, մասնիկ:

Ահա նրա *«Գյուղական շուկան» (1966 թ.)* կտավը, որում պատկերված են չորս մթազգեստ կանայք, որոնք կողք-կողքի շարված վաճառքի են հանել գետնին դրված իրենց ապրանքի մի մասը, իսկ մյուս մասն էլ ձեռքներին՝ սպասման մեջ են: Թվում է՝ այստեղ բացակայում է ֆիգուրների մտածված խմբավորումը, սակայն դա մենք տեսնում ենք թե՛ կոմպոզիցիայում, թե՛ մարմինների ռիթմի մեջ: Կանայք մոնումենտալ են դիմային արտահայտություններում, տխրամած՝ գունային այնքան զուսպ ու միաժամանակ արտահայտիչ լուծման մեջ: Կանայք սպասում են գնորդի: Ո՞չ: Կանայք սպասում են դիտողի ճանաչող և վերապրող հայացքին: Կտավում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ծալապատիկ կնոջ ծանրակշիռ ֆիգուրը, որն իր ձեռքերի դիրքի հակադիր պլաստիկությամբ, ռիթմիկ շարժունակությամբ, ինչպես նաև մարմնի ճկուն ուրվապատկերմամբ մի ուրույն երանգ է տալիս կոմպոզիցիային: Կտավի հարթ ֆոնի վրա տեղադրելով սևազգեստ կանանց՝ նկարիչը հասել է բացառիկ արտահայտչականության: Դա երևում է ոչ միայն նրանց կեցության միօրինակությամբ լեցուն դիմագծերում, այլև գունային կոնտրաստային լուծումներում: Կանանց մարմինների որոշակի սխեմատիզացման դեպքում, բայց ոչ ուղղակիորեն, ակնհայտորեն ընթերցվում են իբրև կոնաձև, էլիպսաձև, բրգաձև կառուցվածք ունեցող մարմնաձևեր: Ֆիգուրները մոնումենտալ են և ավանդականության հաստատականությունը փաստելու են գալիս, որ նրանք են այդ հողը, ապրելակերպը՝ երեկ, այսօր, վաղը: Ավանդականությունը ընդգծված է նաև նրանց ձեռքերի, մարմինների, հա-

յացքների մեջ։ Ընդհանուր ֆոն հանդիսացող տարածական հարթ միջավայրին որպես շարունակական լրացում հակադրվում է հեռաստանի բլուրների երեք կորերի ռիթմը, որոնք երանգային անցման միջոցով ստեղծում են ծավալայնության տպավորություն։ Զապվածություն կա և՛ կերպարների մեկնաբանման, և՛ ֆրիզաձև առարկաների դասավորման թվարկաման մեջ, որոնք համահունչ են կտավի զուսպ մթնոլորտին և երանգապնակին։ Հեռվում երևացող հեռաստանի կամ բնանկարի ֆոնի վրա կանացի ֆիգուրները շատ մոտ են կանգնած դիտողին։ Սա նկարչի տեսածն է և վերհուշի բուն բովանդակությունը։

Յուրօրինակ դրամատիկությամբ և ողբերգականությամբ է շնչում *«Գաղթականներ» (1967 թ.)* նկարը։ Կտավը զուսպ է, ազդեցիկ, պատմական և հոգեբանական խնդիրների իր բացահայտմամբ։ Այստեղ նկարիչը թեման ծառայեցնում է նպատակին. գաղթ, հետևաբար և՝ լքվածություն, փախուստ… Դրա մասին են վկայում չորս կերպարներից յուրաքանչյուրը և անխոս պատմում իրենց պատած միասնական ցավի մասին։ Համազգային ողբերգությունը ներկայացված է չորս կերպարների միջոցով։ Նկարիչն այնպես խորն է իմաստավորել երևույթի էությունը, որ կարողացել է ճշմարտացիորեն այն մեզ փոխանցել՝ զերծ մնալով որևիցե կեղծ չափազանցությունից։ Գաղթի ճամփից հոգնած, նրանք նստել են ճանապարհի եզրին՝ չորացած և ճկված ծառի մոտ։ Նկարիչը, չորացած ծառի զաղափարական մոտիվը նմանացնելով իր ազգին վերահաս դաժան ճակատագրին, կապում է այն գաղթականների օրհասական վիճակի հետ։ Իրողության դրամատիզմը լրացնելու են գալիս երկու խուրջինները, որոնց նկարիչը տեղավորելով սևազգեստ, ալեզարդ ծերունու երկու կողմերում՝ ևս մեկ անգամ փաստում է անդարձ կորստի գաղափարը։ Նրանք լուռ տանջվում են հայրենի հողի, ջրի, հարազատների անվերադարձ կորստի խոր վշտից։ Նկարում առանձնակի ուշադրություն է գրավում կոմպոզիցիայի ձախ մասում կուչ եկած մանկան ֆիգուրը։ Կերպարներից յուրաքանչյուրը անհատի ճակատագիր է, բայց նրանք միավորված են համազգային ճակատագրով։ Ողջ հայրենի աշխարհն իր մռայլությամբ, ողջ բնությունը՝ ծառի մոտիվով հանդերձ, համակված է ցավի, կորստի գաղափարով։ Կատարվածի փաստը քարացրել է նրանց։ Կտավը կրում է վավերագրական կնիք։ Կոմպոզիցիան լի է տագնապալի լռությամբ և խորը մտածված է։ Ներկապնակը զուսպ է իր լակոնիկ լուծումներով։ Հարկ է նշել, որ նկարչի մոտ գույնը նոր իմաստ է ստանում, նոր երանգ՝ համապատասխան մտահղացմանը և կիրառմանը։

Արվեստագետն ամբողջ կյանքում չդավաճանեց իր գեղագիտական սկզբունքներին և միշտ հետամուտ եղավ իր արվեստի ճշմարտությանը։ Հայ արվեստի պատմության մեջ Հ. Կարալյանն ունի իր ուրույն տեղը, որն իր ինքնատիպ հուշերի աշխարհով է լցված։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

# ԾԱՆՐԱԲԵՌՆ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսություն:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ Ներսես Սրբազանի կյանքի ուղուն, ստեղծագործական գործունեությանն ու վաստակին՝ դրվատանքով բնութագրելով նրան որպես Հայ Եկեղեցու անդաստանում մեծ փորձ ունեցող մի հոգևորականի:

Այնուհետև հանդիսության ընթացքում Սրբազան Հոր՝ հոգևորականի և բանաստեղծի ստեղծագործական արժանիքների ու գրական վաստակի մասին իրենց խոսքն ասացին բանասիրական գիտությունների թեկնածու տիկին Փառանձեմ Մեյթիխանյանը, պոլսահայ լրագրող և «Մարմարա» թերթի գլխավոր խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանը, Վաղարշապատի թիվ 5 ռուսական վարժարանի տնօրեն տիկին Գայանե Սաֆարյանը:

Հանդիսականների մեծարանքի և շնորհավորական բարեմաղթանքներից հետո իր սրտի խոսքը ներկաներին ուղղեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Անդրադառնալով իր կյանքի անցած ուղուն՝ Սրբազան Հայրը, Վ. Թեքեյանի տողերի հետևողությամբ, ասաց, որ, իրավի, իրեն նույնպես կյանքից մնացել է միայն այն, ինչ տվել է ուրիշներին: Սրբազան Հայրը նաև իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին, միաբանակից եղբայրներին ու հանդիսությանը ներկա գտնվողներին՝ ցուցաբերված ուշադրության համար:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ վերջին տարիներին նման հոբելյանական հանդիսությունների գեղեցիկ ավանդույթ է ձևավորվում, և կարևորեց դրանց անցկացումը: Ներսես Վանականի բանաստեղծական շնորհի ու վաստակի գնահատմամբ հանդերձ՝ Նորին Սրբությունը Սրբազան Հոր մեծագույն արժանիքը նկատեց նրա հոգևոր սպասավորությունը. *«Իր հոգևոր ծառայությամբ Ներսես Սրբազանն ու իր նման հոգևորականները խորհրդային համակարգի ժամանակ վառ պահեցին կանթեղը Սուրբ Էջմիածնի: Մշտապես եղավ աղոթքը Սուրբ Էջմիածնի կամարների ներքո և իրենց շնորհիվ նաև կենդանի մնաց Եկեղեցին»*,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Ներսես Սրբազանի՝ Հայ Եկեղեցուն բերած տարիների մեծ ավանդը և, ի հավելումն այդ ամենի, սեփական միջոցներով Թեղենիք գյուղում Սրբոց Նահատակաց եկեղեցու և կից շենքի կառուցումն ու դպրոցի վերանորոգումը, ինչպես և Հայորդյաց տուն բացելու ծրագրերը:

Վերստին շնորհավորելով Մայր Աթոռի երիցագույն միաբանին՝ Նորին Սրբությունը կյանքի արնշապտության ցանկացավ Սրբազան Հորը՝ մաղթելով, որ նա միշտ իր հավատքով բորբոքի Լուսավորչի կանթեղը: Ապա Վեհափառ Հայրապետը Ներսես արքեպիսկոպոսին շնորհեց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով պատրաստված պանակն՝ որպես գրչի մարդու և Հայոց Այբուբենին ծառայած եկեղեցականի:

Հանդիսության ընթացքում Սրբազան Հոր բանաստեղծությունների արտասանությամբ հանդես եկավ ճանաչված ասմունքող տիկին Նունե Դանիելյանը, հայ հոգևոր և ազգային երգերի կատարումներով հանդես եկան տիկին Մարի Պոզապալյանը և «Լույս» վոկալ կվինտետը:

Սրբազան Հոր արդյունաշատ եկեղեցական գործունեության վկայությունն է հոգևորականի իր անցած ուղին:

Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ավազանի անունով՝ Հակոբ, ծնվել է 1937 թ. հուլիսի 5-ին Գըրըգ Խան քաղաքում (Թուրքիա), արհեստավորի ընտանիքում:

1939 թ. ընտանիքով գաղթել և հաստատվել են Բեյրութում, ուր ստացել է իր նախնական կրթությունը տեղի հայկական Նուպարյան վարժարանում:

1951 թ. ընդունվել է Անթիլիասի Դպրեվանք, ուր սովորել է մինչև 1955 թվականը:

1955-57 թթ. սովորել է Էշրեֆիե թաղամասում գտնվող Կենտրոնական բարձրագույն վարժարանում:

1957 թ. սեպտեմբերին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան և մեկ ամիս անց ընդունվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1957 թ., ձեռամբ Հայկազուն արքեպս. Աբրահամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1960 թ. ավարտելով Հոգևոր Ճեմարանը՝ մեկնել է Մոսկվա և մեկ տարի ուսանել Զագորսկի Հոգևոր ակադեմիայում:

1961 թ. հունիսի 5-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Ներսես աբեղա:

Կրոնական-եկեղեցական կրթությունը խորացնելու նպատակով 1963-65 թթ. սովորել է Յորքշիրի (Անգլիա) Հարության կոլեջի (College of "Resurrection", Yorkshir, England) կրոնական բարձրագույն ուսումնարանում:

1965-69 թթ. վերադառնալով Մայր Աթոռ՝ վարել է Հոգևոր Ճեմարանի տեսչության պաշտոնը:

1969-70 թթ. սովորել է Ժնևի Էկումենիկ ինստիտուտում:

1969-72 թթ. որպես հոգևոր հովիվ ծառայել է Ժնևի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցում:

1972-74 թթ. եղել է հոգևոր հովիվ Լոնդոնի Սուրբ Սարգիս եկեղեցու:

1974 թ. Համայնքային Եկեղեցական խորհրդի կողմից ընտրվել է Անգլիայի հայոց առաջնորդ:

1974 թ. հոկտեմբերին, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Անգլիայի հայոց առաջնորդ և Հայրապետական պատվիրակ Քենթըրբերիի Արքեպիսկոպոսության մոտ:

1982 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռի դիվանապետ:

Սրբազան Հայրը նաև էկումենիկ աշխատանք է ծավալել Մայր Աթոռում: 1983 թ. ընտրվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի անդամ: Եղել է Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հիմնադիրը:

1988 թ. նոյեմբերին ընտրվել է Ռուսաստանի Հումանիտար ակադեմիայի ակադեմիկոս:

1999 թ. հուլիսի 4-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողովի կողմից ընտրվել է Կաթողիկոսական Տեղապահ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո Ներսես Սրբազանը, Հայրապետական տնօրինությամբ նշանակվելով Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն, ինչպես նաև միջեկեղեցական և համայնքային տարբեր հանդիսություններում ներկայացնելով Հայոց Եկեղեցին, բազմաբնույթ ձևով շարունակում է իր նպաստը բերել Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռին:

Ներսես Սրբազանի և Պողպատյան ընտանիքի ջանքերով և հովանավորությամբ կառուցվել է Կոտայքի թեմի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցին, որի օծումը 2003 թ. հուլիսի 5-ին կատարվեց ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

Ի գնահատություն այս ձեռնարկման, ինչպես նաև հոգևոր սպասավորության քառասնամյակի առիթով Հայրապետական Սրբատառ Կոնդակով Ներսես Սրբազանը պարգևատրվեց Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Ինչպես Հայրապետական կոնդակում է ասվում՝ *«Աւելի քան չորս տասնամեակ առաջ Ձեր ձեռքն առաք հովուական գաւազանը եւ «զինք երթալ բարեաց» ու «ծառայել Աստուծոյ» պատուիրանին պահանջատէր բանականացորդելու եկաք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու յուսապայծառ անդաստանում՝ Ձեզ առաջնորդ ու պայծառ ունենալով հաւատն առ Աստուած եւ ծառայութեան նուիրումն ու սէրը հանդէպ հայրագալ մեր ժողովուրդը:*

*Հովուական Ձեր առաքելութիւնը Դուք սկսեցիք Ժնեւի Սուրբ Յակոբ եկեղեցուց, այնուհետեւ ընտրուեցիք Անգլիոյ հայոց առաջնորդ եւ Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ արժանացաք Եպիսկոպոսութեան Սուրբ Օծման՝ որպէս նուիրեալ ու բարի ծառայ հաւատաւոր մեր ժողովրդի:*

*Արդիւնաշատ է Ձեր վաստակն առանձնաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Շուրջ քսան տարիներ ծառայեցիք որպէս Մայր Աթոռի դիւանապետ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ, մեր Եկեղեցին ներկայացրեցիք բազմաթիւ միջեկեղեցական խորհրդաժողովներում, ընտրուեցիք Կաթողիկոսական Տեղապահ եւ այժմ էլ շարունակում էք Ձեր փորձառութիւնն ու կարողութիւնները ներդնել Մայր Աթոռի հրատարակչական գործունէութեան արդիւնաւոր իրականացմանը:*

*Երկարամեայ Ձեր աշխատանքի շնորհիւ այսօր նաեւ ընթերցողի սեղանի վրայ են Ձեր քարոզչական հոդուածներն ու հեղինակած բանաստեղծական ժողովածուները, որոնք հաւատացեալ հայորդեաց հոգիներում սերմանում են սէր հանդէպ Հայ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան արժէքները, հանդէպ Հայրենի մեր երկիրը՝ իր սրբազան հողով եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնով:*

*Ձեր գործունէութեան պսակը, անշուշտ, Կոտայքի թեմի Թեղենիք գիւղում կառուցուած Սրբոց Նահատակաց եկեղեցին է, որն այս տարի աստուածապարգեւ մեր հողին հառնեց Ձեր ջանքերով ու նախաձեռնութեամբ: Այսուհետեւ նաեւ Ձեզ համար է «Երանի եկեղեցի շինողաց» աղօթքը, որ դարեր շարունակ առ Աստուած է բարձրանում հայորդեաց շնորհակալ ու երախտապարտ հոգիներից»:*

Ներսես Սրբազանը հեղինակ է նաև մեկ փառնյակ բանաստեղծական և քարոզխոսական ժողովածուների, այդ թվում՝ բանաստեղծությունների «Հայրենիքի» (1995 թ.), «Ուխտագնացություն դեպի լույսը» (1997 թ.), «Հույսի անտես թևերով» (1998 թ.), «Ծաղկեփունջ» (2001 թ.), «Մի կյանքի պատմություն» (2003 թ.), «Բանաստեղծություններ» (2006 թ.) գրքերի:

Ներսես Սրբազանի ստեղծագործությունները թե՛ շարունակությունն են հայ հոգևոր բանաստեղծության ավանդների և թե՛ արձագանքը արդի աշխարհի հիմնախնդիրների:

Ներսես Սրբազանը (գրական անվամբ՝ Ներսես Վանական) կյանքին մի այլ հայացքով է նայում, սովորականի մեջ տեսնում է անսովորը, անսովորն էլ իր ներթին մի նոր իմաստավորման է ենթարկում, ապա դիտարկում հոգևոր ընդհանրացված հայացքով:

Եթե մեկ նախադասությամբ փորձենք բնորոշել Ներսես Վանականի ստեղծագործությունները, ապա պետք է նշենք, որ նրանցում իշխում են սերն ու խաղաղությունը, և որ Սրբազան Հայրը, շարունակելով հայ հոգևոր բանաստեղծության ավանդները, բանաստեղծական նոր արտահայտչամիջոցներով ու պատկերներով է գալիս հավելելու այդ ավանդները՝ միաժամանակ վկայելով թե՛ իր արծարծած թեմաների գեղարվեստական կենսունակությունը մեր օրերում և թե՛ հավաստելով, որ հոգևորական բանաստեղծը ևս պետք է լինի իր ժամանակի հույզերի ու ապրումների արտահայտողն ու մերօրյա պատմության ընթացքի բանաստեղծական տարեգիրը:

Ինչպես ասացինք, 1997 թ. հրատարակած բանաստեղծական իր ժողովածուն Ներսես Սրբազանը վերնագրել է «Ուխտագնացություն դեպի լույսը»: Սրբազանի ծննդյան յոթանասունամյակի շեմին հոգևոր արդյունաշատ գործունեության և ստեղծագործական հաջողությունների երկա՜ր-երկար տարիներ մաղթենք լույսի ուխտավորին՝ այն հավատով, որ լույսի աղբյուրը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նորանոր լուսեղեն ցոլացումներ է պարգևելու Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին:




# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համընդհանուր խանդավառություն էր տիրում: Միածնաէջ Սուրբ Տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ընթացքին պատարագիչ Սրբազան Հոր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի ձեռամբ յոթ սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում: Ձեռնադրող Վիգեն Սրբազանը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Էդիկ սրկ.Հակոբյանը վերանվանվեց Տ. Մարտիրոս, Հայկ սրկ. Բարսեղյանը՝ Տ. Պարթև, Արման սրկ. Գևորգյանը՝ Տ. Միքայել, Մարտին սրկ. Մխիթարյանը՝ Տ. Գառնիկ, Էդուարդ սրկ. Խաչատրյանը՝ Տ. Մուշեղ, Հովհաննես սրկ. Սարգսյանը՝ Տ. Հրաչ, Արամ սրկ. Տեր-Մկրտչյանը՝ Տ. Թադեոս:

Ս. Պատարագի ընթացքին, «Ողջույնի» պահին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանները բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորընծաներին:

Ձեռնադրությունից հետո Վիգեն Սրբազանն իր պատգամը ուղղեց նորաօծ քահանա Հայրերին՝ անդրադառնալով հոգևորականի պատասխանատու կոչմանը Հայոց Եկեղեցու և մեր ժողովրդի կյանքում, հորդորեց լցվել առաքինություններով ու հոգևոր շնորհներով և պատրաստ լինել սեփական անձը զոհելու հանուն Եկեղեցու և ժողովրդի: «Ձեզնից ոմանց անուններն ընտրվեցին որպես խորհրդանիշը մեր այն հոգևորականների, որ նահատակվեցին 1915 թվականին, նահատակվեցին հանուն Քրիստոսի, հանուն Հայ Եկեղեցու, հանուն մեր ժողովրդի: Դուք էլ ամեն օր պատրաստ պիտի լինեք զոհվելու ձեր Եկեղեցու և ձեր ժողովրդի համար», - ասաց Սրբազան Հայրն իր ոգեշունչ քարոզում:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև վեղարի տվչության արարողություն: Տ. Պարթևը, Տ. Միքայելը և Տ. Գառնիկը, որպես կուսակրոն քահանաներ, ստացան վեղար և համալրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Մայր Աթոռում քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո Նորին Սրբության բարձր տնօրինությամբ նորաօծ եկեղեցականները հովվական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռի տարբեր կառույցներում:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ ամերիկաբնակ տեր և տիկին Հրաչ Թուֆայանները, տեր և տիկին Միքայել Հարությունյանները, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի ատենապետ տիար Օսկար Թաթոսյանը և Մայր Աթոռի բարերար, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Ջեյմս Գալուստյանը:

## Տ. ՊԱՐԹԵՎ ԱԲԵՂԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1982 թ. հունվարի 5-ին Էջմիածին քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է տեղի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ռուսական միջնակարգ դպրոցում:

1998 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թվականին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց»-ը հայ մատենագրության մեջ» թեմայով:

2005-2007 թթ. պաշտոնավարել է Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում, ՔԴԿ-ում, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, հաշվապահությունում: Այժմ պաշտոնավարում է Դիվանատանը:

2007 թ. հունիսի 24-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի՝ անվանվելով Հայր Պարթև:

## Տ. ՄԻՔԱՅԵԼ ԱԲԵՂԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(Ավազանի անունը՝ Արման)

Ծնվել է 1975 թ. հունիսի 18-ին Երևանում:

1982-1992 թթ. սովորել է Երևանի թիվ 181 միջնակարգ դպրոցում:

1992-97 թթ. սովորել է ԵՊՀ Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում:

1997 թ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1998-2000 թթ. ծառայել է Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցում:

2000-2006 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. աշխատանքի է նշանակվել «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրությունում:

2007 թ. փետրվարի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի մատենագիտությունը» թեմայով:

2007 թ. հունիսի 24-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի՝ անվանվելով Հայր Միքայել:

## Տ. ԳԱՌՆԻԿ ԱԲԵՂԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

(Ավազանի անունը՝ Մարտին)

Ծնվել է 1979 թ. մայիսի 26-ին Երևան քաղաքում:

1986-96 թթ. սովորել է Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի միջնակարգ դպրոցում:

1997-1999 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2000-2004 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2004-2006 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսի 13-ից աշխատել է ՔԴԿ-ում որպես գործավար-քարտուղար:

2006 թ. մարտի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Վահանանց պատերազմը 481-484 թթ.» թեմայով:

2007 թ. հունիսի 24-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի՝ անվանվելով Հայր Գառնիկ:

## Տ. ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

(Ավազանի անունը՝ Էդիկ)

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 7-ին Էջմիածին քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 12 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

1998-2004 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. աշխատել է Մայր Աթոռի Վեհարանում որպես սպասասրահի հյուրընկալ:

2005 թ. նոյեմբերից նշանակվել է Մայր Աթոռի հյուրընկալ:

2005 թ. հոկտեմբերի 29-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» թեմայով:

2007 թ. հունիսի 24-ին, ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ անվանվելով Տ. Մարտիրոս քահանա:

## Տ. ԹԱԴԵՈՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

(Ավազանի անունը՝ Արամ)

Ծնվել է 1982 թ. ապրիլի 14-ին Ախուրյանի շրջանի Ազատան գյուղում:

1989-99 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999 թ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2005 թ. դեկտամբերի 25-ին, ձեռամբ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու կյանքը, գործը, մատենագրական ժառանգությունը» թեմայով:

2006 թ. հուլիսից աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես առաքիչ:

2007 թ. հունիսի 24-ին, ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ անվանվելով Տ. Թադեոս քահանա:

## Տ. ՀՐԱՉ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1982 թ. հոկտեմբերի 10-ին Մեծամոր քաղաքում:

1990-2000 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2000-2004 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2004-2006 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2007 թ. մայիսին պաշտպանել է ավարտաճառ՝ «Վերջին օրերի վարդապետությունը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու և Լյութերական Եկեղեցու դավանանքում» թեմայով:

2007 թ. հունիսի 24-ին, ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ անվանվելով Տ. Հրաչ քահանա:

## Տ. ՄՈՒՇԵՂ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(Ավազանի անունը՝ Էդուարդ)

Ծնվել է 1982 թ. հունվարի 1-ին Երևան քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան թիվ 122 միջնակարգ դպրոցում:

1998-2000 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսի 13-ից աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակում որպես գործավար-քարտուղար:

2006 թ. մարտի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Դրվագներ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատմությունից» թեմայով:

2007 թ. հունիսի 24-ին, ձեռամբ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ անվանվելով Տ. Մուշեղ քահանա:

# ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ պատարագիչ Մարկոս Սրբազանի, սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ութ սաներ, ովքեր հաջողությամբ հանձնել էին սարկավագական քննությունները:

Նորընծա սարկավագներին ուղղված իր պատգամում Սրբազան Հայրը հորդորեց լավագույնս արժեվորել այն մեծագույն առաքելությունը, որին կոչվում են նրանք՝ դառնալու Քրիստոսի քաղցր լուծի կրողներ: Գերաշնորհ Սրբազանը կարևորեց այդ առաքելության իրագործումը սիրով ու հավատքով՝ որպես Տիրոջն արժանի մշակներ:

Սուրբ Պատարագից հետո Վեհարանի հարկի ներքո նորընծա սարկավագներին իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

## Կարեն սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1982 թ. մայիսի 12-ին Վանաձոր քաղաքում:

1989-1999 թթ. սովորել է Վանաձորի թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Արտակ սարկավագ Գաբրիելյան

Ծնվել է 1984 թ. սեպտեմբերի 20-ին Էջմիածնում:

1991-2001 թթ. սովորել է Ջվարթնոցի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Միեր սարկավագ Եսայան

Ծնվել է 1984 թ. նոյեմբերի 11-ին Կոտայքի մարզի Գառնի գյուղում:

1991-2001 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Նորայր սարկավագ Ղարիբյան

Ծնվել է 1984 թ. դեկտեմբերի 31-ին Էջմիածին քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է Էջմիածնի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

1993-2001 թթ. սովորել է Ս. Ներսես Շնորհալու անվան կիրակնօրյա վարժարանում:

1995-2000 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Արմեն սարկավագ Հմայակյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 29-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Նարեկ սարկավագ Վարդանյան

Ծնվել է 1985 թ. հուլիսի 8-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Սենիկ սարկավագ Մխիթարյան

Ծնվել է 1985 թ. փետրվարի 23-ին Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղում:

1991-2001 թթ. սովորել է տեղի Մարզպր Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

## Բաղդասար սարկավագ Բաղդասարյան

Ծնվել է 1986 թ. փետրվարի 28-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1993-2000 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Այժմ սովորում է Զ լսարանում:

2007 թ. հունիսի 3-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

# ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 2006-2007 թթ. ուսումնական տարվա փակման միացյալ հանդիսությունը: Ուսումնական այս տարում Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ունեցավ 31 շրջանավարտ:

Երկու ճեմարանների միացյալ երգչախմբի կողմից շարականների և ազգային երգերի մի քանի կատարումներից հետո տեսչական ամենամյա զեկույցով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վարդապետ Նանյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբն ուրախությամբ տեղեկացրեց, որ օրեր առաջ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից Գևորգյան Հոգևոր Ճեմարանին (Աստվածաբանական Համալսարան) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի 0222-»Աստվածաբանություն» մասնագիտության մագիստրոսի որակավորման աստիճանով պետական հավատարմագիր է տրվել: Ճեմարանում այժմ ուսանում են 135 սաներ: 2007 թ. 54 սարկավագներ պաշտպանել են իրենց ավարտաճառերը, 71 սաներ ձեռնադրվել սարկավագ: Ուսումնական տարվա ընթացքին ճեմարանականները պարբերաբար այցելել են տարբեր մանկատներ, հատուկ դպրոցներ, համագործակցել երիտասարդական և ուսանողական միությունների հետ, թղթակցել թերթերին, պատրաստել ռադիո և հեռուստահաղորդումներ: Հայր Սուրբը նաև իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ճեմարանի հանդեպ ցուցաբերվող մնայուն ուշադրության և հոգածության համար:

Անցնող ուսումնական տարում արձանագրած ձեռքբերումներին անդրադարձավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը: «Հոգևոր Ճեմարանը ձիթայուղ է, այն կաթսան, որտեղից մատակարարվում է Լուսավորչի կանթեղի ձիթայուղը»,- նշեց Հոգեշնորհ Հայր Սուրբն իր խոսքում՝ մեծապես կարևորելով նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը ազգայինեկեղեցական կյանքում: Դպրանոցը ներկայիս ունի 71 ուսանող, որոնց թվում սաներ Իրաքից, Գերմանիայից, Հոլանդիայից, Ռուսաստանից և Սիրիայից: Ճեմարանականների ջանքերով հրատարակվել են հինգ աստվածաբանական աշխատություններ: Սաներն իրենց ծառայությունն են բերում նաև Գեղարքունիքի թեմի եկեղեցիներում: Հաջողությամբ շարունակվում է «Կանաչ աստվածաբանություն» բնապահպանական առարկայի դասավանդումը դպրանոցում:

Հավարտ տեսչական զեկույցների տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, որի ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած սաները Վեհափառ Հայրապետից ստացան նվերներ: Ապա ուսանողության անունից շնորհակալական խոսք ասաց վեցերորդ լսարանի սան Գոռ սրկ. Նազարյանը: «Ճեմարանական տարիներն

այն թթխմորն են, որով պիտի խմորվի մեր ողջ կյանքը: ...Այսօր Ձեր առջև ենք՝ պատրաստ մեր ինքնանվիրումը բերելու Մայր Եկեղեցու զորացման, ժողովրդին ծառայելու աստվածահաճո գործին»,- նշեց Գոռ սարկավագը:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությանը հաջորդեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքը: Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից Գևորգյան Հոգևոր Ճեմարանին տրված բարձրագույն հաստատության հավատարմագրերի, ինչպես նաև երկու ճեմարաններում արձանագրված հաջողությունների համար:

«*Իրապես մենք պիտի կարողանանք մեր երազած ուսյալ, մտավորական նկարագիր և խառնվածք ունեցող եկեղեցականներով օժտել մեր Եկեղեցին, բարձրացնել պատրաստվածությունը մեր եկեղեցականների, որը նշանակում է միաժամանակ բարձրացնել և ծառայության որակը մեր Եկեղեցում և մեր ժողովրդի կյանքում*»,- ասաց Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով ճեմարանների տեսչություններին, մանկավարժներին և ճեմարանականներին իրենց նվիրումի, անհոգնաբեկ աշխատանքի ու պատասխանատվության բարձր զգացումի համար:

Վեհափառը աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տիրոջ օրհնությամբ առատանա հունձքը հոգևոր կրթական հաստատությունների՝ հունձք կրթական բարձր մակարդակով և հոգևոր պատրաստվածությամբ, որպեսզի կարելի լինի հոգևորականաց միջոցով մեր Եկեղեցու ամբողջական ծառայությունը բերել մեր ժողովրդին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվեց Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ժողովը, որին մասնակցում են շուրջ 35 ներկայացուցիչներ Եվրոպայի քրիստոնեական Եկեղեցիներից: Ժողովի բացումից առաջ Ս. Գայանե վանքում տեղի ունեցավ համատեղ աղոթքի արարողություն, որի ընթացքում ներկաներն աղոթեցին քրիստոնեական Եկեղեցու միասնության և Եկեղեցիների միջև կապերի առավել սերտացման և զորացման համար: Արարողության ընթացքում ներկաներին բարի գալուստ մաղթեց Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը՝ ժողովականներին փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքը:

Նույն օրը տեղի ունեցավ ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ժողովի պաշտոնական բացումը, որի ընթացքում ժողովականներին ողջունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: «Մեր Եկեղեցին բաց է ամենքի համար, և մեզ համար մեծ պատիվ է Ձեզ ընդունել և հնարավորություններ ստեղծել Ձեր աշխատանքների բարեհաջող ընթացքի համար: ...Մենք գիտենք, սիրում և պահպանում ենք մեր դավանանքն ու եկեղեցական ավանդությունը, սակայն ցանկանում ենք հարգել և հաղորդ դառնալ քրիստոնեական այլ Եկեղեցիների փորձառությանը ևս»,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում: Ապա հանձնախմբի անունից պատասխան խոսքով հանդես եկավ հանձնախմբի համանախագահ տիկին Անթիե Հայդեր Ռոթթվիլմը: Նա շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռում կազմակերպված ջերմ ընդունելության և Հայոց Եկեղեցու հարուստ հոգևոր ժառանգությանը հաղորդակցվելու հնարավորության համար:

Օրվա նիստերի ընթացքին ժողովականներն առանձին աշխատանքային խմբերում քննարկեցին «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի առաջնահերթ խնդիրներն անդամ Եկեղեցիներում:

Հանձնախմբում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

## ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը (ԵԵԿ) 126 Եկեղեցիների ընկերակցություն է, որի հետ համագործակցում են Եվրոպա մայրցամաքի բոլոր երկրներից 43 կազմակերպություններ: Այն հիմնադրվել է 1959 թ. և գրասենյակներ ունի Ժնևում, Բրյուսելում և Ստրասբուրգում:

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԵԿ-ԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսի անդամ է 1977 թ.: 2003 թ. հունիսի 25-ից հուլիսի 2-ը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի 12-րդ Գլխավոր Ասամբլեան, որին մասնակցեց Հայոց Եկեղեցու պատվիրակությունը: Ասամբլեայի ընթացքում Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանն ընտրվեց ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեի անդամ: Նույն տարի այս կառույցին անդամակցեցին Մայր Աթոռի միաբան Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը՝ որպես «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամ, և երեցկին Փոլա Դնեջյանը՝ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի «Արդարություն, խաղաղություն և հաշտություն» աշխատանքային խմբի անդամ: Այս տարիներին Մայր Աթոռն իր պաշտոնական տեսակետն է հայտնել Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցի և «Կարտա էկումենիկա» կոչվող փաստաթղթի վերաբերյալ, որը վերաբերվում է Եկեղեցիների համագործակցության նոր ձևերին, ժողովուրդների ու կրոնների միջև երկխոսության հաստատմանը:

Անդամակցելով այս կառույցներին՝ Հայ Եկեղեցին ևս իր կարևոր նպաստն է բերում էկումենիկ զարգացմանը: Միջեկեղեցական հարաբերություններում հատկապես կյանքի է կոչել ԵՀԽ-ի և Էկումենիկ շարժման տեսլականի կարևոր կետերից մեկը՝ համագործակցությունը Եկեղեցիների ու քրիստոնեական հարանվանությունների ներկայացուցիչների հետ:

2004 թ. հոկտեմբերի 5-ին ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի գործադիր կոմիտեն Թուրքիայի անդամակցության հարցի շուրջ հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով. «Եվրամիությունը պետությունների և ազգերի մի համայնք է, ուր պարտադիր են փաստաթղթերով հռչակված արդարության և խաղաղության, համբերատարության և բազմազանության, հաշտության և հանդուրժողականության, խոսքի ազատության և փոխադարձ հարգանքի արժեքները, և Եվրամիությունը ջանքեր է ի գործ դնում՝ դրանք ամենօրյա կյանքի մասը դարձնելու համար: Ներկա փուլում Թուրքիայում այս արժեքների միևնույն արտահայտությունը մենք չենք տեսնում: Տակավին բանտերում բռնությունների, խոսքի ազատությունն ընդունելու խնդիրների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հանդեպ ճնշումների մասին հաղորդումներ են լինում: Պատմության ճշմարիտ հետազոտությունը, մասնավորաբար դրա այն մասը, որ առնչվում է Թուրքիայի հարաբերություններին հարևան երկրների հետ և որն ընդգրկում է պատճառած ցավերի և վիրավորանքների ճանաչումը, նախապայման է հասարակության մեջ հիշողության վերքերը բժշկելու և ճշմարիտ հաշտեցման: Այն դեռ ձեռք բերված չէ: Այս առումով հայ փոքրամասնության հետ հարաբերությունը հատուկ ուշադրության է արժանի: ...Այս առումով Եվրոպայի Եկեղեցիներն արտահայտում են իրենց խորը անհանգստությունը քրիստոնեական փոքրամասնությունների վերաբերյալ: Չնայած Թուրքիայի պատասխանատու իշխանությունների խոստումներին, երկրում քրիստոնեական համայնքները տակավին շատ խնդիրների են բախվում օրինական ճանաչման, սեփականատիրական իրավունքների և կրթական ծրագրի զարգացման հարցերում»:

2005 թ. Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով ԵԵԿ-ն հայտարարությամբ դատապարտեց Հայոց Ցեղասպանությունը և կոչ արեց անդամ Եկեղեցիներին՝ այդ օրը աղոթելու հայ նահատակների հոգիների խաղաղության համար:

## ԵԵԿ-ի «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբն ստեղծվել է 1999 թ. որպես արդյունք ԵԵԿ-ի և Եվրոպայի էկումենիկ հանձնախմբի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի երկարատև աշխատանքի և միացման գործընթացի: Հանձնախմբի աշխատանքներին մասնակցում են 125 անդամ Եկեղեցիներ ողջ Եվրոպայից, որոնք հարաբերվում և համագործակցում են Եվրամիության կառույցների և Եվրախորհրդի հետ: Այն բաժանմունքներ ունի Բրյուսելում և Ստրասբուրգում, ինչպես նաև ամուր կապ Ժնևի ԵԵԿ-ի բաժնի հետ: «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի տնօրինության նստավայրը Բրյուսելն է: Հանձնախմբի նպատակներն են.

- խթանել էկումենիկ երկխոսությունը և համագործակցությունն անդամ Եկեղեցիների միջև հատկապես Եկեղեցուն և հասարակությանը հուզող խնդիրներում,
- հնարավորություն ստեղծել անդամ Եկեղեցիների համար՝ հանդիպելու և ուղիներ փնտրելու համար հանուն բարօր Եվրոպայի,
- քաջալերել քրիստոնեական ներդրումը Եվրոպայի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանքում,
- որպես եվրոպական կառույցների ուժեղ գործակից՝ աջակցել եվրոպական համերաշխությանը, հաշտեցմանը և մարդկային արժանապատվության պաշտպանմանը:

Հանձնախմբի գործունեության շրջանակներում երկարաժամկետ խմբեր են հաստատվել 2004-2009 թթ. աշխատանքային հետևյալ ծրագրերի համար.

- եվրոպական ինտեգրում
- Եվրախորհրդի օրենսդրություն
- խաղաղություն, ապահովություն և հաշտեցում
- բիոէթիկա և բիոտեխնիկա
- մարդու իրավունքեր և կրոնի ազատություն
- սոցիալական խնդիրներ

ԵԵկ-ն նաև աշխատանքներ է տանում հետևյալ ուղղություններով.

- գլոբալիզացիա
- կայուն զարգացում
- տարածքային խնդիրներ
- գյուղատնտեսություն և գյուղական կյանք
- սեռերի հավասարություն
- կրթություն
- միջկրոնական երկխոսություն

# ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամներին:

Հանդիպման ընթացքում ժողովականներին Նորին Սրբությանը ներկայացրեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ շեշտելով հատկապես ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի կարևոր առաքելությունն անդամ Եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում: Ապա ներկաներին իր օրհնությունը և բարեմաղթանքը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«*Ուրախ ենք, որ 1977 թվականից մեր երջանկահիշատակ նախորդների խորագետ տնօրինությամբ Հայոց Եկեղեցին անդամ է Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի և իր գործուն մասնակցությունն է բերում Եկեղեցիների միջև փոխհասկացողության և երկխոսության հաստատման գործին*»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Վեհափառ Հայրապետն այս այցը նկատեց որպես ևս մեկ հնարավորություն՝ մոտիկից ճանաչելու Հայոց Եկեղեցին և նրա ներկայիս կացությունը: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև մեր ժողովրդի կյանքում հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը և հանգամանորեն ներկայացրեց Եկեղեցու առջև ծառացած խնդիրները, Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական դաստիարակության և սոցիալական ոլորտներում: Ավարտելով խոսքը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հաջողություն և արդյունաշատ ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին:

Ցուցաբերվող հոգատարության համար ներկաների անունից Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի համանախագահ տիկին Անթիե Հայդեր Ռոթթվիլմը: Տիկին Ռոթթվիլմը մասնավորապար անդրադարձավ էկումենիկ շարժման մեջ Հայ Առաքելական Եկեղեցու և անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարևոր ներդրմանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին:

# «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Հունիսի 17-ին Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամներն այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, ուր մասնակից հոգևորականներն աղոթք բարձրացրեցին հայ նահատակների հոգիների խաղաղության և հանգստության համար: Այնուհետև Ցեղասպանության թանգարանի տնօրեն տիար Հայկ Դեմոյանի ուղեկցությամբ ժողովականները շրջեցին թանգարանում և իրենց գրառումները կատարեցին հուշամատյանում:

Կեսօրին ժողովի մասնակիցները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցեցին Ս. Պատարագին, որի ընթացքում նրանց ողջունեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը՝ փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները, անդրադառնալով նաև միջեկեղեցական կապերի ամրապնդման անհրաժեշտությանը: Այնուհետև «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամ և Ռուս Ուղղափառ Եկեղեցին ներկայացնող Հայր Գեորգի Ռյաբիխը ժողովականների անունից շնորհակալություն հայտնեց Հայոց Եկեղեցուն և անձամբ Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով նման հավաքների կարևորությունը: Հայր Գեորգին հատկապես ընդգծեց, որ Մայր Աթոռում գտնված ժամանակ նրանք առիթ ունեցան մոտիկից ծանոթանալու Հայոց Եկեղեցու պատմությանը, ներկայիս վիճակին, ինչպես նաև ականատեսը դարձան հոգևոր կյանքի վերածննդին Հայաստանում:

Ս. Պատարագից հետո ժողովականներն այցելեցին Նոր Նորքի Հայորդյաց տուն, ուր ներկա գտնվեցին Հայորդյաց տան սաների կողմից կազմակերպված գեղարվեստական միջոցառմանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԽՀ ՆԱԽԿԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՆՐԱԴ ՌԱՅՁԵՐԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Մայիսի 30-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի հրավերով մեկշաբաթյա այցով Հայաստան ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նախկին գլխավոր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերը:

Այցի ընթացքում դոկտ. Ռայզերը հանդես եկավ դասախոսություններով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում: Դասախոսությունները հիմնականում վերաբերում էին բնապահպանական տարբեր խնդիրների և էկումենիկ հարաբերություններին («Աստվածաշնչյան թեմաները և բնապահպանական խնդիրները», «Ինչպե՞ս Եկեղեցին կարող է մասնակցել բնապահպանական շարժմանը», «Էկո-արդարության խնդիրը, արդարության և բնապահպանության ինտեգրացիան», «Վստահության հաստատում էկումենիկ հարաբերություններում»): Դասախոսությունները ներկայացվեցին «Կանաչ աստվածաբանություն» ուսումնական ծրագրի շրջանակներում, որ իրականացվում է ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի համատեղ ջանքերով:

Այցի օրերին Կոնրադ Ռայզերին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կ. Ռայզերը ներկա գտնվեց Սուրբ Պատարագի արարողությանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների և ԵՀԽ Կլոր Սեղան հիմնադրամի պաշտոնեության ուղեկցությամբ ԵՀԽ նախկին գլխավոր քարտուղարն այցելեց տարբեր վանքեր և սրբավայրեր, մշակութային և կրթական հաստատություններ, մասնակցեց «Բնապահպանություն և Աստվածաբանություն» գրքի շնորհանդեսին: Դոկտ. Ռայզերը նաև ներկա գտնվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական ժողովին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հունիսի 4-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Աշոտ Երկաթ» դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Երևանի պետական համալսարանի համատեղ ջանքերով լույս տեսած «Բնապահպանություն և Աստվածաբանություն» գրքի շնորհանդեսը: Գիրքը հրատարակվել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցի փոխտեսուչ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանի, ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ Կառլեն Գրիգորյանի և ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Եսայանի համահեղինակությամբ:

Գրքի հրատարակությունն իրականացվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի հովանավորությամբ՝ «Կանաչ աստվածաբանություն» ուսումնական ծրագրի շրջանակներում: Գրքում ներկայացված են էկոլոգիայի և բնապահպանության հիմունքները և քրիստոնեական Եկեղեցու տեսակետն էկոլոգիական ճգնաժամի մարդածին լինելու վերաբերյալ: Որպես այդ ճգնաժամից դուրս գալու միակ ու ճշմարիտ ճանապարհ նշվում է մարդու ապաշխարությունը՝ զուգակցված քրիստոնեական հիմնական առաքինություններով զարդարվելու և իր բարձրագույն կոչմանը հասնելու ձգտմամբ:

Հանդիսությունը բացեց ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը: Այնուհետև մարդ արարածի՝ բնության պահպանության ու խնամքի աստվածավանդ առաքելությանն անդրադարձավ Արցախի թեմի առաջնորդ, Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազան Հայրն ընդգծեց մարդու դերն արարչության մեջ ոչ իբրև տիրակալի, այլ առաջնահերթորեն որպես խնամակալի ու մշակի: Այս հրատարակության կարևորության մասին խոսեց ԵՊՀ Կրթության վարչության պետ Հ. Ժամհարյանը՝ ընդգծելով, որ այս ոլորտում սա առաջին հայալեզու ձեռնարկն է և մեծ արժեք ունի ուսանողների համար: Տ. Մինաս քահանան ու Կ. Գրիգորյանը ներկայացրեցին գրքի ստեղծման ընթացքն ու ներառած խնդիրները: Ելույթ ունեցան նաև բնապահպանական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ զուգահեռներ տանելով քրիստոնեական աստվածաբանության և բնապահպանության միջև:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վրդ. Նանյանը և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Մկրտիչ վրդ. Պռոշյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, ԵՀԽ նախկին գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերը, ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի և ԵՊՀ պաշտոնեությունը, տարբեր հարանվանությունների և բնապահպանական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# «ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Հունիսի 8-10-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ «Կրթությունը՝ զարգացման նախապայման» կրթական երիտասարդական համաժողովը, որը կազմակերպվել էր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի կողմից: Համագումարին մասնակցում էին շուրջ ութսուն երիտասարդներ, ներկայացուցիչներ ՀՀ Ազգային ժողովից, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից, Կրթության ազգային ինստիտուտից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնից, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմական կառույցներից և երիտասարդական միություններից, Կլոր Սեղանի գործընկեր հասարակական կազմակերպություններից և այլ հարանվանություններից, հյուրեր Վրաստանից, Բելառուսից և Ուկրաինայից:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա ներկաներին իր օրհնության ու ողջույնի խոսքը ուղղեց ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը մեծապես կարևորեց այս նախաձեռնությունը՝ շեշտելով կրթության անհրաժեշտությունը: «Կարևոր է, որ այսօր հնչի երիտասարդների ձայնը, ինչպես փոփոխել և կատարելագործել կրթական համակարգը ի շահ մեր երիտասարդ սերնդի. երիտասարդների հայացքը միշտ լինում է խիզախ, թարմ և համարձակ»: Այնուհետև Կլոր Սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը, ողջունելով համագումարի մասնակիցներին, անդրադարձավ կրթական ոլորտում պետության տարբեր մարմինների, Եկեղեցու և հասարակական կազմակերպությունների ջանքերի կոորդինացման անհրաժեշտությանը՝ արդեն իսկ այս համագումարը կարևոր քայլ նկատելով այդ ուղղությամբ:

Եռօրյա ժողովի համար որպես առաջնորդող խորագիր ընտրվել էին երկու թեմաներ՝ «Կրթական բարեփոխումներ. կրթական համակարգի ներկան և ապագան, Եկեղեցու, պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության հեռանկարներ»՝ կապված արտադպրոցական կրթության հետ, և «Կրթությունը և արժեքային համակարգը անհատի ձևավորման և կայացման գործընթացում»:

Համաժողովին ներկայացվեցին հետևյալ զեկույցները՝ «Տեղեկատվություն կրթական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ, արհեստագործական ոլորտի զարգացում» (Վաղարշակ Խաչատրյան, Կրթության ազգային ինստիտուտ, Մասնագիտական կրթության բաժնի վարիչ), «Կրթություն ողջ կյանքի ընթացքում. արհեստագործական ոլորտի զարգացում, միջազգային կազմակերպությունների դերն ու համագործակցության հեռանկարները» (Նազարեթ Նազարեթյան, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Հայաստանի մասնաճյուղի ղեկավար), «Մասնագիտական կրթության իրավական կարգավորումը Հայաստանում. հնարավորություններ, խնդիրներ» (Մարինե Հակոբյան, ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ, գլխավոր մասնագետ), «Համայնքային կայուն զարգացում. վկայություններ դաշտից» (Անահիտ Ալլահվերդյան, «Կրթություն հանուն կա-

յուն զարգացման» հիմնադրամի գործադիր տնօրեն), «Սոցիալական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների դերը արհեստագործական ոլորտի զարգացման գործընթացում» (Վարազդատ Կարապետյան, «Գեղարքունիքի մարզի առնտրաարդյունաբերական պալատ» հասարակական կազմակերպության նախագահ), «Արտադպրոցական կրթության դերը մասնագիտական կողմնորոշման և անհատի ձևավորման գործընթացում» (Նանա Դոլիաշվիլի, Թբիլիսիի երիտասարդական պալատ, Վրաստան), «Արտադպրոցական կրթություն և մասնագիտական կողմնորոշում» (Մելանյա Դավթյան, Կրթության ազգային ինստիտուտ, Դաստիարակության և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ), «Կրթական բարեփոխումներ. հասարակական կազմակերպությունների դերը այդ գործընթացում» (Իոան սրկ. Դիդենկո, Ուկրաինայի Միջեկեղեցական օգնության համակարգման հանձնախմբի տնօրեն), «Ծխական գործունեություն և քրիստոնեական դաստիարակությունը՝ արժեքային համակարգի ձևավորման գործընթացում» (Տ. Կյուրեղ քհն. Տալյան, Կոտայքի թեմ), «Հասարակական կազմակերպությունների դերը արտադպրոցական կրթության և անհատի ձևավորման գործընթացում» (Միկոլա Մատրունչիկ, Միջեկեղեցական առաքելություն «Քրիստոնեական սոցիալական ծառայության» տնօրեն, Բելառուս), «Սոցիալական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների դերը արտադպրոցական կրթության զարգացման գործընթացում» (Աստղիկ Ասրյան, Գուգարաց թեմի քարոզչական և սոցիալական ծրագրերի պատասխանատու), «Անհատի ձևավորման խնդիրը արդի արժեհամակարգի և կրթության համատեքստում» (Տ. Վազգեն վրդ. Նանյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ):

Խմբային քննարկումները ծավալվեցին հետևյալ թեմաներով. «Մասնագիտական կրթության հիմնախնդիրները և լուծման ուղիները», «ՀԿ-ների և պետության փոխհարաբերությունները և գործակցության հնարավորությունները», «Եկեղեցին և լրացուցիչ կրթությունը. խնդիրներ և լուծումներ», «Արժեքային մերօրյա համակարգի խնդիրները և կրթության դերը դրանց հաղթահարման գործում», «Եկեղեցի-պետություն՝ կրթական և սոցիալական համագործակցության հեռանկարներ»: Համագումարին քննված նյութերի առնչությամբ որոշվեց պատրաստել նաև հուշագիր:

Ժողովը վարեց ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Հունիսի 10-ին, առավոտյան, համագումարի մասնակիցները Կեչառիսի վանքում մասնակցեցին կիրակնօրյա ժամերգության, ապա այցելեցին Կոտայքի թեմի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցի, ուր ծանոթացան եկեղեցուն կից գործող սոցիալական կենտրոնի գործունեությանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կրթության, գիտության, ազգային փոքրամասնությունների և կրոնի գծով ՀՀ նախագահի խորհրդականին կից ստեղծված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից կազմված մարմնի անդամներին՝ ուղեկցությամբ Կրթության, գիտության, ազգային փոքրամասնությունների և կրոնի գծով ՀՀ նախագահի խորհրդական տիար Սերգո Երիցյանի: Հանդիպմանը մասնակցում էին ներկայացուցիչներ ռուսական, ասորական, հրեական, եզդիական, քրդական, ուկրաինական, բելառուսական, լեհական, վրացական և հունական համայնքներից: »»

Հանդիպման կարևորությանն անդրադարձավ տիար Սերգո Երիցյանը՝ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության և ցուցաբերած ուշադրության համար: «Մենք գիտենք, որ Դուք Ձեր գործունեության մեջ երբևէ տարբերություն չեք դրել, այլ ընդհակառակը՝ միշտ զորացրել եք ժողովուրդների միջև բարեկամության ոգին»,- նշեց ՀՀ նախագահի խորհրդականը՝ կարևորելով նաև համագործակցությունը Հայ Եկեղեցու հետ: Տեղեկացվեց, որ ստեղծված մարմինը հնարավորություն է ընձեռում ազգային փոքրամասնություններին՝ ներկայացնելու իրենց խնդիրները, նաև, որ հիմնվել է կրթամշակութային կենտրոն, ուր տարբեր համայնքների ներկայացուցիչներ հնարավորություն են ստանում կազմակերպելու իրենց միջոցառումները:

Այնուհետև ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նման համախումբ հանդիպման համար: Նորին Սրբությունը ողջունեց այն հոգածու մոտեցումն ու վերաբերմունքը, որ իշխանությունների կողմից դրսևորվում է ազգային փոքրամասնությունների նկատմամբ: «*Ուրախալի է, որ դուք ունեք բոլոր հնարավորություններն ու կարողությունները ձեր ազգային ավանդությունները, լեզուն, մշակույթն ու արժեքները պահպանելու և լինելու հպարտ քաղաքացիները այս երկրի: Ձեր ներկայությամբ այստեղ դուք կամուրջ եք, դեսպաններն եք ձեր ժողովուրդների, բարեկամական կամուրջ եք, որ նետված է եղբայրության ու սիրո ոգին զորացնելու և մեր երկիրը նաև ճանաչելի դարձնելու ձեր ժողովուրդներին*»,- նշեց Նորին Սրբությունը՝ հորդորելով նրանց պահպանել ազգային իրենց դիմագիծը և որպես հավատարիմ քաղաքացիներ իրենց կարելին ներդնել ի բարօրություն Հայաստանի:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՀՕՖ-Ի ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հունիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի անդամներին, Հայ Օգնության Ֆոնդի հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Թեմական խորհրդի ատենապետ տիար Օսկար Թաթոսյանի և ՀՕՖ-ի գործադիր տնօրեն Գառնիկ Նանագուլյանի առաջնորդությամբ:

«Եկել ենք Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մեր ուխտը վերանորոգելու հանդեպ մեր Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և հայտնելու Հայրենիքին մեր զորակցությունը»,- հանուն ներկաների ասաց Խաժակ արքեպիսկոպոսը՝ հաստատելով, որ Նորին Սրբության օրհնությամբ ՀՕՖ-ը շարունակելու է իր առաքելությունը հայրենի հողի վրա: Խաժակ Սրբազանը նշեց, որ ՀՕՖ-ի նոր շենքի բացումը, որ տեղի է ունենալու հունիսի 28-ին, առավել պիտի խանդավառի հիմնադրամին Հայրենիքին և Եկեղեցուն իր ծառայության մեջ:

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի ատենապետ տիար Օսկար Թաթոսյանն իր հերթին հանուն Թեմական խորհրդի ողջունեց Նորին Սրբությանը՝ պատրաստակամություն հայտնելով ծառայելու և օգտակարություն ունենալու Հայոց Եկեղեցուն և Ամենայն Հայոց Հայրապետին:

Ապա Եկեղեցու հավատավոր և նվիրյալ զավակներին իր ողջույնի և օրհնության խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով Հայրենիքում և Մայր Աթոռում նրանց գտնվելու առիթով: «*Հայ Օգնության Ֆոնդի մասին խոսելով՝ անմիջապես մեր հիշողության մեջ վերարթնանում են այն ծանր օրերը, երբ մեր ժողովուրդը երկրաշարժի արհավիրքներին ենթարկված՝ օգնության կարիք ուներ, և ԱՄՆ-ից Մեր նվիրյալ զավակները եղան առաջիններից, ովքեր փութացին օգնություն ցուցաբերել աղետյալ Մեր զավակներին Հայաստանի մեջ: Եվ այդ առիթով Վազգեն Վեհափառի օրհնությամբ հիմնադրվեց ՀՕՖ-ը: Այդ տարիներից սկսած ՀՕՖ-ի իրականացմամբ շատ մեծ իրագործումներ են տեղ գտել հայրենական մեր կյանքից ներս՝ ուղղված ոչ միայն աղետի գոտու վերականգնմանը, այլև կարիքավոր Մեր զավակների կյանքի բարվոքմանը և ընդհանրապես՝ Հայաստանի կյանքի առաջընթացին և զարգացմանը*»,- ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց աշխատանքները շարունակելու պատրաստակամության առիթով և նոր շենքի բացումը նկատեց որպես վկայություն իրականացվելիք ծրագրերի կարևորության և Հայրենիքին օգտակար ծառայության վճռականության: «*Մեզ համար մեծ գոհունակություն է տեսնել, որ բարեբար Մեր զավակներն իրենց աջակցությունն ու զորակցությունը և օգտակար ծառայությունը մատուցում են ամենուր. նրանք այնտեղ են, որտեղ որ կարիք կա*»,-

նշեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով ներկաներին, որոնց ազնիվ բարերարությամբ պայծառանում են ինչպես Հայրենիքը, այնպես և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդին՝ ժրաջան և արգասավոր ծառայության համար:

Հանդիպմանը ԱՄՆ հայոց Արևելյան թեմից ներկա էր նաև Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի և մասնակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի ու Կոտայքի թեմի հոգևոր դասի վերաօծվեց Առինջ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին: Օրվա պատարագիչն էր Առաքել եպիսկոպոս Քարամյանը:

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին խորհրդային իշխանության տարիներին վերածվել էր պահեստի և զգալիորեն վնասվել. պատերը սվաղվել էին կրով, սալահատակը և պատերի սրբատաշ հատվածները՝ վնասվել: Հետագայում կառուցվել է նոր պահեստ, եկեղեցին դատարկվել է և անուշադրության մատնվել: Ձնհալից և անձրևներից եկեղեցու հիմքերն ու սրահը ողողվում էին ջրով, որի հետևանքով այն հայտնվել էր վթարային վիճակում:

2006 թ. պոլսահայ բարերար Մկրտիչ Սերթշիմշեքն այցելեց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի և հանձն առավ եկեղեցու վերանորոգությունը: Եկեղեցու վերանորոգմանը իրենց նպաստն են բերել նաև պոլսահայ բարերարներ Պետրոս Շիրինօղլուն, Կ. Պոլսի Բերայի Ս. Երրորդություն եկեղեցու թաղային խորհուրդը՝ գլխավորությամբ Աբիգ Հայրապետյանի, Առինջի գյուղապետ Գագիկ Սարգսյանը, Առինջի բնակիչ, գործարար Գեղամ Ջանվելյանը և այլոք:

«Սիրելի ժողովուրդ, այս եկեղեցին քարեղեն կառույց է, բայց որպեսզի այն վերածենք հոգևոր կառույցի, Աստծու տանն անհրաժեշտ է, որ մեր ամենօրյա այցելությամբ, աղոթքով այս քարերին կենդանություն պարգևենք»,- օծումից հետո իր շնորհավորական խոսքում շեշտեց առաջնորդ Սրբազան Հայրը:

Եկեղեցու օծման արարողությանը մասնակցում էին բարերար Մկրտիչ Սերթշիմշեքը, ՀՀ կառավարության, մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ:

*ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ*

# ՕԾՎԵՑ ԳՈՐԻՍԻ Ս. ՏՐԴԱՏ ՄԱՏՈՒՌԸ

Հունիսի 17-ին տեղի ունեցավ Սուրբ Տրդատ մատուռի հանդիսավոր օծման արարողությունը՝ հանդիսապետությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, մասնակցությամբ Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանի և Գորիսի հոգևոր հովիվ Տ. Շիրակ քահանա Խանոյանի: Արարողությանը ներկա էին Սյունիքի մարզպետ և այս եկեղեցու կառուցման բարերար տիար Սուրեն Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Ն. Ոսկանյանը, Սյունիքի մարզի համայնքապետեր, ինչպես նաև օտարերկրյա հյուրեր:

Հավարտ արարողության Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանն իր օրհնությունն ու բարեմաղթանքներն ուղղեց մարզպետին և շինարարներին՝ մասնավորաբար նշելով, որ Սյունյաց աշխարհը միշտ առանձնացել է եկեղեցակառույց Աստվածահաճո գործունեությամբ: Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը ևս օրհնության խոսքն ուղղեց Սուրբ Տրդատ մատուռի բարերարին և ճարտարապետ-շինարար Սևադա Զաքարյանին:

*ԴԻՎԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ*

# ՕԾՎԵՑ ՍԵՎԱՆԻ ՑԱՄԱՔԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Հունիսի 23-ին օծվեց Գեղարքունիքի թեմի Սևանի Ցամաքաբերդ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցին: Եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի վերջում գյուղի բնակիչների միջոցներով և սերտորեն կապված է եղել Սևանա կղզու վանական միաբանության հետ:

Խորհրդային շրջանում այն ծառայել է որպես գյուղի պահեստ: Իշխանությունների անտարբեր վերաբերմունքի պատճառով այն սկսել է քանդվել և մինչև վերջերս գտնվում էր կիսավեր վիճակում:

Եկեղեցու ամբողջական նորոգությունը ստանձնեց արմատներով ցամաքաբերդցի տիար Վալտեր Մարությանը: Հունիսի 23-ին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ օծվեցին նորոգված եկեղեցու Սուրբ Սեղանն ու Մկրտության ավազանը:

Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ կառավարության անդամներ, Սևանի քաղաքապետ Գ. Մալխասյանը, մտավորականներ ու հասարակական գործիչներ և բազում հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ*

# ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանում հունիսի 19-ին տեղի ունեցավ հիշատակի ոգեկոչման արարողություն՝ նվիրված «ԱԿՕՍ» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքին: Համալսարանի ռեկտոր Գ. Խաչատրյանի առաջարկությամբ և գիտխորհրդի որոշմամբ բանասիրական ֆակուլտետի նորաբաց լրագրության (ժուռնալիստիկա) բաժնի լսարանն անվանվեց Հրանտ Դինքի անվամբ:

Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի հրավերով հանդիսավոր այս արարողությանը եկել էին Հրանտ Դինքի հարազատները՝ այրին՝ տիկին Ռաքելը, և Հրանտի եղբայրը՝ Երվանդը:

Բացման խոսքով հանդես եկավ տիար Գ. Խաչատրյանը՝ կարևորելով Հրանտ Դինքի ազգային-հասարակական գործունեությունը, և իր ուրախությունը հայտնեց լրագրության բաժնի լսարանը Հրանտ Դինքի անվամբ կոչելու համար:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգելով նահատակ լրագրողի հիշատակը՝ Սեպուհ Սրբազանի հնչեցրած «Հոգւոցն հանգուցելոց» աղոթքից հետո մասնակցեցին ի հիշատակ Հրանտ Դինքի պատրաստված հուշաքարի բացման արարողությանը:

Թեմակալ առաջնորդը, ողջունելով ներկաներին, ներկայացրեց մալաթիացի իր հայրենակցի կենսագրությունը և բազմարդյուն ու ազգաշահ հասարակական գործունեությունը, ապա մխիթարության խոսքեր ուղղեց տիկին Ռաքելին, Հրանտի եղբորը և ներկաներին՝ ի մասնավորի ասելով. «Թուրքիայում 90 տարի լուռ մնացած հայ համայնքը, իր մեջ ցավն ու վիշտը անթեղած, վերջապես Հրանտի շուրթերով իր ձայնը բարձրացրեց հանուն արդարության և ազատ խոսքի, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության: Խոր վշտով ևս մեկ անգամ խոնարհվում ենք Հրանտի հիշատակի առջև և ցավակցում տիկին Ռաքելին, եղբորը՝ Երվանդին, և բոլոր հարազատներին»:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաև գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մելս Սանթոյանը, Հայաստանում «Ակօս» թերթի թղթակից Տիրան Լոքմագյոզյանը, լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողները, ովքեր և իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին տիկին Ռաքելին: Նրանց խնդրանքին ի պատասխան՝ տիկին Ռաքելը խոստացավ լրագրության լսարանին նվիրել Հրանտին վերաբերվող գրականություն և նրա անձնական իրերից:

Համալսարանի կողմից տիկին Ռաքելին Գ. Խաչատրյանը որպես հիշատակ նվիրեց Հովհ. Թումանյանի շքեղակազմ ընտրանին և մի քանի այլ հրատարակություններ:

Տիկին Ռաքել Դինքը հուզմունքով և երախտագիտությամբ իր շնորհակալությունը հայտնեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանին և բուհի ղեկավարությանը՝ նմանօրինակ գնահատանքի և ուշադրության համար:

# ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՃԱՄԲԱՐՈՒՄ

Գուգարաց թեմում «Ծիծեռնակ» ճամբարի «Ամառ–2007» շրջանի բացումը մեկնարկեց հունիս 23-ին: Ճամբարը գործելու է մինչև օգոստոսի 26-ը՝ 4 հերթափոխով՝ իր հարկի տակ ընդունելով անապահով և կարոտյալ ընտանիքների թվով 800 մանուկների ինչպես Լոռու մարզից, այնպես և հանրապետության տարբեր քաղաքներից ու գյուղերից:

Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ հունիսի 26-ին կայացավ ճամբարային շրջանի հանդիսավոր բացումը, որին ներկա էին Լոռու մարզպետ Ա. Քոչարյանը, քաղաքապետ Ս. Դարբինյանը, հոգևոր հովիվներ թեմի բոլոր տարածաշրջաններից, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Բացման հանդիսավոր տողանից հետո ճամբարականները ներկայացրեցին «Ծիծեռնակ»-ի անցած ուղին, իրենց ջերմ շնորհակալության ու երախտագիտության խոսքն ուղղեցին Սեպուհ Սրբազանին և ճամբարի բոլոր բարեկամներին, որոնց աջակցությամբ գործում և հազարավոր երեխաների իր հարկի ներքո է հավաքում «Ծիծեռնակ» ճամբարը:

Առաջնորդ Սրբազանն իր օրհնության խոսքը ուղղելով հավաքվածներին, երեխաներին հորդորեց լինել է՛լ ավելի քաջարի և գիտակից հայրենասերներ, հավատարիմ մնալ մեր նախնյաց հավատքին ու Եկեղեցուն: Սրբազան Հայրը գնահատանքի խոսք ուղղեց մարզային և քաղաքային իշխանություններին՝ ճամբարային ծրագրերին աջակցելու համար: Ճամբարականների երեկոն ուղեկցվեց համերգային ծրագրով: Ելույթ ունեցան Վանաձորի քաղաքապետարանի մշակույթի բաժնի մանկապատանեկան և երիտասարդական բաժնի համույթները: Հանդիսությունը եզրափակվեց հրավառությամբ:

Մանուկների համար հետաքրքիր և բովանդակալից է անցնում ճամբարային առօրյան:

Առավոտյան տողանից հետո երեխաների համար «Կռունկ» ճամբարում կազմակերպվում են Հայոց Եկեղեցու պատմությանը և մշակույթին նվիրված դասընթացներ: Ճամբարականները մասնակցում են ճամբարի «Սրբոց մանկանց» մատուռում մատուցվող Ս. Պատարագին, ինչպես նաև կազմակերպվող ուխտագնացություններին:

Երեխաներին այցելում և նրանց առօրյան իրենց երգ ու պարով է՛լ ավելի բովանդակալից ու հետաքրքրական են դարձնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ Հայորդյաց տան սաները, Վանաձորի քաղաքապետարանի մշակույթի բաժնի մանկապատանեկան և երիտասարդական բաժնի համույթները, YMCA կազմակերպության մանկապատանեկան խմբակը, պատանի երգիչները: Ճամբարականների համար ավանդույթ դարձած մշակութային միջոցառումներին զուգահեռ առօրյան հագեցած է մտավոր ու մարզական խաղերով, միջջոկատային մրցույթներով, զինվորականների հետ հանդիպումներով, որը նպաստում է մանուկների հայրենասիրական դաստիարակությանը: Գործում են նաև աշխատանքի ու նկարչության խմբակներ: Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Եկեղեցասեր

երիտասարդաց միության թվով 30 անդամներ հյուրընկալվել են ճամբարում և ճամբարականներին սովորեցնում են անգլերեն:

Ճամբարային առօրյան ուղեկցվում է նաև թեմի երիտասարդաց միության անդամների՝ ճամբար այցելությամբ: Այս անգամ երիտասարդները ճամբարում հանդիպեցին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության (CYMA) անդամների հետ: Սրբազան Հոր օրհնության և ողջույնի խոսքին հաջորդեց երիտասարդների ծանոթացումը միմյանց հետ և առաջիկա ծրագրերին, ապա վեր հանվեցին հայաստանաբնակ և սփյուռքահայ երիտասարդների առջև ծառացած խնդիրները: Կարևորելով նմանօրինակ հոգևոր ճամբարի դերը հայ մանուկի հայեցի կրթության ու դաստիարակության գործում՝ երիտասարդները առաջնային համարեցին հայապահպանության խնդիրը և որոշեցին իրականացնել համատեղ ծրագրեր՝ ի նպաստ Մայր Եկեղեցու պայծառացման և Հայրենիքի բարգավաճման:

## ՀՕՖ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՅՑԸ ՎԱՆԱՁՈՐ

Հունիսի 27-ին ՀՕՖ բարեգործական կազմակերպության վարչության անդամները, իրենց առաքելությանը հավատարիմ, հերթական բարեգործությամբ այցելեցին Գուգարաց թեմ: Նրանց աջակցությամբ Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիրում բացվեց տոմոգրաֆիայի կաբինետ: Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, մեծապես կարևորելով նմանօրինակ բարեգործությունը, իր հայրական օրհնությունը բաշխեց և գնահատանքի խոսք ուղղեց ՀՕՖ-ի անդամներին. «Ավերիչ երկրաշարժից հետո մենք փորձում ենք վերականգնել մեր առողջապահական հիմնարկները և վերազինել դրանք ժամանակակից բժշկական սարքավորումներով: Տոմոգրաֆիկ կաբինետի բացումը Լոռու մարզի բնակիչներին հնարավորություն կտա հետայսու առանց մայրաքաղաք հասնելու, ժամանակ և գումար խնայելով, անցնել համապատասխան բժշկական հետազոտում: Ուստի ողջունում և մեր երախտագիտությունն ենք հայտնում ՀՕՖ-ին՝ հերթական բարեգործության համար»:

Հիվանդանոցային համալիրից ՀՕՖ-ի անդամները Սրբազան Հոր առաջնորդությամբ այցելեցին թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբար, որի վերանորոգման և կահավորման գործում իր կարևոր ավանդն ունի նաև ՀՕՖ-ը: Նրանք հանդիպեցին ճամբարականների հետ, ծանոթացան ճամբարի առօրյային ու պայմաններին, ունկնդրեցին «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախմբի համերգային կատարումները:

Ճամբարում տեղակայված Սրբոց Մանկանց մատուռում առ Աստված աղոթք բարձրացրին սփյուռքահայ մեր հայրենակիցները՝ աստվածային սիրով ու բարությամբ շարունակելու իրենց աստվածահաճո ընթացքը:

# ՕԾՎԵՑ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 26-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ կատարվեց Սարալանջ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու օծման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի օծվեցին Սուրբ Սեղանը, Խորանը, Մկրտության սուրբ ավազանը, սյուները: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Արևաշող գյուղի հոգևոր հովիվ Տ. Մովսես քհն. Աշուրյանը:

1901 թ. կառուցված Ս. Գևորգ եկեղեցին մինչ խորհրդային կարգերի հաստատումը ծառայել է համայնքին, ապա խորհրդային ժամանակաշրջանում վերածվել պահեստի, հարդանոցի: 1988 թ. ավերիչ երկրաշարժից հիմնավեր խոնարհված եկեղեցին 2005 թ. վերակառուցվել է սարալանջցի Հարություն և նրա որդիներ Աշոտ և Արմեն Գրիգորյանների բարերարությամբ:

Հավարտ սրբազան արարողության Սեպուհ Սրբազանն իր օրհնության և շնորհավորական խոսքն ուղղեց սարալանջցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր Տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Շնորհիվ ձեր համագյուղացիների՝ Հարություն և նրա որդիներ Աշոտ և Արմեն Գրիգորյանների, կրկին վեր հառնեց խոնարհված Ս. Գևորգ եկեղեցին: Ուստի, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աչքի լույսի պես պահենք ու պահպանենք այն: Այսուհետ ձեր սրտաբուխ ու մաքուր աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող վերառաքվեն նաև հանուն մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ Հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության»: Եկեղեցու բարարներին, իբրև գնահատանք, թեմակալ առաջնորդը հանձնեց Օրհնության գրեր:

Սրբազան արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Ա. Քոչարյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ և մեծ թվով հավատացյալ հայորդիներ:

Ս. Պատարագից հետո տեղի ունեցավ մկրտություն, ապա բաժանվեց մատաղ:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*

# ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ ՎՈԼԳՈԳՐԱԴՈՒՄ

Վարդավառի տոնը նշվեց նաև Ռուսահայոց թեմի Վոլգոգրադ քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցում։ Հավատացյալները եկել էին մասնակցելու Սուրբ և Անմահ Պատարագին և հաղորդվելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Կենարար մարմնին ու արյանը։ Ժողովրդի հոծ բազմություն էր հավաքվել եկեղեցու բակում և ժողովրդական ընդունված ավանդույթով ջուր էին ցողում միմյանց վրա, որը խորհուրդն ունի Նոյի՝ Ջրհեղեղից փրկվելու։ Հայ Եկեղեցու երիտասարդաց միության աղջիկներն այդ տոնի կապակցությամբ իրենց գլուխները զարդարել էին գեղեցիկ ծաղկեպսակներով։ Իսկ տոնի ամենահուզիչ պահն այն էր, երբ Ս. Պատարագից հետո երիտասարդներն ու երեխաները հոգևոր հովիվ Տ. Մաղաքիա քահանայի գլխավորությամբ երկինք արձակեցին ձյունի պես ճերմակ աղավնիներ, որոնք խաղաղության, նոր կյանքի և լուսավոր ապագայի խորհրդանիշն են։

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու սեղանատանը մատաղ բաժանվեց ժողովրդին։

*ՍԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ*
*Վոլգոգրադի Հայ Եկեղեցու*
*երիտասարդաց միության ատենապետ*

# ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԸ ՄԻԼԱՆՈՅԻ ՄԷՋ

(Միլանոյ, 22-24 Յունիս 2007)

Սոյն թուականի Յունիս 22-24-ը Իտալիոյ Միլան քաղաքին մէջ, հիւրընկալութեամբ Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւին եւ Ազգային Եկեղեցական Հոգաբարձութեան, գումարուեցաւ Համազգային Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան Եւրոպայի ներկայացուցչական անդրանիկ ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ թեմերն ու հովուութիւնները. Ֆրանսայի թեմը իր երեք շրջաններով՝ Փարիզ, Մարսէյլ եւ Վալանս, Գերմանիոյ թեմը, Հունգարիոյ, Չեխիոյ, Սլովակիոյ հովուութիւնները, Իտալիոյ հովուութիւնը, Հոլանտան՝ Ամստերդամ եւ Ալմելօ համայնքներով, Պելճիքայի եւ Զուիցերիոյ համայնքները:

Յունիս 22-ին ՀՀԵԵԿ-ի Եւրոպայի ներկայացուցչական ժողովի անդամները Միլանի Հայ տան մէջ հանդիպում մը ունեցան տեղի հայ համայնքի եւ երիտասարդներու հետ: Բարիգալստեան խօսքեր արտասանեցին Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն վարդապետ Շահենեանը եւ Ազգային Եկեղեցական Հոգաբարձութեան խորհուրդի ատենապետ Տիար Սարօ Խուդավերդեանը: Ներկաներուն իրենց օրհնութիւնները յղեցին ՀՀԵԵԿ տեսուչ եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը եւ Դամասկոսի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանը, Աստծոյ օգնականութիւնը հայցելով կարեւոր այս գումարումին յաջողութեանց համար: Իր հերթին Յովնան Սրբազանը մասնաւոր կերպով անդրադարձաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ հաստատուած սոյն նախաձեռնութեանը, որպէս հիմնական առաքելութիւն մը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանաւորութեան ներքոյ: Այնուհետեւ ան իր խօսքին մէջ յստակօրէն շեշտեց այն միտքը, որ պարտ ենք գործնականացնել Վեհափառի հրահանգը ի գին ամէն զոհողութեան. «ՀՀԵԵԿ-ի նպատակն ու ծրագիրը մտայղացումն է Հայոց Հայրապետի, որը կը միտի առաւել ամրացնել հայ երիտասարդութեան մէջ Աստծոյ սէրը, նուիրումը՝ Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ հանդէպ: Հետեւաբար, պարտ ենք նուիրական այս ծրագիրը դարձնել մեր կեանքի նպատակն ու առաքելութիւնը»:

Յունիս 23-ին Հայ տան մէջ շարունակուեցաւ ՀՀԵԵԿ-ի Եւրոպայի ներկայացուցչական ժողովի երկրորդ նիստը, որուն նախագահեց ՀՀԵԵԿ տեսուչ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Դամասկոսի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանը, Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն վարդապետ Շահենեանը, Հունգարիոյ, Չեխիոյ եւ

Սլովակիոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Բարսեղ վարդապետ Փիլաւչեանը եւ Մայր Աթոռի միաբան Հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղայ Բաբայեանը:

Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը երիտասարդներու ուղղուած իր խօսքին մէջ մասնաւորապէս շեշտեց, որ «ՀՀԵԵԿ-ն անյետաձգելի հրամայական մըն է մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ: Պարտ ենք ի գին ամէն զոհողութեան յաջողեցնել Վեհափառ Հայրապետի տեսիլքն ու հրահանգը: Հայոց Հայրապետի օրհնութիւնը վայելող նուիրական այս առաքելութիւնը անտարակոյս նոր եռանդ ու յոյս պիտի ներշնչէ հաւատաւոր մեր ժողովուրդին ի սփիւռս աշխարհի: Պարտականութիւն ունինք առաջնորդուելու Քրիստոսի Աւետարանի պատգամներով, մեր հայրերու հաւատամքով, պատրաստելու համար նոր առաջնորդներ եւ ղեկավարներ Եկեղեցւոյ հոգեւոր թէ վարչական կեանքէն ներս»:

Յընթացս ժողովի քննարկուեցան ՀՀԵԵԿ Եւրոպայի ներկայացուցչական մարմիններու կազմակերպչական հարցերը եւ Հոգեշնորհ Տ. Առէն վարդապետ Շահենեանը ընտրուեցաւ պատասխանատու Եւրոպայի ներկայացուցչական ժողովին, որ յաջորդիւ պիտի տնօրինէ ՀՀԵԵԿ Եւրոպայի ներկայացուցչական ժողովներու կազմակերպումը Ֆրանսայի, Գերմանիոյ թեմերէն, եւ Հոլանտայի, Չեխիոյ եւ Զուեցարիոյ համայնքներէն ներս:

Յունիս 24-ին առաւօտեան ժամը 11-ին, Միլանոյի Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ յընթացս Պատարագի սրբազան արարողութեան տեղի ունեցաւ տիար Երուանդ Երէցեանի դպրութեան եւ կիսասարկաւագութեան ձեռնադրութիւնը՝ ձեռամբ օրուայ պատարագիչ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նաեւ ՀՀԵԵԿ Եւրոպայի ներկայացուցչական մարմնի երիտասարդներու ուխտադրութեան արարողութիւնը: Երիտասարդներն ուխտեցին մնալ հաւատարիմ զաւակները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ նուիրումով ծառայել այն առաքելութեան, որուն կոչուած են:

ՀՀԵԵԿ-ի Եւրոպայի ներկայացուցչական անդրանիկ ժողովը պշտօնապէս փակուեցաւ Սուրբ Պատարագով: Յընթացս Պատարագի համայնքի հոգեւոր հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Առէն վարդապետ Շահենեանը մանրամասնօրէն անդրադարձաւ ՀՀԵԵԿ-ի աշխատանքներուն եւ յանուն Ազգային Եկեղեցական Հոգաբարձութեան յաջողութեան մաղթանքներ յղեց ժողովականներուն:

*ԴԻՒԱՆ ՀՀԵԵԿ-Ի*
*ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ*

*Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս*

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՈՒՈԹԸՐԹԱՈՒՆԻ (ՄԱՍՍԱՉՈՒՍԷՑ) Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Շաբաթ Յունիս 16 եւ Կիրակի Յունիս 17 օրերը նշանակալից օրեր էին Ուոթըրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ ծուխի անդամներուն համար: Ծուխին մէջ հազուադէպ երեւոյթ մը եղաւ քահանայական ձեռնադրութիւնը՝ ձեռամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի: Ս. Ներսէս Ընծայարանի շրջանաւարտ Բրշ. Ճէյսըն սրկ. Տէմիրճեան ամուսնացեալ քահանայ ձեռնադրուեցաւ:

Կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ Յունիս 16, երեկոյեան ժամը 6.30-ին: Իսկ ձեռնադրութիւնը՝ Կիրակի Յունիս 17 յընթացս Ս. Պատարագի:

Նախքան ձեռնադրութիւնը՝ առաջնորդ Սրբազան Հայրը արտայայտուելով Ճէյսըն սարկաւագի մասին ըսաւ. «Երբ Ճէյսընի նման երիտասարդ անձեր, հետեւելով իրենց կոչումին, քահանայ կը ձեռնադրուին՝ ատիկա նշան է որ մեր ծխական կեանքը կը վերանորոգուի: Մենք վստահ ենք որ Ճէյսընը եւ իր տիկինը՝ Աննան բարի օրինակ պիտի հանդիսանան մեր երիտասարդներուն, եւ անոնք միասնաբար յառաջ պիտի տանին իրենց վստահուած առաքելութիւնը»:

Իսկ Ճէյսըն սարկաւագ ըսաւ. «Մեզմէ ամէն մէկը ծառայութեան մը կոչուած է. ես ծրագրած եմ ծառայել Աստուծոյ եւ Հայ Եկեղեցւոյ զաւակներուն: Զանազան միջոցներ կան մեր Եկեղեցիին օգտակար հանդիսանալու: Ես կը հաւատամ որ այն դերը, զոր Աստուած վստահած է ինծի, որպէս ձեռնադրեալ քահանայ ծառայելն է»:

Քահանայական ձեռնադրութեան խարտաւիլականն էր Ս. Ներսէս Ընծայարանի տեսուչ Հոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆընտըքեան: Իսկ կնքահայրը՝ փրոֆ. Թոմ Սամուէլեան: Երգեցողութիւնը կատարեց Ս. Յակոբ եկեղեցւոյ դպրաց դասը:

Ձեռնադրութեան ժամանակ՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան նորընծան վերանուանեց Տէր Յովնան քահանայ, եւ իր յորդորական խօսքերուն մէջ ըսաւ. «... Ճէյսըն սրկ. Տէմիրճեանը անսաց Տիրոջ կոչին եւ իր սրտին մէջ ընդունեցաւ Ս. Հոգին: Այսօր "Հայրերու Օր" է, եւ այսօր Ս. Հոգին իջաւ Ճէյսըն սրկ. Տէմիրճեանի վրայ եւ ան դարձաւ նոր անձ մը. հայր մը՝ Յիսուս Քրիստոսի հօտին: Ձեռնադրութեան Խորհուրդը կ՚արտացոլայ Յիսուսի հետեւեալ խօսքերուն մէջ. "*Տիրոջ Հոգին իմ վրաս է, զիս ատոր համար խիկ օծեց" (Մարկ. Դ. 18)*»:

Ինչպէս որ ընտանիքի մը համար Ս. Պսակն ու Մկրտութիւնը կարեւոր են, այնպէս ալ ձեռնադրութիւնը կարեւոր է համայնքի մը կեանքին մէջ: Այսօր ձեզի կը ներկայացուի Յիսուսի հօտին նոր հովիւը, եւ Եկեղեցւոյ ընտանիքին նոր հայրը: ... Նորընծայ Տէր Յովնան քահանան իր ուսերուն վրայ կ՚առնէ պատասխանատուութեան նոր տեսակի լուծ մը, եւ մենք վստահ ենք որ ան անվարան կերպով պիտի հետեւի մեր Տիրոջ հետեւեալ պատգամին "*Իմ լուծս ձեր վրայ առէք եւ սորվեցէք ինձմէ, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերուն հանգիստ պիտի գտնէք, որովհետեւ իմ լուծս*

*քաղցր է եւ իմ բեռս՝ թեթեւ" (Մատթ. ԺԱ. 29-30)*: Կ՚աղօթենք որ Տէրը ներշնչէ, առաջնորդէ եւ պահպանէ նորընծան, եւ օրհնէ երէցկին Աննան, որ զօրավիգ պիտի կանգնի Տէր Հօր: Տէրը թող օրհնէ Տէր Յովնանի ծնողները՝ տոքթ. Քէնէթ եւ Քարըն Տէրմիրճեանները եւ ձեզ բոլորդ. ամէն»:

Ներկայ հոծ թիւով հաւատացեալները վայելեցին հոգիները լիացնող այս արարողութիւնը եւ յաւարտ Ս. Պատարագին՝ անձնապէս մօտենալով նորընծայ Տէր Յովնան քահանային համբուրեցին անոր միւռոնաօծ ձեռքերը:

## ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻՒ ՆՈՐԸՆԾԱՅ ՏԷՐ ՀՕՐ

Յաւարտ ձեռնադրութեան արարողութեան եւ Ս. Պատարագին՝ Ս. Յակոբ եկեղեցւոյ կից սրահին մէջ կազմակերպուած էր ճաշկերոյթ՝ ի պատիւ նորընծայ Տէր Յովնան քհնյ. Տէմիրճեանի: Հանդիսութեան բացման աղօթքը արտասանեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Առաքել քհնյ. Ալճալեան: Օրուան հանդիսավարն էր Ուայթ Փլէյնզի (Նիւ Եորք) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գարեգին ա. քհնյ. Գասպարեան: Շնորհաւորանքի խօսք ըսաւ նորընծայ Տէր Յովնանի հայրը՝ տոքթ. Քէնէթ Տէմիրճեան: Սրտի խօսքեր ըսին ձեռնադրութեան կնքահայր փրոֆ. Թոմ Սամուէլեան եւ խարտաւիլակ Հոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆընտըզեան: Ներկայացուեցաւ «Իմ ուղիս դէպի քահանայութիւն» խորագիրով ժապաւէն մը: Տ. Յովնան քհնյ. Տէմիրճեանի շնորհակալութեան արտայայտութիւններէն ետք՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր փակման խօսքին մէջ ըսաւ. «Հոգեպարար օր մըն էր այսօր բոլորիս համար: Այս պահուն մեր մտքին առջեւ կը պատկերանայ հայ ժողովուրդին եւ անոր հոգեւորականներուն վիճակուած դժուարին ճակատագիրը. 92 տարիներ առաջ հայ ազգի բիւրաւոր զաւակներնու հետ բազմաթիւ բարձրաստիճան եկեղեցականներ եւ քահանաներ աքսորուեցան եւ զոհ դարձան ցեղասպանութեան. յաջորդող տարիներուն աւելի պայծառ չեղաւ հոգեւորականներուն կացութիւնը՝ սովետական գերիշխանութեան ներքեւ. դարձեալ հալածուեցան ու աքսորուեցան: Սակայն այսօր, գլխաւորաբար Մայր Հայրենիքի եւ նաեւ արտասահմանի մէջ նոր եկեղեցականներ կը ձեռնադրուին եւ Աստուծոյ ծառայութեան կը նուիրուին: Այս սքանչելի երեւոյթը ես միայն հրաշք կը նկատեմ»:

Ապա, առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց նորընծայ Տէր Յովնան քահանան, անոր ծնողները, տոքթ. Քէնէթ եւ Քարըն Տէմիրճեանները, երէցկին Աննան եւ շնորհակալութիւն յայտնեց Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Առաքել քհնյ. Ալճալեանին, Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներուն եւ յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերողներուն:

Փակման աղօթքով եւ միաձայնաբար երգուած «Հայր մեր»ով վերջ գտաւ ճաշկերոյթը:

## Տ. ՅՈՎՆԱՆ ՔՀՆՅ. ՏԷՄԻՐՃԵԱՆ

Գործօն դեր ստանձնած է Կիրակնօրեայ Վարժարանի եւ Երիտասարդաց Կազմակերպութեան մէջ: Պսակաւոր Արուեստից աստիճանը ստացած է Պոսթոն Գոլէճէն, եւ Աստուածաբանական Ուսմանց Մագիստրոսի աստիճանը՝ Հարվըրտի Աստուածաբանական Վարժարանէն: 1996-1998 տարիներուն ան Հայաստան ապրած է եւ կամաւորաբար ծառայած ԱՄՆ-ի «Peace Corps»ին: 2000-2003 տարիներուն վերադարձած է Հայաստան եւ կազմակերպած Հայկական Կամաւորներու Մարմինը, որուն պարտականութիւնը եղած է արտասահմանէն հայերու մասնակցութիւնը ապահովել Հայաստանի մէջ կազմակերպչական եւ կառուցողական աշխատանքներ կատարելու համար: Հայաստանի մէջ չափահասներուն դասաւանդած է Հայց. Եկեղեցւոյ հաւատքի հիմունքները: 2003-2006 տարիներուն ան եղած է համակարգողը Առաջնորդարանի Գոլէճական Ուսանողներու Յայտագիրին, նոյն ատեն հետեւած է Ս. Ներսէս Ընծայարանի դասընթացներուն: Նորընծայ Տէր Յովնան քհնյ. Տէմիրճեան, կարգ մը եկեղեցականներու հսկողութեամբ, քառասունքի շրջանը անցընելէ ետք Ս. Ներսէս Ընծայարանին մէջ՝ հոգեւոր հովիւ պիտի նշանակուի Սէյնթ Փիթըրզպուրկի (Ֆլորիտա) Ս. Յակոբ եկեղեցւոյ:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Հունիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հազարամյակի մարտահրավերներ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչի գլխավորած պատվիրակությանը:

«*Մենք ուրախ ենք, որ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում նման օգնություն է ցուցաբերվում Հայաստանի տնտեսությանը: Իրապես, մեծ է այն օգնությունը, որ այսօր մատուցվում է մեր ժողովրդին*»,- նշեց Նորին Սրբությունը՝ ողջունելով դեսպան Ջոն Դանիլովիչի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնելով «Հազարամյակի մարտահրավերներ» ընկերության գործունեության համար:

Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց նաև Հայաստանյայց Եկեղեցու առաքելությունը, համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հիմնադրման պատմությունը, անդրադարձավ Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին և դժվարություններին, այժմյան գործունեությանը:

«Հազարամյակի մարտահրավերներ» կազմակերպության գլխավոր գործադիր տնօրենը իր հերթին, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայաստան այցի մանրամասները և ուրախություն հայտնեց այս ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար: «Վստահ ենք, որ այս ծրագիրը մեծ օգտակարություն կունենա Հայաստանի բնակչության համար»,- ասաց պրն Դանիլովիչը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՈՂ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հունիսի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Հայքե Փայչին:

«*Ուրախ ենք, որ առիթն ունեցանք Ձեզ ճանաչելու և այժմ, երբ հրաժեշտի պահն է մոտեցել, մեր սրտի ամենաջերմ գնահատանքը և շնորհակալությունն ենք Ձեզ փոխանցում Հայաստանում Ձեր գործունեության համար, որ օգտակար եղավ մեր Հայրենիքին և ժողովրդին*»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքներն ուղղեց դեսպանին՝ հաջողություններ ցանկանալով հետագա ծառայության մեջ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Հունիսի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի SIMA (Քրիստոնեական երիտասարդական առաքելություն Հայաստան) կամավորական խմբի շուրջ 30 երիտասարդների՝ Մատթեոս սարկավագ Աշի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց երիտասարդներին և իր ուրախությունը հայտնեց՝ նրանց Մայր Հայրենիքում տեսնելու համար: Վեհափառ Հայրապետը սփյուռքահայ երիտասարդներին հորդորեց լավագույնս օգտվել Հայրենիքում գտնվելու ընձեռված հնարավորությունից՝ սեփական արմատներին առավել հարազատորեն կապվելու համար: «*Հայաստանը Ձեզ կարող է ավելին սովորեցնել մեր Հայրենիքի մասին, քան ցանկացած որևէ դասագիրք: Այստեղ և՛ պատմությունն է մեր ժողովրդի, և՛ ներկա կյանքն է, և՛ ապագա հույսն է վաղվա օրվա*»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում և ընդգծեց, որ միայն Հայրենիքը կարող է հաղորդել այն ոգին, որ անհրաժեշտ է ազգային դիմագծի ու հավատի պահպանման համար:

Երիտասարդական այս կառույցը կազմվել է ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի ջանքերով և նախապես նպատակ ուներ Հայրենիքում կամավոր սկզբունքով օժանդակել շինարարական-վերանորոգչական աշխատանքների: Ներկայումս SIMA-ն ընդլայնել է իր գործունեության շրջանակները, և խմբի կամավորներն իրենց մասնագիտական գիտելիքներն ի սպաս են դնում տարբեր ոլորտներում:

Խմբի անդամները շուրջ երկու ամիս կմնան Հայաստանում և իրենց մասնագիտական հմտություններով կնպաստեն հիմնականում գրասենյակային տարբեր բնույթի աշխատանքների:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հունիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի ուխտավորներին՝ Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սարգիս քահանա Պետոյանի գլխավորությամբ: Տ. Սարգիս քահանա Պետոյանի նախաձեռնությամբ նման ուխտագնացությունը, լինելով թվով 9-րդը, ամենամյա բնույթ է կրում:

Նորին Սրբությունը ողջունեց ուխտավորներին և իր ուրախությունը հայտնեց՝ նրանց տեսնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Տ. Սարգիս քահանային՝ Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու համայնքի կայացման գործում ունեցած անգնահատելի ծառայությունների և նման ուխտագնացությունների կազմակերպման հոգեշեն նախաձեռնությունների համար: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այդ գնահատանքը վերաբերում է նաև այս համայնքին, քանի որ քահանայի երջանկությունը լիարժեք է ժողովրդով, իսկ նման ժողովուրդ ունենալն էլ պայմանավորված է քահանայի աշխատանքով:

Ուխտավորները երկու շաբաթ կմնան Հայաստանում՝ ուխտի մեկնելով տարբեր սրբավայրեր:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզջիգիտովին:

Շնորհավորելով տիար Բոզջիգիտովին նշանակման առիթով՝ Նորին Սրբությունը դեսպանին մաղթեց արդյունավետ գործունեություն իր առաքելության մեջ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատեց երկու երկրների հարաբերություններում առկա առաջընթացը և վստահեցրեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակելու է նպաստել երկու ժողովուրդների և երկրների միջև առկա ջերմ կապերի և համագործակցության սերտացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Ղազախստանում պարբերաբար գումարվող համաշխարհային և ավանդական կրոնների հոգևոր առաջնորդնե-

րի գագաթաժողովների կարևոր դերակատարությանը՝ ի դեմս դեսպանի իր գնահատանքը հայտնելով Ղազախստանի իշխանություններին այն վերաբերմունքի և հարգանքի համար, որ ցուցաբերվում է Ղազախստանում կրոնների նկատմամբ, և հասարակության մեջ դրանց առաքելության կարևորման համար:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Ղազախստանի հայ համայնքին, մեր երկու երկրների միջև առկա տնտեսական գործակցությանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» համահայկական երիտասարդական միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին:

Տիար Վլադիմիր Աղայանը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խորհրդաժողովի աշխատանքները և քննարկված հիմնախնդիրները:

Ապա երիտասարդներին Հայրապետական օրհնության և գնահատանքի իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով խորհրդաժողովի մասնակիցների այցն ամենայն հայոց հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը կարևոր նկատեց երիտասարդության ներգրավվածությունը հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների լուծման գործում:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատեց, որ Հովվապետական այցերի ժամանակ աշխարհի տարբեր երկրներում տեսել է նախանձախնդիր հայ երիտասարդություն՝ հետամուտ ազգային խնդիրների լուծմանը: «*Ազգային ոգու վերարթնությունը երաշխիքն է ազգային ինքնության պահպանության*»,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ առկա հիմնախնդիրների հաղթահարման ճանապարհի նկատելով հոգևոր միասնականությունը, ազգի միաբանությունը և համընդհանուր ջանքերի մեկտեղումը:

Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին իրենց գիտելիքներն ու կարողություններն ի սպաս դնել հայ ժողովրդի և մեր Հայրենիքի բարգավաճմանը՝ մշտապես հայացքներն ուղղյալ պահելով դեպի Հայրենիք, Արարատ և Սուրբ Էջմիածին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հուլիսի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի հայոց թեմի Պյատիգորսկ քաղաքի Ս. Սարգիս եկեղեցու «Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց» կիրակնօրյա դպրոցի՝ Հայաստան ուխտի եկած ուսուցիչներին ու սաներին՝ գլխավորությամբ Պյատիգորսկի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ Արամ ավագ քահանա Հունանյանի:

Ողջունելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը կարևոր համարեց ուխտագնացության միջոցով Հայրենիքի հետ կապի ամրապնդումը, որը խիստ տարբեր է սովորական այցելությունից. «*Ուխտի գալ Հայրենիք՝ նշանակում է նվիրական զգացումներով գալ և այդ նվիրական զգացումներն այստեղ սնել հայրենի պատմությամբ ու ներկայով*»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ ուխտավորներն առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում կշարունակեն ուխտագնացությունները դեպի հայրենի երկրի տարբեր սրբավայրեր:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հուլիսի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության ASP-ի (Հայ կրթական ծրագիր) մասնակիցներին՝ գլխավորությամբ Քլիվլենդի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր պատասխանատու Բարեշնորհ Արտակ սարկավագ Խաչիկյանի: ASP-ի շուրջ 30 մասնակիցները Հայաստանում էին հուլիսի 7-ից և այդ ընթացքում իրենց նպաստն են բերել Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբարում անցկացվող անգլերեն լեզվի և այլ առարկաների դասընթացներին, ինչպես նաև ուխտի մեկնել Հայաստանի տարբեր սրբավայրեր:

Նորին Սրբությունը ողջունեց ուխտավորներին և իր ուրախությունը հայտնեց՝ նրանց տեսնելու Հայրենիքում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ընդգծեց Հայ Եկեղեցու առանցքային տեղն ու դերը Հայրենիք հասկացության մեջ. «*Հայ Առաքելական Եկեղեցին ոգին է Հայրենիքի: Հայրենիք հասկացությունը միայն հող, տարածք չէ, այլ նաև այն հոգևոր արժեքները, որ մեր հայրերը կերտել են այս հողի վրա: Մեր Եկեղեցու զավակների հոգու և մտքի արգասիք այդ արժեքները ստեղծվել են շնորհիվ Հայ Եկեղեցու կրթադաստիարակչական աշխատանքի ու գործունեության*»:

Ավարտելով իրենց առաքելությունը և ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ ուխտավորները վերադարձան ԱՄՆ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ
# ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏՐԴԱՏ ԱԲԵՂԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Հունիսի 25-ին, երկարատև ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը:

Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը (ավազանի անունը՝ Հովհաննես) ծնվել է 1973 թ. դեկտեմբերի 23-ին Էջմիածին քաղաքում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի հմր 9 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Գրիգոր Լուսավորիչը հայ մատենագրության մեջ» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Ձեռնադրությունից հետո Հոգեշնորհ Հայր Սուրբը ծառայել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, որպես վերակացու: Այնուհետև նշանակվել է Բուլղարիայի հայոց թեմում՝ Պլովդիվում որպես հոգևոր հովիվ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանությունը խորապես սգում են երիտասարդ հավատավոր ու նվիրյալ միաբանի վաղաժամ մահը:

Հոգելույս Հայր Սուրբի մարմինը հունիսի 26-ին դրվեց Ս. Գայանե վանքում` հրաժեշտի համար: Հունիսի 27-ին, ժամը 10.00-ին, հընթացս Ս. Պատարագի կատարվեցին հանգուցյալ Հայր Սուրբի վերջին օծման և հուղարկավորության արարողությունները: Հայր Սուրբի մարմինը ամփոփվեց Ս. Գայանեի միաբանական գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունիսի 3-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան Կիւրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի» (Մատթ. ԺԱ 30) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 48):

**Հունիսի 9-ին, շաբաթ. – Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հունիսի 10-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

**Հունիսի 17-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եթե իմանայիք, թե ի՛նչ է՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ, ապա դուք անպարտներին չէիք դատապարտի» (Մատթ. ԺԲ 7) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 50):

**Հունիսի 23-ին, շաբաթ. - Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հունիսի 24-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ քահանա-

յական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հուլիսի 1-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հուլիսի 8-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Հոգեգալստեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց. եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշակերտքն ժողովրդոցն» (Մատթ. ԺԴ 19) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 53):

**Հուլիսի 15-ին, կիրակի. – ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հուլիսի 22-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե աբեղա Անանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հուլիսի 29-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

# “ЭЧМИАДЗИН” ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

**(Июнь-Июль 2007 г.)**


1. Возвращены на родину останки Алека и Мари Манукянов, 13 июля 2007 г. (с. 3-9).
2. Президент Республики Греции Каролос Папулиас в Первопрестольном Святом Эчмиадзине, 28 июня 2007 г. (с. 10-11).
3. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял председателя ПАСЕ г-на Рене ван дер Линдена, 4 июля 2007 г. (с. 12).
4. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на первом заседании Национального Собрания 4-го созыва РА, 7 июня 2007 г. (с. 13-14).
5. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, новоизбранному президенту НКР г-ну Бако Саакяну, 20 июля 2007 г. (с. 15).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Джеймсу Галустяну по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 10 июня 2007 г., № 414 (с. 16-17).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Карлосу Петросяну по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 24 июля 2007 г., № 417 (с. 18-19).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Радику Мартиросяну по случаю его награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 8 июня 2007 г., № 406 (с. 22-23).
9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Владимиру Бархударяну по случаю его награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 8 июня 2007 г., № 407 (с. 22-23).
10. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Перчу Зейтунцяну по случаю его награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 15 июня 2007 г., № 410 (с. 26-27).
11. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Рубену Матевосяну по случаю его награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 15 июня 2007 г., № 408 (с. 26-27).
12. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-же Светлане Григорян по случаю её награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 15 июня 2007 г., № 408 (с. 28-29).

13. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Хорену Мейханеджяну по случаю его награждения орденом “Нерсес Шнорали”, 1 июня 2007 г., № 387 (с. 30-31).
14. Патриаршие награды (пожалование в течение июня-июля 2007 г. энциклик, орденов “Святой Нерсес Шнорали” и благословений ряду духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 32).
15. Патриаршее распоряжение
    Объявлен расстриженным иеромонах Аветис Саакян (с. 33).
    Объявлен расстриженным иерей Рубен Егиазарян (с. 33).
16. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Конституции РА, 5 июля 2007 г. (с. 34).
17. Послание соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю кончины Саркиса Мурадяна, 13 июня 2007 г. (с. 35).

## ВРУЧЕНИЕ ПАТРИАРШИХ НАГРАД

18. Заново открылась монастырская гостиница Первопрестольного Святого Эчмиадзина, 30 июня 2007 г. (с. 36).
19. Вручение орденов “Святой Саак - Святой Месроп” г-ну Радику Мартиросяну и г-ну Владимиру Бархударяну, 8 июня 2007 г. (с. 37-38).
20. Вручение орденов “Святой Саак - Святой Месроп” трем именитым деятелям культуры (Светлане Григорян, Перчу Зейтунцяну и Рубену Матевосяну), 15 июня 2007 г. (с. 40-41).
21. Патриаршая оценка руководителю Котайкского региона г-ну Коваленко Шахгелдяну, 15 июня 2007 г. (с. 42).
22. Послание благословения г-ну Рубену Шарбатяну, 22 июля 2007 г. (с. 43).
23. Избран предводитель армянской епархии Франции, Париж, 22 июня 2007 г. (с. 44-45).
24. Его Преосвященство епископ Норван Закарян (с. 46-47).

## ПРОПОВЕДИ

25. Проповедь Его Преосвященства епископа Маркоса Оганесяна в Кафедральном Соборе Первопрестольного Святого Эчмиадзина на церемонии рукоположения дьяконов, 3 июня 2007 г. (с. 48-49).
26. Проповедь иеромонаха Исаака Погосяна в Кафедральном Соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 17 июня 2007 г. (с. 50-52).
27. Проповедь иеромонаха Тачата Цатуряна в Кафедральном Соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 8 июля 2007 г. (с. 53-55).

## РЕЛИГИОЗНЫЕ И ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

28. **АКОП КЕОСЕЯН** – Богословское наследие Ованнеса Козерна Таронаци (исследование)-(с. 56-59).

29. Слово армянского архимандрита Ованнеса, прозванного Козерном, произнесенное на праздник Вардавар (текст)-(с. 60-70).
30. **ДЬЯКОН ОВАННЕС МАНУКЯН** – Подходы методики пропаганды для священников армии (исследование)-(с. 71-84).
31. **ТАМАРА ЕГОРЯН** – Православная Церковь и полемика единоволия (историковедческое исследование)-(с. 85-90).
32. **АШХЕН ГРИГОРЯН** – Сборник Евагра Понтаци "Шеститысячник"-(с. 91-99).
33. **АРЦРУН АВАКЯН** – Свет сверхмощных сил (вводное слово к рассказу Костана Заряна "Священник села Баконц")-(с. 100-101).
34. **КОСТАН ЗАРЯН** - Священник села Баконц (рассказ)-(102-115).
35. **СЕРГЕЙ АГАДЖАНЯН** – Гражданская поэзия Г. Магари (литератураведческое исследование)-(с. 116-127).

## ИСКУССТВОВЕДЧЕСКОЕ

36. **МАРИНЕ МИНАСЯН** – Особенности произведений Овсепа Караляна (искусствоведческое исследование)-(с. 128-130).

## ЮБИЛЕЙ

37. С оценкой весомых заслуг (Празднование 70-летнего юбилея Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позапаляна в Первопрестольном Святом Эчмиадзине. Представлены также биография архиепископа Нерсеса и его литературная деятельность).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

38. Рукоположение в священники в Первопрестольном Святом Эчмиадзине, 24 июня 2007 г. (помещены также биографии иеромонаха Партева Барсегяна, иеромонаха Гарника Мхитаряна, священника Мартироса Акопяна, священника Тадеоса Тер-Мкртчяна, священника Грача Саркисяна и священника Мушега Хачатряна)-(с. 135-138).
39. Рукоположение в дьяконы в Первопрестольном Святом Эчмиадзине, 3 июня 2007 г. (с. 139-141).
40. Состоялось торжественное мероприятие, посвященное завершению учебного года в Геворкянской Духовной Семинарии, 14 июня 2007 г. (с. 142-143).
41. Собрание комиссии "Церковь и общество" Конференции Церквей Европы в Первопрестольном Святом Эчмиадзине, 15 июня 2007 г. (с. 144-146).
42. Встреча членов комиссии "Церковь и общество" Конференции Церквей Европы с Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 15 июня 2007 г. (с. 147).
43. Посещение членов комиссии "Церковь и общество" мемориала Цицернакаберд, 17 июня 2007 г. (с. 148).

44. Визит бывшего генерального секретаря ВСЦ Конрада Райзера в Армению, 30 мая 2007 г. (с. 149).
45. Презентация книги “Экология и богословие”, 4 июня 2007 г. (с. 150).
46. “Образование-предусловие развития” – молодежная образовательная конференция в Цахкадзоре, 8-10 июня 2007 г. (с. 151-152).
47. Встреча представителей национальных меньшинств Армении с Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 15 июня 2007 г. (с. 154-155).
48. Встреча членов епархиального совета Армянской Восточной епархии США и попечительского совета АФП с Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 26 июня 2007 г. (с. 154-155).
49. Заново освящена церковь Св. Ованнеса в селе Ариндж Котайкского региона, 7 июля 2007 г. (с. 156).
50. Освящена часовня Св. Трдата в Горисе, 17 июня 2007 г. (с. 157).
51. Освящена церковь Св. Геворка в квартале Цамакаберд г. Севана, 23 июня 2007 г. (с. 157).

### В Гугаркской епархии

52. Торжественная поминальная церемония, посвященная памяти Гранта Динка, 19 июня 2007 г. (с. 158).
53. В лагере “Цицернак” Гугаркской епархии, 23 июня 2007 г. (с. 159-160).
54. Очередное благотворительное посещение АФП г. Ванадзора, 27 июня 2007 г. (с. 160).
55. Освящена церковь Св. Геворка в селе Сараландж, 26 июля 2007 г. (с. 161).

56. **СИМА ГРИГОРЯНЦ** – Праздник Вардавар в Волгограде, 15 июля 2007 г. (с. 162).
57. Первое представительское собрание Всеармянской Молодежной Организации Армянской Церкви Европы в Милане, 22-24 июня 2007 г. (с 163-164).

### В Восточной епархии США

58. Рукоположение в священники в церкви Св. Акопа в Уотертауне, 16-17 июня 2007 г. (помещена также биография рукоположенного иерея Овнана Темирчяна)-(с. 165-167).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

59. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян делегации, возглавляемой главным исполнительным директором программы “Вызовы тысячелетия” Джоном Даниловичем, 12 июня 2007 г. (с. 168).
60. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян посла Германии Айке Пайче, завершающую свою службу в Армении, 14 июня 2007 г. (с. 169).

61. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян добровольцев Западной Армянской епархии США, 22 июня 2007 г. (с. 169-170).
62. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян паломников Западной Армянской епархии США, 29 июня 2007 г. (с. 170).
63. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян новоназначенного посла Казахстана в Армении г-на Айимдоса Бозджигитова, 10 июля 2007 г. (с. 170-171).
64. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян участников всеармянского молодежного международного съезда, 11 июля 2007 г. (с. 171).
65. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян паломников Армянской епархии Юга России, 27 июля 2007 г. (с. 171-172).
66. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян паломников Восточной Армянской епархии США, 27 июля 2007 г. (с. 172).

67. Кончина преподобного иеромонаха Трдата Мартиросяна, 25 июня 2007 г. (с. 173-174).

68. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение июня- июля 2007 г. (с.175-176).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN
## (June - July 2007)

1. The corpses of Alex and Marie Manougian were repatriated, 13 July, 2007 (p. 3-9).
2. Mr. Karolos Papoulias, President of the Republic of Greece in the Mother See of Holy Etchmiadzin, June 28, 2007 (p. 10-11).
3. Audience granted by His Holiness Karekin II to Mr. René van der Linden, President of the Parliamentary Assembly of the Council of Europe, July 4, 2007 (p. 12).
4. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians at the first session of the 4th convening National Assembly of the Republic of Armenia, June 7, 2007 (p. 13-14).
5. Letter of Congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians to Mr. Bako Sahakyan, the newly elected president of the Republic of Nagorno Karabakh, July 20, 2007 (p. 15).

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. James Galoustian, on the occasion of his decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", June 10, 2007, no. 414 (p. 16-17).
7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Karlos Petrossian, on the occasion of his decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", July 24, 2007, no. 417 (p. 18-19).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Radik Martirossian, on the occasion of his decoration with the Medal of "St. Sahak – St. Mesrop", June 8, 2007, no. 406 (p. 20-21).
9. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Vladimir Barkhoudarian, on the occasion of his decoration with the Medal of "St. Sahak – St. Mesrop", June 8, 2007, no. 407 (p. 22-23).
10. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Perj Zeitountsian, on the occasion of his decoration with the Medal of "St. Sahak – St. Mesrop", June 15, 2007, no. 409 (p. 24-25).
11. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Rouben Mathevossian, on the occasion of his decoration with the Medal of "St. Sahak – St. Mesrop", June 15, 2007, no. 410 (p. 26-27).

12. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Svetlana Grigorian, on the occasion of her decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, June 15, 2007, no. 408 (p. 28-29).
13. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Khoren Meikhanejian, on the occasion of his decoration with the Medal of “St. Nerses the Graceful”, June 1, 2007, no. 387 (p. 30-31).
14. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during June and July 2007 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 32).
15. Rev. Fr. Avetis Sahakian and Fr. Rouben Yeghiazarian were defrocked by the order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (p. 33).
16. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of the Day of Constitution of the Republic of Armenia, July 5, 2007 (p. 34).
17. Letter of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the decease of Mr. Sarkis Mouradian, July 13, 2007 (p. 35).

## PONTIFICAL AWARDS

18. The Guest House of the Mother See of Holy Etchmiadzin was reopened, June 30, 2007 (p. 36).
19. Mr. Radik Martirossian and Mr. Vladimir Barkhoudarian were rewarded with Medals of “St. Sahak – St. Mesrop”, June 8, 2007 (p. 37-39).
20. Mrs. Svetlana Grigorian, Mr. Perj Zeitountsian and Mr. Rouben Mathevossian, three outstanding cultural workers were rewarded with Medals of “St. Sahak – St. Mesrop”, June 15, 2007 (p. 40-41).
21. Pontifical awards to Mr. Kovalenko Shahgaldian, governor of Kotayk region, June 15, 2007 (p. 42).
22. Letter of Blessing to Mr. Rouben Sharbatian, July 22, 2007 (p. 43).
23. Election of the Primate of the Armenian Diocese of France, Paris, June 22, 2007 (p. 44-45).
24. Bishop Norvan Zakarian, (p. 46-47).

## SERMONS

25. Sermon delivered by His Grace Bishop Markos Hovhannissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of deacons’ ordination, June 3, 2007 (p. 48-49).

26. Sermon delivered by Rev. Fr. Isahak Poghossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, June 17, 2007 (p. 50-52).
27. Sermon delivered by Rev. Fr. Dajad Tsatourian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, July 8, 2007 (p. 53-55).

## RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDY

28. **HAKOB KEOSEYAN** – The theological legacy of Hovhannes Kozern of Taron (research) – (p. 56-59).
29. The message of Armenian Archimandrite Hovhannes also called Kozern on the feast of Transfiguration (the original) – (p. 60-70).
30. **DEACON HOVHANNES MANOUKIAN** – Methodological preaching approaches for the clergymen serving in the army (research) – (p. 71-84).
31. **TAMARA YEGORIAN** – The Orthodox Church and Polemics on Monothelite teaching (historical research) – (p. 85-90).
32. **ASHKHEN GRIGORIAN** – The theology of “Vetshazaryak” by Evagrius of Pontus, (religious research) – (p. 91-99).
33. **ARTSROUN AVAKIAN** – The light of super mighty powers (introduction by Kostan Zarian on the story entitled “The Pastor of Village Bakonts”) – (p. 100-101).
34. **KOSTAN ZARIAN** - “The Pastor of Village Bakonts” (story) – (p. 102-115).
35. **SERGEY AGHAJANIAN** – The poetry of “Border” by Gourgen Mahary (literary research) – (p. 116-127).

## ART REVIEW

36. **MARINE MINASSIAN** – Peculiarities of Hovsep Karslian’s works (art research) - (p. 128-130).

## JUBILEE REVIEW

37. Appreciating his onerous merit (celebration of the 70th birth anniversary of His Eminence Archbishop Nerses Bozabalian in the Mother See of Holy Etchmiadzin; biography and literary activity of Archbishop Nerses, July 5, 2007)-(p. 131-134).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

38. Priestly Ordination in the Cathedral of Holy Etchmiadzin, June 24, 2007. (Biographies of Rev. Fr. Parthev Barseghian, Rev. Fr. Michael Kevorkian, Rev. Fr. Garnik Mkhitarian, Fr. Martiros Hakobian, Fr. Thadeos Ter-Mkrtchian, Fr. Hrach Sargssian, and Fr. Moushegh Khachatrian) - (p. 135-138).

39. Deacons' ordination in the Mother See of Holy Etchmiadzin, June 3, 2007 (p. 139-141).
40. Graduation ceremony of the Gevorkian Theological Seminary, June 14, 2007 (p. 142-143).
41. The meeting of "Church and Society" Commission of the Conference of European Churches in the Mother See of Holy Etchmiadzin, June 15-19, 2007 (p. 144-146).
42. Audience granted by His Holiness Karekin II to the members of "Church and Society" Commission of the Conference of European Churches, June 15, 2007 (p. 147).
43. The visit of members of "Church and Society" Commission of the Conference of European Churches to Tsitsernakaberd, June 17, 2007 (p. 148).
44. The visit of Dr. Konrad Raiser, former General Secretary of the World Council of Churches, to Armenia, May 30, 2007 (p. 149).
45. Presentation of the book entitled "Ecology and Theology", June 4, 2007 (p. 150).
46. "Education – Prerequisite for Development" youth conference in Tsaghkadzor, June 8-10, 2007 (p. 151-152).
47. Audience granted by His Holiness Karekin II to the ethnic minority representatives, June 15, 2007 (p. 153).
48. Audience granted by His Holiness Karekin II to the members of Diocesan Council of the Eastern Diocese of the Armenian Church of North America and Board of Trustees of the Fund for Armenian Relief (FAR), June 26, 2007 (p. 154-155).
49. Re-Consecration of St. Hovhannes Church in the village of Arinj of Kotayk region, July 7, 2007 (p. 156).
50. Consecration of St. Trdat Chapel in Goris, June 17, 2007 (p. 157).
51. Consecration of St. Gevorg Church in Tsamakaberd district of Sevan, June 23, 2007 (p. 157).

## In the Diocese of Gougark

52. Commemoration solemnity dedicated to the memory of Hrant Dink, June 19, 2007 (p. 158).
53. In "Tsitsernak" ("Swallow") camp of the Diocese of Gougark, June 23, 2007 (p. 159-160).
54. Regular charitable visit of the Fund for Armenian Relief (FAR) to Vanadzor, June 27, 2007 (p. 160).
55. Consecration of St. Gevorg Church in the village of Saralanj, July 26, 2007 (p. 161).

56. **SIMA GRIGORIANTS** – The feast of Transfiguration in Volgograd, July 15, 2007 (p. 162).

57. The first representative meeting of the Pan-Armenian Church Youth Organization of Europe in Milan, June 22-24, 2007 (p. 163-164).

## In the Eastern Diocese of the Armenian Church of North America

58. Priestly ordination in St. Hakob Church of Watertown (Massachusetts), June 16-17, 2007 (biography of newly ordained Fr. Hovnan Demirchian) - (p. 165-167).

## AUDIENCES AT THE MOTHER SEE

59. Audience granted by His Holiness Karekin II to the delegation headed by Mr. John Danilovich, Chief Executive Officer of the Millennium Challenge Corporation, June 12, 2007 (p. 168).
60. Audience granted by His Holiness Karekin II to H.E. Heike Peitsch, Ambassador of Germany finishing her mission in Armenia, June 14, 2007 (p. 169).
61. Audience granted by His Holiness Karekin II to the volunteers of the Western Diocese of the Armenian Church of North America, June 22, 2007 (p. 169-170).
62. Audience granted by His Holiness Karekin II to the pilgrims of the Western Diocese of the Armenian Church of North America, June 29, 2007 (p. 170).
63. Audience granted by His Holiness Karekin II to H.E. Aimdos Bozjigitov, the newly appointed ambassador of Kazakhstan to Armenia, July 10, 2007 (p. 170-171).
64. Audience granted by His Holiness Karekin II to the participants of Pan-Armenian Youth International Conference, July 11, 2007 (p. 171).
65. Audience granted by His Holiness Karekin II to the pilgrims of the Armenian Diocese of Southern Russia, July 27, 2007 (p. 171-172).
66. Audience granted by His Holiness Karekin II to the pilgrims of the Eastern Diocese of the Armenian Church of North America, July 27, 2007 (p. 172).

67. Passing away of Rev. Fr. Trdat Martirossian, June 25, 2007 (p. 173-174).

68. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during June and July 2007 (p. 175-176).

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրենիք բերվեցին Ալեք և Մարի Մանուկյանների աճյունները ................ 3
Հունաստանի Հանրապետության նախագահը
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ................................................................ 10
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԽԽՎ
նախագահին ................................................................................................ 12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀՀ Ազգային
ժողովի 4-րդ գումարման անդրանիկ նիստին ......................................... 13
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական
գիրը ԼՂՀ նորընտիր նախագահ Բակո Սահակյանին ............................ 15

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Ջեյմս Գալուստյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 16
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Կառլոս Պետրոսյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով
պարգևատրվելու մասին .......................................................................... 18
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Ռադիկ Մարտիրոսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 20
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Վլադիմիր Բարխուդարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 22
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Պերճ Զեյթունցյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 24
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Ռուբեն Մաթևոսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 26
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Սվետլանա Գրիգորյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 28
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Խորեն Մելիքսանեթյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով
պարգևատրելու մասին ............................................................................ 30
Հայրապետական գնահատություն ........................................................... 32
Հայրապետական տնօրինություն
Կարգալույծ է հռչակվել Տ. Ավետիս աբեղա Սահակյանը ..................... 33
Կարգալույծ է հռչակվել Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանը ................ 33

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով 34
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Սարգիս Մուրադյանի մահվան առիթով ..... 35

## Հայրապետական պարգևաբաշխություն

Վերաբացվեց Մայր Աթոռի Վանատունը ..... 36
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ Ռադիկ Մարտիրոսյանին և Վլադիմիր Բարխուդարյանին ..... 37
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ մշակույթի անվանի երեք գործիչների ..... 40
Հայրապետական գնահատություն Կոտայքի մարզպետին ..... 42
Օրհնության գիր Ռուբեն Շարբաթյանին ..... 43
Ընտրվեց Ֆրանսիայի հայոց նորաստեղծ թեմի առաջնորդ ..... 44
Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան ..... 46

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի քարոզը` խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին սարկավագական ձեռնադրության ընթացքում ..... 48
Տ. Իսահակ աբեղա Պողոսյանի քարոզը` խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին ..... 50
Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանի քարոզը` խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին ..... 53

## ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

**ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ** - Հովհաննես Կոզեռն Տարոնեցու աստվածաբանական ժառանգությունը ..... 56
Յովհաննիսի հայոց վարդապետի որ եւ մականուն Կոզեռն` ասացեալ Յաղագս Վարդավառի տաւնին ..... 60
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ** - Քարոզչական մեթոդիկայի մոտեցումներ բանակի հոգևորականների համար ..... 71
**ԹԱՄԱՐԱ ԵԳՈՐՅԱՆ** - Ուղղադավան Եկեղեցին և միակամության վեճերը ..... 85
**ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք» երկի աստվածաբանությունը ..... 91
**ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ** - Գերիզոր ուժերի լույսը ..... 100
**ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ** - Բակոնց գյուղի քահանան ..... 102
**ՍԵՐԳԵՅ ԱՂԱՋԱՆՅԱՆ** - Գուրգեն Մահարու «Սահմանագծի» չափածոն ..... 116

**Արվեստագիտական**

ՄԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ - Հովսեփ Կարալյանի ստեղծագործությունների առանձնահատկությունները ........ 128

**Հոբելյանական**

Ծանրաբեռն վաստակի գնահատմամբ ........ 131

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ........ 135
Տ. Պարթև աբեղա Բարսեղյան ........ 136
Տ. Միքայել աբեղա Գևորգյան ........ 136
Տ. Գառնիկ աբեղա Մխիթարյան ........ 137
Տ. Մարտիրոս քահանա Հակոբյան ........ 137
Տ. Թադեոս քահանա Տեր-Մկրտչյան ........ 137
Տ. Հրաչ քահանա Սարգսյան ........ 138
Տ. Մուշեղ քահանա Խաչատրյան ........ 138
Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ........ 139
Տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսումնական տարվա փակման հանդիսությունը ........ 142
Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ժողովը Մայր Աթոռում ........ 144
Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամների հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ ... 147
«Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամների այցը Ծիծեռնակաբերդ ........ 148
ԵՀԽ նախկին գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի այցը Հայաստան ... 149
Տեղի ունեցավ «Բնապահպանություն և աստվածաբանություն» գրքի շնորհանդեսը ........ 150
«Կրթությունը՝ զարգացման նախապայման» կրթական երիտասարդական համաժողով Ծաղկաձորում ........ 151
Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ ........ 153
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի և ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ .... 154
Վերաօծվեց Կոտայքի մարզի Առինջ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին ... 156
Օծվեց Գորիսի Ս. Տրդատ մատուռը ........ 157
Օծվեց Սևանի Ցամաքաբերդ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցին ........ 157

**Գուգարաց թեմում**

Ոգեկոչման հանդիսավոր արարողություն՝ նվիրված Հրանտ Դինքի

հիշատակին ........ 158
Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբարում ........ 159
ՀՕՖ-ի հերթական բարեգործական այցը Վանաձոր ........ 160
Օծվեց Սարալանջ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին ........ 161

**ՍԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ** - Վարդավառի տոնը Վոլգոգրադում ........ 162
Եվրոպայի Համազգային Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան ներկայացուցչական անդրանիկ ժողովը Միլանոյի մէջ ........ 163

## Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

Քահանայական ձեռնադրութիւն Ուոթըրթաունի (Մասսաչուսէց) Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ ........ 165

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի գլխավոր գործադիր տնօրենին ........ 168
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր պաշտոնավարությունն ավարտող Գերմանիայի դեսպանին ........ 169
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի կամավորներին ........ 169
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի ուխտավորներին ........ 170
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ղազախստանի նորանշանակ դեսպանին ........ 170
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց համահայկական երիտասարդական միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին ........ 171
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի հայոց թեմի ուխտավորներին ........ 171
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի ուխտավորներին ........ 172

Ի Տեր հանգյավ Հոգեշնորհ Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը ........ 173

Եկեղեցական բեմ. լուրեր ........ 175

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата ........ 177
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin ........ 182